



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

W 446

ԽՈՐԵՆԱՅՈՒՆ

ԽՈՐԵՆԱՅՈՎ ՊԵՏԻ Է ՀԱՄԵԱՆԱԼ

ԵՐԿՐՈՒԹ ԶԱՏՈՐ



Գ Ր Ե Ց

Ս. Էջմիածնի միաբան

ԲԱՐԴՈՒՂԻՄԵԼՈՍ ԵՊԻՍԿՈՍՈՍ ԳԵՈՐԳԵՆՆ (ՃՈՒՂՈՐԵՆՆ)

ՎԵՂԱՐՈՍՊԱՏՈՒ



9(47.925)
Գ-47

Յ Ի Ք Լ Ի Զ

Տիպոգրաֆիա Կ. Ստեփանյանի և * Կ. Ստեփանյանի
Т-ва «Варемчевъ и Наменмахеръ»

Михайловск. пр., № 81. Телеф. № 852.

1902

ԽՈՐԵՆԱՅՈՒՆ

ԽՈՐԵՆԱՅՈՎ ՊԷՏՔԷ ՀԱՍԿԱՆԱԼ

6954

9(47.925)

4-47

19 AUG 2011

19 AUG 2006

ԽՈՐԵՆԱՅՈՒՆ

ԽՈՐԵՆԱՅՈՎ ՊԷՏՔ Ի ՀԱՍԿԱՆԱԼ

ԵՐԿՐՈՐԳ ՀԱՏՈՐ



Գ Ր Ե Ց

Ս. Էջմիածնի միաբան

ԲԱՐԿՈՒՂԻՄԷՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԷՈՐԳԵԱՆ (ՃՈՒՂՈՒՐԵԱՆՑ)

ՎԱՂԱՐՁԱՊԱՏՅՈՒ



Թ Ի Ֆ Լ Ի Ջ

Տպարան ընկ. «Վերսիլի և * Կամենմախեր» Типография Т-ва «Веричесъ и Каменмахеръ»

Михайловск. пр., № 81. Телеф. № 852.

1902

18 MAR 2013

Дозволено Цензурою. Тифлисъ, 16 марта, 1902 г.

Ի ՅԻՇԱՏԱԿ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

Հանգուցեալ ծնողացս — Եղիաբեթի և
Գեորգայ ճուղուրեանց, և Եղբարցս —
Մասթէսի, Համազասպայ, Թադէոսի և
Սեփաննոսի, նաև Թագունի (ողջ) քոջս:

Բարդ. եպս. Գէորգեան (Ճուղուրեանց):

Յ Ա Ն Կ

ԵՐԵՍ

Յառաջարան	Ժա
Ա. Ճանաչուած չէ Խորենացու մեկե- նասը:—«Խորենացի» անուան ծա- ղումը:	1
Բ. Դարձեալ «զայր առ քէ»...	12
Դ. «զարտախուր խաւարտ և զտից խաւարծի»...	18
Դ. «սկսայց քեզ և որ ինչ զկնի այսո- ցիկ ի հիւսման պատմութենէ պի- տոյից»:	24
Ե. Պատմութիւն, վէպ, վիպագիր, վի- պասան, երգ վիպասանաց, զրոյց, առասպել՝ ըստ Խորենացու:	27
Զ. Արարատը:	40
Է. Սրբազրութիւններ և բացատրու- թիւններ Սեբէոսի պատմութեան առաջին երեսում:	68
Ը. «Առաջին և երկրորդ, այլի երրորդ	

և 2որրորդ հայր»:	72
Թ. Յաշտիշատ:	76
Ժ. Չահապիւման:—Չահապ, Չահարիս, Չահապունի:	81
ԺԱ. Սուկաւ կամ Սուկաւէտ	86
ԺԲ. Մ. Խորենացիին անշուշտ օգտուել է Փիրմեղիանոսի պատմական գրք- ուածքից:—Հայոց դարձի—քրիստո- նէսութեան թուականը յետ է մըլ- ուած:	90
ԺԳ. «Խորենացին առ ի չտալոյ կասկած՝ կը լռէ Չահապիւման անունը»:	102
ԺԴ. «Վաղարշակ... խաղայ ի վերայ Մա- կեդոնացոց մտերմաց»:	108
ԺԵ. «Այլ խտրեմ աստ վասն սիրելի առ- նըն յայտնի գրել զամենայն և ման- րապատում»:	110
ԺԶ. «Ի ծովէն Պոնտոսի մինչև ի տեղին՝ ուր Կովկաս յարեմտեանն յանգի ծով»:	114
ԺԷ. «Ի մականական խաղուն... զգնդակն հանել ի Չապհոյ»:	116
ԺԸ. «տուշութիւն յաջողուածոց ունէր ի մարտս»:	118
ԺԹ. «ընդ վիշապաց ասէին յերգն կըռ- ուել նմա...»:—«Վիշապաքաղ»:	121

Ի. Արտաշատը՝ ըստ յոյն և հռովմայե- ցի հին մատենագիրներին:	132
Ա. Քասախ, Քաղաքուղաշտ, Արտիմէտ, Անահիտ և Տիւր դից մեհեանները, Մահրասա:	144
ԻԲ. «Քանգի ինձ այսոքիկ արք ի մերոյ թագաւորէն սիրելիք, որպէս բնիկը և իմոյ արեան առուք և հաւաստի հարազատք»:	154

Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Ծ Ք

Ա. Ալիշանի հոգեհանգստի առթիւ:	161
Բ. Խաչիկ վարդապետի կեղտոտ վար- մունքը:	165
Գ. Երկու օրագրի պատճեններ.— I (Ո՛րն է հասը և ո՛րը չհասը):	174
II (Ծածկուած յանցանքներ):	197

ԻՅՐԵՒ ՅԱՌԱՋԱԲԱՆ

Առաջին գրքոյկս—«Խորենացուն Խորենացոյ պէտր է հասկանալ»—հրատարակելու ժամանակ (1899 թ.) չէի մտածում թէ այս *երկրորդը* պիտի գրեմ Աստուծոյ յաջողութեամբ, ինչպէս այժմ չեմ մտածում երրորդը, չորրորդը գրել. այս է պատճառը որ ժամանակին զայն չեմ կարգել Ա. հատոր, ուստի լինդրում եմ, ով ունի առաջին գիրքս՝ յեղութիւն կրէ գրել—յաւելացնել նորա վերայ պատշաճաւոր տեղում՝ Ա. հատոր:

Առաջին հատորի, նոյնպէս և այս Բ. հատորի մէջ ոչ մի անգամ չեմ իւրացրել և յերկայացրել ընթերցողին *ուրիշի* կարծիքը, ինթադրութիւնը, սրբագրութիւնը, բացատրութիւն կամ մեկնութիւնը՝ իբրեւ իմը, ինչպէս այդ սովորական է ուրիշների գրուածքներում¹: Մինչև անգամ ուրիշների սխալնե-

1. 1900 թ. Յուլիս—Օգոստոսի մէջ մի քանի օր ապրեցի Հառիճոյ վանքում. տարած ունէի Փետտերի «Հայկական

ըը ցոյց տալու դէպքում էլ շատ անգամ աւելորդ եմ համարել մէջ բերել նոցանը, թողնելով որ ընթերցողը մտաբերէ կամ գտնէ ու կարգայ: Անպատուաբեր է մուրալով հարըտանալը, իսկ օտարինը իւրացնելը՝ դատապարտելի յանցանք, — այլ՝ բան է թէ պատահի որ նոյն կարծիքը ուրիշը առաջ յայտնած լինի, որը սակայն նոր գրողին անյայտ է եղել: Օրինակ. Խորենացու Դ. գրքի մասին ես կարդացել էի, ինչպէս ցոյց եմ տուել (ա. հատ. Է. եր. 20), «Միաբանի» ըացառական փաստերով ողորմելի գրուածքը (28 մեծ երեսներ) ընդգէմ Ալիշանի, որի գրածը (Բագմավէյ, 1851 թ. Մարտ, եր. 62—75) իմ գրքի լոյս տեսնելուց 10—11 ամիս յետոյ գտայ կարդացի, և յետոյ քան պ. Նորայր Ն. Բիւզանդացու՝ նոյն նիւթի մասին գրածը («Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնը», 1900 թ. Տփլիս. եր. 390—396): Այն փաստը, — «ի չորրորդ գրուագի», — որ իմ կարդացածում (Միաբանի) և առ հասարակ մէջ էին

աշխատասիրութիւնք» (Վիեննայ), կարդալու ժամանակ ողբան տողեր նոյն իսկ երեսներ կարծում էի թէ Մ. Աբդեղանի յօդուածն եմ կարդում «Արարտ» ամսագրում: Իմ զարմանքը յայտնեցի հէնց այնտեղ արժ. Կոմիտաս վարդապետին: Այդպէս և ողբան բան ունի Գարագաշեանի «Բնն. Հ. պատմութիւն»-ից...

բերում իբրեւ «միակ աղբիւր» — փաստ Դ. գրքի լինելութեան, ես ցոյց տուի և իրաւամբ նկատեցի՝ որ «եթէ քանը մնար դարձեալ խնդ՝ «ի չորրորդ գրուագի» խօսքին, ցնորք կըլինէր Խորենացու չորրորդ գրքի մասին մտածելը» (ա. հատ. Է. եր. 22). բայց իմ կողմից գտայ և բերի այնպիսի նոր և դրական փաստեր և ապացոյցներ՝ որով Դ. գրքի լինելութեան դէմ խօսող — գրողներին ընդ միշտ լռեցնելուց յետոյ, ապացուցեցի նաև որ պիտի եղած լինէր Դ. գիրքը:

Ալիշանի և Ն. Բիւզանդացու վերոյիշեալ գրուածքները Դ. գրքի մասին, համեմատաբար գտնէ թոյլ են¹: Ալիշանը ևս «գրուագը» համարել է գիրք, հատոր. այդ արդէն հիմնական սխալն է, որին հետեւել է և Նորայր միւս

1. Յարգելի պ. Նորայր Ն. Բիւզանդացու՝ Դ. գրքի մասին գրածը շատ մօտ նմանութիւններ է ներկայացնում իմ գրածին: — Հէնց օրինակ՝ ես գրել էի. «Այսքանն էլ բաւական է՝ որ Միաբանը յետ վերցնէր չորրորդ գրքի դէմ իւր ամբողջ 28 երես գրածը: Բայց ես դեռ չ'վերջացրի» (եր. 23). իսկ Նորայրը գրում է, Միաբանի նոյն գրուածքի մասին. «անընդունելի է յառաջին բառէն մինչեւ ի վերջին»: — Նորայրը հէնց որ տարբեր հիմունքներ ևս պտրել է Խորենացու մէջ, արդէն սխալուել է. — օրինակ. «Աւելորդ համարելով զարտաքնոյն երկրորդել յաղագս իսկզբանն առասպելս, բայց եթէ զկնիս» (ա. Դ.): — «Զորս ոչ կարենոր համարեցաք այժմ անուամբ թուել, բայց զկնիս» (բ. Ե.): — «Ոչինչ վասն այնց ազգաց... ճառեսցուր... այլ միայն գորս հա-

հիմնական սխալը—Թովմայի «երկեցունքը» փոխելով «երեցունք»...

Ջնորհակալութիւն «Բաղմավէպի» և «Հանդէս Ամսօրեայի» նաև «Նոր-Դարի» խմբագրութեանց և գրքիս առթիւ մատենախօսականներ գրողներին¹։—Պ. Մ. Բերբերեանի աւելով («Նոր-Դար»)՝ իբր թէ «երեք տարի որանից առաջ» Սմ. Չահաղիզեանը ևս, «Ամառնային նամակներ» գրքում, «մի քանի նմուշներ տրուեց Խորենացին Խորենացով հասկանալու»։ Ոսկայն ևս *երկրորդ* անգամ կարդացի և խընամով ստուգեցի՝ որ Չահաղիզեանը այդպիսի մի փորձ, *թելադրութիւն, միտք կամ աղանալը չունի արած*։ սխալում և սխալեցնում է ընթերցողներին պ. Մ. Բերբերեանը։ Գուցէ

աւտի գիտմք *զմիսմ*» ք. ԿԴ. (կր. 396, ծան. 10)։—Այս օրինակների մէջ «զմիսմ» բառի վերայ է հիմնուած, բայց սխալում է յարգելի գիտնականը, որովհետև Խորենացին զորանց մասին հէնց ներկայ ա. ք. գ. ղըբերումն էլ խօսել է...

1. Մեր «Արարատը» և «Մշակը» Զաքարիայ լուսթիւն պահեցին. հասկանալի է, ով իւր երեսը փշով կըծեծի։ «Մշակի» աշխատակից մասնագէտ համարուած մին՝ մի ուրիշին նամակով գրեց էջմիածին. «Բարդուղիմէոս վարդապետի ղըբի մասին ոչինչ չենք գրի, որով նորա գեղքը չի ծախուի, և այդ նորան պատիժ բաւական է»։

—Միայն այդ պատճառով կարողացաք լուսթիւն պահել այնքան նոր բացատրութիւններէս, սրբազրութիւններէս և թարգմանութիւններէս, մանաւանդ Խորենացու Դ. ղըբի առթիւ գրածներէս մասին։ Ըստ մեծահոգի էք եղել...

թէ իրեն հաւատալը չի եկել լսել այդպիսի մի «տարօրինակ» խորհուրդ (ոչ դաս) առաջին անգամ մի հայ վարդապետից, և ցանկացել է որ Սմ. Չահաղիզեանից խուսած լինի։

Հ. Յ. Տաշեանը ի զուր է կարծում («Հանդէս Ամսօրեայ») թէ ինձ յայտնի չի եղել «Մարտիկեան» ընթերցումը, ոչ ապաքէն իմ յառաջաբանից պարտ էր գոնէ իմանալ որ ևս կարդացել էի նորայր Ն. Բիւզանդացու ընդարձակ յօդուածը՝ «Մըշակի» համարներում, այլև Խորէն եպիսկոպոս Ստեփանէի թարգմանութիւնը հանդերձ ծանօթութիւններովը. իսկ դորանց մէջ արդէն «Մարտիկեան»-ը «Մարտիկեան» լինելու մասին խօսուած է՝ բայց առանց պատճառաբանութեան։ Ես ուղիղ եմ համարել «Մարտիկեան» բառից հասկանալ՝ ըստ Խորենացու, հիմք ունելով որ Կոստանդիանոսի ժամանակ հրէատանը արդէն *նահանգ* էր հռոմայեցւոց պետութեան, իսկ հիւանդ Կոստանդիանոսը, որ զիմում էր այնքան հեռու մեր Տրդատին՝ հեղեակաւ և պարսկական ղիթերից բժշկութիւն գտնելու (Խոր. ք. 2Գ.), իւր նահանգի մէջ դտնուածը չէր արհամարհի։ Գուցէ թէ դարձեալ սխալում եմ։—Պ. Ստ. Մալխասեանցի մասին և պրօֆ. Գր. Խալաթեանցի

հետ խօսեցածիս մասին արուած դիտողութիւններէից տեսնում եմ որ այն չէ իմ առածը՝ ինչ որ Հ. Յ. Տաշեանն է հասկացել. — ես Խորենացու պատմութեան քննադատելուն բնաւ հակառակ չեմ, սակայն ցանկալի էր որ Խորենացու մասին *յարգանօք* խօսուէր։ Սրտացաւ մարդիկ ճիշդ են թափում նոյն իսկ անյոյս հիւանդին բժշկել, — այրուող տունը փրկել, և ոչ թէ նաւթ սրսկել... Ո՛ւր կը հասնէր բանը՝ եթէ Նորայր Ն. Բիւզանդացու ուշացած խարազանը զինաթափ չ'անէր շարած գիտուններին և «աճապարներին»։

«Բազմավէպի» «գրախօսական ակնարկներ» գրողին (Կ. Տ. Ս.) խորհուրդ եմ տալիս կրկին կարգաւ գրքիս (ա. հատ.) Ա. և Է. հատուածները (գլուխ)։

Թէ «Բազմավէպ»-ը և թէ «Հանդէս Ամսօրեայ»-ն լռութիւն են պահել յիշեալ գրքիս ոչ սակաւ կարևոր և հետաքրքիր Գ. Ժ. ԺԵ. ԺԶ. ԺԸ. և ԻԹ. հատուածների մասին։

Ես պէտք չեմ համարում ինչպէս հաւանութիւն գտած նոյնպէս և հաւանութիւն չը գտած յարուցածս (ա. հատ.) խնդիրների մասին խօսել կամ պատասխանել, քանի որ գիրքս ինչ որ է՝ հրապարակումն է. թիւրիմացութիւններին միայն պարտք համարեցի

մասամբ պատասխանել։

«Լումայ» գրական հանդէսի մէջ ես իմ գրքի մասին «մատենախօսական» *անուն* յօդուած կար՝ Զուշուայ թեմ. դպրանոցի ուսուցիչ Արշակ տ. Միրէլեանի գրած։ Պէտք էր դարմանալ թէ ինչպէս կարելի էր որ Ա. տ. Միրէլեանը տօների արձակուրդից (25 դեկտ. 1899) յետոյ հազիւ դեկտ. 27—28-ին լինելով Տփլիսում, այնտեղ կարգար գիրքս¹, մատենախօսականը գրէր, շարուէր այդ և տպագրուէր «Լումայի» եր. 321—327, դորանից յետոյ 109 երես ևս ուրիշ բաներ շարուէր տպագրուէր, բացի շապիկ և կազմի երեսները—8 երես, =117 երես, և «Լումայի» այդ գիրքը նոյն դեկտ. 31-ին արդէն պատրաստ լինէր, — այդքանը 3 օրում։ Որ «Լումայի» 1900 թուի Ա. գիրքը ճշմարիտ որ նոյն դեկտ. 31-ին, գուցէ և առաջ, պատրաստ է եղած՝ նոյն «Լումայի» կազմի վերջին երեսում վկայուած է. — «Առաջին գիրքը լոյս է տեսնում յունուար 1-ին, երկրորդը՝ յուլիս 1-ին... Մինչև այժմ տպագրուել է 9 գիրք, որոնք լոյս են

1. Որովհետեւ ես առաջին անգամ գիրքս ցրուել էի 1899 թ. դեկտեմբերի 20-ին, իսկ Զուշի՝ և ոչ մի օրինակ չեմ ուղարկած։

սեսել միտ խոսացուած ժամանակներին եւ երբեմբն էլ ամսաչափ առաջ»։—Վերջապէս 1900 թ. Յունվարի 6-ին Ս. Էջմիածնում դրացիս—գեր. Արիստակէս արքեպիսկոպոս Դաւթեանը — ստացած էր «Լումայի»՝ 1900 թ. Ա. գիրքը։

Ոչինչ չըկայ զարմանալու, ընթերցող, իսկ զգուշելու՝ շնորհակալութեամբ։ Ապացուցուած է որ տակաւին իմ գրքից և ոչ մի օրինակ իմ ձեռքը չըհասած, չընայելով որ ցրուելու թոյլտուութիւն վաղուց ստացուած էր, տպարանի վարչութիւնը 82 օրինակ իմ գրքից գաղել և իւրացրել էր, ի հարկէ Ա. տ. Միրէլեանին ևս մի օրինակ առանձին զակազով ուղարկել՝ որպէս զի գիրքս քննադատէ և ինձ ի դէպ մի պինդ հայհոյէ. նա ճանաչուած էր իբրեւ այդպիսի յանձնարարութիւններ ստանձնող։

Նա անկարող էր գտնուել գրքիս մասին վատ խօսել, երկու բան յեղաշրջել էր, մի սխալ էլ իբր թէ գտել բայց այն էլ ընտելց. տես «Արարատ» 1900 թ. Փետրվար, եր. 96։ Սակայն նա գիրքս թողնելով մի կողմ, գովել էր անձս, որ ես ինքնաշխատութեամբ յառաջադիմել եմ, որ ճշմարտասէր մարդ եմ՝ սակայն շահի եւ խղճի տեսակէտով։—«Հեղինակը (եւ) Ս. Էջմիածնի այն միաբաններիցն է, որոնք

իւրեանց ուսումը ստացել են հին ժառանգաւորաց դպրոցում և յետոյ ինքնաշխատութեամբ յառաջադիմել...։ Գեր. Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանը, հանգուցեալ Մխիթարեան եպիսկոպոսը, արժ. Յուսիկ վարդապետը և այլն այդ ինքնաշխատ միաբաններից են, որոնք գրուածներ էլ են տուել։ Հայր Բարդուղիմէոսը իւր աշխատասիրութեամբ հանդերձ պահել է նաև իւր դպրոցի ուսման յատուկ ոգին, որով առ հասարակ փայլում էին Ս. Էջմիածնի հին միաբանները։ Այժմ նորա յիշեալ գրուածքը («Խորհնացուն Խորհնացով պէտք է հասկանալ») այդ ոգու դրոշմն է կրում—այն է՝ անշարժ պահել ճշմարտութիւնը ամեն քննադատութեան առաջ։ Սակայն նոյն ոգին պէտք է ունենայ ամեն գիտութիւն, միայն թէ ճշմարտասիրութեան սկզբունքով և ոչ թէ շահի եւ խղճի տեսակէտով (տես էջ 71. Ժանօթութիւնը)»։ («Լումայ»)։

Ուրեմն, յայտնում է որ ես «ճշմարտութիւնը անշարժ պահել» գիտելով հանդերձ՝ շահասէր եւ անխիղճ մարդ եմ, և որպէս դուրս ապացոյց՝ մատնացոյց է անում նոյն գրքիս եր. 71, Ժանօթութիւնը, այն է՝ իմ և պրօֆ. Գր. Խալաթեանցի անմեղ խօսակցութիւնը։

—Նախ՝ ճշմարտասէր մարդը երբեք չի կարող լինել շահասէր և անխիղճ, չէ որ դուրանք տրամադծօրէն հակառակ են ճշմարտութեան՝ ինչպէս խոզի միսը՝ թուրքին։ Երկ-

բորդ, ցոյց տուած 71-րդ երեսում ոչ մի ստուեր գոնէ չըկայ՝ որ իմ անխղճութեան և շահասիրութեան նշան լինէր. խնդրում եմ ընթերցողին վերցնել և տեսնել: Ես «Արարատում» (յիշեալ) հրատարակուած մի փոքրիկ յօդուածում և՛ առաջարկեցի Ա. տ. Միքէլեանին (որով և «Լումայի» խմբագրութեան ի հարկէ)՝ «պարզել այդ տգեղ ակնարկը՝ թէ ո՛ւմ կամ ընչին մասին է». իսկ նա «Լումայի» յաջորդ գրքում պատասխանեց իրեն յատուկ յեղաշրջումներով. — «Խղճի կամ շահի տեսակետն... ահա — էջ 71. Ժան. տող 7, ներքեից. «Ես (հ. հեղինակը) յաւելացրի. Խորենացուն փոխաբերող ուրիշ պատմութիւն չունիմ գոնէ, ցանկալի եր ու մերոնք ձեռնհաս մարդիկդ դեռ աշխատեիք ի նպաստ Խորենացուն»: Հ. Հեղինակը «տգեղ» է համարում այս «ակնարկը», բայց ինչո՞ւ տգեղ համարել ակնարկը և ոչ ակնարկեալը» (եր. 379—380):

Արշ. տէր Միքէլեանը իւր պատասխանում այդ իմ խօսքերն է բերում իմ շահասիրութեան և անխղճութեան ապացոյց, այլ և յաւելացնում է. «Ինչո՞ւ տգեղ համարել ակնարկը և ոչ ակնարկեալը»: Նա ապահով էր որ ընթերցողներէից ոչ ոքի փայթը չէր լինի ինչպէս առաջին նոյնպէս և երկրորդ անգամին ստուգել՝ թէ կայ արդեօր անխղճութեան և շահասիրութեան նման մի

բան Բարդուղիմէոս վարդապետի գրքի 71-րդ երեսում... Բայց տէր Միքէլեանի, յանձնարարողների և «Լումայի» խմբագրի նպատակը յաջողուած էր, — Բարդուղիմէոս վարդապետը անխիղճ ու շահասէր է...

Այդպիսի անպատկառ զրպարտութեան համար, բայց որչափ և ծանր, ինչո՞ւ դիմել պատի, քանի որ գրքի մէջ մտած անբաստանութեան՝ գրքի մէջ ևս կարելի էր պատասխանել: — Ես այդ զրպարտութեան դէմ ինձ արդարացնելու կարիք էլ չեմ գտնում. արձանագրուած փաստիւ շատ կան, որ Բարդուղիմէոս վարդապետը, ընդհակառակն, անխղճների և մանաւանդ շահասէրների դէմ մաքառողն է եղել միշտ ¹:

Թողնենք մեռած Ա. տ. Միքէլեանին հանգիստ. բայց չէ որ «Լումայի» խմբագիրը նոյնպէս պատասխանատու էր և է, որ խուռափելով ուղիղ պատասխանից և ընթերցողին մո-

1. Ինչպէս օրին. Ս. Իշխանի Սինոդին և հանգ. Գէորգ Գ. Գաթուղիկոսին իմ մատուցած (փոշտով, ապահոված) յայտարարութիւնը ի 13-ն հոկտեմբերի 1881 ամի: Կամ՝ Սինոդի անգամ եղածս ժամանակի գործերը, տես յայտարարութիւնը ի Սինոդն յ2-ն, ի 21-ն, ի 24-ն, յ30-ն Յունվարի 1892 ամի, և ի 19 (յայտարարութիւն, և արձանագրութիւն Սինոդի), ի 21-ն, ի 22-ն, ի 28-ն (№№ 13, 14) Փետրվարի, և ի 23-ն Մարտի նոյն ամի, և այլն:

լսրեցնելով՝ թոյլ էր տալիս իմ դէմ այդ անտեղի հայհոյութիւնը և՛ *երկրորդ անգամ*: Դա արժ. Գիւտ ա. ք. Աղանեանցն է:—Մենք տէր հօր խղճով և անշահասէր լինելու մասին կարող ենք միայն յիշեցնել (վկայելու պէտք չը կայ, քանի որ ամենքը գիտեն) թէ՛ ինչպէս ուրիշ քահանաների ծուխերին և հակառակ իսկ ծուխերին՝ տիրանալու համար մեծամեծ գծտութիւնների պատճառներ է տրուել (օրին. Մակար Կաթուղիկոսի և Տփիսիսի Առաջնորդ Սեդրակեանի մէջ):—Թէ՛ ինչպէս Ս. Էջմիածնի մատենադարանից իւրացրել է «Գիւտան Հայոց Պատմութեան» պատրաստ նիւթերը:—Թէ՛ ինչպէս այժմ էլ արտագրել տարել է, չըյաջողելով բնագիրը իւրացնել, Գիւտան խանցի Մանուէլ վարդապետի ինքնակենսագրական պատմական ձեռագրի օրինակը:—Թէ՛ ինչպէս Մակար Կաթուղիկոսին կողոպտող հաճի Յակովբի զրպանում բռնուած տասն հազար թուրքաց չորս հազարն տ. Գիւտին պիտի հասնէր, բոտ ցուցման հաճի Յակովբի:—Թէ՛ ինչպէս հազարներն ըստեցրեց Ս. Էջմիածնի գանձարանի վերայ ձուլիչ և արագատիպ մեքենայները, որոց առաջինը իբրև անպէտք *դոտադա* երկաթ՝ բերած օրից թափուած է տպարանի մի անկիւ-

նում. և այն, և այն: Իւր բախտից՝ չեմ կարող հեռու գնալ: Այս յիշածներս, ինչպէս տեսնում էք ընթերցողք, ոչ թէ մասնաւոր կամ նորա անհատական, այլ հասարակական մանաւանդ թէ ազգի Մայր Աթոռին վերաբերեալ բաներում խղճով և անշահասէր լինելու իրական ապացոյցներ են, մինչ նա իմ շահասիրութեան և անխղճութեան իբրև վրկայութիւն երկու անգամ մատնացոյց արեց զրբիս 71-րդ անմեղ երեսը...

Իբրև արժ. Գիւտ ա. քահանայի յանցանքի մեղմացուցիչ հանգամանք պէտք է չը ծածկել՝ որ խեղճը աչքերը բացած օրից ճանաչել է Տփ. երբեմն Առաջնորդ Մակար արքեպիսկոպոսին և նորանից անբաժան հաճի Յակովբին և առ հասարակ այդ *պրօքի* խղճով ու անշահասէր մարդկանց, ուրիշ տեսակի մարդ ճանաչելու ճաշակ չունի...

Քաջութիւն ունեցէք խոստովանելու՝ որ Բարդուղիմէոս վարդապետ—եպիսկոպոս Գէորգեանը այնքան շահասէր և անխիղճ է՝ որքան դուք, Գիւտ ա. ք. Աղանեանց և ձեզ արժանի Ար. տ. Միքէլեանները՝ մարդը մարդիկ...

Պէտք եմ համարում վերջացնել յառաջաբանս՝ գրքիս ա. հատորի մասին «գրախօսականներ»-ի եզրակացութիւնները և ստացածս մասնաւոր նամակներով ումանց կարծիքը ներկայացնելով։—

«Եթէ ուզենք մեր մանրամասն համառօտութենէն եզրակացութիւն մ'ունենալ՝ պիտի ըսենք՝ թէ գեղեցիկ աշխատութիւն մ'է սա. և մի քանի թերութիւնք և գիտական ոճէ շեղումներ՝ պիտի չարգելուն զմեզ ըսելէ. Բաւական արժէք ունի այս «լուամայն»՝ զոր Հ. Բ. Գէորգեան (ձուղուրեանց) կուգայ գնել «Մ. Խորենացու շուրջը խմբուած գրականութեան սեղանի վերայ»։ Կ. Տ. Ս. («Բազմալէս», 1900 թ. Մայիս, եր. 226—229)։

«Անհնար է մեզի նաև հեղինակին սրբազրութիւնքն մի առ մի յիշել, որոնց մէջ հետաքրքրական է բաւական մաս մը, յատկապէս անոնք որ աշխարհագրական դրից մասին են, և իրմէն իբրև այնտեղեաց ականատեսէ կըստարգարանուին (1), և որոնք

1. 2-եմ ականատես բոլորին, այլ բացի որ հիմք եմ ունեցել Խորենացու խօսքերը, է՛ որ հարցրել տեղեկացել եմ մերձակայ գիւղացիներէ, և է՛ որ յատկապէս մարդ եմ ուղարկել և ստուգել։

անշուշտ ուղղագոյն ըլլալու են։... Գործքն ամբողջովին առեալ շահաւէտ պէտք ենք համարել։ Որչափ ալ հեղինակին այլ և այլ կարծիքներն ու մեկնաբանութիւնները չըլլան ընդունելի, որչափ ալ սլակասութիւններ կարենանք գտնել տրուած այլ և այլ սրբազրութեանց մէջ, կըմնայ մեծ մաս մը, զոր կ'արժէր ներկայացնել, եթէ ոչ տակաւին իբր վերջնականապէս ընդունելի՝ գոնէ իբր համարժէք նոյն տեղերուն տրուած ուրիշ մեկնութեանց։ Բաղձալի ալ էր որ այս կարգի ձեռնարկներն աւելի յաճախէին, զարգացնելով նշանաւոր պատմագրին գործոյն լուսաբանութիւնը, մանաւանդ անտես չըլլար ձեռագրական աղբիւրներուն ուսումնասիրութիւնը»։ Հ. Յ. Տ. («Հանդէս Ամսօրեայ», 1900 թ. Մարտ, եր. 86—88)։

«Այսպէս թէ այնպէս, Հ. Բարդուղիմէոսի գրքով... մի գեղեցիկ օրինակ է, որ գիտական հետազօտութեանց դիմաց կարող է լինել և պէտք է լինի նաև ընթերցողի մտախօհ և խելամուտ ուսումնասիրութիւնը»։ Ար. Տ. Միքէլեան. («Լուամայն», 1900 թ. ա. գիրք, եր. 327)։

«Առանց յաւակնութեան, միայն գործի սիրոյն, գրուած այս երկու յօդուածները (1) կարող են անշուշտ մի քիչ բան սովորեցնել մեծամիտ մեկնաբաններին ու թարգմանիչներին»: Մ. Բերբերեան. («Նոր-Դար», 1900 թ., № 47):

Բարձրապատիւ Բարդուղ...

«Շնորհակալութեամբ ընկալայ ձեր աշխատասիրած Խորենացուն Խորենացով հասկանալու ուղիղ միջոցը. որը կարգաւոր զոհ եղայ պարզ ու բացայայտ ուղղագրութեանդ մասին: Յիրաւի ինչպէս գրել էք, Խորենացուն Խորենացով պէտք է հասկանալ: Հաւանեցի ձեր բացատրութիւնները, ըստ որում ուրիշ գրողներից աւելի լաւ էք հասկացել»...

Ձեզ աղօթակից

Մեսրոպ Արքեպիսկոպոս:

1. Խօսքը իմ գրքի ա. հատորի և Մմ. Ջահաղիգեանցի «Ամառնային նամակներ» գրքի մասին է:

Արժանապատիւ Բարդուղ...

«Թող տուէք ինձ մատուցանել ձեր Արժանապատուութեան իմ անկեղծ շնորհակալութիւնը ձեր «Խորենացուն Խորենացով պէտք է հասկանալ» նոր հրատարակութեան համար, զոր ազնուախոհութեամբ հաճել էք ինձ ևս մի օրինակ յղել: Հաճութեամբ կար դացի Խորենոյ ծերունու պատմութեան ի նպաստ ձօնած ձեր այդ «լուծման», որն անշուշտ պիտ' ունենայ իւր շահեկանութիւնը, մասնաւոր կերպով գրաբարին անսեղեակ եղող մերայնոց և օտարազգի հայազգիտաց համար: Խորենացույ Դ. գլխի մի,— առաջարկ բառի,— Մեծամօրի և Մօր մեծի, և այլն մասին տուած ձեր մէկնութիւնները, բաւական յաջող և ուղիղ իսկ կ'երևին ինձ, այսպէս նաեւ Թուրքաց երգոց մասին տուած մէկնութիւնները:... «Նրկնէր երկին» երգի մասին եղած աշխարհական մէկնութիւնը, զոր յայտնի կը համարէք Կիւրեղ եպիսկոպոսի անունով, որ գրութեան մէջ կը գտնուի, հետաքրքիր է իմանալ (1): Ձեր այդ գրութեան արժէքն աւելի պիտի լինէր, եթէ ի նկատի առնուած տեղերն աւելի ընդարձակ և զրական փաստերով ուսումնասիրէիք: Յամենայն դէպս կը մտղթեմ որ ձեր այդ օգտակար հրատարակութիւնը ընդունելութիւն գտնէ, և պսակէ ձեր հայրենանուէր քիրտն և վաստակ»: Վ. Կենտիկ, 21 Յունվարի 1900.

Մնամ ամենայն յարգանք

Հ. Բարսեղ վ. Սարգսեան

1. Տեսէք «Արձագանք» 1894 թ. №, № 43 և 53:

Բարձրաստիւ եղբայր...

«Իւր ժամանակին ստացայ ձեր գրած «Խորենացուն Խորենացով պէտք է հասկանալ» գրքոյկը: Խնդրեմ ընդունէք իմ՝ ի սրտէ շնորհակալութիւնը ինձ մոռացած չը լինելուդ համար»: ... և ամենայն ուշադրութեամբ կարդալուց յետոյ, յայտնում եմ որ, Խորենացուն լաւ հասկանալու համար ձեր գրքուկի մէջ շատ ուսանելի բաներ կան: Շատ ուրախ եմ, որ ձեր մուտքն (?) ի գրական ասպարէզ պսակում էք մի արժանաւոր վաստակով, որ գնահատելի է թէ առարկայի վսեմութեամբ և թէ բարեխիղճ ուսումնասիրութեամբ»: Ս. Լճմիւսթին. 11 Յունվարի 1900 ամի:

Մնամ խորին յարգանք աղօթակից եղբայր ձեր

Յուսիկ վարդապետ Մովսիսեան

Ստորագում. 19 (ն. ա.) փետր 1900.

Մեծաստիւ Հ. Բարդուղ...

«Բնկալայ զպատուական երկասիրութիւնդ Խորենացուն Խորենացով պէտք է հասկանալ, և շնորհակալ եմ մեծապէս: Սիրելի է ինձ Խորենացին, սիրելի են միանգամայն և այնքով՝ որ կը զբաղին Խորենացով, կը խօսին զնմանէ մեծարանք և կը ջա-

նան լուսաւորել զնորին Պատմութիւնն... Սիրեցէք զմեր Նախնիս, Մեծարգոյ վարդապետ, մանաւանդ Խորենացոյ նման պաշտելի անձինք. ուսումնասիրեցէք զնոցա գլուխներս, և օգտեցուցէք զհայրենակիցսդ հաղորդելով նոցին զարդիւնս ձեր քննութեանց. մեր նախնեաց մատենագրութիւնք անսպաւ նիւթ կը մատակարարեն քննասէր մտաց»:

Խորին մեծարանք

Սգազգած Նորայր

Թաւրիզ, 13 Յունվար 1900.

Գերաստիւ Տէր Բարդուղ...

«Շնորհակալութեամբ ստացայ ձեր ուղարկած հեղինակութիւնը՝ «Խորենացուն Խորենացով պէտք է հասկանալ»: Վարդացի այդ գիրքը և շատ մութ կէտերի լուսարանուած լինելը նկատեցի. շնորհաւորում եմ ձեր այդ յաջողութիւնը: Ուրախ եմ մանաւանդ որ չէք մոռացած զիս, մեր...»:

Մնում եմ ձեր սրբութեան խ. և անձնուէր ծառայ

Տօբթօր Կ. Յ. Փաւայեան

Չարագրութեան այս Բ. հատորը պարունակում է քսան եւ երկու հատուած (գլուխ) և երեք (Ա. Բ. Գ.) յաւելուած: Ինչ իսկ հաճելի չէր այդ յաւելուածները կցել մի դուռ մասնագիտական շարագրութեան, ուկայն մեր կեանքի պայմաններն են պատճառմանաւոր որ Ա. և Գ. յաւելուածները վըճուում են եկեղեցական և հասարակական ժամանակակից երկու խճճուած և մտքեր խռովող հարցերը¹:

Բարդուղիմէոս եպս. Գէորգեան (ձուղուրեանց)
Վաղարշապատցի

20 Յունվարի 1902 թ.

Ի Ս. Էջմիածին:

1. Հրապարակաւ շնորհակալութիւն բարի երկտասարդին, որ առաջին ծանօթութեամբ և ի դէպ տեղեկանալով թէ գիրքս չի տպագրուած՝ փող չունենալու պատճառով, ինքնաբերաբար խոստացաւ և Մայիսի 30 թուակիր նամակով ուղարկեց 150 րուբլ. մի և նոյն ժամանակ խնդրեց չը յայտնել իւր անունը: Աննաման համեստութիւն:

ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՅՈՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ԶԱՆԴԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՅՈՍՏԱՆԻ ԱԶԵ-
ՆԱԿԱՆԻ ԱՌԵՐԻՆ ԶԱՐԵԿԱՐԱՅԻՆ
28 ԴԱՅՈՍԻ 1919 թ.

ԽՈՐԵՆԱՑՈՒՆ ԽՈՐԵՆԱՑՈՒՄ ՊԵՏԱԿ Ե ՀԱՍԿԱՆԱԼ

ԵՐԿՐՈՐԻ ՀԱՏՈՐ

Ա

Ճանաչուած է խորհուրդն մէկնա-
սը:—«Խորհուրդ» անուն ծագումն:

Այս առաջին հատուածում (գլուխ) պիտի կարծիք յայտնեմ «Խորենացու» (Խորենացի) բառի ծագման և նշանակութեան մասին, որով ճանաչուած և կոչուած է Մովսէս մեր ազգային Պատմահայրը: Սակայն որովհետեւ նորա մեկենաս Սահակ Բագրատունին ևս անբաժան յիշուած է նամակի (Խորենացու) խորագրում¹, և որոյ ո՛վ լի-

1. «Մովսէսի Խորենացու յաղագս մերոյս յիսկգրանն յայնմ բանիցս Սահակայ Բագրատունույ խնդալ» (Խոր. ա. Ա. եր. 1):

ները փոքր խնդիր չէ, ուստի ի դէպ՝ նախ վերադառնամ այս վերջնոյն:

Չարադրութեանս ա. հատորի Ա. հատուածում (եր. 4), «Խորհրդաւ Դէպքայ» խորագրի տակ, հերքելով Թովմ. Արծրունու և այլ յետին զրոգների, ինչպէս Միաբանի (Գ. տ. Մ.), զրաժը՝ թէ Խոսրով Գ.-ի սպարապետ Մեծ Սահակ Բագրատունին եղած լինէր Խորենացու մեկենասը, և անցողակի շօշափելով միւս Սահակ Բագրատունուն, որը մագպան անուանուեց և սպանուեց 481—482 թ. և որը ճանաչուած և ընդունուած է Խորենացու մեկենաս՝ Խորենացու բոլոր թարգմանող և ուսումնասիրողներից, ասացի. «Թերևս այս Սահակը եղած լինի (մեկենաս): Բայց Խորենացու մեկենասս մի՞թէ չէր կարող լինել ոմն իշխան Սահակ Բագրատունի, որը ո՛չ սպարապետ եւ ոչ մարզպան եղած լինէր»...

Իմ այս կարծիքը կարելի է մինչև անգամ պնդել մի քանի հիմունքներով և խորհրդածութիւններով:— ա) Ամենից առաջ պէտք է ի նկատի առնուլ այն՝ որ ոչ մի զրական սպացոյց, անգամ հասարակ երաշխաւորութիւն չը կայ՝ թէ Խորենացու մեկենասը եղած լինէր մարզպան Սահակ Բագ-

րատունին: բ) Եթէ Խորենացու մեկենասը լինէր սպարապետ, սպարապետ, մարզպան, նա չէր կարող զլանալ իւր մեկենասին այդ պատուաւոր կոչումներից գոնէ մին կամ միւսը՝ իւր նամակի վերնագրում, այդպիսի մի վարմունք պարտաճանաչութեան և հասարակ քաղաքավարութեան իսկ դէմ կը լինէր: Ոչ սակաւ ուշադրութեան արժանի է և այն՝ թէ Մարզպանին զրաժ լինէր. «Ընկալեալ զքո խնդիրդ»: գ) Նամակի խօսքերը, — «դի եթէ որք յառաջ քան զմեզ և կամ առ մեզ եղեն հարուստք և իշխանք աշխարհիս Հայոց, ոչ... հրամայեցին կարգել զյիշատակս բանից... և զքեզ այսպիսի այժմ եղեալ ծանեաք, ապա յայտ է ուրեմն, եթէ ամենեցուն քան զքեզ նախագունիցն ճանաչիս վեհադոյն», — ցոյց են տալիս որ և՛ հէնց այն ժամանակ իւր մեկենաս Սահակ Բագրատունուց հարըստութեամբ, իշխանութեամբ եւ դիրքով աւագագոյներ կային... «ամենեցուն քան զքեզ նախագունիցն» ժամանակի համար չէ միայն ասուած, այլ և դիրքով աւագութեան համար եւս: դ) Ընդունենք թէ Խորենացին իւր պատմութիւնը գրել աւարտել է, ըստ հասարակեալ կարծեաց՝ յառաջ քան մարզպան Սահակ Բագրատունու մահը (481—482 թ.), որովհետեւ նորա հետ թղթակցում—խօսում է մինչև պատմութեան վերջը, բայց կարե-

լի է միթէ բացատրել պատմութեան եր-
րորդ զբօսից էլ յետոյ նորան—Մարգարանին
ուղղած այս խօսքերը. «տացուք զայստիկ ման-
կականի բոյոց Տիոց եւ անհատութեան խակու-
րեանդ»...¹: Այս պարագայում դիտողութեան
արժանին այն չէ միայն՝ որ Խորենա-
ցին իւր «ուսումնասէր» մեկենասին ² մանուկ
տհաս, խակամիտ է անուանում, այլ այն
մանաւանդ՝ որ այնքան դառն ճգնաժամի
օրերում մարգարանութեան կոչուելու (ընտ-
րովի, ոչ նշանակովի) արժանիք ընծայող
Սահակ Բագրատունին այդ մանուկ, տհաս,
խակամիտը լինել գոնէ չէր կարող: Ե) Խորե-
նացու պատմութեան գրութեան ժամանա-
կի խնդիրը, գոնէ հէնց մինչև Զենոն կայսրը
(491—493), ոչ ապաքէն միանգամից խզում
է որ եւ է առնչութիւն մարգարան Սահակ
Բագրատունու եւ Մ. Խորենացու մէջ...

Վերջ ի վերջոյ, կարծում եմ, պիտի
մնայ բացազանչել և պնդել Բարդուղիմէոս
Վարդապետի հետ. «Բայց Խորենացու մեկե-
նաս մի՞թէ չէր կարող լինել ոմն իշխան

1. Տես «Ի պարսից առասպելաց. յաղագս Բիւրասպի
Աժդահակայ» (Եր., 94):

2. «Ո՞վ ուսումնասէր դու եւ զմեզ յայսմ աշխատե-
ցուցող» (Խոր., ա. 2. Եր. 20):

Սահակ Բագրատունի, որը ո՛չ սպարապետ,
եւ ո՛չ մարգարան եղած լինէր»...

Դառնամ այժմ առաջին խնդրին,—
«Խորենացի» բառի ծագման և նշանակու-
թեանը.—

Մովսէս մեր ազգային Պատմահայրը
ծնուած է, ասում են, Մշոյ շրջակայքում
(յարեմտից) գտնուող Խորնի կամ Խորօնք
անուն գիւղում: Այս ընդհանուր համոզումն
կազմուել է այն հիման վերայ՝ որ այդ ա-
նուններն (գիւղի) են միայն որ քիչուշատ
յարմարութիւն են ընծայում Խորենացի
(«Խորենացու») ածանց ձևին, ինչպէս կայ
այդ մեր Պատմահօր նամակի վերնագրում¹:

Ամենից հին յիշատակութիւնը այդ գիւ-
ղի անուան գտնում ենք Զենոն Գլակի պատ-
մութեան մէջ: Զենոնը՝ Ս. Լուսաւորչի կար-
գած առաջին վանահայրն էր Մշոյ ս. Կա-
րապետի վանքի, իսկ Խորնի գիւղն այդ
վանքին—գեռ ևս կոստուն եղած ժամա-
նակից—սեպհականութիւն էր²: Ուրեմն Զե-

1. «Տարօնոյ Խորնի կամ Խորօնք գիւղը ծնած է Մով-
սէս և այն պատճառաւ Խորենացի կոչուած» (Զարբ. «Հայկա-
կան հին դպ. պատմ.» Եր., 350):

2. «Եւ երկոտասան դաստակերտս ետ (ս. Լուս.) նմա
(վանքին)... յորոց մին Կուսոս... և Մուշ և Խորնի և Կեղը
(Զեն. Եր. 37):

նորայ վկայութիւնը, գիւղի անուան իսկութեան մասին, խնդրի ամենից կարևոր կէտն է: Ձենորայ պատմութեան ձեռագիրներում այդ գիւղի անունը երեք վարիանտ ունի, — Խորնի, Խոհրնի և Խորանի¹: Ձենորին ինչպէս և այլ հիներին յայտնի չէին Խորօնը և Խորէնը ձեւերը՝ զոր այժմեան գիտնականները — Յ. Ղ. Ալիշան և այլք տալիս են, ընթերցող, որպէս զի դորանից «Խորենացի» ածանցի ստացուիլը կանոնաւոր դարձնեն²: Խնդիրն այս դրութեան մէջ, ես այլ կարծիք եմ տածում. ըստ իս՝ գիւղի անուան յառաջ բերուած վարիանտների և ոչ մէկից չէ կազմուել «Խորենացի» ածանցը՝ որով ինքն իրեն մականուանել է մեր պատմահայրը և որը իսկապէս խնդիր է:

Խորենացու պատմութեան լատ. թարգմանող Վիստոնեան եղբայրները «գլղեսուրն ամենայն» (Խոր. ք. Ը. եր. 116) թարգմանել են Գիլիսիւրիա (յունարէն), որ նշանակում է Խորին Ասորիք³: Հոգեւոյս Յ. Ղ. Ինճիճեանը

1. Տես Ինճ. «Ստոր. հին Հայաստ.» եր. 106:

2. Տես Խոր. Հ. պատմ. աշխ. թարգմ. Խորէն եպս. Ստեփ. առաջ. էջ ԻԲ—ԻԳ:

3. «Արսիւրդիան գեղիպտոս և գիւղմանս Խոր Ասորիք կալեալ շահէր. յորմէ և Սարգանապաղոսն էր» (Եւսեր. Քրոն.

այդ թարգմանութեան հաւան է, և պնդում է Սէն Մարտէնի դէմ՝ որը սխալ էր գտնում Վիստոնեանց այդպէս թարգմանելը և ինքը թարգմանում (Կղեսուրը) կապան, կիրճ, լեռնային նեղ անցք՝ ըստ Պրոկոպիոսի յիշած Գիլիսուր-ի և Թովմ. Արծրունու (ա. դպ. ԺԱ.) լեսուր-ի: — Գիլիսիւրիան = Խորին Ասորիք ցոյց են տալի Լիբանանի և Լիբանանների գօտու մէջ ընկած ցածուն գիւղով մի փոքր աշխարհ, ոմանք էլ հասկանում են Ասորիք¹:

Ալիշանը («Այրարատ», եր. 535) Կղեսուրը կամ Կլեսուրը հասկանում է կապան, կիրճ, որպէս Սէն Մարտէնը: — Նորայր Ն. Բիւզանդացին ևս Կղեսուրը (յուն. Կլիսուրիա կամ Կլիսուրիա) հասկանում է կապան, կիրճ, լեռնային զաւառ՝ տարբերելով Կիլի Սիւրիա-ից, որը նշանակում է Խոր կամ Խորին Ասորիք²:

Նայելով Ինճիճեանի պատճառաբանութիւններին՝ իրաւունքը նորանն եմ համա-

եր. 54): — «Առ գէալապ, և այս եղև սկիզբն առնոյ յաղաքին ի Խորին Ասորիք» («Ժամ. Միխայ. Պատր. Ասոր.» Երուս. 1870. եր. 403):

1. Ինճ. «Ստոր. հին Հայաստ.» եր. 86—87, 530—532, և «Հնախ. Հայաստ.» ա. հատ. եր. 379—382:

2. Տես «Տեղեկ. ի գիրս պատմ. Ասոր», եր. 36—37. և «Կորին վարդ. և նորին թարգմանութիւնք», եր. 403—404:

բում, իսկ բառական նշանակութեանը և որ
Կղեսուրը *կապան, կիրճ* նշանակութեամբ
յաճախ է պատահում՝ ընդհակառակը: Բայց
իմ նպատակը չէ այստեղ այդ վէճի դատա-
ւոր դուրս գալ, այլ այն՝ որ եկեղեցու ար-
ժանաւոր հայրերից մին, Խորենացուց ա-
ռաջ, այն աշխարհի անունով կոչուած է
եփրեմ Խորին *ասորի*, շատ անգամ էլ պարզ,
եփրեմ Խորին, այսինքն՝ Խորին *Ասորիքից*¹:
Ընթերցողն արդէն հասկանում է՝ որ կամե-
նում եմ իսկոյն վրաբերել թէ մեր Պատ-
մահայրն ևս, թերեւս նորան հետեւելով, այդ-
պիսի մականունն ընտրեց ինքն իւր համար.
չէ որ Հայաստանն էլ ունէր իւր Խորին
Հայրը...

Խորենացին գրում է. «Երթեալ իջանէ (Ար-
մենակ) ի խորին դաշտավայրի մի»...—«Յայսմ խո-
րութեան դաշտի բնակեալ Արմենակ» (*ա. ժ. Բ. Եր.*
39, 40): Այս *խորին, խոր* դաշտավայրն էր
Մասիսի և Արագածի հովիտը՝ Արագի մի-
ջին հոսանքի վերայ, նախաքաղաք Արմաւրի

1. Մեր մասնագրութեան մէջ պատահում է շատ ան-
գամ (եփրեմ) Խորի կամ Խորին ձևով, այդպէս էլ գործ է
ածել Մ. Արեղեանը. «Եփրեմ Խորին Ասորու» (Արարատ
1899 Յունվ. Եր. 36—37), որ սխալ է ի հարկէ, տես նորայրի
սրբազրութիւնը:

խանձարուրը, Արայի դաշտը: Եւ միայն Խո-
րենացին չէ որ այս դաշտին *խոր, խորին*
գիտէ:—Ազաթանգեղոսը գրում է. «Եկին իջին
Այրարատ գաւառ ի Վաղարշապատ քաղաք» (Թիֆ-
լիս, 1882, Եր. 80):—Փաւստոս Բուզանդը.
«Իջանէր (Վաչէ) ի դաշտն Այրարատեան գաւառին»
(Ս. Պետերբուրգ, 1883, Եր. 15):—Սերէոսը.
«Արամանեակ... երթեալ իջանէ յերկիր մի խորին
դաշտավայր» (Ս. Պետեր. 1879, ա. դպ. Եր. 5):—
Թովմ. Արծ. «Հարաւային ջերմագոյն օդն չնչեաց
ի խորագոյն դաշտն քաղաքին Դմբայ» (Վ. պօլիս,
1852. գ. դպ. Բ. Եր. 193):—Դարձեալ նոյն Թով-
ման. «Արաս որդին Սմբատայ, ... գայ իջանէ ի
դաշտն Վաղարշապատայ» (դ. դպ. Թ. Եր. 337):
Ոչ մի տարակոյս չը կայ որ այս օրինակնե-
րի մէջ ևս *իջին, իջանէր, իջանէ* նոյնպէս
Այրարատ դաշտի *խորութիւնն* են ակնարկում
ի հարկէ:

Ոչ միայն այս, կան հաստատ վկայու-
թիւններ ևս՝ որ Խորենացու ժամանակ, ա-
ռաջ և յետոյ, Հայաստանում և բացառա-
պէս Արայի դաշտի սահմանները կոչուում էին
Խոր, Խորին Հայք: Մի քանի օրինակներ.—

«Պատմէ Եւնաբիոս, որ եկաց ի չորրորդ դա-
րուն, ի վարս փիլիսոփայից՝ թէ ոմն ծնեալ ի Խո-
րին Հայս... անուանեալ Բռօթերէսիոս՝ դասաւոր
Հարտասանութեան լեալ յԱթէնս, այնչափ հռչակա-

ւոր գտեալ՝ մինչև ի Հռովմ կանգնել՝ դարձան նորա, անուն տալով նմա *Թադաւոր ճարտասանութեան»* (Ինճ. «Հնախ. Հայաստ.» գ. հատ. եր. 80):—«Ի ձեռքն կրօնաւորի միջ գտեալ՝ որ էր յիրկրէն Խոր Հայոց, ի գաւառէն որ կոչի *Ձորոյգետ*, ի համբաւեալ ուխտէն Սանահին անուանեալ» (*«Հայկ. հին դպր. պատմ.»*, Վ. Լ. 1897, եր. 384) 1:—«մտանել յաշխարհն Աղուանից, որ ասի՝ Խորին աշխարհն Հայոց, որ է Աթոռ սրբոյ առաքելոյն *Թադէոսի»* (Մատթ. Ուռհ., Վաղարշապատ, 1898, եր. 230):—«Խորին Հայք. ի Թուղթն դաշանց, յճը, այսպէս կոչի կողմն Վաղարշապատ: Սմին նման և առ Խորենացւոյն, Բ. 14, «Ձմտաւ ամեալ զի մի ի Խորագոյն Հայս վարիցին»: Առ Մատթէի Ուռհայեցւոյ ի Թիւն ճԾՊ. «Հանդէս բարկութեանս ոչ կարաց մտանել յաշխարհն Աղուանից որ ասի Խորին աշխարհն Հայոց». իմն դայն երկիրս Հայաստանեաց յորս Աղուանք տիրէին՝ և ի ժամանակս իւր (Մատ. Ուռհ.) գուցէ յոմանց այսպէս անուանէին» (Ինճ. «Հնախ. Հայաստ.» ա. հատ. եր. 10):—«Իսկ զկողմանս Տայոց սահմանօք իւրովք հանդերձ՝ Խորագոյն Հայք անուանէ (Մօրիկ) և զկողմն Դուին քաղաքի՝ Նեբխագոյն Հայք» (Յովհ. Կաթ.):

Ինչ պէտք է աւելի օրինակներ կուտա-

1. Ինճիճեանը իսկական Ձորոյգետը համարում է Ջիւրակայ Անին՝ իւր շրջակայքով, Ձորոյգետի Թադաւորութիւնը՝ Անուոյ Թադաւորութիւն, Ձորոյգետացիք՝ Անեցիք: Հակառակ չէ թէ այլ տեղեր ևս նմանութեամբ կոչուել են Ձորոյգետ (Ինճ. «Հնախ. Հայաստ.» Բ. հատ. եր. 64. և «Ստոր. հին Հայաստ.» եր. 416—417):

կելու, Հայաստան երկրի կեդրոնն որ և Միջ-նաշխարհ Այրարատ գաւառը կոչուել է *Խորին Հայք*:

Արդ, խորհրդածել ևս կարող ենք: Այն երջանիկ ժամանակներում երբ Հայոց Թադաւորը, հայրապետը, աւագանին և հոգեւորականութիւնը միախորհուրդ տքնում, յղանում և երկնում էին Հայութեան մի նոր վերածնունդ — հայկական գիր և դպրութիւն ծաղկեցնել: Երբ ս. Մեսրոպը հայկական տառերը լրացրած վերադառնում էր՝ Թադաւորը և հայրապետը ուրախացած ելնում էին ընդ առաջ. այդ ժամանակ մայրաքաղաք Վաղարշապատը, այնքան հոգսերի և ջանքերի այդ խառնարանը՝ ուր «Ի կողմանց և ի գաւառաց Հայաստան աշխարհին յորդեալք և դրդեալք հասանէին ի բացեալ աղբիւրն գիտութեան Աստուծոյ. քանզի յԱյրարատեան գաւառին ի կայս Թադաւորոյն և քահանայապետիցն՝ բղխեցին Հայոց շնորհք» (Կորիւն), ինքը — այդ մայրաքաղաքը մնաց անտարբեր, երիտասարդք, պատանիք և տղայք և ծնողք չէին ոգևորւում ջեռնւում, և ոչ մի՛ն գոնէ չը նախանձեց գիւղերից, աննշան տներից, հեռու անկիւններից վաղող խմբուող տրեխաւորներին՝ որ մտնէր և փայլէր մեր Ոսկեդարեան Փարոսների շարքերում:

Քաղցր է ինձ հաւանիլ՝ որ Խորին Հայքից, Թերեւս հէնց Խորին Հայքի ինքրոնից, ծագած լինէր Մովսէս խորին(ացին), ամենից փայլուն մեր առաջնորդ Մողուց աստղը...¹:

ա) Մովսէս Խորենացու մեկեանաւ չէ և՛ ոչ մարգարան Սահակ Բագրատունին:

բ) «Խորենացի» բառը ծագած պիտի լինի իմ դիտել տուած Խորին բառիցը:

Բ

Դարձեալ «զայք առ քե»...

Խորենացու պատմութեան չը հասկացուած տեղերից մին, «Քար գայթակուլութեան» կոչուած դժուարագոյնն էր «զայք առ քե»,

1. Ս. Էջմիածնի մատենադարանի ձեռագիր Խորենացիներէից երկուսը միայն, №№ 1672 և 1035 ունին «Մովսէսի Խորինացու» ընթերցուածը. թէպէտ № 1672 ա. գրքի զխաղարկութեան (ցանկ) սկզբում ունի ըստ սովորականին՝ «Ասացեալ Մովսէսի Խորենացու»... Պէտք է իմանալ որ ձեռագիրներէից շատերի ստաջին գլխի—նամակի վերնագրի տեղը պարզապէս են թողուած, երեւի թէ յետոյ զարգացրելով գրելու համար:

եւ ըզ զայ եւ ըզ թոյ առ փիւր, եւ ըզ կենն առ եւ, եւ ըզ շայ առ սէ» խօսքը¹: Վերջին և յաջող բացատրութիւն համարում էին Հ. Ղ. Ալիշանինը, այն՝ որ վաղուց գտնուում էր և ս. Էջմիածնի մատենադարանի № 1665 ձեռագրի լուսանցում: Միաբան—Գ. տ. Մկրտչեանը 7—8 երես գրել մըրել է Ալիշանի այն բացատրութեան առթիւ², բայց առանց իւր կողմից բուն խնդրի մասին մի նոր միտք յայտնելու, այլ, ըստ իւր սովորութեան, լոկ զեկուցանողի պաշտօն է կատարել՝ կրկնելով և պատմելով ընթերցողին ուրիշի՝ այն էլ սխալ կարծիքը³: Միաբանը իւր յօդուածը վերջացնում է.—«Վաղարշի մէջ ունի (Թովմ. Վանանդեցու հրատարակած Խորենացին)՝ երեւի հրատարակչի՝ բացատրութիւնը այսպէս. «(Այսինքն, Ալէք. Քաղուէա-

1. Խոր. ա. Բ. եր. 5:

2. «Հայկական» եր. 86—93:

3. Օրինակ. այսպէս լոկ զեկուցանողի պաշտօն է կատարել Ալիշանի՝ այն էլ ընդորոշն սխալ կարծիքները.—Մօր Մեծի, Մեծամօրի, Մեծագետի, Մեծ գաշի, հիւսիսային ծովակի եւն—մասին. ահա նոյն. եր. 12—17:

Ի դէպ. պարտք եմ համարում յայտնել՝ որ Խորենացու պատմութեան մասին նորա բոլոր գրուածքները.—«Խորենացու պատմութեան ուսումնասիրութիւն» և «Հայկական» երկու գրքոյնները, — արտատպուած «Արարատ»-ից, — ուշադրութեամբ կարգաւորվ՝ գտայ որ նա է որ կրկնում է ուրիշները

ցւոց առ յօր՝ Յունաց: Զէ՛ եւ Թէ՛ Քաղղէացւոց առ Փսի Յունաց: Ղային՝ Քաղղէացւոց առ փոքր՝ է Յունաց: Եին՝ Քաղղէացւոց՝ առ Սիզմն՝ Յունաց): Եւ անմիջապէս կցում է (Միաբանը). «Այս բացատրութեան իմաստը ես չեմ ըմբռնում, եթէ սակայն կայ որ և է իմաստ»:

Ի՞նչ զարմանք որ չի ըմբռնում իմաստը, «աճապարարութիւն» հօ՛ չէ: Սակայն այդքան խոնարհ խոստովանութեան խորթ է—սազ չի գալիս յանդգնութեամբ վրաբերելը. «եթէ սակայն կայ որ եւ է իմաստ»...

Թովմ. Վանանդեցու հրատարակութեան (Ամստերդամ, 1695) մէջ գտնուած այդ բացատրութիւնը նոյնութեամբ գտնուում է և՛ Վենետիկեցոց 1752 թ. հրատարակութեան մէջ (եր. 7): Հէնց այդ ուրիշների չըմբռնած

ասածները, է՛ որ յաճախ իւրացնում է ուրիշների կարծիքները և է՛ որ ուրիշների հետևից եւ արդէն բացած ճանապարհումն է խարխափում, օրինակ՝ Խորենացու «պատմութեան բնագրի թարգմանութեան ենթարկուիլը», կամ «Մարաբասի ծաւալը», և այլն: Իսկ իւր սակաւաթիւ կարծիքները, բացատրութիւնները և սրբազրութիւններն արդէն մեծ մասամբ հեղքուած են, մնացեալն էլ անարժէք. այնպէս որ միանգամայն աւելորդ աշխատութիւն համարելով՝ թողէ խոստումս և Նասաւատրաստութիւնս, այն էր՝ յատկապէս գրել նորա յիշեալ անպէտք գրքայինների առթիւ, որոնք այնքան ակելամենքով լոյս էին տեսնում:

հին բացատրութիւնն է՝ որ առիթ և հարկ եղաւ ինձ վերագառնալ «զայլ առ քէ»...-ի իմ բացատրութեանը ¹:

Խորենացու բնագրի այն այլանդակուած և անհասկանալի դարձած (ձեռագիրներում և ընդոր լեզուներով տպագրուածներում) նախագատրութիւնը գրքիս ա. հատորում (Գ. եր. 8—13) վերականգնելով այսպէս— «զԱ. առ Ք., և զԶ. և զԹ. առ Փ., և զԿ. ն. առ Ե., և զԾ. առ Ս.», ասել էի. «դոքա խնդիր են «փոխեցին» բային (և ոչ թէ «գտնալ» բային): Բաւական է թէ այս կարծիքս միայն ուղիղ լինի, Հ. Ալիշանի վերոյիշեալ բացատրութեան հիմքն ինքն ըստ ինքեան կը տապալուէր»... և տուել էի իմ նորօրինակ բացատրութիւնը: Եւ այսօր ահա Գ. տ. Մկրտչեանների հէնց այդ չըմբռնածն է՝ որ գալիս է ապացուցանելու իմ սեպհական թէ՛ սրբագրութեան և՛ թէ՛ բացատրութեան ճշդութիւնը: Որովհետեւ

«Ալէֆ Քաղղէացւոց՝ առ յօր Յունաց»... նշանակում են՝ փոխեցին զԱլէֆ (Ա) Քաղղէացւոց առ յօր (X) Յունաց, ըզ Զէ և ըզ Թէ (Յ և Ծ) Քաղղէացւոց՝ առ Փսի (Փ) Յունաց, ըզ Ղային (Ը) Քաղղէացւոց՝ առ փոքր

¹ Եւ «Խորենացուն Խորենացով պէտք է հասկանալ», ա. հատ. Գ. եր. 8—13:

Է (E) Յունաց, ըզ Զին (ش) Քաղղէացւոց՝ առ Սիդմա (Σ) Յունաց:

Բոլորովին պարզ ձևը. — փոխեցին զՔաղղէացւոց առ X Յունաց, ըզ z և ըզ ت Քաղղէացւոց՝ առ Ψ Յունաց, ըզ غ Քաղղէացւոց՝ առ E Յունաց, ըզ ش Քաղղէացւոց՝ առ Σ Յունաց:

Այստեղ 1, z, ت, غ, ش, (=Ա. Զ. Թ. Կ. Զ.) Քաղղէացւոց, աւելի ճիշդը՝ Քաղղէացիք են, իսկ X. Ψ. E. Σ. (=Ք. Փ. Ե. Ս.)՝ Յունաց, աւելի ճիշդը՝ Յոյներ են, և որ նոյն է ինչ որ իմ սրբագրած և բացատրածը թէ՛ «Փոխեցին ի յոյն լեզու. որպէս զԱ. առ Ք., և զԶ. և զԹ. առ Փ., և զԿ-ն առ Ե., և զԵ. առ Ս.», և թէ, «դոքա անունների սկզբնասառեր են մատենագիրների և նոցա երկերի առհասարակ» 1:

1. Հ. Թ. Տաշեանը տուած բերելով նոյնութեամբ իմ «զայր առ քէ»...-ի այդ սրբագրութիւնը՝ գրում է. «Խորեքենացւոյ միջին խօսքը (ա. Բ.) թէ Յոյք թարգմանած էին օտարաց զրուածքներն «որպէս զԱ. առ Ք., և զԶ. և զԹ. առ Փ., և զԿ. առ Ե., և զԵ. առ Ս.», որ անշուփ մեկնութեանց աւելի թուած է, հակամէտ է հեղինակն (ես) այնպէս մեկնել որ յիշեալ գրքով մատենագրաց անուններ աղնարկուած ըլլան, («Հանդէս ամսօր.» 1900. մարտ, եր. 88):

Գերապատիւ Հ. քննադատը արդար խօսած լինելու համար պէտք է խոստովանած լինէր՝ որ այդ ձև գլխատառերով գրուածը ևս նոր է եւ միայն ինձ է պատկանում. ոչ մի ձեռագրում և ոչ մի լեզուով հրատարակութեան մէջ չի կարող ճարել:

Եթէ, ինչպէս առաջ, և՛ այժմ հասկանան «զայր առ քէ»—Աստեղաբաշխութիւն առ Քաղղէացիս, ևլն, որ ի հարկէ սխալ է՝ ինչպէս ասել եմ, այն ժամանակ «առ Խի Յունաց», ըստ այսմ և բոլոր միւսները կատարեալ արտիւղ դուրս կը գան: Փորձեցէք վերլուծել քերականօրէն, զիտեցողներդ, և խելոյն կը տեսնէք և կը համոզուէք՝ որ թէ սխալ է Ալիշանի անունով յայտնի բացատրութիւնը, և թէ ճիշդ է իմ սրբագրութիւն և բացատրութիւնը, և թէ յամառու և խարխափումը շարունակելու ցանկալի չէ:

ա) Խորենացու պատմութեան լեզուաբանութիւնները, հայերէն թէ՛ եւրոպական լեզուներով, առանց բացառութեան՝ ունին սխալ ընթերցումներ—«զայր առ քէ... aip in ké... aip au khé... айб на ке...»: Միակ ուղիղ ընթերցումը համարում եմ իմ սրբագրած առաջարկածը:

բ) Այդ տառերը քաղղէական և յունական մատենագիրների կամ նոցա երկերի անունների սկզբնասառեր են, և պէտք է գրել զլատասառերով:

գ) «զԱլէք Քաղղէացւոց՝ առ Խի Յունաց»... առեղծուածի իմաստը այժմ այսպէս բմբռնելի կացուցանելուցս յետոյ՝ աւելի ոյժ են ստանում իմ թէ առաջին սրբագրած առաջարկած ընթերցումը և՛ թէ բացատրութիւնս միանգամայն:

Գ

«գարսախուր խաւարս եւ
զսից խաւարծի» . . .

Գողթան հին երգերից Խորենացու Հ. պատմութեան մէջ պահուած մի փոքր հատուածը, — «Տենչայր Սաթենիկ տիկին տենչանս գարսախուր խաւարս եւ զսից խաւարծի ի բարձիցն Արգաւանայ» (Խոր. ա. Լ. եր. 88), — դարձել էր նոյնպէս քար զայլութակողութեան: Խորենացու Թարգմանող, ուսումնասիրող, քննադատ, նոյն իսկ ընթերցող չի եղել՝ որ փորձած չը լինէր մտածել հասկանալ կամ բացատրել, և այդ բացատրութիւնները բազմաթիւ և բազմազան են, օրին. Մ. Էմինի, Ք. Պատկանեանցի, Գր. Խալաթեանցի, և այլոց: Վերջին բացատրութիւնն իմն էր որ՝ բնագրի «ի բարձիցն Արգաւանայ» սրբագրելով «ի բարձանցն Արգաւանայ», կնքեցի բացատրութիւնս հետեւեալ խօսքերով. «Եւ ահա լեռնցի տիկին Սաթենիկի կանացի սիրաը ուզում

էր Արգաւանայ բարձանց վերայ միայն ըստնող խաւարծիլ»¹:

Երգի բառերից «գարտախուր խաւարտ և զտից»ը թուել էի առանց բացատրութեան՝ իբրի «անձանօթ» կարծուած բոյսեր: Այն բացատրութեանս ժամանակ (1899 թ.) ինձ յայտնի չէր որ Խաւարծիլի արմատն աւելի յարգի և պիտանի բան էր եղած. կարգալով Ինճի-ճեանի «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի. Ասիա» (ա. հատ. եր. 38—39), տեղեկանում եմ յանկարծ որ դա մինչև անգամ ամենաբոյժ ճարտրի (զեղ) համբաւն ու յարգն է ունեցել՝ ոչ նուազ քան մանրագորը — լօշտակը: Տաճկերէն կոչւում է *ռաւէնդ*: Հայաստանում քիւրդ բէյերը դորան պատրաստում ուղարկում են Կ. պօլիս՝ սուլթանի արքունիքը և Դրան մեծամեծներին հաղիւս (նուէր): Եւրոպայում այդ ստացւում է 2/ինատանից (*racin de la rhubarbe*). մեր բառաբաններում կոչւում է խաշնգեղ:

Խաւարծիլը գտնուում է Հայաստանի որոշ տեղերում միայն, — Չարուր-Դարալագեազի (Վայոց ձոր) և Օարանդի լեռներում՝ որ

1. Տես «Խորենացուն Խորենացով պէտք է հասկանայ», ահատ. թ. 2. եր. 44—46:

Արգաւանի սեպհական կալուածք և իշխանութեան սահմանումն էին (ա. հատ. Ժ. 2. եր. 45—46), այլ և այժմեան Տաճկաց չայատանի մի քանի տեղերում, օրին. Խնուսայ, Մշոյ, Վարազայ, և այլ լեռներում: Տեղացիք գիտեն և այժմ իսկ խաւարծիլի արմատը—*ռավէնդը* շատ տեսակ հիւանդութիւնների իբրև բժշկական *մար* գործադրել¹: Խաւարծիլը լինում է երկու սեռի՝ ինչպէս առ հասարակ բոյսերը: Որձը ցողուն է տալիս՝ որ կեղևում և ուտում են դալար ժամանակ, կամ մանրում կերակուրի մէջ են ձգում եփում, թթուաշ և ախորժեղի համ ունի: Հաւատացած են, օրինակ՝ իմ տեսած Թաւրիզի թուրքերը, ոչ պակաս և հայերը, թէ ով ուտի՝ նորա լընդերը չեն հիւանդանայ: Խաւարծիլի արմատը նման է ստեպղինի (գազար), լինում է գեղնադոյն, կարմրադոյն և թուխ կամ սի, երբեմն էլ երկայն՝ ծառի տարածուող արմատների ձեւով: Արմատի (ռավէնդ) վերայ լինում են պտուկներ՝ սիսեռի մեծութեամբ՝ ինչպէս գետնախնձորի վերայ: Բարձր յատկութիւն ընծայում են աւելի հին—գախացած

1. Բժ. Ա. պատմում էր բարձրաստիճան մէկի համար, թէ «ռավէնդը ջերում ման է գալիս, ուրիշ դեղերն արհամարհելով»:

արմատին. գոյներն ևս առանձին նշանակութիւն ունին: Քիւրդերը գիտեն *ռավէնդի* լաւ պատրաստելն,—երբ գտնում հանում են ագնիւ տեսակը, ծակում են և թել անցնելով կախում հօտի մի ոշխարի վզից, և որոշ ժամանակ այսպէս բաց օդում լեռների արօտներում անոյշ օդով և ցօղով պատրաստում:

Վարինեանցի բաղդատած ձեռագիր օրինակի, եր. 50, և Վեն. տպագրածի (1752 թ.), եր. 89, և մեր մի քանի ձեռագիրների ընթերցուածը յայտնի է—«գարտախուր հաւասար խաւարտ»: Բողկը, բազուկը, գետնախնձորը, խրենը, գազարը, և առ հասարակ ուռուցիկ պիտանի արմատները հասարակ անուամբ կոչւում են *խաւարտ*¹: Ուրեմն *արտախուրը* (=խաւարտ) խաւարծիլի արմատն է անշուշտ, որ նոյն է *ռավէնդ*:

Մնում է այժմ «գտից»ը հասկանալ:

Տիք, նշանակում է *իրան*, հասակ, ըօյ (taille), հայցականը լինում է *գտիս*²: Բառիս

1. «Տնտեսի պարտէզ... յորում գոյանան տարեկան թերք, բանջարք և խաւարտք ի պէտս միաբանից» (Մեսր. Թաղիդ. «Ճանապարհորդութիւն ի Հայս», ա. հատ. եր. 43 և 126):

2. «Աւուրբք մանուկ, տիօք առոյգ և բարձր հասակաւ» (Թուդ. եր. 26)—«Թ հասակ և ի տիս հասեալ որդւոց նորա» (Խոր. ա. Ժէ. եր. 59):

վերջի *ս* գիրը *ց*-ի հետ իբրև նոյնաձայն՝ երգուելով և բերնէբերան անցնելով տեղի է տուել *ց*-ին և դարձել (բառը) *զտից*: Ընդունելով, ամենայն վստահութեամբ, որ այժմեան «*զտից*»ը երգի հեղինակի սկզբնադրում եղած է *զտիս*, և որովհետև բոյսի տիպը նորա ցողունն է (*tige*), այսպէս ահա այժմ և՛ սրբագրւում, և՛ լիովին բացատրւում է որ՝ «Տենչայր Սաթենիկ տիկին տենչանս զարտախուր (= ռաւլէնդ) և *զտիս* խաւարծի ի քարծանցն Արգաւանայ»: — Կարժամանակ որ պատմական Արգաւան քիւրդ բէյն էլ խաւարծիլի արտախուրը (= խաւարտը = ռաւլէնդը) և դալար ցողունը հաղիա էր ուղարկում մեր Արտաշէս Բ. թագաւորի արքունիքը՝ իսկ տիկին Սաթենիկը ախորժում էր ընդունել դորանք. ուրիշ ոչինչ:

Իսկ Խորենացու միւս խօսքը, — «Իբր Երփանք Սաթենիկան ընդ վիճապագունս՝ առասպելաբար» (Խոր. ք. ԽԹ.), — մի և նոյն խաւարծիլի երգն էր՝ ուրիշ առթիւ յիշուած, որ հէնց Խորենացու և նորա ժամանակակիցների համար ևս առասպել և հանելուկ էր՝ ինչպէս մեր ժամանակի գիտունների համար ¹:

1. Տես Խոր. 4. պատմ. աշխարհաբառ, Թարգ. Խոր. եպս. Ստեփանէի. ծան. 171:

Երգի բառերի նշանակութիւններն և իմաստը սուքա էին՝ որ բացատրեցի, որ նախ՝ աղաւաղուելով և չը հասկացուելով. և երկրորդ՝ ծուռ մտօք այլաբանութիւն են թաղրուելով՝ կասկած են յարուցել թագունոյ նամուսի մասին: Ոչ որ չը խորհրդածեց՝ որ մինչև երգուելու աստիճանին հասած ընկած թագունոյ նամուսի տէր թագաւորը ժողովրդի արհամարհանքին միայն կարող էր արժանանալ, մինչ Արտաշէս Բ. Արշակունի թագաւորների մէջ ամենից աւելի սիրուած ու յարգուած թագաւորն էր ¹:

Մի անգամ ընդ միշտ լուծուած եմ համարում առեղծուածը, և խաշագծում այնքան բազմաթիւ և բազմազան բացատրութիւնների հետ և՛ Միաբան—Գ. տ. Մկրտչեանի քսան եւ հինգ երես («Հայկականք» եր. 35—59) այդ առթիւ գրած—*միաձնեւրի վերայ*:

ա) «Արսախուր»՝ խաւարծիլի արմատն է, որ է համբաւուոր ռաւլէնդը կամ նոյն մեր խաչդեղը, իսկ «զսիս» (ոչ զսից)՝ խաւարծիլի ցողունը:

1. «Եւ ոորա (Արտաշէս Բ.) այսպէս սիրելի եղեալ աշխարհիս մերոյ» (Խոր. ք. Գ. եր. 205):

բ) «ի բարձիցն Արդաւանայ», պէտք է գրել «ի բարձանցն Արդաւանայ», ինչպէս առաջ գրել սրբագրել եմ (ա. հատ ժ. 2.):

գ) Երգի հեղինակի սկզբնագիրը եղած պիտի լինի—«Տենչայր Սաթենիկ տիկին տենչանս զարսախուր և զսիս խաւարծի ի բարձանցն Արդաւանայ»:

Դ

«սկսայց քեզ և որ ինչ զկնի այսոցիկ ի նիւսման պատմութեան պիտոյից»:

Խորենացին, Չամբիրամի մահը պատմութեան յետոյ (ա. ժ. 5. ժ. 5.), յայտնում է իւր մեկենասին՝ որ պիտի մեր ազգի աւագագոյն նախնիքների մասին թէ՛ զրոյցներ եւ թէ՛ իրողութիւններ, բայց ոչ թէ սարքովի («կամամտածական») կամ անպատշաճ բաներ, այլ ինչ որ զբքերից և իմաստուն և քաջահմուտ բանահաւք մարդիկներից տեղեկացած՝ պատմէ իւր գրքում արդարութեամբ և ուղղամտութեամբ, մեղք ու վարձքը թողնելով հաւաքողների վզին¹: Ապա յաւելացնում է. «Եւ այսո-

1. «Իսկ ըստ որոյ հաւաքումն. Աստուծոյ լինել

ցիկ այսպէս կարգելոց, կամ հաւաստի կամ դոյզն ինչ կասեալ յարդարոյն, սկսայց քեզ եւ որ ինչ զկնի այսոցիկ ի նիւսման պատմութեան պիտոյից» (Խոր. ա. ժ. 5. եր. 62):

Թարգմանողների, ուսումնասիրողների և քննադատների՝ Խորենացուն չը հասկացած տեղերը շատ-շատ են, սակայն պ. Մ. Աբեղեանի՝ վերելում ընդգծածս նախադասութեան սխալ հասկանալն ուրիշ և ուրիշների չը հասկացած սխալի նման սովորական բաներից չէ՝ որ զանց առնեմ. պարոնը դորանով ցանկանում և ճգնում է որ «պատմութիւն հիւսման պիտոյից» անունով մի զբաւոր աղբիւր եղած լինէր Մ. Խորենացու ձեռքի տակ (տես «Հայ. ժող. առասպ. Մ. Խորենացու հ. պատմ. մէջ». «Արարատ», 1900 հոկտ. եր. 484—495): Աբեղեանից հազիւ թէ Խորենացուն աւելի ճանաչող հասկացող պ. Ստ. Մալխասեանցն էլ, թեթիկ կերպով քննադատելով Աբեղեանի գիրքը (տրտատաւուած «Արարատ»ից, 1901 թ.), հաւանում է նորա այդ բացատրութիւնը—հետաքրքրական գիւտը (տես «Մշակ», 1902 թ. № 6):

Մինչ Խորենացին դորանով պարզապէս ուզում է ասել, բայց ի հարկէ իւր ոչ-դիրքին

յայտնիս, եւ մարդկան զովելիս կամ բարեխիս, եւ մեք այնոցիկ օտար եւ բացակայեալ» (Խոր. ա. ժ. 5. եր. 62)

ոճով. — «սկսայց քեզ և յորոյ (յայնոցունց՝
որք) զինի աշտոցիկ պիտոյ են պատմութեանս
հիւսմանս» — ևր ուսեմ այն բաներից՝ որոնք սո-
րանցից յետոյ պիտոյ են պատմութեանս հիւ-
սմանը»: Համեմատեցէք. — «Բազում ինչ ... պատ-
մի ի մատենին, այլ մեք որ ինչ պիտոյն մերոյ
հաւաքմանս ե, շարեացուք» (Խոր. ա. ԺԲ. եր.
38): — «Չատենաբանութիւնս իմաստնոց յեկեղեցւոց
յԱտարիկէ իմ ընթերցեալ, բազում անգամ գտի գոճ
գրոցս. որ ի նախ գայր պատմութեանս մերոյ հիւս-
ման» (Մատենադր. Մ. Խորենացւոյ. պատ-
մութիւն սրբոյն Հովսիսիմեայ. եր. 297)¹:

Ես մեղաւոր չեմ որ Մ. Արեւիկանի կա-
ռուցած (օգուտ) այնքան ընդարձակ շէնքը և
յոյսերը երազի պէս չքանուած ցնդուած են, քանի
որ նորա վերջը հիմունքն էր խախտուած²:
Թող շատ զգոյշ վերաբերուեն Խորենացուն,
թող անփոյթ չը մնան քերականութեան,
թող մանաւանդ ուշիւ ուշով հետեւեն՝ որ «Խո-
րենացուն Խորենացո՛ւ վ պէտք է հասկանալ»...

1. Հանդուցեալ Խ. եպս. Ստեփանէի եւ Գարագաշեանի՝
այդ կտորի թարգմանութիւնները գրեթէ միանման են, սա-
կայն դարձեալ անճիշդ:

2. Ի գէպ. ինչո՞ւ չարձանագրել — չը պահպանել մի սի-
րուն անհկողութիւն — 1875 թ. Բուն բարիկենդանի զինքը ձեռա-
րանի ճեւշի սենեակում (հիւրատանը — Ղազարապատ) ժողով-
ուած են լինում բոլոր ուսուցիչները, վերականգնելու եւ այլ

ա) «Ի հիւսման պատմութեան պիտոյից» — չի
նշանակում «Պատմութիւն հիւսման պիտոյից»:

բ) «Պատմութիւն հիւսման պիտոյից» անուն
գիրք չի եղել Մ. Խորենացու ձեռքի տակ իբրեւ աղ-
բիւր:

Ե

Պատմութիւն, վէպ, լիպագիր,
վիպասան, երգ վիպասանայ, ղըրոյ,
ստատոյէլ՝ ըստ Խորենացու:

Ոմանք աշխատել են սահմանել պատմու-
թիւնը, վիպը, վիպասանը, երգ վիպասանացը, զը-
րոյցը, առասպելը՝ ըստ Խորենացու, ըստ միշտ
էլ սահմանել են հակառակ Խորենացու հաս-
կացածին, հետեւելով միայն իրենց սեպհական
թելադրութեան, Խորենացու խօսքով՝ «ըստ յօ-
ժարութեան և ոչ ըստ ճշմարտութեան» (ա. ԻԲ.): Օ-
րինակ. Մ. Էմինը. — «Վեպ... ըստ Խորենացւոյն

հրաւիրուածներ, մի բազմութիւն: Յանկարծ նոցանից մինը
լուրջ նկատում է. — «Կարող է սենեակը (երբորդ յարկում) փը-
չել՝ որովհետեւ խախտու է»:

— Ո՛չ, այս սենեակը խախտու չէ, այլ տալն (ներքին
յարկերը) է խախտու. — պատասխանում է, նոյնպիսի լրջու-
թեամբ, բարի հիւրընկալը (Յ. վ. Ղալամ)...

(է) պատմութիւնն թագաւորաց՝ ի մասեանս թագաւորաց ամփոփեալ, չափաբերական եւ ոչ արձակ»։ — «Ձհակառակն վէպին նախնիք մեր զրոյց կոչէին, որ է պատմութիւնն արձակ և ոչ չափաբերական, հին ականդութիւնք՝ բերանացի զրուցեալք, յանցանել դարուց ժողովեալք և ի գիր արձանացուցեալք»։ — «Առասպել... վիպասանութիւն կամ պատմութիւն, յորում նախնի աղիքը այլաբանօրէն զնւարճութիւնն աւանդէին» («Վէպք հնոյն Հայաստանի»։ եր. 7. — 8)։

Սուրա հակառակ, Մ. Արեղեանը հաւանելով — ընդունելով վէպի՝ «Հայկազեան լեզուի նոր բառգրքի» տուած սահմանը¹, պատմութիւն, վէպ, վիպասանք, երգ վիպասանաց, զրոյց՝ նոյնացումը է նախ միմեանց հետ և ապա այդ բոլորը միասին՝ առասպելի հետ, և այդ նոյնացումը անում է ըստ Խորենացու և յանուն Խորենացու², որպիսի մտքից Խորենացին անաթեմայով կը հրաժարուէր³։

1. «Վէպ. հին զրոյցք՝ իրական կամ ստայօղ, պատմութիւն՝ արձակ կամ քերթողական, լուր՝ բանիւ կամ գրով»։

2. «Արարատ», 1899 Յունվար, «Հայ ժողովր. առասպելները Մ. Խոր. Հ. պատմութեան մէջ», եր. 30) — 37։

3. Մ. Էմինը վաղուց ևս առաջին անգամ խիստ համոզիչ պատճառաբանութեամբ յայտնել է («Մովս. Խորենացի եւ Հայոց հին վէպերը») թէ՛ Խորենացու մէջ Մարաբասին վերագրուած պատմութիւնը ոչ թէ քաղուած է Նինուէի գրատան յունարէն մատենից, այլ տեղական բուն ժողովրդական աղբիւրներից, — վիպական երգերից, զրոյցներից, ականդութիւններից, առասպելներից. եւ թէ՛ հաւաքող կազմողը կարող էր լինել Մար

Իբրեւ Խորենացու պատմութիւնը կարդացած մարդ՝ հարկաւոր եմ համարում և կարող եմ վկայել, որ Խորենացին՝ պատմութիւն, վէպ, երգ վիպասանաց, զրոյց, առասպել, հասկացել և գործ է ածել պարոնների և ոչ մէկի հասկացած իմաստով։ Սխալ են Մ. Էմինի՝ վէպին, զրոյցին և առասպելին տուած սահմանները, ինչպէս և մատամբ Հայկազեան լեզուի նոր բառգրքի տուած (վէպին) սահմանը, և միւս կողմից ասել, ինչպէս Մ. Արեղեանը, թէ՛ «Խորենացին... վէպ բառը գործածած է... պատմութեան իմաստով»։ — «Վէպ բառի իսկական իմաստը

Արար կամ հէնց ինքը Խորենացին։ — Պրօֆ. Գ. Խալաթեանցը ուղղակի Խորենացուն է մատնացոյց անում, եւ աւելի իբրեւ հեղինակի քան հաւաքողի յիշեալ վէպերի, երգերի, զրոյցների եւ առասպելների (Խալաթեանցի այդ շարադրութեանը տնտիջական ծանօթ չեմ՝ ուղեղէն լաւ չլիմանալու պատճառով)։ — Մ. Արեղեանը իւր ընդարձակ երկասիրութեան մէջ աշխատում է ցոյց տալ Մ. Էմինի եւ Գ. Խալաթեանցի այդպիսի կարծիքների սխալ լինելը. ինքը չի ընդունում թէ Խորենացու աղբիւր եղած լինէին Էմինի կարծած ժողովրդական վիպական երգեր, եւ այլն, կամ թէ Խորենացին իրենից սարքած — շարադրած դորանք՝ ինչպէս կարծում է Խալաթեանցը. այլ ընդունում է թէ կային պատմութեան քերթիքներ եւ երգեր վիպասանաց, որ ուրիշ բան չէին՝ թէ ոչ՝ առասպելներ։ Այսպիսի վախճանի հասնելու համար շարադրութեան սկզբից ցվելը բուն պատմութեան աշխատում է նոյնացնել Խոր. Հ. պատմութեան մէջ պատմութիւն, վէպ, երգ վիպասանաց եւ զրոյց՝ առասպելի հետ։

Խորենացու պատմութեան մէջ իբրեւ *պատմութիւն*՝ պարզուած համարելով» (ինքնախաբու-
թիւն)։— «զրոյց բառը Խորենացու մէջ համա-
նիշ է վէպ բառին, և նշանակում է... *պատմութիւն*»։— «Կարիք չենք տեսնում «զրոյց»
բառին... ժողովրդական պատմութեան իմաստ
տալու..., ինչպէս անում է պ. Մառը, հիմնուե-
լով (Մ. Ար.) անոր վերայ, որ այդ «զրոյց»-ը
առասպել է», և այլն, — այդ էլ նման է ասե-
լու թէ արեգակը չի լուսաւորում...

Արեգեանի կուտակած օրինակներն ամե-
նեւն չեն կրաշխաւորում նորա այդ կարծիք-
ներին՝ և ոչ մի անգամ։ Արեգեանը «սլ կամ
ուստի գայսպիսի եղիտ զուցաբանութիւնս» (ա. Բ.)
Խորենացու խօսքը օրինակ բերելով՝ ասում է.
«խօսքը Մարաբասի *պատմութեան մասին է*»,
ուրեմն, հաւատացնում է, «զրուցաբանութիւն»
նշանակում է *պատմութիւն*։ Զիմանալով որ Մա-
րաբասի բերածը ճշմարիտ որ զրուցաբանու-
թիւն էր՝ պատմութեան, վէպի, զրոյցի և ա-
ռասպելի մի խառն պատմութեան, որից Խորե-
նացին դժբախտաբար շատ զրուցաբանութիւն-
ներ գեռ դուրս է թողել. — «այս կարգ զուցա-
բանութեանս դադարումն առցե» (ա. Թ.)։— «Զհա-
ւաստին որչափ կարացար ի բազմաց ընտրեալ բա-
նից կարգեցար» (ա. Զ.)։— «Բազում ինչ... պատմի ի
մատենին, այլ մեք, որ ինչ պիտոյն մերոյ հաւաք-

մանս է, շարեացուք (ա. ԺԲ)։ Ես զարմացած եմ
միանգամայն, թէ ինչպէս Արեգեանը և՛ «Երբ
ապա յըզմակն քո հասանիցեպ զուցած պատմու-
թիւն» (ա. Է.) հասկանում է։— «այսինքն, Երբ
պէտք է *Հայոց պատմութիւնը պատմենք*» (!!!)։
Մինչ պէտք էր գիտել՝ որ պատմութիւն, վէպ,
զրոյց, առասպել, խառն ի խառն պատմում էին
բերնէբերան և լցուած էին Սահակ Բագրա-
տունու զլուխը, որոց կարգում մինչև անգամ
և՛ Բիւրասապի Աժդահակի առասպելները...
Զարմանալի է նոյնպէս որ «զամենայն ազգաց
զմասեանս և զվեպս... ի վեպս եւ ի պատմութիւ-
նքս» (ա. Բ. Գ.) նախադասութեանց մէջ մա-
տեան և վէպ կամ պատմութիւն և վէպ *համա-
նիշ է համարում*՝ վկայ բերելով թէ Բագմա-
վէպ և Կեփաղիոն *վիպագիր* են կոչուած,
մինչ, ասում է, պատմագիր են նորա. բայց
մոռանալով որ Խորենացու հայեացքով՝ նո-
քա այն վիպագիր են և ոչ պատմագիր, որով-
հետեւ՝ Աստուածաշնչի պատմութիւնից տար-
բեր են պատմում։ Կարգացէք Խորենացին։

Խորենացու պատմութեան սկզբից մին-
չև ք. գիրք, Թ. գլխի վերջը, ուր սպառուում
է Մարաբասեան պատմութիւնը, և ԼԶ. ԼԷ.
ԽԲ. ԿԱ. (Սանատրուկի, Երուանդի և մօր, և
ընտաւագրի զրոյցք և առասպելները), բոլոր

տեղերում, և առանց նոյն իսկ մի հատիկ բացառութեան, գտայ ճշդութեամբ և պատշաճ տեղերում, որոշ նշանակութեամբ գործածուած պատմութիւն, վէպ, վիպագիր, վիպասան, երգ վիպասանաց, զորոյց եւ առաջին բառերը։ Թէպէտ առաջին սկզբութեանս մէջ գրեթէ բոլորը դուրս բերած եմ և բացատրութեամբ և ծանօթութիւններով ևս լուսարանած ինձ համար, բայց միթէ պէտք էր որ ծանրաբեռնեմ շարագրութիւնս՝ որպէս զի հերքած լինէի ում և է մտածածին նոյնացումները։ Խորենացու ա. Զ. գլուխը գրեթէ բաւական է ըմբռնող բնադատին համոզուելու՝ որ այս այսպէս է։ Մի անգամ միայն, Տորքի մասին (բ. Ը.), և այն՝ ըստ երևութիւն, կարծւում է թէ առասպել և զորոյց նոյնացնում է Խորենացին, ինչպէս և հասկացել է պ. Աբեղեանը. սակայն ուշադիր ուսումնասիրողը կարող է տեսնել՝ որ Տորքի՝ «վասն ուժեղութեան» առասպելների հետ պատմուած են եղել նորա և՛ «վասն սրտեայ լինելոյն» զորոյցներ, մինչ Խորենացին յիշել է նորա միայն «ուժեղութեան» անհեթեթ գործերը—«առասպելաց առասպելները։ Ուստի Տորքի մասին առասպելաբանուած պատմուածքները, բոլորը միասին—«վասն ուժե-

ղութեանն եւ սրտեայ լինելոյն»—մի բառով զորոյց անուանելը՝ նոյնպէս ուղիղ է։ Եւ առասպելը զորոյցի հետ երբեմն նոյնանալ կարող է թէպէտ, բայց պատմութեան հետ՝ երբէք։

Պէտք եմ համարում նորից սահմանել պատմութիւն, վէպ, վիպագիր, վիպասան, երգ վիպասանաց, զորոյց և առասպել բառերի նշանակութիւնները՝ ըստ Խորենացու.—

Պատմութիւն.—ընդունուած ճշմարտութիւն։ Պատմութիւնը, կարելի է ասել, զիւանի գործ է¹։

Վէպ.—ոչ-ճշմարտութիւն՝ ըստ ճշմարտանման, ստայօղ—խառնուրդ ճշմարտի և ստի, երբեմն այլաբանուած։ Իրաւունք չէ գեղչել վէպից յայտնի սուտն անգամ։ Վէպն անհատի անպատասխանատու գործ է։ — «Թէ՛ ճշմարտութեանն ի վիպագրաց... հաճեցան շարագրել... երբեմն ի ճշմարտեան, եւ երբեմն ի սրտեան... յետ ջրհեղեղին երիս կարգելով արս ... նրբարտեան, իսկ անուանցն փոփոխմամբ եւ բազմօք

1. Այլ բան է՝ որ երբեմն նպատակաւոր ստեղծելու ներումն են շինում...

այլով ստեմ» (ա. Զ.):—Ո՞վ կարող էր այսպէս խորենացուց լաւ սահմանել վէպը և վիպագիրը:

Վիպասան. — վէպ պատմող, այլ և պատմող եւ երգող միանգամայն:—«Արտաշիսի վերջնայ գործք՝ բազում ինչ յայտնի են քեզ ի վիպասանացն, որ (գործք) պատմին ի Գողթան» (բ. ԽԹ.): Թէպէտ նոյն գլխում և՛ ասում է. «Այս ամենայն, որպէս ասացար, յայտնի են քեզ յերգս վիպասանացն»: Սակայն այս ամբողջից պարզ հետևում է՝ թէ է՛ որ պատմում և է՛ որ երգում էին:—Մ. Էմինը ասել՝ հասկանում է երգել, ուստի և վիպասան՝ հասկանում է վէպ երգող, այս սխալ հիմամբ էլ վէպ՝ կարծում է անպատճառ «չափաքերական եւ ոչ արծակ», մինչ ասել՝ նշանակում է ասել—պատմել, երգելով թէ՛ արծակ՝ մի և նոյն է. —«Քաղցր է ինձ ասել և յողորմ գեղեցիկ դաստակերտին երուանդայ» (բ. ԽԹ.).— խորենացին ի հարկէ պատմում է և ոչ թէ երգում երուանդակերտի մասին...: Մ. Էմինը սկզբում — վէպի սահմանելու ժամանակ ասաց. «չափաքերական եւ ոչ արծակ», բայց յետոյ, եր. 64, պարսիկ բանաստեղծի (Ֆիրդուսի) մասին ասելով, — «Որոյ յգգեցուցանելն նախնական վիպասանութեանց աշխարհին իւրոյ զձեւ չափաքե-

րական, ի խնդիր լեալ է աղբերաց՝ և չէ հեռացեալ ի հնազոյն աւանդութեանց», — յայտնապէս խոստովանում է, ինքն իրեն հակասելով, որ ոչ-չափաքերական—արծակ վէպեր ևս կային և լինում են¹:

Երգ վիպասանաց. — այն բնաւորութիւնն ունի ինչ որ վէպը, սակայն բացառապէս երգւում է, ուստի չափական է, այլ և աւելի քանպատեղծական. —

«Հատուած դեպքեալ Վարդգէս մանուկ ի Տուհաց գաւառէն, զՔասաղ գետով, եկեալ նստեալ զՆրէշ բլրով, զԱրտիմէզ քաղաքաւ, զՔասաղ գետով, Կռել կոփել զբուռն երուանդայ արքայի»²:

1. Ժողովրդական վիպասանները—Աշուղները վէպը ընդհանրապէս երգում են, բայց և պատմում են վէպի յատուկ կտորները՝ սրանք երգուածի հետ կապում են մի ամբողջութիւն: Օրինակ. Սասնոյ վերջին տարիների աղաները պատմում են և որոշ կտորներ երգում, բայց և կան՝ որ միայն պատմել գիտեն, կամ ընդհակառակն միայն երգել: Ի դէպ և առաջին անգամ այստեղ պէտք է դիտել տամ՝ որ այլ է վիպագիր, այլ՝ վիպասան. —Արեւիկէն, Գեփաղիւն, Բաֆֆի՝ վիպագիր են, իսկ Գողթան երգիչները, Տիվանին, Փահրաղը՝ վիպասան...

2. «Կռել կոփել զբուռն». Խոր. եպս. Ստեփանէն թարգմանել է «տաշել կոփել» (!!!): Մ. Արեղեանը՝ «Կռել կոփել» նշանակում է պարզաբար թակել, ծեծել. իսկ մէկի դուռը թակել, ծեծել... նշանակում է մէկի աղջիկն ուզել (Արարատ, 1901 Մարտ, եր. 75—176):—Հէնց խորենացու խօսքից էլ հասկացւում է աղջիկ ուզել, ևս այդ քաջ դիտելի. սակայն Արեղեանը

«Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշի-
սի,
Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթին-
կանն»:

Նոյն գլխում կ' «Հեծաւ արի արքայն Արտա-
շէս ի սեռան գեղեցիկ»...: Նոյնպէս և «Ներկէր երկին
և երկիր» այլարանական երգը: Թէպէտ սորանց
համար Խորենացին ասում է. «յառասպելն ա-
սեմն».—«առասպելեալ երգեմն». — «առասպելաբա-
նեղով... ասեմն».—«ասեմն առասպելք» (Խոր. բ. ԿՅ.
Ծ. և ա. ԼԱ.), սակայն Խորենացին ինքն է'
որ վիպական պատմութեամբը առասպել է
կարծում—չի հաւատում, և բացատրում է,
օրինակ, «դահեկանս ճապաղելով, կամ լայ-
քայ և ոսկի «ի վարձանս» (բաշլղ) տալով,
և այլն¹:

չի կարողանում բացատրել: —Նախ, կռել՝ չի նշանակում թակել,
ծեծել, այլ կոփենէ՛ որ նշանակում է թակել—ծեծել, ներկորդ՝
ամեն դուր թակողը աղջիկ չի ուզում... Երրորդ՝ «կռել... ըզ-
դուն»՝ նշանակում է դուր կտրել—բռնել՝ չը հեռանալ: Թ-
րին. «դուռը կտրած՝ չի հեռանում, սպասում է»: Կամ, «առաջս
կտրեց—բռնեց»: Տաճկաց Հայաստանցոց բարբառներում ճիշդ
կռել են զործածում.—«դէմս կռեց».—«դուռը կռեցին» չը թոր-
կին երկել: Այս այսպէս բացատրելուցս յետոյ, աւելորդ չեմ
համարում ասել, որ՝ «դուռը ծեծել» (կոփել) միայն, առանց
կռելու, չի նշանակում աղջիկ ուզել, այլ՝ անստակ մտօք աչք
դնել—հետամուտ լինել ուրիշի անկողնուն.—«դճմա խալին
գափընի, դոյնալար գափընի»=Մի թակիր այլոց դուռը, (թէ
ոչ՝) ևը թակեն դուռը...

1. Տես ա. հատ. ԺԲ. ԻԵ. եր, 50—51, 68—70:

Զրոյց.—Թէ՛ հշմարիտ թէ՛ սուտ կամ
այլայլուած, սակայն միշտ կարօտ ստուգու-
թեան. երբեմն առասպելաբանուած:—«Հա-
սանիցեմք ի հեթանոսական զուցակարգութիւնս,
սակայն և ի նոցանէ զոր ինչ հաւաստին կարծմք,
առնուլ (ա. Գ.):—Եւ այսքիկ զրոյցք սուս եւ կամ
քե աւելարեւ լեւիք, մեղ չէ ինչ փոթ» (ա. Զ.):—
«զրոյցք եւ իրականութիւնք» (ա. ԺԺ.): Տեսնում
էք թէ Խորենացին ինչպիսի պատմութեամբին
է անուանում զրոյց և ինչպէս ճիշդ սահ-
մանում:

Առասպել.—անքնականը և չափազան-
ցրածը, սովորական խօսքով՝ խելքումնորից
դուրս բանը այլ և անպարկեշտը՝ է առաս-
պել:—«Ուրեմք Շամիրամայ ի ծով... և Շամիրամ
բար առաջին քան զՆիորէ» (ա. ԺԸ.):—Արտա-
ւադղի առասպելները, վիշապաց առասպելնե-
րը, և՛ «Իբր տրիանք Սաթինկան ընդ վիշապադունս
(անպարկեցք) առասպելաբար» (բ. ԽԺ.) և
այլն¹:

Այսպէս, պատմութիւնը ազատ չէ սուտ
խօսելու ինչպէս վէպը, իսկ զրոյցը՝ չէ ըն-
դունուած ճշմարտութիւն՝ ինչպէս պատմու-
թիւնը, և ոչ ազատ սուտը շարունակելու՝ ինչ-

1. Առասպել բառը յիշեցնում է Ղարաբաղցոց պէլ բա-
ռը. առասպել=առած—պել,—խենթութեամբ բան:

պէս վէպը: Զրոյցը դադարում է գոյութեան իրաւունք ունենալուց իբրեւ զրոյց՝ երբ նորան այլ ևս չեն հաւատում: այդ դէպքում յամառութեամբ տեղ սուտ պատմութեամբ անցնում է առասպելի կարգը: Զրոյցի լսելու ինքնին հարց է ծագում, — *Ճշմարիտ է արդեօք, մինչ պատմութեան համար՝ անտեղի է այդպիսի հարցը, իսկ վէպի՝ այլ և առասպելի՝ աւելորդ: Զրոյցը սովորաբար սկսում է ասեն, ասէին, ասի, անորոշ խօսքով: Զրոյցի «հին» կամ նոր, գրաւոր կամ անգիր լինելը ոչ մի առնչութիւն չունին զրոյցի էութեան հետ. — Պապին պատմեցին զրոյցները՝ իւր օրով կատարուած անցքերի, այն է՝ Հայր մարգարէի թշնամանքների մասին առ Փառանձեմ տիկինն. — «Եստե՛ն զայս ամենա՛ն գրոյց թագաւորին» (Բուզ. Է. դպ. Գ. եր. 160): — Զատուհի գերեալ կանանցը պատուաւոր կերպով ժամուարաւ յետ ուղարկելը. — «Եիշեաց թագաւորն Պապ զհինգ զրոյցսն, և ասէ. » (Նոյն. Գ. եր. 162):*

Ամփոփեմ սահմանումներս. —

Պատմութիւն. — ընդունուած ճշմարտութիւն:

Վէպ. — ոչ-ճշմարտութիւն, խառնուրդ ճշմարտի եւ ստի:

Զրոյց. — ստուգութեան կարօտը:

Առասպել. — անընտանր եւ անպարկեշտը:

Այս սահմանումներս իսկական նշանակութեամբ էլ գործ է ածել Խորենացին այդ բառերը, ուր նոյնացումների խօսք լինել չի կարող, սարուձորեր կան մէջտեղերում: Այս այսպէս լինելով հանդերձ, ով կասի թէ նախնական ժամանակների պատմութեան մէջ մանաւանդ չեն մտնում սուտը, վէպը, զրոյցը, առասպելը՝ իբրեւ զանգուածի նիւթեր, և փոխադարձ. սակայն չը պէտք է մոռանալ՝ որ ամեն մէկը իւր գրոյցն ունի՝ ուր էլ որ պատահի, առանձին թէ խառն եղած: Պատմի, զրուցել, պատմագիր, պատմութիւն (իբրեւ պատմութեամբ) հասարակ է գորանց ամեն մէկի և ամենքի համար՝ ընդհանուր առմամբ, սակայն հէնց երբ Խորենացին մի պատմութիւն — պատմութեամբ շօշափում գտնում է, ըստ իւր հայեցողութեան, ստայոյ՞, անստոյ՞, անընտանր կամ անպարկեշտ՝ իսկոյն որոշակի անուանում է կամ վէպ, կամ զրոյց, կամ առասպել, իսկ զրոյցներին և պատմող կամ երգողներին՝ արտաքինք, հետխօսք, վիպագիր, վիպասանք:

Ոչ ոք չը գիտէր և չը գիտէ պատմութիւն, վեպ, վիպագիր, վիպասան, զրոյց, առասպել բառերը այնպէս ճշդութեամբ տարբերել և պատշաճ տեղերում գործածել՝ ինչպէս այդ արել է Խորենացին իւր գրած Հայոց պատմութեան մէջ:

2

Արարատը:

Մեր հայրենի երկրին մենք, հին և նոր Հայերս անուանում ենք Հայք կամ Հայաստան՝ մեր նախնոյ—Հայկայ անունով¹, բայց մերձաւոր և հեռաւոր օտարներին իսպառ անծանօթ է այս կոչումը և մնում է իբրեւ ներքին—տեղական անուն: Գրաւոր ամենահին յիշատակութիւնը մեր աշխարհի անուան չորս-հինգ անգամ կրկնւում է Երրայական ս. Գրքում, սակայն Արարատ կոչւած², իսկ

1. «աշխարհս մեր կոչի յանուն նախնայն մերոյ Հայկայ՝ Հայք» (Խոր. ա. ԺԱ. եր. 38):—«Իսկ երկիրն ըստ նմին պատշաճի կոչեցաւ անուն Հայք՝ որ են հայազամբ հանգերձ» (Սերէոս, ա. դար. եր. 3):

2. Ծնն. Բ. 4, 2որդ. Թագ. ԺԹ. 37, Եսայ. ԼԷ. 38, Երեմ. ԾԱ. 27, և Տօրիթ՝ Ա. 24:

Թէ Արարատ կամ Արարադ Այրարատ-ի վարիանտն է՝ այդպէս հասկանալ ամենից առաջ թելադրում են հէնց ս. Գիրքը թարգմանող ս. Սահակ և Մեսրոպը և նոցա աշակերտները և Փաւստոս Բուզանդ, Գ. և Յ. զարու ծնունդ մարդիկ, մեր հնագոյն մատենագիրները¹, այլ և յետագայ մեր պատմիչները, Սամուէլ Անեցին (ԺԲ. դար) Հայկի համար պատմում է. «չուեալ յԱյրարատս յ. (300) ոգ. ւովք (եր. 41):—Երրայեցւոց Արարատը մեր Այրարատն է» (Գարագաշ. «Քնն. պատ. Հ.», ա. մասն, եր. 9, 11—14)²:

1. «Պատուէր տուք յինէն Այրարատեան թագաւորութեանցն» (Երեմ. ԾԱ. 27):—«Ի սահմանս Այրարատեան տէրութեան» (Բուզ. եր. 19):—«Հրաման տուր, առէ (Երեմ.), Այրարատեան թագաւորութեան եւ Ասքանաղեան գնդին».—«Թողեալ Արշակայ զքոն թագաւորութիւն հաւց իւրոց զԱյրարատ» (Խոր. ա. ԻԲ. եւ գ. ԽԲ. եր. 70 եւ 347):

2. Մեր երանաշնորհ նախնեանց թարգմանութեանց ձեռագիրները վերայից եօթն անգամ տպագրուել է հայ. Աստուածաշունչը.—ա) Ամստերդամում՝ 1666 թ., բ) Գ. պօլսում՝ 1705 թ., գ) Վենետիկում՝ 1733 թ., դ) Վենետիկում՝ 1805 թ., ե) Ս. պետերբուրգում՝ 1817 թ., զ) Վենետիկում՝ 1860 թ., է) Կ. պօլսում՝ 1895 թ.:—Երկրորդի ընթեցումած ինձ անծանօթ է. առաջինի, երրորդի եւ հինգերորդի ընթերցումածն են—«Արարատեան թագաւորութեանցն», իսկ չորրորդի, վեցերորդի եւ եօթներորդինը՝ տարբեր—«Այրարատեան թագաւորութեանցն»: Ուրեմն Արարատեան թէ՛ Այրարատեան՝ վիճելի խնդիր են եղել ցայսօր հրատարակիչների համար:—Մեր ս. Էջմիածնի մատենադարանի 41 օրինակ ձեռագիր Աստուածաշունչներում,—ընտրելագոյն օրինակները,—նոյնպէս տար-

Այրարատ նախ Արայի դաշտն էր կոչ-
ւում ¹, որ անունով ապա կոչուեց և Մեծ

բերում են:—Ն, № 163. 154 և 192-ի մէջ պահպանում է—Թերի
են ձեռնագիրները: Ն, № 164, 157, 156, 357 և 178 ունին
«այրարատեան թագաւորութեանց» ընթերցումը: Ն, № 180
և 155 ունին «այրարատեան թագաւորութեանց»: Ն, № 358 ու-
նի «այրարատեան թագաւորութեանց»: Ն, № 171, 165,
183, 175, 176, 360, 161, 153, 944, 159, 184, 173. 174,
177, 784, 16 և 162 ունին «այրարատեան թագաւորութեանց»:
Ն, № 17, 169, 167, 172, 179, 359, 181, 182, 168, 18, 170
ունին «այրարատեան թագաւորութեանց»: Ն, № 185, 176
ունին «այրարատեան թագաւորութեանց»:—Յիշեալ 38 ան-
թերի ձեռագիրներից 5-ի մէջ «այրարատեան» է, 2-ի մէջ՝
«այրարատեան», 1-ի մէջ՝ «այրարատեան», իսկ 28-ի մէջ՝
«այրարատեան», և միայն 2-ի մէջ՝ «արարատեան»: Նոյն
38 օրինակներից 27-ի մէջ՝ «թագաւորութեանց» է. 11-ի
մէջ՝ «թագաւորութեանց»:—Բացի ձեռագիրների և տպու-
ների վերոյիշեալ համեմատութեանս տուած արդիւնքը, այս-
տեղ առաջին անգամ գիտել պիտի տամ՝ որ Առտուածաշն-
չի հայ. թարգմանութեան ժամանակակից և զործակից Մ. Խո-
րենացին, յիշելով Երեմիայի (ԾԱ. 27) այդ վկայութիւնը՝ այս-
պէս է գրում. «Հրաման տուր, առէ (Երեմ.), այրարատեան թա-
գաւորութեանց» ... (ա. ԻԲ. Եր. 70): Մեր յիշեալ մատենագր-
անի ձեռագիր Խորենացիներից,—այժմ 18 օրինակ,—երեք
հատն Ն, № 1668, 1673, 616—ունին «այրարատեան թագա-
ւորութեանց», մինչ մնացեալ 15 հատն—Ն, № 1664. 249,
248, 1669, 1662, 1665, 1666, 1667, 1661. 611, 615, 1689,
1671 1672 1035—ունին «այրարատեան թագաւորութեանց»:
Եւ Խորենացու այս վկայութիւնը զոր առաջարկում
եմ, փոքր երաշխաւորութիւն չէ, ի հարկէ, որ Երեմ ԾԱ.
27 համարի տարբեր ընթերցումների մէջ ուղիղ ընտրու-
թիւն անեն ...

1. Ինճիճեանը իրաւամբ վրիպակ է համարում Այրա-
րատ ընթերցումը. Արայ անունից, ստում է, Արարատ կը
կոչուէր: Տես «Ստոր. հին հայ., Մեծ հայք., Եր. 376:

Հայրի 15 նահանգներից մին՝ Արարատ, և
աւելի յաճախ՝ Այրարատ գաւառ:

Տարակոյսներ և թերուղէմ գրողներ
եղել են և կան՝ թէ ս. Գիրքը Արարատ
անունը տալիս է Հայաստանին Նոյեան տա-
պանի լեռան անունով թէ՛ թագաւորանիստ,
«գլուխ աշխարհին» և բնավայր Այրարատ
գոտառի: Հ. Ղ. Ինճիճեանը վերջին կարծիքն
ունի ¹ (նոյնը և՛ Ալիշանը, «Այրարատ», Եր 11
—12), վստահելի գիտելով Մարաբառեան
պատմութիւնը, և օրինակ է բերում թէ
ինչպէս հռոմէական տէրութիւնը և աշխար-
հչ կոչուել է Հռովմի անունով: Կարող ենք
յաւելացնել և՛ Բիւզանդիոնի անունով Բիւ-
զանդական կայսրութիւն կոչուած լինելը:
Սակայն առաջին կարծիքն ևս, իբրի համա-
զօր, կարող է տուալ—ընդունելի լինել մա-
նաւանդ նոյն համար՝ որոնք Արայի անու-
նով Արարատ կոչումը անգիտանում կամ
զրոյց են համարում:—2^է որ ս. Գիրքը ա-
ռաջին անգամ իբրի տապանի հանդէսու-
տեղ է յիշում Արարատ, և ըստ Զովգելի՝
«Ար (2^է հղերէնում) նշանակում է սար=լեռ.

1. Տես «Ստոր. հին հայ.» Եր. 376—377 և «Հնախ. հա-
յաստ.» ա. հատ. Եր. 7—8, 56—57:

Ար-ից կազմուած է Արատ, որ նշանակում է լեռնաշղթայ, իսկ ամբողջը Ար-արատ պիտի նշանակէր լեռնաշղթայի ամենաբարձր գագաթը¹: Եւ Ասորեստանցոց բեռագիրներում Արարատի փոխանակ գրուած են Ուրտու կամ Ուրարտու, որ նոցա լեզուով նոյնպէս նշանակում է, ասում է Կ. Յ. Բասմաջեանը, «կեդրոն, քարձրութիւն, քարձր»: Իսկ մեր լեռնային երկիր Հայաստանի ամենաբարձր գագաթը՝ յաւերժական ձիւնով ծածկուած «սպիտակավառ» Մասիսն է, ցցուած կեդրոնական Հայաստանի միջնաշխարհ Այրարատ նահանգի սրտում, ուստի անհաւանական չէ որ ս. Գրքի՝ մեր երկրին տուած Արարատ անունը ստացուած լինի հէնց պատմական լեռան անունից. օրինակ, ինչպէս Կովկաս և Լիբանան լեռներ են, բայց նոցա անուններով կոչուած են և՛ այն երկիրներն՝ ուր դոքա գտնուում են: Պէտք է ի նկատի ունել՝ որ սեռական հոլովով իբրեւ յատկացուցից գրուած «Արարատայ» կարող ենք հասկանալ և՛ ուղղական հոլովի նշանակութեամբ՝ որպէս բացայայտիչ, որովհետեւ տեղերի յատուկ անունները բացայայտեալ-

1. „Ванскія надписи“ պրոֆ. Բ. Պատկանեանցի: Տճն և հայ. թարգմ. «Արարատ», 1880 թ. Յունիս, եր. 253—254:

ների մօտ գրուած են սեռ. հոլովով՝ իբրեւ յատկացուցիչ. օրին. լեռն Մասեաց, լեռինք Կովկասեան կամ Կովկասու, որ նշանակում են,—Մասիս լեռն, Կովկաս լեռինք: Մեծ Մասիսը և՛ Արարատ անունով կոչուած պատահում է նոյն իսկ մեր հին մատենագիրների մօտ, օրինակ՝ «մինչև ցԱրարատ և ցԴուին քաղաք» (Սեբ. եր. 33): Եւ Եւրոպացի ազգերը, առանց բացառութեան, Արարատ անունով են ճանաչում մեր Մասիսը:

Թէ այսպէս թէ այնպէս, ս. Գրքի Եբրայեցոց Արարատը բոլոր ազգերի համար Արմէնիան—մեր Հայաստանն է եղել, սորանում համաձայն են գրեթէ ամենքը, որովհետեւ մինչ ս. Գրքի Եբրայականը, Սամարեանը, Եթթանասնիցը և Հայկականը գրում են. «նստաւ տապանն ... ի լերինս Արարատայ» (Ծնն. Բ. 4). Լատինականը և Ասորականը, Յովնաթան քարունու մեկնութիւնը, Բերոսոսը, Աղէք. Բազմավէպը, Աբիւղենոսը, և Եւսեբիոսը գրում են. «ի վերայ լեռանց Արմէնիոյ» (=Հայաստանի). իսկ Արաբականը և Քաղդէականը՝ «ի վերայ լեռանց Կարդու» կամ «Կարդա» (=Կորդուացի)¹:—Մինչ Սենիքերիմայ

1. Այս տարբերութեան մասին փոքր ինչ յետոյ:

որդոց փախուստը պատմելով՝ Երրայականը, Եօթանասնիցը, Հայկականը, Արաբականը և Ասորականը գրում են. «գերծան յերկիրն Արաբական» (2որդ. Թագ. ԺԹ. 37), Հատինականը, Բերոսոսը և Յովսէպոսը գրում են. «փախեան յերկիրն Արմենիոյ», իսկ Քաղղէականը՝ «փախեան յերկիրն Կարդու». սակայն Սենեքերիմայ որդոց նոյն դէպքի մասին, Եռա. Լէ. 38. Երրայականը և Հատինականը գրում են «գերծան յերկիրն Արաբական», իսկ Եօթանասնիցը, Հայկականը, Արաբականը, Քաղղէականը և Ասորականը՝ «գնացին փախստական ի Հայ» (Արմենիա)։ Եւ Տօբիթի գրքում (Ա. 24), նոյն հայրասպանների մասին գրուած է. «փախեան նորա ի լերինս Հայոց»։

Ընթերցողը տեսնում է թէ ինչպիսի բոլոր տեղերում նոյնանում են Արարատ և Արմէնիա—Հայք, Արմէնիա և Արարատ¹։ Երբայեցիք, Մովսէսից սկսած, անշեղ կերպով Արարատ են անուանում մեր երկրին և ոչ Արմէնիա, ոչ թէ նորա համար որ իբր թէ Արմէնիա անունը չկար և միայն Դարեհի՝

1. «Եւ Պօշար զայս ամենայն վկայութիւնս տեսեալ, գրէ (ի սրբազոն աշխարհադրութեան. զիբք ա. 3. եր. 16). «Հասարակաց կարծիք այս է՝ թէ Արարատ է Արմէնիա» (Ինճ. «Հնախ. Հայաստ.», ա. հատ. եր. 7)։

մեր երկրին նուաճել տիրելուց յետոյ շինուեց, ոչ¹, այլ որովհետեւ նորա—Երրայեցիք, Ըստ Ինճիճեանի, Ասորոց միայն անուանում էին Արամեան՝ Սեմայ որդու անունով.— «Ի Միջագետս Արամայ» գրում է Երրայեցոյ ս. Գիրքը, իսկ հայկական թարգմանութիւնը՝ «Ի Միջագետս Ասորւոց» (Ծնն. ԻԸ. 2, 5, 7.)։ Այս մտօք, ըստ Երրայականին, գրում է Կորիւն. «Երթեալ հասանէր (ս. Մեսրոպ) ի կողմանս Արամի ի քաղաքս երկուս Ասորւոց»։ Նորա չը շփոթելու համար Յարեթեան Արամեանը—Արմէնեան Սեմական Արամեանի հետ՝ մեր երկրին անուանեցին Արարատ, Հայոց բնավայր նահանգի կամ հէնց տաղանի լերան անունով։ Ս. Գրքի բոլոր թարգմանութիւններն ի դէպ

1. Որ Բիհիսթունի Դարեհեան արձանագրութեան մէջ է տուածին անգամ երկուս Արմէնիա անունը, այդ ապացոյց չէ կարծելու՝ թէ Դարեհից առաջ Արմէնիա անունը չը կար, քանի որ Դարեհը տալիս է երկրի արդէն հանրաճանթ հին անունը.— թէ ոչ այսօր՝ վաղն Անգղիացիք կը տիրանան Տրանսփալի եւ Օրանթի հասարակապետութեանց երկրներին. մի բոլէ համաձայնեք թէ եւ կը շինեն իրենց մի նահանգ Տրանսփալի—Օրանթ—Տրանսփալի անունով, բայց զոնէ չենք կարող ենթադրել՝ թէ Ներկայ պատերազմը Նկարագրող պատմողը կարող է չը լինել Տրանսփալի եւ Օրանթ հասարակապետութիւնները... Ըստ Darmesteter-ի կարծիքը, թէ Արարատ եւ Միհնի անունները է կազմուել Արմէն անունը. — Ար (արատ)—միւն (նի)—Արմին, աւելի քան մտացածին է։

և՛ Արարատ են գրում և՛ Արմենիա, ցոյց տալու համար միայն որ Արարատ—Արմենիա։ Միայն մի տեղ, Երեմ. ԾԱ. 27. Ասորական թարգմանութեան և Յովնաթան բաբելոն բացատրութեան մէջ, այն էլ դորանց սխալուելով, տարբերում են և շփոթութիւն առաջ բերում, շփոթութիւն՝ ուրիշ գոհ է դառնում ի թիւս այլոց՝ և բեռազերնների ընթերցող պ. Կ. Յ. Բասմաջեանը, ինչպէս յետոյ կը տեսնենք։

Ս. Գըքի Եբր. բնագրի և նորա հին թարգմանութիւնների և բացատրութիւնների տարբեր ընթերցուածները, մեր ներկայ խնդրին վերաբերեալ, պէտք եմ համարում պատկերադնել հետեւեալ աղիւսակաձև տախտակով։

Եբր. բնագրի	Ծնն. Լ. 4.	Գ. թագ. ԺԹ. 37.	Եսա. ԼԻ. 38.	Երեմ. ԾԱ. 27.
Եբր. բնագրի	«Ի վերայ իբրանց Արարատայ»։	«Իբրկերն Արարատայ»։	«Իբրկերն Արարատայ»։	«Թագաւորութիւն Արարատայ Միջնայ և Ագքանաղայ»։
Սամարիանը՝	«Ի վերայ իբրանց Արարատայ»։			
Եօֆանանիցը՝	«Ի վերայ իբրանց Արարատայ»։	«Իբրկերն Արարատայ»։	«Իբրկերն Արմենիայ»։	«Թագաւորութիւն Արարատայ և Ագքանաղան գծերն»։
Հայկականը՝	«Ի իբրին Արարատայ»։	«Իբրկերն Արարատայ»։	«Ի Հայս (—Արմենիա)»։	«Արարատան թագաւորութիւն Արարատայ և Ագքանաղան գծերն»։
Լատինականը՝	«Ի վերայ իբրանց Արմենիայ»։	«Իբրկերն Արմենիայ»։	«Իբրկերն Արարատայ»։	«Թագաւորութիւն Արարատայ, Միջնայ և Ագքանաղայ»։
Ասորականը	«Ի վերայ իբրանց Արմենիայ»։	«Իբրկերն Արարատ»։	«Իբրկերն Արմենիայ»։	«Թագաւորութիւն Արարատայ, Միջնայ և Ագքանաղայ»։
Քաղէականը՝	«Ի վերայ իբրանց Արարատ»։	«Իբրկերն Արարատ»։	«Իբրկերն Արմենիայ»։	
Արարականը՝	«Ի վերայ իբրանց Արարատ»։	«Իբրկերն Արարատայ»։	«Իբրկերն Արմենիայ»։	«Թագաւորութիւն Արարատ...»։
Յովն. բաբելոն. բայ.	«Ի վերայ իբրանց Արմենիայ»։			«Ի ագաւորութիւն Նորդուայ, յորդանն (—Հայաստ.) և Հայկի»։

Գէմուդէմ գրուած այս քառաշար աղիւտակը¹ ամենահամոզիչ ապացոյցը կարող է լինել՝ որ եբր. բնագրի Արարատը և միւս ազգերի Արմէնիան մեր Հայաստան աշխարհն է: Քաղղէական և Արաբական թարգմանութեանց կամ բացատրութեանց մէջ ծննդ. Ը. 4 համարի բնագրի «Արարատ»-ի տեղ *Կարդու* կամ *Կարդա* զնելու շարժառիթ բուն պատճառն այն է՝ որ նոցա մէջ գրոյց կար թէ տապանը նստել է Հայաստանի Կարդու—Կորդուաց լեռների վերայ, ուստի և նոքա եբր. բնագիրը սրբագրել են իրենց մէջ շրջող այն գրոյցով: 2ը հաւատարու սփինչ չը կայ, նորա—Քաղղէացիք նոյ անունը

1. Սամարեանի, Քաղղէականի, Արաբականի և Յովնաթան բարունու բացատրութեան սիւնակներս թերի են: Բացի այս, կարող են և սխալներ լինել, մանաւանդ Ասորականումը, որովհետև Խնճիճեանի և Բասմաճեանի զրաժներում (միակ օժանդակ աղբիւրներս) տարբերում են.—Խնճիճեանը Ասորականի անունից ասում է. «ի վերայ լեռանց Արմնիոյ» («Հնախ. հին Հ.» ա. հտ. եր. 6), իսկ Բասմաճեանը՝ «տուրայ Կարդու—լերինք Կորդուաց» (Բազմ. 1899 սեպտ. եր. 431): Ս. Էջմիածնում ոչ աղբիւրները ճարուեցին և ոչ գիտեցողը (Արաբականը և Ասորականը կան, բայց գիտեցող հասկացող չեղաւ): Նուաստութիւն չը համարելով՝ անցած տարի այս տախտակի պատճէնը ուղարկեցի Վենետիկ Միսիթարեան գերապատիւ Հայքերից մէկին և խնդրեցի թերիները լրացնել, այլ և ստուգել՝ եթէ սխալներ կան. պատասխան չստացայ: Արդեօք նամակս տեղ չը հասաւ:

նոյնպէս սրբագրել են Քսիսուլթրոս Բաբելական մի թագաւորի անունով: Այդպիսի սրբագրութիւններ են և մեր Հայկականի մէջ,— Օրիոն և Հերակլը՝ Հայկ և Վահագն թարգմանուած¹:—Եւ մի այլ հանգամանք՝ որ Սենեքերիմայ հայրասպան որդոց ապաստանած երկիրը (2որդ, Թագ. և Եսայ.) կարող էր Կորդուք նահանգը լինել. մի անգամ բնագրի Արարատը *Ճշդելով* Կորդուք հասկացուելուց յետոյ՝ բնականաբար կը նպաստէր նոցա և՛ ծնն. Ը. 4, Արարատը Կորդուք թարգմանել:

Խորենացին ս. Հռիփսիմէի պատմութեան մէջ (Մատեն. Խոր. եր. 300) գրում է. «Նոքա (Հռիփսիմեանք) գաղտ գնացեալ ընդ մէջ Կորդուաց ընդ լեռն Սողովի, ի Բերկրացուց գաւառին . . . : Բայց այսր լերինն ասի յԱսորաց, թէ ի նուազել ջուրցն հեղեղաց, հհաա տապանն ի գլուխ լերինն որ է Սաւաւադայ. և ընդ մէջ անցեալ սղոցածուկնն արգելու զնաւն. և անուռ քաղաքադեղջն կոչեցաւ քրմնիս, այսինքն թէ ուր ոգիք ելին ի տապանէն»²: Խորենացու այս պատմած գրոյ-

1. Յովբ. ԼԸ. 31:—Եսայ. ԺԳ. 10:—Բ. Մակ. Գ. 19:

2. Այլանի մէջբերած («Հին հատար . . . Հայոց», եր. 57—58) Խորենացու պատմած նոյն այս գրոյցի մէջ բացի այն որ աւելի են «Ո՛հ, Սաղուփ, այսինքն թէ՛ Սղոցածուկնն զիպեցաւ նաւին» բառերը, այլ և իրրև շարունակութիւն Խո-

ցից տեսնում ենք.—ա) Խորենացին ինքը չը հաւատարմով հանդերձ՝ պատմում է իրքեւ ասորական մի զրոյց,—«ասի յԱսորոց», ուրեմն միայն Ասորոց զրոյց: բ) Խորենացին Սողոմ գիտէ զրոյցի լեւան անունը, իսկ Ասորիք են կամ Ասորոց զրոյցին կարենորութիւն տուողը՝ որ կարկատում գրում են «Սարարադ», իբր թէ չը հեռանալով ս. Գրքի պատմութիւնից՝ որ գրում է թէ՝ «նստաւ տապանն... ի լերինս Արարատայ»: Կարելի է թէ գրչի սխալ է,—«ի լերինս» բառի վերջին ու տառը անցնելով յաջորդ Արարատ բառի վերայ, դարձել է *ս-արարատ*, որ արդէն դիտած են Մ. Էմին և Նորայր Բիւզանդացին: Կամ՝ սար Արարատ էր, որ կրճատուել դարձել է *ս-արարատ*¹: Այն հանգամանքը որ մի-երկու ձեռագիրներ Գ. Թագ. ԺԹ. 37 ունին «յերկիրն սարարատայ» ընթերցուածը, որով Սարարատ ոչ թէ լեռ, այլ պարզապէս երկիր է հասկացում, իսկ այդ անունով գոնէ երկիր չը կար և չը կայ, ապացոյց է՝ որ *ս-արարատը*

ըննացու խօսքի (չիմացայ ինչ աղբիւրից)՝ ասուած է. «եւ այսորիկ (զրոյցը) թէ արդարք կամ սուտք՝ ինչ ոչ է փոյթ, բայց միայն զի հաճեցուցից զմանկագունի քո մտաչդ գտարփանս. վասն այսորիկ զրեմ քեզ զբնան»:

1. Ինճ. «Հնախօսութիւն Հայաստ.» տ. հատ. եր. 75:

*վրիպակ է: գ) Ես այժմ պէտք է դիտել տամ՝ որ այդ Ասորական զրոյցի մէջ պատմուած «անուն քաղաքագեղջն կոչեցաւ Թրմնիս, այսինքն թէ՛ ուր ոգիք ելին ի Տապանեն» խօսքը, այն որ Ք. Պատկանեանցի, ապա Միաբանի (Ք. տ. Մ.) և Մ. Աբեղեանի և այլոց համար եղել էր և է իբրեւ յիշեալ զրոյցին քիչուշատ հաւատարմ մի փաստ, ընդ հակառակն հէնց այդ թրմնիսն է՝ որ ջնջում է նոյն զրոյցի առաջին և վերջին արժէքը, որովհետեւ տապանի զրոյցի ամենից հին պատմող Բերոսոսը տապանից ելնողներին տասն տնից գոնէ պակաս չի հաշուում: —«առ հրաման (Քսիսութրոս) գլին և զոգիս և զկարեւոր բարեկամս ի ներքս մուծանել...: Եւանել կնաւ և դստերը միով հանդերձ և ճարտարապետան նաւին» (Նեաւերիոսի Քրոն. եր. 33—34): Եթէ և չենթադրենք թէ նոյն ուրդիքն ևս որդիք կարող էին ունեցած լինել: Թրմնիսը և իւր բացատրութիւնը *ոյդուրմայ*—սարքովի բան է. այդպիսիները, մանաւանդ թէ լաւերը, մենք շատ-շատ ունինք ...*

Աղէքսանդր Բագմավէպը գրում է. «պատմէ (Բերոսոս) ... տեսանել (Քսիսութրոս) երթեալ յեցեալ գնաւն ի լեառն ինչ ... և տեղին՝ յորում վայրի երեալ կային, Հայոց աշխարհն է ...: Եւ ի նաւէն՝ որ չողաւ դադարեաց ի Հայս, և ցայժմ սո-

կաւ ինչ մասն ի Կորդուացւոց լերինն ի Հայոց աշխարհին մնալ նշխար ասեմ, և ոմանց քերել բերել ի ծեփածոյ նաւին նաւթոյ՝ ի բժշկութիւն և ի ջնջոց բժժանաց» (Նւա. Բր. եր. 34, 36—37): Աղէք. Բազմավէպի այս խօսքի մէջ «ի լեւոնն ինչ» և «ասեն» բառերը ցոյց են տալիս որ Կորդուաց լերանց մասին պատմութեամբը կասկածելի մի գրոյց է եղել հէնց այն ժամանակից: Բացի այս, Արիւզենոս և Յովսէպոսը Կորդուաց լերանց վերայ տապանի հանգչելու մասին իրապառ անտեղեակ են, մինչ նոյն Բերոսոսն էր սոցա աղբիւրը ինչ որ Աղէք. Բազմավէպի, մանաւանդ որ Յովսէպոսը, ինչպէս յետոյ կը տեսնենք, ուրիշ տեղ է ցոյց տալիս տապանի լեռը: Տապանի գրոյցի մէջ Կորդուաց լերանց մասին խօսքը—«եւ ի նաւէն՝ որ չոգաւ... (յ)բժժանաց»—Եւսեբիոսի Խօսքն է, ըստ իս, կամ Աղէք. Բազմավէպի, բայց երբէք Բերոսոսի՝ ինչպէս հաւատացած և ընդունած են: «Եւ ցայժմ»ը վերաբերում է Եւսեբիոսի կամ շատ-շատ՝ Աղէք. Բազմավէպի ժամանակին...

Դիւրահաւան և հրաշապատում Բուզանդի վկայութիւնը¹, որին աւելի է յենուում Բ.

1. «Գնաց... եպիսկոպոսն Մծընացոց... Յակովբ... Կալ հասանել ի լերինն Հայոց, ի լեւոն սարաբաղայ ի սահ-

Պատկանեանքը, հէնց նոյն ասորական սխալ գրոյցի վերայ շինուած Յակովբ Մծընայ Հայրապետի լեզենդայիցն է առնուած՝ և միամիտ հետեւողութեամբ գրած. «ի լեւոն Սարաբաղայ... ի գաւառն Կորդուաց»:

Եւ Թովմ. Արծրունու՝ «ի ծփական ջուրցն բերեալ տապանն յարեւելայն ի միջոց աշխարհի հանգեալ ի լերինս Կորդուաց» (ա. դպ. եր. 17) խօսքի մէջ, ըստ իս, «Կորդուաց» բառը բըռնադրօսուած թխուած է հեղինակից կամ գրիչներից՝ Բուզանդին կամ նոյն ասորական գրոյցին կուրօրէն հետեւելով, որովհետեւ հեղինակի մի և նոյն խօսքի մէջ և առաջ արդէն ասուած է. «ի միջոց աշխարհի», որը յատուկ է միայն Այրարատ նահանգի համար:—Այլ և Թովմայի միւս՝ «Ընդդէմ նախեցածն ունելով զմեծ լեւոն Մասիք կոչեցեալ բարձրագագաթն ձիւնալիւ սպիտակափառ, իբր զբագաւոր մեծավայելուչ պատուական այեօֆն զուսմացեալ ի մեջ հոխ նախարարութեանց» (ա. դպ. 9. եր. 56) խօսքի մէջ Մասիքը կոչուած է «մեծ...բարձրագագաթն, ձիւնալիւ, սպիտակափառ»: Ասեմք թէ ուրիշ լեւոններ էլ կարող

մանս Այրարատեան տէրութեան ի գաւառն Կորդուաց...տեսանել զփրկական տապանն նոյեան շինուածոյն, զի յայտը լերինն հանգեալ նա ի ջրհեղեղէն» (Բուզ. գ. դպ. եր. 19—20):

են ըստ ճշգրտագալթն և ծիննալիք լինել, սակայն մեծ, մեծ լեռան Մասիք, մանաւանդ սպիտակափառը՝ յատուկ են Այրարատեան Մառիսին. — «ի սպառուածի փլածի մեծի լեռինն»։ — «հարաւայինն արեգակնաճմ (բարձրագագաթն) լեռն, սպիտակափառ ունելով գագաթն, ուղղորդ յերկրէ բուսեալ ... ծեր ոմն արդարեւ լեռն ի մեջ երիսասարդացեալ լեռանց» (Խոր. ա. Լ. Ժ. Բ. Եր. 87 և 40)։ Համեմատեցէք մանաւանդ Խորենացու և Թովմայի այդ նկարագիրներն նոյնութեան յանգող նմանութիւնները...

Հանդ. Բ. Պատկանեանցը, Միաբանը, Մ. Արեւեանը և ուրիշները սորանք ի նկատի ունին իբրեւ «հին Հայերի» վկայութիւններ՝ տապանը Գորգուաց լեռներում իջած լինելու, բայց զորս ես այսպէս տարբեր կերպով հասկացայ և բացատրեցի։

Խիստ կոպիտ սխալ է պրոֆ. Բ. Պատկանեանցի յայտնած՝ կարծիքը թէ՛ «թէ բննեք այն բոլոր տեղերը, ուր այս (Արարատ) անունը գործածուած է, մենք կը համոզուենք, որ թէ՛ Հայերի Արարադ և թէ՛ միւս Սեմականների Արարատ կարող են նշանակել միայն Հայաստանի հարաւային մասը («Վանի լճից դէպի հարաւ»)»։ Այս կարծիքը անհաւանական չի համարում և Ալիշանը («Այրարատ», Եր. 11—12) ¹։

1. Պրոֆ. Բ. Պատկանեանցը իւր „Ванскія надписи“

«Քրնենք» է առում հանդ. Պրոֆէսորը, բայց այդ նորան չի յաջողուած։ Հին և նոր Հայերն, ընդհակառակն, այլ և Սեմական ազգերը, Արարադ կամ Արարատ ասելով հասկացել են ոչ Հայաստանումը, այլ՝ Հայաստանը։ — ա) Արարատ նահանգը գտնուած է, բոլոր հին և նոր պատմագիրների վկայութեամբ, հիւսիսային Հայաստանում, մինչ այս խընդրում մըցակից գուրս բերուած հարաւային Հայաստանում չկայ մի կէտ՝ որ առանձին վերցրած յիշեցնէր Արարատ անունը ¹։ — բ) Ըստ բեռնագիրների կարգացողների՝ Վանայ և Ուրմիոյ լճերի միջի տարածութիւնը և Վանայ լճի հարաւային և մասամբ հարաւ արեւմտեան

գրքի 95—104 երեսներում խօսելով Արարադ երկրի և նոյեան տապանի լեռն մասին, վերջացնում է իւր խօսքը՝ եղբակացնելով. — «ա) Այրարատը Երասխի վերայ գտնուած յայտնի նահանգն է, և թէ նորան չպէտք է խառնել Արարադի հետ։ բ) Առուածաշնչի Արարատը և Նոորիների Արարադը նշանակում է Սեմական մատենագիրների մէջ հարաւային Հայաստան, Քիւրդիստանի սարերը հետը, որոնք Հայաստանը միջագետքից բաժանում են։ գ) Սարարատ, որի վերայ, Նոորիների աւանդութիւններով, կանգնեց տապանը, Մեծ Արարատը չէ, այլ հարաւային Հայաստանի սարերի գագաթներից մինն է» («Արարատ», 1880 թ. Յունիս, Եր. 245—255)։

1. Սարարատը, եթէ ոչ գրչի սխալ, անշուշտ կարկատան է՝ հետեւողութեամբ կէս ասորական գրոյցի և կէս՝ ս. Դրքի պատմութեան, ինչպէս ասացի։

երկիրները կոչուել են,—առաջինը՝ Մաննայ կամ Միննի, և երկրորդը՝ Նայիրի, իսկ Վանայ լճից դէպ հիւսիս՝ ուրեմն հիւսիսային Հայաստանը՝ Արարատ։—գ) Քաղդէացոյ և Արաբացոյ Կարդու կամ Կարդա, Ճովարի, Զուռի, Սողոփ, Սարարադ, Սուլիվայ, և այլն, տապանի կարծեցեալ լեռները հէնց այդ հարաւային Հայաստանում—Մաննայ կամ Միննի երկրումն են գտնուում, բայց ինչպէս է որ ու. Գիրքը, Երեմ. ԾԱ. 27, Բաբելոնի դէմ վրէժխնդրութեան հրաւիրում է Միննայ թագաւորութիւնը, չը մոռանալով ի՛նչ Արարատայ թագաւորութիւնը, իսկ տապանի նստած լեռան համար ասել է. «ի վերայ լեռանց Արատայ», և ոչ Միննայ. ոչ ապաքէն Կորդուք Միննայ մէջ է . . . —դ) Քաղդէական աղբիւրից առնուած Մարաբասեան պատմութեան մէջ քանիցս յիշուում է Արարադ երկիր¹, և Հայկը՝ Սեմականներից Արարադ կոչուած իւր նոր բռնած այդ երկրին անուանեց Հայք, ըստ վկայութեան նոյն պատմու-

1. «չու արարեալ դնայ (Հայկ) յերկիրն «Արարադայ»։ — «Գայ հասանէ (Բէլ) ի հիւսիսի յերկիրն «Արարադայ» (Խոր. ա. Ժ. ԺԱ. եր. 32, 34)։—«Կալու (Հայկ) զերկիրն Արարադայ և բնակեցաւ անդրէն ազգաւ իւրով մինչեւ ցայժմ». և այլն (Սեր. ա. դպ. եր. 2, 3, 4)։

թեան¹. արդ, Արարադ երկիրը, որի մէջ է Հարք գաւառը՝ Տուրուբերան նահանգի մէջ, Վանայ ծովակից բաւական հեռու դէպ հիւսիս, դարձեալ հիւսիսային Հայաստանն է։ —ե) Բերոսոս, Բազմավէպ, Աբիւղենոս, Յովսէպոս, Յւսեբիոս, ու. Գրքի թարգմանութիւնները և բացատրութիւնները՝ ինչպէս տեսանք, այլ և շատ հին և նոր մատենագիրներ, ջրհեղեղի մասին խօսելով՝ Արարատ նոյնացնում են Հայաստանի հետ. ի՛նչ Արայ-Չամիրամի վէպի մէջ, առնուած նոյնպէս Քաղդէական աղբիւրից (Մար Արաս), կարդում ենք. «սուեռ զգաւրսն իւր Շամիրամ, եւ գնայ ի վերայ Գուրա (Արայի) ի Հայս։ Գայ հասանէ ի դաւեսն Արայի» (Սեր. ա. դպ. եր. 5։ Խոր. ա. Ժ. եր. 52)։ Արդ, լոյսի նման պարզ չէ՞ որ Հայքը, օտարների Արմէնիան, իսկ Սեմականներից Արարադ կոչուածը այն մի և նոյն երկիրն էր՝ ուր գտնուում է ի՛նչ Արայի դաշտը—Արարատը։

Ինչ համար միանգամայն անտարակուսելի է՝ որ Քաղդէական և Արարական թարգմանութիւնները ու. Գրքի Ծննդ. Ը. 4 բնագիրը

1. «չոգաւ բնակեցաւ (Հայկ) ի բարձրաւանդակ դաշտավայրի միջ, և կոչեցաւ անուն դաշտին այնորիկ Հարք յանուն հարցն։ Իսկ երկիրն ըստ նմին պատշաճի կոչեցաւ Հայք՝ որ են հայագամբք հանդերձ» (Սեր. ա. դպ. եր. 2—3. և Խոր. ա. Ժ. ԺԱ. եր. 33, 38)։

սրբագրել են իրենց մէջ շրջող գրոյցով, որով ձգել և ձգում են նոյն իսկ գիտնականներին թիւրիմացութեան մէջ¹։ Սակայն որտեղ ս. Գրքի նման ամենից հին գիրն է խօսում, աւանդութիւն և գրոյցներն, այն էլ ոչ տեղական, սէտք է լռեն՝ եթէ հակառակն են պատմում։ Նոյն իսկ բնիկ տեղական գրոյց աւանդութիւնները կարող են ընդունուել միայն իբրև օժանդակների գրաւոր պատմութեան վկայութեան, և ոչ թէ իբրև գրաւորին համարժէք գիմադիրներ։ Իսկ Քաղզէական կամ Ասորական և Արաբականը՝ ոչ - տեղական

1. Գարագաշանի կարծիքը Արաբացի—Մասիսը Կորդուք թարգմանելու մասին.— «Մարաց երկիրն երկու կը բաժնուէր, Հաբաւային կամ Մեծ Մարք, և Հիւսիսային կամ Փոքր Մարք, որ կը ձգուէր մինչև Կասպից ծով, և առ Մասեօք՝ մինչև ցերասխ և անդր ևս։ Յայտ Կասպիական մասին, այն է ի Փոքր Մարս՝ զբացի էին Հայք (Արաբատեան թագաւորութիւնը) Մարաց։ Երասխ եւ Մասիք հասարակաց էին այս երկու ազգաց, այնպէս որ Ծննդոց երբայական բնագրին խօսքն զտապանէն, թէ նստաւ «ի յերինս Արաբ. տոյ»՝ ի թարգմանութիւնս ինչ է «ի լերինս Կորդուքաց» կամ «Մարաց»։ Թէ Մասեաց արեւելեան մասն ի հնումն Մարաստան էր և յետ անցանելոյ նորա ի Հայս առ Արշակունիօք տակաւին կը կոչուէր Մարք՝ յայտնի է Հայոց հին երգերէն... «Անց զհաց (Արտաւազդ) և շինեաց ի մէջ Մարաց զՄարակերտ» (Խոր. ա. 1.)։— «Մուրացան Նախարարութիւնը ջնջուեց առ Արաաշխիւ (Խոր. ք. ԾԱ.), բայց Մասեաց արեւելեան կողման համար Մարք անունը մնաց մինչև շորբորդ դար» («Քնն. պատմ. Հայոց». ա. մասն, եր. 54—55, 195. և ք. մասն, եր. 24)։

այդպիսի մի մի չ'երաշխատուեալ գրոյց է և հակառակ գրոյն։ Այդ Ասորական գրոյցների արժէքը լուս գիտէր, անշուշտ, Ասորոց ժամանակագիր Միխայէլ պատրիարքը (ԺԳ. դար)՝ որ գրել է. «Ջորմանամ գի Յովսէպոս աւսէ, զտապանն ի Պիսիգացոց յաշխարհն յեւփիմես լեառն, որ է սոուգապէս ի Մեծն Հայք ի լեառն Մասիք (հին օրին. «Արաւազայ՝ որ է Մասիս») ըստ բնագրոյն վկայութեան» (Կրտսաղէմ, 1870 թ., եր. 15)։

Այն աշխարհը ուր իջել է նոյի տապանը՝ Հայոց աշխարհն է, այս զոնէ անխտիր ամենքը խոստովանել են Բերուսոսից առաջ և այնուհետեւ մինչև ցայսօր։ Արդ, Հայոց աշխարհի պատմութեան համար, ինչպէս և ուրիշ աշխարհների կամ ազգերի, տեղական աւանդութիւն-գրոյցների պէտք է կարեւորութիւն տալ՝ թէ՛ օտար կամ օտարների գրոյցների։ Աւանդութիւն, զրոյց էր ուզում,— Աւագ Մասիսի՝ Հայոց բնիկ աւանդական և պատմական գրոյցներն աւելի շատ են և ումանը անշուշտ աւելի հին։ Օրին. «Գրգճու, ան զիւս.— երթ ի Մասիս՝ որ բարձր է քան զիւս»։ (Իսկ հանդ. Մայրս ասում էր. «Միս (Փոքր Մասիսն), ան զիւս.— Մսիս (Մասիս) բարձր է քան զիւս»)։— Մասիսի Ազատ կոչումը ստացուել և մնացել է տապանի աղա-

տարար դէպքից՝ ուր ապաստանեց և դադարեց:—Ազատ Մասիսն է բնավայրը բաջրերի, դեերի, ոգիների՝ սերուած Նոյի՝ տապանում ծնուած թողից¹:—Միայն Մասիսի համար են պատմում այն սրբազան աւանդութիւնը թէ՛ արդեւորած է նորա գաղաթը բարձրանալ². և հէնց այս ընդհանրացած աւանդութիւնն է ծնունդ տուել ս. Յակովբ Մծբնայ Հայրապետի մասին պատմուած զրոյցին թէ՛ ցերեկը բարձրանում էր մինչև մի կէտ՝ ուր երեկոյեան և վիշերը հանգչում էր, բայց առաւօտը զարթնում տեսնում էր, ով զարմանք, որ դարձեալ նոյն տեղումն է՝ ուր էր նախընթաց աւուր առաւօտը. և այդպէս 40 տարի դեգերուեց և դարձեալ չը կարողացաւ գաղաթը հասնել, մինչև որ Աստուած նորան խղճաց և հրեշտակը բերեց տապանի մի կտոր տախտակ: Այսպիսի *անմեղծունայիութեան* զրոյց աւանդութիւնը միայն Ազատ Մասիսի մասին է եղած և կայ իսկ, մինչ միւս ակնարկուած ուր լերան կարող է սազ գալ. մահկանացուների ոտքերի տակ տրորուած այն

1. Տես ա. հատ. ժի. եր. 77—78:

2. Մասիսի վերայ առաջին անգամ Պարբոտի բարձրանալը (1829 թ.) ընդհանուր պայթակղութիւն էր ժամանակին և անհաւատալի, այսօր իսկ ժողովուրդը չի ուզում հաւատալ:

միւս լեռները համեստութիւնից կը հալուեն կը մաշուեն՝ եթէ հասկանան որ մարդիկ այդ զրոյց աւանդութիւնը իրենց են վերագրում. Գորգուաց լեռների վերայ տապանի հանգչելու՝ Բերոսոսեան, ըստ իս՝ Բագմավէպի կամ Նւսերիոսի, զրոյցի մէջ չէ որ մարդիկ գնում քերում և տանում էին տապանի ծեփ ձիւթից, այնքան մատչելի էր:—Ս. Յակովբայ հրաշագործ աղբիւրը՝ Մեծ Մասիսի հիւսիսային լանջում, որի ջրից առնում տանում են երաշտի և մորեխի ժամանակ՝ մինչև իսկ հեռւոր տեղեր. նոյն տեղում և՛ նորա անունով վանքը՝ որ 1840 թուականի երկրաշարժը կործանեց և ծածկեց Ակոռու հետ:—Էլ չեմ ասում Երեւան, Ակոռի, Նախշուան կամ Նախիջեւան¹, Նոյի Գերեզմանը², Մակու, Զաւաւանդ (Զրուան), Նպատ (Նո-աբատ) և այլ

1. «ասէ (Յովսէպոս). «Իսկ զայս տեղի (այսինքն՝ զտեղի ելից Նոյի) հայր կոչեն Արովադիքոն (այսինքն տեղի ելից, չու, իջևան), զի տնդանօր զնշխարս պահեալ տապանին մինչև ցայժմ ցուցանեն բնակիչք» (Ինճ. «Ստոր. հին Հայ.», եր. 220):—Հաւել և զվկայութիւն Նուսերիոսի ի զիրս տեղեաց, որ ասէ ըստ թարգմանութեան Հերոնիմոսի. «Այժմ զտեղին հայր կոչենք Նւք» (Ինճ. «Հնախ. Հայաստ.», ա. հատ. եր. 274):

2. «Աստանօր զնէ թաղեալ Վարդան աշխարհագիր՝ զնոյն ինքն զնահապետն Նոյ, ըստ որում աւանդեն և բնակիչք: Տես և ի Դավէրնիէ ճանապարհորդ. գիրք ա. գլ. 8» («Ստոր. հին Հայ.», եր. 220 և ծան. 2):

րառերի հետ շատ հնուց կապուած աւանդութիւն գրոյցները:

Որ «Սեբէսը տարբերութիւն է դնում Արարադի և Այրարատի մէջ»՝ այդ ոչինչ օգուտ չունի իւր—պրօֆ. Ք. Պատկանեանի կարծեաց. և ո՞վ է որ տարբերութիւն չի դրել և դնում Արարատ երկրի, Այրարատ կամ Արարատ նահանգի և Այրարատ դաշտի մէջ: Խորհեացիին— Հայոց պատմահայրը—նոյն տարբերութիւնը չի դնում, որից և առնում են յետագայները: Այդ պրօֆեսսորն է նոյն գրուածքում Մ. Էմինին անուանում «անըմբռնող»: Մինչև անգամ օտարը, ս. Հերոնիմոսը, տարբերում է Արարադ՝ նահանգ, Արարադ՝ Արմէնիա=Հայաստան երկիր, Արարատ՝ դաշտ¹:

Որպէս կնիք բանիս, արժան է ի նկատի ունել՝ որ հին և նոր Հարք տապանի լեռը համարելով Այրարատեան բարձր Մասիսը, մեր եկեղեցին միաբան երգում է ս. Լուսաւորչի տօնին. «որ (Սեպուհ) առաւել խորին խոր-

1. «Արարադ նահանգ ի Հայաստան է դաշտավայր, ընդ որ հոսի Երասխ... առ ստորոտովք լեռինն Տօրոսի, որ մինչև ցայն վայր ձգի (ըստ Ստրաբոնի): Ապա և տապանն յորում դերժաւ նոյ... ոչ հանգեալ ի լեռինս ընդհանրապէս Հայաստանեաց, որ կոչի Արարադ, այլ ի բարձրաբերձ լեռինս Տօրոսի, որ առ երկ կան դաշտացն «Արարատայ» «Հնախ. Հայաստ.» ա. հատ. եր. 59,):

հրդով խնդայ քան զարարահեանն բարձր Մասիս. քանզի ի նմա հանգեալ սուրբն Գրիգորիոս Տապանն ապրեցուցիչ ի հոսանաց մեղաց Հայաստան տգանց (Շարակ. «Աերինք ամենայն»):

Քաղղէական և Արարական թարգմանութիւնները (առաջինը չը ճարուեց և՛ ձեմարանի մատենադարանում) որոնելուս դէպքով պ. Հ. Աճարեանը մատնացոյց արեց Պ. Յ. Բասմաջեանի՝ «Հայք ս. Գրոց մէջ» յօդուածը (Բազմ. 1899 Փետր., Ապր. և Մեպտեմբերի համարները), երբ ես շարագրութեանս այս գլուխը գրել վերջացրել էի:

Պարոն Բասմաջեանն ի նկատի առնելով որ Երր. բնագրի «Թագաւորութիւնս Արարատայ, Միճնույ և Ապրանագայ» (Երեմ. ԾԱ. 27) խօսքը՝ Պշիտոն (Ասորական բնագիրը) և Յովնաթան բարեւոյնու բացատրութիւնը թարգմանած են—«Թագաւորութիւնս Արարադայ, Հայաստանի և Ապրանագայ (կամ Ագիարէնի)», յայտնում է թէ՛ Միննին էր Հայաստանը, երկիր՝ որ բռնում էր Ուրմիոյ և Վանայ լճերի միջին տարածութիւնը. իսկ բնագրի Արարատը համարում է Կորդուք, և տապանը Կորդուաց լեռներում լիջած, վկայ բերելով և՛ Բերոսոսի համարումս խօսքը—«Սե ի նաւէն որ չոգաւ դադարեաց ի Հայս, և ցայժմ սակաւ ինչ մասն ի Կորդուացուոց լեռինն ի

Հայոց աշխարհին մնալ նշխար ասեն» (Եւս. Քբ. եր. 36—37):

Տաղանի՝ Կորդուաց լերանց վերայ հանդ-
չելու զըոյցի ալ և Բերոսոսի վկայութեան
արժէքը ցոյց տուած եմ արդէն. մնում է որ
Բասմաջեանի՝ Միննեոյ մասին նոր առարկու-
թեանը պատասխանեմ:

—Պշտոյի — Ասորական թարգմանու-
թեան մէջ առաջին դէպքում (Ծնն. Ը. 4.)
Արմէնիան համապատասխանում է Եբր. բնա-
գրի Արարատ-ին, իսկ վերջին դէպքում
(Երեմ. ԾԱ. 27.)՝ Միննի-ին, պահելով հան-
դերձ Արարատը:—Ուրեմն երկու Արմէնիա...

—Յովնաթան ըստուրութեան
մէջ առաջին դէպքում (Ծնն. Ը. 4.) Եբր.
բնագրի Արարատը թարգմանուած է Արմէ-
նիա, իսկ վերջին դէպքում (Երեմ. ԾԱ. 27.)՝
Կարդու=Հայաստան (մասն ի յոխ. ամբողջի.
Բասմաջեանը այդ խոստովանում է), և Մին-
նին՝ Խուրմինէ=Հայաստան: Ըստ այսմ դուրս
է գալիս Արարատ=Հայաստան, Կարդու (Եբր.
բն. Արարատը)=Հայաստան, Խուրմինէ (Եբր.
բնագրի Միննին)=Հայաստան:—Ուրեմն երեք
Հայաստան:

Ինչ կարծիք որ կամայական և սխալ

են թէ Ասորական թարգմանութիւնը և՛ թէ
Յովն. ըստուրութիւնը, հետեա-
րար և՛ պ. Բասմաջեանի կարծիքը:

ա) Մեր երկրի Արարատ անունը կարող է ստաց-
ուած լինել և՛ Արարատեան ամենաբարձր լերան
(Մասիսի) անունից:

բ) Սեմականների Արարատ և Ուրարդուն, և միւս
աղբերի Արմէնիան մեր Հայաստան երկիրն էր:

գ) Արմէնիա անունը Դարեհից առաջ լինելու էր:

դ) Եբր. բնագրի, Ծնն. Ը. 4. Արարատը Քաղ-
դէական և Արարական թարգմանութեանց մէջ Կար-
դու կամ Կարդա թարգմանուած է՝ նոյա մէջ պըտ-
տող ջրհեղեղեան գոյցին հետեւելով:

ե) Խորենացին տալանի Ասորական զրոյցին չի
հաւատում:

զ) Սարարաղը կարկասան է կամ վրիպակ:

է) «Թրմին» գիւղանունը ընդհակառակն հե-
ռում է տալանի մարդոց այնտեղ իջած լինելը:

ը) Տաղանի՝ Բերոսոսեան զրոյցի մէջ Կորդուաց
լերանց մասին ամբողջ խօսքը Եւսեբիոսին կամ շատ
չատ՝ Աղէք. Բաղմովէպին է պատկանում:

թ) Սխալում են մեր գիտունները՝ թէ մեր
հին մատենագիրները — Խորենացին, Բուզանդ, Սե-
բէոս և Թովմ. Արծրունին — հաստատելուս լինին տա-
լանի՝ Կորդուաց լեռներում հանդէսը:

ժ) Արարատը կամ Ուրարդուն Հայաստանի մի-
ջին մանաւանդ թէ ճիւսիսային մասն էր:

ժա) Աւագ Մասիսի Հայկական բնիկ զրոյցները դերադասելի են քան Ասորականը:

ժբ) Տապանի լեռը Աւագ Մասիսն է:

ժգ) Պշտոյի և Յովն. բաբունու՝ Եբբ. բնագրի Միննին առանձնակ Հայաստան թարգմանելը անհեթեթութիւն է, բայց որ մի անգամ ևս գալիս են հաստատելու՝ թէ Միննին և Արարատը միասին, այլ և Աքանազը, կազմում էին մի ամբողջ Հայասանը:

Է

Սրբագրութիւններ և բացատրութիւններ Սրբագրութիւններ պատմական առաջին երեսուն:

Որ Սերէոսի ա. և ը. դպրութիւններ կոչուածը (Թ. Միհրդատեանից) նոյնպէս Սերէոսին է պատկանում՝ տարակոյս չը կայ, մանաւանդ պ. Ստ. Մալխասեանցի՝ «Սերէոսի պատմութիւնը և Մ. Խորենացի, — մատենագրական ուսումնասիրութիւն» պատուական երկից յետոյ (Թիֆլիս, 1899 թ.): Պրոֆ. Բ.

Պատկանեանի յարուցած ժխտող տարակոյսը թեթեւ վերաբերմունքի և թիւրիմացութեան արդիւնք էր միայն, չիմանալով զանազանել ս. Մեսրոպի աշակերտ Ստեփաննոս Տարոնեցուն Ստեփաննոս Ասողիկից:

Այժմ ես պիտի առաջարկեմ նոր սրբագրութիւններ և բացատրութիւններ, որոնք ուրիշների, ինչպէս և պրոֆեսսորներ Բ. Պատկանեանի և Ն. Մառի, այլ և պ. Ստ. Մալխասեանի, հասկացած առաջարկածներից հիմնովին տարբեր են¹, և որոնք մի և նոյն ժամանակ մի անգամ ևս կապացուցանեն թէ ա. և ը. դպրութիւններն արդարև Սերէոսին են:—

ա) Սերէոսի առաջին դպրութեան սկզբի վեց տողերն աղաւաղուած լինելով՝ գրեթէ անհասկանալի են մնացած, չը նայելով սր առաջին հրատարակող Թ. Միհրդատեանից սկսած սրբագրութիւններ են առաջարկուած: Այժմ ես ևս առաջարկում եմ իմ նոր սրբագրութիւնները՝ փակագծերի մէջ:— «Եւ եղև ոչ ի կամայական պիտոյից վարժ խուզակի զանգարա-

1. Ընթերցողին դիւրութիւն տալու համար մատնացոյց եմ անում պ. Ստ. Մալխասեանցի յիշեալ գրքի 67—75 երեսները՝ ուր կը գտնէ ուրիշների կարծիքները, կշռադատելու համար իմ յայտնած կարծիքների արժանիքը:

գրել ժամանակ (պիտի լինի՝ զանցս տարագրեալ ժամանակի) և զնախնի քաջացն ձեռնարկելով դուռնի վրայսանութիւնս, զիմն յիշատակել զառաւելիս և ի նոյն շարագրելով ասացից զառ ի յապայտն եղելոյ (ժամանակի անցս), և ցուցից համառաւութեալ զարդեաց ժամանակացս զաղետիցս վերաբերութեան (անցս,) զամս և զաւուրս հինգ թագաւորացն յիշատակելով¹:

Սերէոսը իւր ժամանակի պատմութեան համար այստեղ գրում է. «ցուցից համառաւութեալ», սակայն երբ հասնում է պատմելու կարգը՝ գրում է. «հառեցից ... զանցից կործանման» ... և պատմում է անհամեմատ ընդարձակ քան առաջին անցքերը:

բ) Սերէոսի ա. դպրութեան առաջին երեսում երեք անգամ կրկնուած «զամս և զաւուրս հինգ քաղաւորացն»:—«զամս և զաւուրս հինգ քաղաւորացն Հայոց և Պարթեաց»:—«զամս առաջին քաղաւորացն Հայոց», մի և նոյն միտքն ունին. այդ երեք նախադասութիւններից վերջինը՝ Մծբնայ արքունեաց սեան արձանագրի ըստն են, իսկ առաջին և երկրորդը՝ իւր—Սերէոսինը, որ երկրորդովը պատմութիւն—

1. «յիշատակել ... յիշատակելով» պէտք է հասկանալ նուազական մտօք, այնպէս՝ ինչպէս յիշատակը հազիւ յիշեցնող շնչին մի մասն է ամբողջի, որպէս և են Սերէոսի ա. և բ. դպրութեանց մէջ պատմական յիշատակութիւնները:

խօսք է անում այն արձանագրի յայտնուելու և բովանդակութեան մասին, և առաջինովը՝ իւր գրելիք պատմութեան յետ կոյս ծաւալն է ծրագրում:

գ) Երեք անգամ կրկնուած «թագաւորացն» բառերը ոչ Ք. Պատկանեանի «հին թագաւորներ» կարող էին լինել, ոչ պ. Մառի մատնացոյց արած թագաւորներն են, և ոչ պ. Ստ. Մալխասեանցի անուանածներն, որովհետեւ «թագաւորացն» այն երեք տեղումն էլ են, ըստ իս, փոխանակ թագաւորութեանցն, սկզբնաղբի թէ աղաւաղուած՝ այդ չէ փոխ: «Հինգ թագաւորացն» (վերջինը՝ «առաջին թագաւորացն») նշանակում են, երեք տեղումն ևս, հինգ թագաւորութիւններ=հարըստութիւններ, և որ են—Հայկականը, Ասորա — Բաբելականը, Մարա — Պարսկականը, Մակեդոնա — Սելեւկեանը, Պարթեւա — Արշակունին:

Փաստեր. — իմ այս սրբագրութիւններից և բացատրութիւններից յետոյ, այժմ ուշադրութեամբ կարդացէք Սերէոսի պատմութեան 1—10 երես, իսկոյն կը համոզուէք:

Ը

«Այս է առաջին և ճշմարիտ պատճառն
վասն անուանելոյ զարևմտեան մեր կողմն
Առաջին և Երկրորդ, այլ և Երրորդ և
Չորրորդ Հայք» (Խոր. ա. ԺԳ.):

Խորենացին և նորանից առնելով մեր
միւս պատմագիրները՝ վերագրում են մեր
Արամ նահապետին Ա. Բ. Գ. և Դ. Հայքին
առաջին անգամ տիրելը և այդպէս անուա-
նելը:

Գարազաշեանը, որ իւր «Քննական պատ-
մութիւն Հայոց» մեծ և խիստ կարեւոր աշ-
խատութեան մէջ աչ ու ձախ անխնայ հա-
րուածում է և՛ Մ. Խորենացուն և՛ նորա
Հայոց պատմութիւնը, զըպարտում էլ է նո-
րան կեղծելում¹, Ա. Բ. Գ. և Դ. Հայք կոչ-
ուելու մասին այսպէս է գրում.—

«Հռոմայեցիք գրաւեցին (Տիգրանի հետ դաշ-
նագրութիւնից յետոյ, 64 Ք. ա.) ընդ այլ գաւառս
նաև զՓղքն Հայս, և բաժանելով զնա յԱռաջին,

1. Գարազաշեանի թէ Խոր. Հայոց Պատմութեան մէջ
չը հասկացած անդերը (ոչ բոլորը) և՛ թէ զըպարտութիւնները
առիթ կունենամ ցոյց տալու շարադրութեանս ընթացքում:

յերկրորդ և յերրորդ Հայս՝ կուտալին Փղքուն Ասիոյ
Ժագաւորաց, դաշնաւորաց իւրեանց, իրրև յաւելուած
իշխանութեան նոցա, մինչև Վեապաթիանոս որ արար
նահանգ զերկիրն (Տակիտոս, ԺԱ. 9, ԺԳ. Յովս. նախն.
պատմ. Ի. 5): Չորրորդ Արմէնիա անունն, որ Մե-
ծին Հայոց Ծովաց նահանգին տրուեցաւ՝ աւելի նոր
է: Յետ անցանելոյ Արևմտեան մասին Հայոց ի Յոյնս
մօտ ի վախճան Ժագաւորութեան Արշակունեաց՝
Ծովաց նահանգը կոչուեցաւ Չորրորդ Արմէնիա, զոր
յետոյ Յուստինիանոս (527—565) առնելով ուրոյն
զքսութիւն՝ ասէ. «Կը հաստատուեք նաև զՉորրորդն
Արմէնիա, որ առաջ, մինչ հռովմէական նահանգ չէր՝
ուրիշ ազգի կը վերաբերէր, և կը բաղկանար խժա-
կան անուններէ, ինչպէս Խորձէն, Հանձիթ, Ծովք,
Հաշտանք, Բալահովիտ, ալլովքն հանդերձ: Սոքա
հռոմէական մեծութեան վայելուչ անուններ չէին և
ոչ մեր նախնիներէն դրուած, այլ օտար տէրութեանէ:
Ուստի զարգարելով զայս գաւառ մեծութեամբ և
պատուով՝ առնեմք զնա զքսական իշխանութիւն»
(Յուստ. նոր հրամ. ԼԲ.): Այս է ... Առաջին, Երկ-
րորդ, Երրորդ, և Չորրորդ Հայք բաժանմանց պատ-
մութիւնը, ոչ թէ այն, զոր Խորենացին և յետնագոյն
հեղինակը ի նմանէ առեալ կը պատմեն» (ա. մասն,
եր. 156):

Գարազաշեանը այն էլ է ասում թէ՝
«Խորենացին կը խոստովանի, թէ Յոյնք ալլազգ կը
պատմէին (1), ալ թէ ինչպէս՝ չի յիշեր» (նոյն, եր. 165):

1. «Իսկ որ այլ ի յոմանց ասի ի յունական կողմանն,
մեզ ոչ է հաճոյ, այլոց որչափ կտմք իցեն» (Խոր. ա. ԺԳ.
եր. 49):

Տարակոյսներ.—

ա) Փոքր Հայքը հռովմայեցիներին մը-
նալուց (64 Ք. ա.) յետոյ այլևս ինչ հարկ
կար Ա. Բ. Գ. Հայք անուանել՝ եթէ առա-
ջուց այդպէս կոչուած չը լինէին:

բ) Վեսպասիանոսը (69—79 թ.) արդէն
այդ Փոքր Հայքը շինել էր, ասում է, հռո-
մէական մի «նահանգ». արդ, քանի որ վա-
ղուց էր որ չը կար Ա. Բ. և Գ. Հայք անուն-
ները, այլ հռոմէական մի նահանգ, ուրեմն
էլ ինչ հետևողականութեամբ կարելի կը լի-
նէր դորանից այնքան յետոյ, — «մօտ ի վախ-
ճան թագաւորութեան Արշակունեաց», — Ծո-
փաց նահանգը անուանել Չորրորդ Հայք.
երրորդից յետոյ միայն ասում են չորրորդ,
ինչպէս երկրորդից յետոյ՝ երրորդ...

գ) «Մօս ի վախճան թագաւորութեան Ար-
շակունեաց», ուրեմն հէնց Մ. Խորենացու օ-
րով, ով էր Չորրորդ Հայք անուանողը և
ինչպէս՝ այդ երեւի չի կարողանում ասել
Գարազաշեանը. իսկ Յուստինիանոսի նոր
հրամանի խօսքից չի երևում թէ նա առա-
ջին անգամ այդպէս անուանած լինի. նա
հին Չորրորդ Հայքը, որ այն ժամանակ բա-
ժանուած էր մանր իշխանութիւնների, միա-

ցրեց արեց մի «դքսական իշխանութիւն»,
ուրիշ ոչինչ, պահելով «Չորրորդ Հայք» նախ-
կին անունը:

դ) Եթէ Գարազաշեանը «Իսկ որ այլ ի
յումաց ասի ի յունական կողմանց, մեզ ոչ է հաճոյ»
Խորենացու խօսքի իմ բացատրութիւն—
թարգմանութիւնը (ա. հատ. Ժ. եր. 29—
31) ընդունի՝ այժմ ստիպուած պիտի լինի
յետս կոչել «Խորենացին կը խոստովանի, քի Յոյնք
այլազգ կը պատմէին, այլ քի ինչպէս՝ չի յիշէր»
իւր զրպարտութիւնը: Հակառակ դէպքում,
— եթէ հասկանայ այնպէս ինչպէս առհա-
սարակ հասկացել են ինքն և ամենքը, — իւր
դէմ կունենայ Խորենացու նման՝ այն էլ ժա-
մանակակից մի վկայ՝ որ գիտէր, այո, թէ
«Յոյնք այլազգ կը պատմէին», և որը սակայն
դուրս համար ասում էր մերժելով. «մեզ ոչ է
հանոյ, այլոց որչափ կամք իցեն»...

Ա. Բ. Գ. և Գ. Հայք կոչուելու մասին
Խորենացու պատմածի դէմ առարկութիւն-
ներն աւելի քան անզօր են:

Թ

Յաշտիշատ

Յաշտիշատ զիւղը ճարօնում, Արածա-
նու=Արեւելեան Եփրատի աջ ափի վերայ, ի
հնուց պատկանում էր Վահագնի սերունդ Վա-
հունիներին. Տիգրան Ա. գրաւեց յարքունիս,
իսկ Տրդատի ժամանակից պատկանում էր
Մամիկոնեան տոհմին: Այդտեղ էր Վահագնի,
Ոսկրահատ Անահտի, և Աստղիկի (Սենեակ
Վահագնի) մահեանները: Դորան մօտ էր և
գաղթական չնդիկների Դիմետրէ և Դիսանէ
ղից կռատունը: Ս. Գրիգոր լուսաւորիչը կոր-
ծանեց քանդեց այդ կռատունները. առաջինի
տեղում կանգնեց առաջին քրիստոնէական
եկեղեցին Հայոց¹, այժմ նորա փլատակնե-
րից մնում է միայն մի մատուռն, ուր ամ-
փոփուած են ս. Սահակ Պարթևի և նորա

1. «Ժողովեցան ի զիւղն Աշտիշատ, ուր զառաջինն զե-
կեղեցին էր շինեալ. զի նա էր մայր եկեղեցեացն, և ի տե-
ղի լեալ նախնեացն ժողովոյ Սրնհողոսին» (Բուղ. Գ. դպր.
եր. 63):

ղուստը Սահականոյշի նշխարները. իսկ երկ-
րորդ տեղում հիմնեց ս. Կարապետի=Գլակայ
վանը: Յաշտիշատում երեք անգամ (365,
432, 435 թ.) ազգային եկեղեցական ժողով
գումարուեց:

Յաշտիշատ, Խորենացին թարգմանում է
«յաւսից սեղիւփ» (բ. Ժ. Կ. եր. 129):—Ազաթանգե-
ղոսը նոյնպէս՝ «յաւսից սեղիւփ թագաւորացն Հա-
յոց Մեծաց, ի սնարս լերինն Քարքեայ ի վերայ գե-
տոյն Եփրատայ... որ և անուանեալ ըստ յաճախա-
պաւսաման սեղեացն՝ Յաւսիւս» (եր. 469).—
նշանակում է՝ յաճախ պաշտամունքներ կա-
տարելու տեղի:—Ինճիճեանը՝ «Հաւսարան կամ
հաւսութեան աւան...: Յաւս՝ ելեալ ի Պարսից բա-
ռէս Աւքի, նշանակէ Հաշտութիւն, որ է վախճան
աղօթից և գոհից, իսկ Ծաւ, ... նշանակէ տեղի կամ
բաղաք, զորօրինակ՝ Արտաշատ» և այլն («Ստոր. հին
Հայաստ.» եր. 92):—Հ. Ղ. Ալիշանը՝ «Աւսիւս
որ է յաշտից տեղիք բաղամազն պաշտամանց դից»
(«Տեղ. Հայոց Մեծաց», եր. 46):—Խորէն եպս.
Ստեփանէ նոյնպէս՝ «զոհաբերութեան տեղ» (Խոր.
Հ. պատմ. աշխ. Թարգ. ծան. 294): Ուրիշ կերպ
բացատրութիւն չը կայ, զոնէ ինձ յայտնի
չէ. յաշտ թարգմանում են զոհ, իսկ շատ՝
տեղ.

Հին ազգերից շատերը ունէին իրենց

սրբազան գետերը, ինչպէս Նգիպտացիք՝ Նեղոսը, Հնդկացիք՝ Գանգէսը, որոց զոհեր էին մատուցանում: Հերիաթների մէջ շատ է պատահում որ հերթով, մինչև իսկ թագաւորների տանից, տղայ կամ աղջիկ պիտի տանէին ջրին (առաջը փակող վիշապին) նուէր՝ որ ջուր գար: Նախնական մարդը, որին աւելի տարերքները արհաւիրք էին ազդում, չէր կարող ջուրը—համատարած ծովը, իւր ահեղ մոնշումներով, հեղեղներով ու ողողումներով, պաշտամունքի առարկայ չը շինել, ջուրը՝ որ թէ աւերումներով սարսափ էր ազդում և՛ թէ լիութիւն բերում աշխարհին: Ո՛վ գիտէ թէ էլ ուրիշ ինչ պատճառներով: 2ը մոռանալք՝ որ ու. Յովհաննէսն Յորդանանում ջրով մկրտում էր «յապաշխարութիւն... ի թողութիւն մեղաց»...

Հայերիս սրբազան գետն էլ Նփրատն էր: Որ Նփրատը նոյնպէս կրօնական նշանակութիւն ունէր և պաշտամունքի առարկայ էր, որ նորան ևս զոհեր էին մատուցանում, որ նորա ալիքներից և պղպջակներից գուշակութիւններ էին անում՝ վկայում են Տակիտոս (Տարեգիրք, Զ. գլ. ԼԷ. եր. 256) և Պլուտարքոս (Զուգ. գ. հատ. եր. 563 և 580): —Պատահական բան պիտի չը համարել Տըր-

դատ մեր թագաւորի աւելի քան շորս միլիոն հոգով Արեւելեան Նփրատում մկրտուելը... — Յաշտիշատը Արեւելեան Նփրատի—Արածանու աջ ափի վերայ էր: Նփրատի այս բազուկը սովորաբար կոչւում է Մուրադ գետ: Այնտեղի ու. Կարապետն էլ Մուրադատուր է: Հանգամանքներ, որոնք ինձ ենթադրել են տալիս՝ որ Յաշտիշատ նշանակում է ոչ թէ զոհելու տեղ կամ հաշտութեան աւան, այլ՝ հաշտութեան կամ քաւութեան գետ, զոհաբերելու գետ, Մուրադ կամ Մուրադատուր գետ: «Մուրադ գետ» Յաշտիշատի թարգմանութիւնը պիտի լինի, և ոչ թէ ոմն թուրք Մուրադ թագաւորի անունով կոչուած՝ ինչպէս կարծել են Ինճիսեան և Ալիշանը: Յաշտ կամ Նաշտ (Պահլաւերէն). նշանակում է զոհ, զոհաբերութիւն, իսկ շատ կամ շադ՝ պիտի նշանակէ գետ, և ոչ թէ տեղ, աւան, քաղաք: Տիգրիս կամ Դիլգաթ գետին Արաբացիք հասարակ անունով կոչում են Շադ (=գետ):—Յաշտիշատ. ունինք և Բարգիւշատ (գետ՝ Զանգեզուր գաւառում, որի սկիզբը կոչւում է Բազարշայ), որին Հայերը, այլ և Ալիշանը կոչում են «Որոտանայ» կամ «Որոտնայ» գետ, որ սխալ են. պէտք է լինի Որոտան գետ՝ իբրև Բարգիւշատի թարգմանութիւն, որ նշանակում է

Որոտան—որոտացող զետ. ան մասնիկը այս-
տեղ ող ածանցչի նշանակութիւն ունի, օրին.
վիպասան, վազան, փշան, սուտառան, ևլն:
Այսպէս է և թըքերէնում, օրինակ՝ դաշան,
ալան, սաթան, թուլթան...

Հայկական Վահէվանեան ամենահին բնիկ
դից աւանը իւր Յաշտիշատ անունը ստացած
պիտի լինի սըքսական զետի պաշտամունքի
համար նուիրուած տեղի լինելու պատճառով:

ա) Յաշիբաս՝ նշանակում է զոհաբերութեան
գէտ:

բ) Մուրադ գէտ՝ Յաշտիշատի թարգմանու-
թիւնը պիտի լինի.

գ) «Որոտնայ» կամ «Որոտանայ» գետ ասելը
սխալ է:

դ) Որոտան գետ՝ Բարդիւշատի թարգմանու-
թիւնն է, կամ՝ ընդհակառակն:

ժ

Չահապիւն:—Չահապ,

Չահաբի, Չահապունի:

Խորենացին այդ լեռանը անուանում է
և՛ Շահապիւն և՛ ծաղկաց լեռան¹, իսկ
զաւառը՝ կոչում էր ծաղկոտն կամ ծաղ-
կէոտն: Շահապիւն համանուն գիւղաքա-
ղաք ևս կար լեռան մերձակայքում, ուր եր-
կու անգամ (447 և 450 թ.) ազգային եկե-
ղեցական ժողով գումարուեց: Չատաջուր լի-
նելու պատճառով՝ ծմակ կամ ծմակային ևս
կոչուել է այդ լեռը, ապա սրբոց Ոսկեանց
այնտեղում ճգնութեան և նահատակութեան
պատճառով՝ կոչուել է և՛ Ոսկի: Այժմ կոչ-
ւում է Ալադաղ (թըքերէն), իսկ զաւառը՝
Դիաղին, համանուն գիւղաքաղաքով, Բայա-
զէտից դէպ արեւմուտք. ուր կան ջերմուկ-

1. «Գնեւայ բազում էրէս... յիւրում լերինն, որ Չա-
հապիւնն անուանի, ... ի լերինդ ծաղկաց» (գ. ԻԴ. եր.
310—311):

ներ: Զահապիվան կամ Ծաղկաց լեռը մեր
թագաւորների *ամառնային* բանակատեղին էր:

Զահապիվան լեռան մօտ, հիւսիսակող-
մում, է նստած լեռը, ուր Մեծն Ներսէս ա-
ղօթեց բազկատարած, օրհնեց Մուշեղի թու-
րը: Սորա հիւսիս-արեւելեան կողի վերայ հին
Բագաւան տեղում, ուր Որմզդական հուրն
էր անշէջ պահուում (Խոր. ք. Հէ. եր. 235),
Ս. Գրիգոր Լուսաւորիչը հիմնեց ս. Յովհան-
նու Կարապետի վանքը (Թրքերէն կոչուում է
այժմ *Իւշ-Էիլիսայ*), այնտեղին մօտ՝ ուր սրբա-
զան Նփրատի ջրերում մկրտուեց Տրդատ մեր
թագաւորը թագաւորական տան, բանակի և
անշափ բազմութիւն ժողովրդի հետ, աւելի
քան չորս միլիոն հոգի (Ազաթ. եր. 482):
Մեր նախնիք Զահապիվանում և մօտակայ
այս Բագաւան տեղումն էին կատարում նա-
ւասարդի Ամանորարեր տօնի հանդէսները՝ աշ-
խարհախումբ բազմութեամբ:

Բայց ինչ է նշանակում *Շահապիվան*:

Շահապ. ս. Սահակ և Մեսրոպի ժա-
մանակից սկսած մերոնք հասկացել են *կու-
ստկալ*, *իշխան*, *պետ*, կամ ըստ Ինճիճեանի՝
«իշխան կամ վերակացու աբքաւնի տեղացի, կամ իշ-
խան կարգեալ ի վերայ շահու եկամտից աբքայի, կամ
գուցէ համօրէն տէրութեան» (Հնախոս. Հայաստ. ք.

հատ. եր. 71):— Հ. Ղ. Արիշանը նոյնպէս՝ «Շա-
հապ, մեծամեծ իշխանք, և տեսուչը կողմանց և
դաւառաց» («Այրարատ», եր. 426):— Նւսերիոսի
Քրոնիկոնի մէջ (եր. 65), յունարէն Σατραπης
— Սատրապ (=կուսակալ) հայերնէում թարգ-
մանուած է Զահապ: Այսպէս գտնում ենք
«Շահապն ծովաց», «Շահապն Զարաւանդ եւ
Հեր գաւառի». բայց և կայ ասուած «Շահապն
Շահապիվանի» (Ազաթ. եր. 462, 502):

Իսկ Շահապիվան, հասկանում են Շա-
հապի-վան, Շահապի-վանք, այսինքն՝ Զա-
հապի իջեւան, — ընտկաւայր (Ինճ. «Ստոր.
հին Հայաստ.», եր. 413—414): Եթէ այս-
պէս, ուրեմն Աղաթանգեղոսի «Շահապն Շահա-
պիվանի»՝ պիտի նշանակէ «Շահապի իջեւանի
Շահապը», կամ՝ «Սատրապի իջեւանի Սատ-
րապը»: Ծիծաղելի չէ...

Պարագանիք, որ Զահապիվան լեռնիցն
է բղխում — սկիզբն առնում Արածանին =
Արեւիկան Նփրատը¹, որ շատաջուր լինելու
պատճառով մերոնք անուանել են ծմնակ կամ
ծմնակային լեռուն, որ Ստրաբոնը գորա անուներ

1. «Արածանի սկիզբն ունի ի ծաղկաւանէ, ի տեղւոյն
որ կոչի Ոսկեր» («Աշխարհացոյց Մ. Խորենացւոյ յաւել. նախ.»,
Վեն. 1884. եր. 34):

լսել և պահել է «Նիֆադոս (Նպատ), ապա Ավոս»։ իսկ Պլինիոսը՝ «Ապա» (տես «Հնա-խօսութիւն Հայաստ.» ա. հատ. եր. 91, 125 — 126)։ իսկ av-քրդերէն, ap, apa-զենդերէն, ab, abi-պարսկերէն, նշանակում են ջուր։ Եւ մեր Զահապիվանը, որ կազմուած է շահ—ապի—վան բառերից, նշանակում է, ըստ իս, Մեծ կամ Գլխաւոր ջրի կայան,—ապաստարան. բայց երբէք «Սատրապի կամ իշխանի իջևան»...

Ըստ այսմ և Շահապ, ըստ իս՝ նշանակում է թէ՛ Մեծ կամ Գլխաւոր ջուր¹, և՛ թէ՛

1. Ինչպէս Շահապ, նոյնպէս և Շահարխ ունինք։ Շահապ. հայաբնակ գիւղ՝ Երևանի Գոտայք գաւառակում, որ սովորաբար կոչում են Արխրուաղ (թրքերէն, =Քառասուն աղբիւր)։ Արխրուաղ անունից իսկ յայտնի է որ շատաջուր պիտի լինի, և յիրաւի շատաջուր և հացահատիկներով առատ. ջուրը գաւառի պէտքերը լցնելուց յետոյ յաւելանում և գնում թափւում է Երևանի Գեղառն կոչուած ձորը։ Այդ ջրերը բոխում են Գոտայքին արևելեան հիւսիսից չորհապատող լեռնաշղթայի ստորոտներէր, որտեղ է Հաղիս—Չամիրամայ լեռը, և վտակներ գառնալով միանում կազմում են երկու ճիւղ, մին—փոքրը բաժանւում գնում է գէպի աջ, իսկ միւսը—մեծը ամբողջանում և գետանում է Շահապ գիւղի մօտ, ապա արհեստական առունների բաժանուելով գնում ջրում գիւղերը։ Ջրի այս մեծ ճիւղի վերայ գտնուելու համար է, ըստ իս, որ գիւղը կոչուած է Շահապ—Գլխաւոր ջուր։

Շահարխ. Ս. Էջմիածնի և իւր սեպհական կալուածք Վաղարշապատ գիւղի ջուրը ստացւում է Քասախ գետից մի միակ առուով, որը անյիշատակ ժամանակներից հետէ կոչւում

ջրի Վերին պաշտօնեայ, և ոչ թէ «իշխան արքունի տեղեաց կամ շահուց», կամ թէ «սատրապ»։ Հայ ժողովուրդը, գոնէ Երևանեան նահանգի, այսօր ևս չը գիտէ Ջրպետ անունը, այլ՝ Միրաւ կամ Միրաբ է կոչում։ Եւ հիւների Շահապունի տոհմանունը անշուշտ նոյն է՝ ինչ որ Ջրպետունի կամ Ջրպետեան։ Միր և Շահ՝ համանիշ են, թերեւ Զահ՝ աւելի բարձր։—Այսպէս պէտք է բացատրել և՛ Միրախոռ=Միր-ախոռոյ, Շահախոռ=Չահ-ախոռոյ։—«Շահոռապետ» և «Շահ խոռապետ» պատահում են հիւների գրուածքներում, բայց սխալ են ի հարկէ. աւելորդաբար մտել է և վերջին պետ կրկնաբարդող բառը, քանի որ բառի սկզբում Շահ բառը կայ։ Շահախոռը համապատասխանում է Գունդաստաբլ, Մառնշալ, Մարաջախտ կոչումներին։

Է Շահարխ, որ հանկանումեմ Մեծաբաժին կամ Գլխաւոր առու. Քասախի բերած ջրի ճիւղ կէսը վաւերագրելով պատկանում է այս առուին, մինչ միւս կէսը՝ գաւառի միւս շիւղիներին։ Այն ընդհանուր ձրի կարծիքը, թէ Զահարաան է հանել այս առուն և իբր թէ այդ պատճառով կոչւում է Զահարխ՝ ցնորք է նման այն բազմաթիւ առու զրոյցների, որ ժողովուրդը վերագրում է «Ճիւղի-Չահբախին», Զահբախին՝ որ արին արցունքով է ողողել և աւերել Այրաբատը. նոյն իսկ ս. Էջմիածնի շէնքի քարերը գերել է ժողովրդի հետ, նա Վաղարշապատը կամ ս. Էջմիածինը շինեցնելու վերայ էր մտածում...

Եւ ահա այսպիսի բացատրութիւններով
և նշանակութիւններով միայն հասկանալի են
դառնում թէ՛ Շահապը և Շահապիվանը, և՛
թէ՛ «Շահապն Շահապիվանի» միանգամայն,
այլ և Շահաբիւր և Շահապունին:

ա) Շահապիվան՝ նշանակում է Մեծ կամ
Գլխաւոր ջրի կայան:

բ) Շահապ՝ թէ՛ Մեծ կամ Գլխաւոր ջուր, և՛
թէ՛ Զրի վերին պատօցնայ:

գ) Շահաբիս՝ Մեծաբաժին առու:

դ) Շահապունի՝ Զրպետան, իսկ Շահախոռ՝
Շահ ախոռոյ:

ԺԱ

Սա-է-ա կամ **Սա-է-ա-է-ա**.

Հին Բագրևանդ գաւառում, այժմեան
Ալաշկերտ գաւառակի արևմտեան կողմն է
ընկնում Խալի-Նազի անուն գաւառակը. սո-
րա հիւսիսային կողմում, Բասենի և Ալաշ-
կերտի սահմանների մօտ գտնւում է Քօսա-

դաղ լեռը, որից բղխում են բազմաթիւ ա-
ռատ աղբիւրներ, որոնք կազմում են Արա-
ծանու և միւս կողմից՝ Մուրցի (կարծեմ)
օժանդակ գետակներ: Այդ լեռանը մեր հին
մատենագիրներն անուանում են Զրաքաշխ,
այլ և Սուկաւ կամ Սուկաւէտ՝ նոյն լեռնե-
րում Սուքիասեանց ճգնութեան և նահատա-
կութեան պատճառով (վկայաբանութիւնը ս.
Ոսկեանց և Սուքիասեանց, այլ և Յովհ. Կա-
թուղիկոս): — Սուքիասեանք թաւ մագիւրով
ծածկուած լինելու համար մականուանուել են
Քօշ. ենթադրւում է որ լեռանդ Քօսադաղ
անունը մնացած լինի Քօշ բառից, — Քօշայ
լեռ = Քօսա - դաղ:

Քօսա - դաղ, Սուքիասեանց Քօշ անու-
նից մնացած լինելը որքան հաւանական թուի,
այնքան և աւելի մտադածին է Սուկաւ կամ
Սուկաւէտը Սուքիասեանց գլխաւորի - «Սու-
քիանոսի» - անունից մնացած լինելը:

Սու, թրքերէն նշանակում է ջուր, իսկ
Սախա՝ Թաւրիզում կոչում էին ջրկրին (թու-
լուխչի). իս և և թրքերէն բարբառներում
փոխաբերնում են միմեանց, ուրեմն սախա՝
կարող է լինել և՛ սակա: Ի նկատի առնելով

և այն՝ որ մեր երկրում ջուրը բացառապէս
բղխում է լեռներից, և որ այդ լեռը հայերէն
Ջրաքաշխ է կոչուած արդէն: Եւ այսպէս
ենթադրեցի որ Սուկաւ կամ Սուկաւէտ պէտք
է որ ջրի հետ աղերս ունենայ և ոչ Սուքիա-
նոսի: Հանդիպեցի պ. Հ. Աճարեանին (դուր-
սը), այնտեղ էր և Միխիթար վարդապետը,
եկաւ և «Բանասէր» հանգիսի խմրագիր Կ. Յ.
Բաումաջեանը. հարցրի պ. Աճարեանին, իբրեւ
ձեմար. թրքերէնի ուսուցչի. «Ինչ է նշա-
նակում սախա կամ սակա»: Աճարեան և Բաու-
մաջեան Պատասխանեցին. «սախա՝ նշանա-
կում է մատուցակ, իսկ սակա՝ այդպիսի բառ
չը գիտենք»: Զը բաւականանալով (ես)՝ մը-
տանք Աճարեանի սենեակը. այնտեղ գրեթէ
բոլոր գրքերը բառարաններ են. և ահա թէ
ինչէր գտնուեցին արաբ.-տաճկերէն բառա-
րանում (Կամուս). — «սակա, ամպ՝ որ անձրեւում է
մեծ-մեծ կաթիլներով»: — «սակիա կամ սակիաս, ա-
ռու»: — «սիկաիա կամ սիկաիաս, սուկաիա կամ սու-
կաիաս, աղբիւր, աղն, աւազան ջրոյ»: Եւ մեր լէտ
ածանցիչ մասնիկը Սանսկրիտում գրւում է
vant, որ նշանակում է նոյնպէս ունող, կրող:

Ըստ այսմ՝ Քօսա - դադ լերան անունն
է Սակա = լէտ = Սուկա = լէտ, որ նշանակում է
մեծ-մեծ կաթիլներով անձրեւող ամպ կրող,

ունող. կամ՝ Սուկաիատ, որ նշանակում է
աղբիւր, աղն, աւազան ջրոյ:

Փաւստոս Բուզանդի, Ճառքնորենների և
Յովհ. Կաթողիկոսի պահած Ջրաքաշխ ա-
նունը թարգմանութիւն պիտի լինի յիշեալ
Արաբական անունների, կամ ընդհակառակն ¹:

1. «Միւլիֆան. գիւղ Խզու կամ Հզու գաւառում. որ
պարտ է լինել Մլէշվան, որ ի բարբառ Արաբացւոյ նշանակէ
աղհհանք»: — «Մեծ Զապ ... կոչեցաւ նաև Ապիօնիւն, այս-
ինքն Զուր մոլեգին» (Ինճ. «Աշխարհ. չորից մատանց աշխարհի.
Ասիոյ». ա. հատ. եր. 233, 246): Ահա այս ընդգծած բառե-
րից ապի և վան = ապիվան արդէն հասկացայ, որով և մտա-
ծեցի Ջահ — ապիվանը բացատրել: Արաբերէն ոչ Միւլի (Փան)
և ոչ Մլէշ(վան), այլ՝ Միհշ(վան) նշանակում է աղ: Այս շէր
փոյթ. ինձ պէտք էր վան-ի արաբերէն նշանակութիւնը ճշդել.
— «Վաշէ, լիբան արտաքին երակներ (ինչպէս ջրի թողած
ակուններ)»: — «Վան, ապաստարան». գրեթէ նոյն՝ ինչպէս մեզ-
նում վան, վանք: Այսպէս պ. Հ. Աճարեանը չիմացաւ թէ ես
ինչ էի փնտրում, նա իմ խնդրած բառերը — յաշտ, սակա,
վան, լէտ, ապ՝ բառարաններում բանալու և թարգմանելու
նեղութիւնը միայն կրեց: Այս մանրամասնութիւնը պատմեցի՝
որպէսզի կարծեմ չը տամ թէ ես լեզուաբան կամ լեզուա-
գէտ եմ:

ԺԲ

Մ. Խորենացին անշուշտ յօդուել է
Փրմեկիանոսի պատմական գրած-
սից: — Հայոց դարձի — չրիստոսեան
լեան Լուսինանը յէս է յղած:

«Խնչպէս կարէր յամին 269 վախճանեալ ⁽¹⁾ խեղճ
Փրմեկիանոսը՝ յամին 284 թագաւորող Գիովղետեա-
նոսի և յամին 303 ուր ուրեմն նորա հանած հալա-
ծանաց պատմութիւնը գրելը» (Հ. Բ. Ս. «Ազատան-
գեղոս և իւր բազմադարեան դադանիք», եր. 29):

«Այս աղբիւր ևս Խորենացւոյն, Փրմեկիանոս,
չունի զօրութիւն. քանզի Փրմեկիանոս, որ մեռած
էր Գ. դարուն կիսուն մօտ (269 թ.), ինչպէս կրնար
պատմել զանցա Գ. դարուն վերջին տարիներուն,
նամանաւանդ Գ. դարուն առաջին տարիներուն, որ-
պիսի են գործք Տրդատայ յանիշխանութեան ժամա-
նակի» (Վարադաշեան. «Քննական պատմ. Հայոց», գ.
մասն, եր. 313):

1. «Հանգեալ (Փրմեկիանոս) ի Քրիստոս յամին 272»
(Յովհան. և պս. Չախլաթունեանց, «Սոսորագրութիւն Պաթու-
ղիկէ Էջմիածնի և հինգ զաւառոյն Այրարատայ», ա. հատոր
եր. 160):

Այսպէս, որքան պատահել է ինձ կար-
դալ՝ Գաթրճեանից սկսած սուտ են համա-
րում Մ. Խորենացու՝ Փրմեկիանոսից օգտուած
լինելը. սուտ են համարում, որովհետեւ շատ
էլ փոյթ չունին Խորենացուն զգոյշ վերաբեր-
ուելու, մանաւանդ, որ տրամադրուած են
անպատճառ սուտ հանել նորան:

Խորենացին Փրմեկիանոսից օգտուել է,
անշուշտ, բայց միայն Խոսրովի մահից յի-
տոյ անիշխանութեան ժամանակի համար. —
«Իսկ որ ինչ զկնի մահուանն Խոսրովու մինչեւ
ցրագաւորութիւնն Տրդատայ ի ժամանակս անիշ-
խանութեանն պատմեալ (Փրմեկիանոս), սոյց համա-
րելով՝ երկուդեմք համառօտ բանիւ» (Խոր. բ.
Հն. եր. 232), — չը հասցնելով նոյն իսկ մինչև
Տրդատի թագաւորելը, այլ հազիւ մօտ ի թա-
գաւորելը՝ երբ դեռ ևս Լիկիանոսի բանա-
կումն էր. — «և Տրդատայ վերաւորեալ երիվարն,
ոչ աճապարեաց ընդ փախստեայսն, այլ առեալ
զգէնն իւր և զկազմած ձիոյն, ի լուզ ընդ լայ-
նատարած խորայատակն անցանէր ընդ Նիւրատ ի
բուն զօրսն իւրեանց, ուր Լիկիանոսն էր» (բ. ՀԹ.
եր. 238): Խորենացին հէնց այստեղ էլ վեր-
ջացնում է Փրմեկիանոսից օգտուած պատ-
մութիւնը, ընդ ամենն չորս գլուխ ¹, և անմի-

1. «Գիմումն ի մեղ Արտաշէրի, և յաղթել կայսեր Տա-
կիտոսի»: — «Յաղագս խաղաղութեան Պարսից և Յունաց, և

ջապէս սկսում է ուրիշ ազդելը—Արտի-
թէոս եպիսկոպոսի թղթից—պատմել ս. Գր.
Լուսաւորչի մասին.—«Գրիգոր անցեալ դեաց ան-
Տրդատ (Լիկիանոսի բանակում), գհայրենեացն հա-
տուցանել զպարտին» (բ. Զ.): Ապա գրում է Մա-
միկոնեանց ծագման մասին (ԶԱ.), ապա Տըր-
դատի թագաւորելը,— «մանրախուզիւ քննեալ,
գտաք զթագաւորելն Տրդատայ յերրորդ ամի Դիոկ-
ղետիանոսի և զալ պար հանդերձ զօրու մեծաւ» (ԶԲ.):
Եթէ Տրդատի թագաւորելը Փիրմելիանոսից
առնէր՝ «մանրախուզիւ քննելու» էլ լինէր պէտք
կունենար... ապաքէն ինչպէս սկզբից յայտ-
նեց՝ խուզել, քննել, դտել է «ի յիշատակաց
դիւանադիր մատենից Յունաց: ... ի նամբաւուց
արանց իմաստնոց և հնախօս սիրաբանից ոտուգապէս
տեղեկացեալ» 1:

Ոչ միայն այս. Խորենացին Դիոկղետիա-
նոսի ժամանակի համար յայտնապէս տուում է.

չինելոյ Արտաշրի իշայն յամս անիշխանութեանն:—«Պոռո-
բումն ազգին Մանդակունեաց յԱրտաշէ»:—«Յազազս նահա-
տակութեան Տրդատայ յամս անիշխանութեանն Հայոց» (Խոր.
բ, ՀԶ. ՀԷ. ՀԸ. ՀԹ.):

1. «Բայց որ ինչ և ի թագաւորութեանն Տրդատայ և
և յետ նորոք, ոչ հեղուցութեամբ և անդուշտար զիպեալ, և
ոչ կամաւոր սխալանօք ի սմա յարմարեալ բան, այլ որ ինչ
ի յիշատակաց դիւանադիր մատենից Յունաց: Իսկ ըստ նմա-
նեացն ապա և որ ինչ ի համբաւուց արանց իմաստնոց և
հնախօս սիրաբանից ոտուգապէս տեղեկացեալ արդարաբար
քեզ գրուցեցաք» (Խոր. բ. ՀԵ. եր. 232):

«Ընդ նոյն աւուրս լինի սպանեալ և նամուխանոս ի
Թրակէ և փոխանորդեալ զթագաւորութիւնն Դիոկ-
ղետիանոս: Իսկ որ ինչ ի նորա (Դիոկղետիանոսի) ժա-
մանակն զարծի, յայցեմք քեզ Ագաթանգեղոս» (բ.
ՀԹ. եր. 238):

Այսպէս, Խորենացին երբէք չի ասել թէ
Դիոկղետիանոսի և նորա հանած հալածա-
նաց մասին ինքն օգտուած է Փիրմելիանո-
սից. այդ սխալ և միանգամայն անտեղի կար-
ծիքը առաջացել և ընդհանրացել է Խորենա-
ցուն ոչ-պատշաճ հմտութեամբ հասկանալուց
և քննադատելուց.—Խորենացին գրել է, «Սա
(Փիրմելիանոս) բազում խօսս արար, յորոց մի է
պատմութիւն հալածանաց եկեղեցւոյ, որ յառաջ յա-
ւուրս Մաքսիմիանոսի և Դեկոսի յարեալ, եւ որ
հուսկ յետոյ յամս Դիոկղետիանոսի, չարաշարեալ ի
նա և զգործս թագաւորաց» (բ. ՀԵ.): Բանասէրնե-
րին մի մեծ սխալեցնողը՝ Խորենացու այս խօս-
քի մէջ ընդդժաժս բառերն են, և որը սա-
կայն պարզ ընդմիջարկութիւն է Խորենացու՝
«ի յիշատակաց դիւանադիր մատենից Յունաց ... և
ի համբաւուց ... սիրաբանից» տեղեկացած դի-
տեցածը, և ոչ թէ Փիրմելիանոսից պատ-
մուած: Ճիշդ այսպէս միջանկեալ ունի, բայց
սրպիսի զուգադիպութիւն, Դարագաշեանից՝
սկզբում (եր. 90) մէջ բերածս խօսքը, և
եթէ առանձին ուշադրութեամբ չը կարդանք՝

Խոսքովից յետոյ անիշխանութեան ժամանակը Գարագաշեանը համարած պիտի լինի «Գ. դարուն առաջին տարիները» . . .

Նախընթաց ծանօթութեան խօսքերը (եբ. 92), ամբողջապէս, Խորենացին իւր համար է ասում, — թէ ինչպէս օգտուում և յարմարեցնում է «ի ամա (իւր պատմութեան մէջ) . . . ի յիշատակաց զիւանադիր մատենից Յունաց . . . ի համբաւոց արանց իմաստնոց և հնախօս սիրարանից», մինչ Խոր. եպս. Ստեփանէ, Եղիշէ Մատթթեան («Արարատ», 1894 թ. Յունվար) և առհասարակ սխալուողներն այդ էլ համարում են Փիրմեղիանոսի համար ասուած:

Ես չեմ ախորժում ուրիշներից արտագրել, սակայն որպէս զի հանգ. Ստեփանէի՝ Խոր. Հ. պատմ. աշխ. թարգմանութեան հրէշային սխալներից զոնէ այդ ի դէպ տեսնէ ընթերցողը՝ առաջ եմ բերում, զիւսուոր սխալներն ուղղելով փակագծերի մէջ¹:

«Իսկ ինչ որ Խոսքովի մահից յետոյ մինչև Տրդատի թագաւորելն է պատմում, անիշխանութեան

1. Ի դէպ. Խորեն եպս. Ստեփանէի՝ Խորենացու Հ. պատմութեան թարգմանութեան, բայցի այն որ արուած է Մ. Էմինի և այլ օտար թարգմանութեանց առաջնորդութեամբ, զործակցել է պ. Ստ. Մալխասեանցը: Իսկ երկրորդ տպա-

ժամանակում, ստույգ համարելով, կրկնում ենք համառօտ խօսքերով. (:) բայց ինչ որ Տրդատի թագաւորութեան ժամանակ և նորանից յետոյ է եղել, Փիրմեղիանոսը (նչ Փիրմեղիանոսը, այլ Իմբր—Խորենացին) ոչ անհոգութեամբ և անպզուշարար է (եմ) խաբկել և ոչ կամաւոր սխալներով նորա մէջ (ոչ նորա մէջ, այլ՝ «ի ամա», իւր—Խորենացու պատմութեան մէջ) բան յարմարեցրել, այլ ինչ որ յունական գիւնադիր բուն մատեններին յիշատակարաններից էր. յետոյ համապէս ինչ որ իմաստուն և հնախօս բանասէրներից ստույգ տեղեկացանք (սեղեկանալով) արդարութեամբ քեզ պատմեցինք» (եբ. 182—183):

Ինչ վերաբերում է Խոսքովի սպանուելուց մինչև մօտ ցլթագաւորելը Տրդատի՝ պատմութեան համար Խորենացու՝ արդարեւ Փիրմեղիանոսից առած լինելուն, վերջապէս եմ համարում՝ Խորենացուն Խորենացով քննելով և հասկանալով. սակայն ժամանակի միծ խընդիրն է որ մնում է լուծելու, որովհետև ըստ Ագաթանգեղոսի և Խորենացու՝ Տրդատ թագաւորել է իբր թէ 286—287 թուին—«յերբորդ ամի Գիողիետիանոսի»:

զրուիւն համար, յատկապէս սխալներն ուղղելու պարտաւորութեամբ, ստացել է 400 բաւր (պատմեց Խոր. եպիսկոպոսի մօտ ո. Խաչ վանքում աղբած մարդ), այդ պատճառով էլ զրբի երեսին փակագծի մէջ զրուած է. «հիմնովին սրբագրուած նւ ուղղուած»(?):—Ես արտագրում եմ հէնց այդ «երկրորդ» տպագրութիւնից:

Փորձեմ այդ խնդիրն ևս լուծել:—

Խոսքով, Տրդատի հայրը, Թագաւորել է 218 թուին, Պարթեաց Արտաւան Թագաւորը սպանուել 224 թուին. Արտաւանի վրէժը խնդրում էր Խոսքով տաւն տարի շարունակ (Աղաթ. և Խորենացի), — $224 + 10 = 234$, որ կը լինի Խոսքովի սպանման տարին:— Սասանեան Արտաշիւրը Թագաւորեց 226 թ., և Խոսքովի մահից յետոյ տիրեց և՛ Հայաստանին, մեռաւ 240—241 թ., նորանից յետոյ 1 տարի ևս տիրեց նորա որդին Ջապուհ, — $241 - 242$ թիւը՝ մինչև Տրդատի Թագաւորելը: Ուրեմն Խոսքովի մահից մինչև Տրդատի Թագաւորելը — անիշխանութեան ժամանակը — ընդ ամենն 7—8 տարի է: Ըստ այսմ, Խոսքովի վրէժխնդրութեան և սորա մահից յետոյ անիշխանութեան տարիները միասին լինում են 17 տարի: Հետեալը, ա) Խորենացին կամ նորա ազբիւրը Արտաշիւր՝ մեր աշխարհին իշխելու համար «ամս տաւն և վեց» գրած պիտի լինի, որ յետոյ սխալմամբ դարձած է «ամս քսան և վեց» (Խոր. ք. հէ.)¹:

1. Այսպէս և՛ երբայական բնագրի «ի տաւն և եօթն ամսոյն», հայկական Թարգմանութեան մէջ դարձել է «ի քսան և եօթն ամսոյն» (Ծնն. Ը. 4): Երևի թէ մեր՝ 10 և 20 ցոյց

բ) Տրդատի Թագաւորելը, այս հաշուով, հասնում է հազիւ $242 - 243$ թ.:

Կամ, եթէ Խոսքովի մահը զենեք 238 թ.¹, և հակառակ դէպքում յաւելացնենք Արտաշիւրի Թագաւորած բոլոր 16 և Ջապուհի 1 տարիները՝ կ'ստանանք — $238 + 17 = 255$ թիւը Տրդատի Թագաւորելու տարին. կամ եթէ նոյն իսկ 17-ի փոխանակ յաւելացնենք Խորենացու գրած 27 (վրիպակ) տարին, կը ստանանք առ առաւելն 265 թիւը, զոր Փիլոմելիանոսը ($\dagger 269 - 272$ թ.) անշուշտ կարող էր պատմագրած լինել:

Միւս կողմից. Խոսքով և Անակ սպանուել են ըստ իս՝ 234 թ., ըստ այլոց՝ 238 թ.: Անակի որդին Գրիգոր մօտ երկու տարեկան էր այդ ժամանակ, և Խոսքովի որդին Տրդատ՝ 12 տարեկան գտնէ եղած պիտի լինէր. սոքա մեռնում են, գտնէ Տրդատը, ըստ

սուող Մեսրոպեան տառերը — Ժ և Ի — հետաւածմը չփոխւում էին:

1. Պրոֆ. Ն. Գեղցեր («Համառօտ պատմութիւն Հայոց», ԿԲ. 10, Թարգ. Գալէմբարեանի) Ոստանեան Արտաշիւրի Թագաւորելը զնում է 226-ին, Խոսքովի սպանուելը՝ 238-ին, Տրդատի Թագաւորելը՝ 261-ին:— Ուխտանէս Կաթ.-ի հաշուով՝ (ԿԲ. 74) Խոսքովի սպանուելը ընկնում է նոյնպէս 238-ին:— Ըստ Նեոյդէբէի՝ Արտաշիւր Սասանեանը մեռնում է, նոյնպէս, 241-ին («Աղաթ. և իւր բազմ. դարձանք», ԿԲ. 18):

մեր տոհմային պատմիչներին՝ 343 թ.: Այս թուից հանենք Խոսրովի և Անտիի սպանման հէնց վերջին—238 թիւը, և յաւելացնենք Տրդատի առ նուազն 12 տարեկան լինելը, Տրդատի հասակի տարիքը դառնում է առ նուազն 117 տարի, իսկ իմ հաշուով՝ 121 տարի:—Տրդատը թագաւորում է 100—101 տարի: Պէտք է դեռ այն էլ ի նկատի ունել՝ որ բնական մահով չի մեռնում . . . Ի՞նչ տարակոյտ որ սխալ է:

Տրդատի և Լուսաւորչի ձեռքով Հայաստանի քրիստոնեայ դառնալու ժամանակի պատմութիւնը բնագրօսուած է, կամ՝ «202աւիւած են անհարազատ ձեռքեր» (ա. հատ. եր. 86—90): Այս պատմութեան մեր աղբիւրը Ագաթանգեղոսն է. Ագաթանգեղոսի այժմեան յունարէնը հայերէնիցն է թարգմանուած, իսկ հայերէնը՝ խմբագրուած և թարգմանուած է վկայաբանութեան նման յունարէն գրուածքներից՝ ս. Մեսրոփրի աշակերտ Կորիւնի ձեռքով Ե. դարում (տես «Ագաթ. և իւր բաղմադարեան զգալիք», եր. 109, 114, 115—119, 263—264. 343):

Ինչ թուում է թէ ս. Հռիփսիմեան կուսանայ մեր աշխարհում յայտնուելը և Ս. Գր.

Լուսաւորչի և Տրդատի ձեռքով մեր աղգովին քրիստոնեայ դառնալու թուականը շատ առաջ էր քան ընդունուած 301 կամ 305 թիւը: Հռիփսիմեան կուսանք վախճած պիտի լինին Գեղոսի (249—251) յարուցած հալածանքի ժամանակ, որը միայն կարող է յարմարուել Տրդատի թագաւորութեան տարիներին:

Սերէոսը, է. դարու պատմիչ, գրում է. «Արդ ունիւք մեք հաւատս, ոչ ի նորագունից սահմանեալ . . . դողցեա եթէ Լ. (30) ամօք յառաջ քան զՆոստանդիանոս» (Լ. Գ. եր. 119)¹: Այս կարծեայ աւելի հիմնաւոր վկայութիւն կարող ենք համարել ժամանակակից Եւսեբիոսի պատմածը. «Պատերազմ ես ի բռնաւորէ անոսի (Մաքսիմիոս Դալայ) ընդ հայոց գրգռեցաւ, ընդ արս՝ որ ի սկզբբանէ բարեկամք և նիդակակիցք հռոմէական ժողովրդեան էին: Բայց քանզի և նոյա քրիստոնեայք էին և ջերմաջերմք ի բարեպաշտութիւնն որ առ Աստուածապաշտութիւն է՝ ջանացաւ աստուածատեացն բռնաւոր բռնութեամբ ածել զնոսա ի պաշտօն կուոցն և դիւսց, և յայն սակս զբարեկաման յատելիս զղաշնաւորսն ի Թշնամիս դարձոյց. և ինքն ի պատերազմի

1. Դիոկղետիանոսի՝ զահլից հրաժարուելոյց (305 թ.) յետոյ, կայսրութեան թեկնածու Կոստանդիանոսը անցնում է քրիստոնեայ կուսակցութեան կողմը, զօրքը նորան ընտրում է Աւգոստոս 306 թ., նա շրջապատում է քրիստոնեայներով. (մկրտում է 324 թ.):

անդ ընդ Հայոց հանդերձ զօրուն իւրով գունակ գունակ նեղեալ վտանգեցաւ չարաչար» (Նկ. պտմ. ք. դպր. ԳԻ. Ը.): Այս պատերազմը եղաւ, ըստ Գարագաշեանի, «ոչ յառաջ և ոչ յետոյ քան զամեն 311» («Քնն. պտմ. Հայ.» գ. մասն. եր. 313 — 381):

Եւսերիոսի պատմածից երևում է, արդարեւ, որ Հայք վաղուց քրիստոնեայ եղած պիտի լինէին՝ որ այնպէս միաբան պատերազմ մղէին հռոմէական լեգէօնների դէմ, մինչև յաղթել: Երկրորդ, 311 թուերին, ըստ մեր պատմաց, Ս. Լուսաւորիչ և Տրդատ զբաղուած էին նորադարձ երկրի ներքին-քրիստոնէական բարեկարգութիւններով, և Տրդատը հաւատալուց առաջ և յետոյ պատերազմ ունեցել է միայն Պարսից Չապուհի և հիւսիսականաց դէմ, միշտ ըստնկամ՝ եւ հաշտ լինելով Հռովմայեցոց հետ: Երրորդ, այն անունները, — Վաղերիանոս (253 — 259), Տակիտոս (275 — 276), որոնց Խորենացին յիշում է իբր թէ ժամանակակից Սոսանեան Արտաշրի, և այն անունները, — Դիոկղետիանոս (284 — 305), Կոստանդիանոս (306 — 337), որոնց յիշում է իբր ժամանակակից Խոսրովի որդի Տրդատի և զաշակից, և այլ պարագայներ, օրինակ՝ Խոսրովի մահից յետոյ մինչև Տրդատ թագաւորելը — «անիշխա-

նութեան» ժամանակը — 27 տարի հաշուելը, և կամ Ս. Լուսաւորիչի Խոր-Վիրապում մնալը 14 — 15 տարի, յայտնապէս ցոյց են տալիս՝ որ մեր քրիստոնէութեան թուականը յետ է մըղուած, գուցէ նպատակ ունելով Հայոց ազատ համարձակ քրիստոնէութիւն դաւանիլը Կոստանդիանոսից շաա առաջ չը ցոյց տալ: Այս պատճառով էլ Խոսրովից յետոյ թագաւորող Արտաւազդ և Կոստանդիանոսի ժամանակակից ոմն Տրդատ (ըստ արտաքին պատմիչների) թագաւոր, որը և հռովմ գնացած, մեր պատմութեան մէջ միացած են յանձին Խոսրովի որդի Տրդատի, տալով սորան 100 — 101 տարի թագաւորել:

ա) Խորենացին Փիրմեղիանոսից առել է միայն անիշխանութեան ժամանակի պատմութիւնը:

բ) «Եւ որ հուսկ յետոյ յամս Դիոկղեսիանոսի»՝ միջանկեալ խօսք է Խորենացու կողմից, չի վերաբերում Փիրմեղիանոսի գրած պատմութեան:

գ) Խոսրովից յետոյ անիշխանութեան ժամանակը ոչ 27, այլ 7 — 8 տարի էր:

դ) Խորենացու «ամս քսան և վեց»ը (բ. ՀԵ.) եղած պիտի լինի «ամս քսան և վեց», այն էլ՝ Խոսրովի վեթիսդուրեան և նորս մահից յետոյ անիշխանութեան տարիները միասին:

ե) Տրդատ թագաւորել է 242 — 243 թ., կամ

առ առաւելն՝ 255 թ. կամ 261 կամ 265 թ., զոր Փիրմեխանոս պատմագրել կարող էր:

զ) Հռիփսիմեանք փախած պիտի լինէին Վեկոսի (249—251) յարուցած հալածանքի ժամանակ, և ոչ Գիւղիգեանոսի:

է) Մաքսիմիոս Գալայի դէմ պատերազմ մղող Հայոց թագաւորը չէր կարող Մեծն Տրդատը լինելը:

ը) Մեր Հայոց դարձի—քրիստոնէութեան թուականը յետ է մզուած:

ԺԳ.

«Խորենացին առ ի չհալոյ կասկած՝ կը լուէ Շահապիվան աւուներ, յայտնի է սակայն, թէ բանքն «մօտ յակունս Մօրին մեծի յափն երաստայ»՝ կակնարկեն «Շահապիվան» (Գարագաշեան, «Քնն. պատմ. Հայոց», ա. մասն, եր. 239):

Գարագաշեանը, «Խորենացին առ ի չհալոյ կասկած՝ կը լուէ Շահապիվան աւուներ»..., այս և նման խօսքերով և անվերջ ակնարկութիւններով ճգնում է Խորենացուն յաճախ դուրս բերել ոչ թէ սխալուած՝ որ յատուկ է մար-

դուն, այլ՝ կերծող, խաբերայ: Ես աւելորդ կմ համարում արտագրել նորա գրած գոնէ այդ կտորը ամբողջ, ցանկացողը թող կարգայ նոյն տեղում, երես 238—240, և տեսնէ: Գարագաշեանը Խորենացուն լաւ չը հասկանալով՝ նախ նոյնացնում է «մօտ յակունս Մօրին մեծի» (1) յափն երաստայ» և «զափամը Մօրին մեծի ... ուր» տարբեր տեղերը, մինչ մինչ Մօր Մեծի ակունքներին էլ վեր է երմաւրի մօտ՝ ըստ Խորենացու, իսկ միւսը՝ Մօր Մեծի գետաբերանն է—Արտաշատի սահմանի մօտեւրում: Գարագաշեանի այս սխալը ոչինչ, քանի որ անխտիր ամենքն էլ սխալուում էին այս տեղերի և մանաւանդ Մօր Մեծի և Մեծամօրի մասին՝ մինչև իմ բացատրելը. տես «Խորենացուն Խորենացով պէտք է հասկանալ», ա. հատ. ԺԹ. և Ի. եր. 51—59:

Երկրորդ, Գարագաշեանը Մօր Մեծի ավունքը նոյնացնում է Ջահապիվանի հետ, որովհետև նա զիտէ, Փաւստոս Բուզանդից, որ Ջահապիվանը «վերջին Արշակունեաց բանակաւորն» էր (նոյն եր.), բայց անգիտանում է որ «նստոց ամառա՛ն» էր Ջահապիվանը², մինչ

1. Ո՛չ այդպէս, այլ՝ «վերագոյն քան զակունս Մօրին Մեծի»... (Մօր. ք. Գ. եր. 104):

2. «Եւ էր բանակ թագաւորին ի Ջահապիվանի ի բուն

Խորենացու Մօր Մեծի ափունքը ընդհակառակն *ձմերոց էր*։—«Ե ցեսանալ հիւսիսոյ ի դառնահոտ փշելոյ, խաղայ իջանէ (Վաղարշակ) ի դառն մեծ. եւ անդ զափամբ Մօրին Մեծի բանակի ի տեղոջ, ուր՝ գետն մեծ ի ծովակէն հիւսիսոյ սկիզբն առեալ՝ իջանէ եւ խառնի ի Մօրն Մեծ» (Խոր. բ. 9. եր. 108)։

Այս վերջին հանգամանքը գոնէ պէտք է Գարագաշեանի աչքերը բանար, այո, որ նա Խորենացուն կեղծելում բռնելու տենչով յափըշտակուած՝ չը նոյնացնէր այժմեան Թրքական Բայազիտու գաւառում գտնուող Արեւելեան Եփրատի—Արածանու աղբերակունք Ջահալիվանը՝ ռուսական բաժնում պատմական Արմաւրի եւ Արտաշատի միջասահմաններում, Երասխի միջին հոսանքի վերայ եւ ձախ կողմում գտնուող Մօր Մեծի ափունքների, միևնոյն ժամանակ եւ՝ գետաբերանի հետ։

բանակի տեղն Արշակունեացն» (Բուզ. դ. գպ. Ժե. եր. 99)։—«2ու արարեալ ամենայն բաղմութիւնն Հայոց ի տեղիս հովոց, գային հասանէին ի գաւառն՝ որ կոչի Ծաղկուտն, մերձ ի բերդն տմուր՝ զոր Անգղն անուանեն. զայն տեղօք արարեալ բանակեալեղս արանց (Իւրեանց), ղաղարէին անդ զաւուրս տօթոյն» (Ղազ. Փարպ. Վենետ. 1873, եր. 174)։—«Հրամայեաց (Հուլաւուն) դարպաս շինել իւր մեծածախօք ի Դառն դաշտին, զոր կոչեցին իւր ինքեան զանուն տեղւոյն Ալաթաղ, որ էր զառաջն տեղին այն նստոց ամարան մեծ թագաւորացն Հայոց, այսինքն Արշակունեաց» (Մաղոք. արևդ. «պատմ. վտանագրին նկարագր», Ե. Պետեր., եր. 32)։

Այս կարգի նորա անտեղի յարձակմունքներինցն են.—

ա) «Ի՞նչ եկբատան է այն՝ զոր Խորենացին կուտայ շինել Տրդատայ» (նոյն, գ. մասն, եր. 350)։

—Խորենացին գրել է. «Տրդատայ հաստատեալ իւր... գեկբատան» (բ. 25.), իսկ «հաստատել իւր» չի նշանակում շինել, այլ՝ սեպհականել—*կրթացնել*. ինչպէս եւ գ. ԺԶ. գրած է. «Շապուհ... բարեբարութիւն առնելով իւր հաստատել զաշխարհս»։ Այս ոճը—«իւր հաստատել»—այսօր էլ զործածական է մեր աշխարհաբանում, օրին. այն ինչ կալուածքը հաստատել իւր վերայ...

բ) «2է ամհենէին հաւանական, թէ Տրդատ գնաց «տաբեկան չուարութեամբ» իւր եւ Հռոմայեցի (!) զօրօք—«միահամուռ իւրովքն եւ որք ընդ իւրովք էին զօրք (Հռոմայեցւոց) (!)—ընդ հիւսիսային կողմանս իշխանութեանն Պարսից» (նոյն, եր. 355)։

—Խորենացին այդպիսի բան երբէք չունի առած, մտքովն հո չի անցրել, Գարագաշեանը զրպարտում է Խորենացուն՝ որպէս զի եւ իսկոյն սուտ հանէ։ Տրդատը ոչ թէ հռոմայեցի զօրքով, այլ «ամենայն Հայաստանեօքն» միայն նախ գնում է Գարագաշացոյ (Աղուանք) դաշտը, «ճեղքում է» հիւսիսակիսնաց ամրոխը, ուր «եւ ընդմէջ կտէր գայրն (Բառ-

լաց թագաւոր) և ընդ զոչ պարանոցին զգրուին երկ-
վարին: Ապա «միաբանեալ զամենայն հիւսիսի,
հանեալ զօր բազում, զումարսակ արարեալ խա-
ղայ յաւիստինն Պարսից» (Խոր. բ. 26.), *սուսնց*
հռովմէական զօրաց: Սակայն այդ ժամանակ
հռովմայեցոյ զօրքը, հեռու, շատ հեռու Տըր-
դատի բանակից և անկախ՝ «ընդ Ասորեստան
յարձակեցան» Չաղուհի դէմ՝ հարաւ — արեւմուտ-
քից, իսկ «Տրդատ՝ միահամուռ իւրովն, եւ ուր
ընդ իւրովն էին զօր (նւր է այստեղ «հռովմա-
յնցի» զօրք), ընդ հիւսիսային կողմանս իշխանու-
թեան Պարսից գիմնաց տարեկան չուարութեամբ»
(բ. 26.), ուր և «իւր հաստատեաց» = զբաւեց
իւրացընց երկրորդ եկբատանը, որ է՝ Ատր-
պատականի Գամբէթը:

Աւելորդ եմ համարում նորա և այսպիսի
սխալների վերայ կանգ տանել, օրինակ.—

դ) «Գիտել պարտ է, զի Խորենացին որ հոս
(ա. ԻԳ.) Սիւս անունն ի Սանասարայ կը թուի հա-
նել՝ այլուր (ա. 2.) ի Սեմայ կը համարի կոչեցեալ
այնպէս» (նոյն, ա. մասն, եր. 169):

դ) «Խորենացին որ հոս (ա. ԻԲ.) Սմբատը
Շամբութին հետ կը նոյնացնէ՝ ուրիշ տեղ (1) խժա-
կան կը կոչէ աչն անունը» (նոյն, ա. մասն, եր. 172):

Նոյնպէս շատ-շատ են Գարապաշեանի

միամիտ հարց ու խժրժանքները, օրինակ. —

ե) «Եթէ . . . Աթգահակ աշխարհ ինչո՞ւ ունէր
մինչև մարթիւ «ըդ մտերմս և զկուսակալս Տիգրա-
նայ զանձիւք ի նմանէ ի բաց մեղկանալ»՝ զի՞ պի-
տոյ էր խնդրել զձեռն Տիգրանուհւոյ» (նոյն, եր. 190
— 191):

զ) «Քանի մը տիւղծ մանուկներ (1) զրկել առ-
ջողկերտ չենք զիտեր ինչ մեծ ծառայութիւն էր
նմա և Ալեկաց աշխարհ, մինչև յուսալ Վասակայ
ընդունել ընդ աչն ի Հայոց թագաւորութիւնը»
(նոյն, դ. մասն, եր. 17):

Նոյնպիսի են նորա *աւելորդ տարակու-*
սանքները, օրինակ. —

է) «Պարսից օգնեց Վարբակայ բառնալ Ասորե-
ստանի թագաւորութիւնը, թէ Վարբակ՝ Պարու-
րի» (նոյն, ա. մասն, եր. 182):

ը) «Տիգրան, ըստ Խորենացւոյն, ոչ միայն ըզ-
նոյնս նուաճեց, այլ և Մարաց տէրութիւնը ջնջեց
օգնականութեամբ Կիւրոսի . . . և որ առաւել զար-
մանալին է՝ նաև զտէրութիւնն Պարսից յինքն յա-
փրցակեաց, և զայն՝ կամօք և յօժարութեամբ Կիւ-
րոսի» (նոյն, եր. 189):

— Երկու տեղումն ևս Խորենացին նոյն
կերպ զարձուածով և բառերով է խօսում.
— «Սա (Պարսից) ոչ փոքր օգնականութիւն գտեալ ի
Վարբակայ Մարէ, բառնալով զթագաւորութիւնն
ի Սարգանապաղայ» (ա. ԻԱ.): — «Որ (Տիգրան) և

կիւրոսի աջակցեալ, զՄարացն ի բաց բառնալով զիսխանութիւն» (ա. ԻՊ.): Ուր «բառնալով»-ը ոչ թէ «երարծ», իմն Պարոյր կամ Տիգրան, պէտք է հասկանալ՝ ինչպէս Գարապաշեանն է հասկանում, այլ՝ *բառնալովը*, = բառնալու գործակցութեան համար, *բառնալու պատճառովը*: Իսկ «գիշխանութիւն Մարաց և Պարսից յինքն յափշտակեաց» (ա. ԼԱ.) խօսքի նշանակութիւնը՝ տես զըքիւ ա. հատ. ԺԷ. եր. 48—49:

ԺԴ.

«Վաղարշակ. . . խաղայ ի վերայ Մակեդոնացւոց մտերմաց» (Խոր. բ. Գ. եր. 104):

Պարթին Արշակ Մեծ, ջարդելով հակառակորդ Սելևկեանց Անտիոքոսին էլ, տիրում է աշխարհի երրորդ մասին—Ասիային, և իւր եղբայր Վաղարշակին թագաւորեցնում հայոց վերայ (Խոր. ը. Բ. և Գ.):—Վաղարշակը Ատրպատականի և հայոց զօրքերը ի մի գումարելով դիմում է Խաղտեայ կողմերը, որովհետեւ «Վաղիկայ, Պոնտոս, Փուլգեայ, Մաթաբ և

այլք ոչ գիտելով զհամ պատերազմին Արշակայ, առ Մակեդոնացւոց պետութիւնն զմիաբանութիւն դառանցն հաստատուն պահեին»: Այս պատերազմում սպտնում է զոցա առաջնորդ Մորիլիզիկէսը, և այնուհետեւ Մակեդոնացոց կողմից կռիւր դադարելով՝ խաղաղում է երկիրը ընդ իշխանութեամբ Վաղարշակայ (Խոր. ը. Գ. և Ե.):

Խորենացու այս պատմութիւնից տեսնում ենք, որ Վաղարշակը «խաղաց» նորանց վերայ՝ որոնք դեռ ևս ղաշնակից, քարեկամ և մտերիմ էին Մակեդոնացոց և հակառակորդը Պարթեաց. սակայն Խորէն եպիսկոպոս Ստեփանէի թարգմանութեան մէջ ինչ ենք կարգում. — «Վաղարշակը. . . մտերիմ Մակեդոնացիների վրայ գնաց» (!!!):

Մակեդոնացիները մտերիմ, չէ՞ որ Պարթեաց ապստամբութիւնը, պատերազմները, յաղթութիւնները Մակեդոնացոց դէմ էին:

Փոխանակ թարգմանելու. — «Վաղարշակը. . . Մակեդոնացիներին մտերիմներին վրայ գնաց»¹:

Կանխելով, որպէս զի Ստեփանէի այդ

1. Գորապաշեանը այս, իբրեւ զլսի վերնագիր, չունի թէ տեսնելնք նա ինչպէս էր հասկացել:

Թարգմանութեան գործակցող իսկ վերջում՝
և՛ սրբազրոյ պ. Ստ. Մալխասեանցը ի զուր
չը փորձէ դոյց տալ Մակեդոնացիները մտն-
ըիմ (էին) Սելուկեանց, հէնց սկզբում Գ.
և Ե. գլուխները բովանդակութիւնները ամ-
փոփելով առաջ բերի...

ԺԵ

«Այլ խտեմ ասս վասն սիրելի
առնն յայտնի գրել զամե-
նայն և մանրապատում»:

Խորենացին Վաղարշակի պատմութիւնը
հարեանցի շօշափում ամփոփում է, բայց իւր
համառոտափութեան, համարեա մի փոքրիկ
երեսի մէջ (Ձ. Գ. եր. 102—103), և զորա
վերայ յաւելացնում է միայն պատերազմն
ընդ Մորփիւղիկէսի (Գ. և Ե.): Ապա, Զ.
գլխում, կարծես ստորջանում է համառոտ անց-
նելը—պատմելը իւր այնքան սիրելի և գոված
Վաղարշակի մասին, կանգ է առնում և ասում.
«Այլ խտեմ ասս վասն սիրելի առնն յայտնի գրել

զամենայն եւ մանրապատում. զի անցի միայն
զտեղիսն նշանակելով, զհաւաստին եւ զոնն ի բաց
քողեալ, վասն զկապ սիրոյ զհրաշալուն անխզելի
պահելոյ» (Խոր. բ. Զ. եր. 107). և այդտեղից
սկսում է ընդարձակելով «մանրապատում»
գրել Վաղարշակի մասին, գլխաւորապէս նո-
րա արած բարեկարգութիւններն, ամբողջ
տասն երկու երես—107—118 (Զ. է. Ը.):

Այսպէս, միշտ համառոտապէս Խորենա-
ցին, որ; ինչպէս ես եմ հասկանում, Վաղար-
շակին սիրելու համար միայն խաբուծին է
անում ընդարձակ պատմելու. սակայն զուր
տեսէք թէ նորա քննադատները, ուսումնասի-
րողները և թարգմանող ու սրբազրոյներն ինչ-
պէս են փշաջնում նորա գրածը, այլանդակում
նորա մտքերը, և հասցնում՝ արսիւող վիճակի:

«Պարտ էր, թարգմանում է Գարագաշեանը,
գիրքի տառն (զՎաղարշակայ) զամենայն ինչ մանր
և յայտնի պատմել. բայց անցայ համառօտիւ առանց
ոճոյ և կարգի, և այս ի սիրոյ զոր ունիմ աս. նա»
(«Քնն. պատմ. Հայոց», ա. մասն, եր. 239):

«Բայց զգուշանում եմ այս տեղ (Թարգմա-
նում է Խորէն եպո. Ստեփանէ՛ մասնակցու-
թեամբ և սրբազրութեամբ պ. Ս. Մալխա-
սեանցի) այն սիրելի մարդու համար յայտնի և
մանրամասնաբար ամեն բան գրել, որովհետեւ կան-

ցնեմ (1) միայն հաւաստի տեղերը նշանակելով և կարգը բաց թողնելով. այն հրաշալի մարդու սէրի կապն անխզելի պահելու համար» (Խոր. Հ. ստմ. աշխ. Թարգմ. եր. 83):

Ընթերցողք, դուք արդեօք բան հասկացա՞ք այս Թարգմանութիւններից, մանաւանդ վերջինից: Ապուշ պէտք է եղած լինէր Մովսէս Խորենացին՝ այդ կերպ մտածելու և գրելու համար: Ասում են թէ «Խորենացին համառօտ է պատմում, կամ, զգուշանում է յայտնի և մանրամասն ամեն բան պատմել, և այս՝ վասն սիրոյն զոր ունի առ Վաղարշակ, կամ՝ այն հրաշալի մարդու սէրի կապն անխզելի պահելու համար»:—Ուրեմն կային Վաղարշակի այնպիսի (վատ) բաներ՝ որ Խորենացին խնայելով վասն առ նա սիրոյն՝ լռում է... այս է հետեւում և հասկացում այդ Թարգմանութիւններից, մինչ Խորենացին բոլորովին դորա հակառակն է ասել՝ ինչպէս սկզբում պարզեցի:

Խորենացու այդ պարբերութեան մէջ

1. Ո՛չ «կանցնեմ», այլ՝ «անցայ». որովհետեւ սխալ է ե՛ւ ձեր ընտրած՝ Լամբրոնացու օրինակի «անցից» ընթերցումը: Եւ այդ օրինակը չի կարելի Լամբրոնացու ունեցածից արտագրութիւն—կուպիա—համարել, քանի որ ձեռագրի ստացող «պիտականուն Մովսէս»-ը յայտնում է թէ «օրինակել տուաք ուրումն զըջի, և սրբագրեցաք ըստ կարի մերում» (Կարինեանցի բաղդատ. եր. 11):

«զի անցի միայն գտեղինն նշանակելով, զհաւաստին և զոճն ի բաց թողեալ» միջանկեալ բան է: Հասկանալու կամ Թարգմանելու համար, ի հարկէ Խորենացու միտքը ըմբռնել կարողանալուց յետոյ¹, այդ միջանկեալը պէտք է տեղափոխել և կցել պարբերութեան վերջը, Թարգմանել այսպէս. — «բաց այստեղ խտրում եմ այն սիրելի մարդոյ համար ամեն բան յայտնի և մանրապատում գրելով՝ այն հրաշալի մարդու սիրոյ կապը անխզելի պահելու համար, որովհետեւ անցել եմ (մինչև այստեղ) միայն տեղերը նշանակելով, լիով և կարգաւ պատմութիւնը բաց թողած»: Ահա թէ Խորենացին ինչ է ասում...

Խորենացու այդ պարբերութեան նախընթաց պարբերութիւնը նոյնպէս չեն ըմբռնած Ինճիճեան, Խ. եպիսկոպոս Ստեփանէ և Գարագաշեանը, մանաւանդ Գարագաշեանը. միւսների մասին էլ աւելորդ է մտածելը:

Խորենացու Հայոց պատմութեան Խոր. եպս. Ստեփանէի աշխարհաբառ Թարգմանութիւնը (բացի լաւ-վատ ժողոված ծանօ-

1. Մի քանի տարի առաջ ինքը պ. Ստ. Մալխասեանցը, Դահրաշեանի զբոսկր քննադատելուս, խիստ տեղին նկատեց. «Խորենացուն պէտք է լաւ կարդալ»:—«Քննադատը (եւ կասեմ՝ եւ՛ Թարգմանողը—սրբագրողը) պարտաւոր է հասկանալ ծիշտ լուսաբանել հեղինակի ոգին» (Մշակ 1898 թ., № № 201, 204):

թուլթիւնները), այնպէս էլ բոլոր օտար լեզուներով եղած թարգմանութիւնները, որ հիմք ունիմ կարծելու թէ Ստեփանէի թարգմանութեան նման մի-մի բաներ պիտի լինին, պէտք է ժողովել եւ այրել՝ ի սէր եւ ի պատիւ Մ. Խորենացու եւ նորա զրած թողած Հայոց պատմութեան:

ԺԶ

«Ի ծովէն Պոնտոսի մինչև ի տեղին՝ ուր Կովկաս յաբեմսեանցն յանդի ծով»:

Մեծն Արշակ Պարթև, իւր եղբայր Վաղարշակին թագաւորեցնելով Հայոց վերայ, յատկացնում է Մծբինը նորան մայրաքաղաք եւ «սահման հատանէ նմա զմասն ինչ յարեմտեայ Ասորոց եւ զՊաղեստին եւ զԱսիայ (Փղքն Ասիայ) եւ զամենայն միջերկրեայս եւ զԹիտալիայ, ի ծովէն Պոնտոսի մինչև ի տեղին՝ ուր Կաւկաս յաբեմսեանցն յանդի ծով, եւ զԱտրպատական» (Խոր. ա, Բ. եր. 27):

Այս պարբերութեան մէջ «յարեմտեանն»

բառի մասին Գարագաշեանը երկմտելով՝ յաւելացնում է փակագծի մէջ. «(Թերևս արեւելեան, այսինքն Կասպից ծով)»: Այսպէս և ինձ է պատահել երկմտիլ, անշուշտ և ուրիշներին պատահած պիտի լինի, որովհետև Պոնտոս ծովի (Սև ծով) և Կաւկասի ուղղութեամբ Կասպից ծովն է՝ բայց արեւելքում, և ո՛չ թէ արեւմուտքում:

Բայց այս տարակոյտը փարատել է, շատ վաղուց, սրամիտ Ինճիճեանը («Հնախ. Հայաստ.», ա. հատ. եր. 379—380), սակայն ափսոս որ մինչև այսօր չի մտել Խորենացու թարգմանութեանց և ուսումնասիրութեանց ծանօթութեանց շարքը: Նա ասում է որ այդ արեւմտեան ծովը Կասպից ծովն է, սակայն արեւմտեան՝ ոչ Կաւկասի կամ Հայաստանի վերաբերմամբ, այլ՝ Պարթևաց մայրաքաղաք Բաղի, ուր Մեծն Արշակ նստած՝ սահման էր հատանում իւր եղբայր Վաղարշակի թագաւորութեան համար:

Միանգամայն ճիշդ է Ինճիճեանի բացատրութիւնը:

ԺԷ

«Այլ երբեմն ի մականական խաղուն երկիցս պատահեաց Շաւառայ Արծրունւոյ զգրնդակն հանել ի Շապհոյ» (Խոր. գ. ԾԵ. եր. 376):

Հանգ. Խոր. եպս. Ստեփանէն (Ժան. 759), առնլով Մ. Էմինից, այսպէս է հասկանում. «Մականախաղը (գաւազանի խաղը) երեւի մի տեսակ մարմնամարզական վարժութիւն էր, ինչպէս այժմ Պարսիկների, Թուրքերի և Կովկասեան շատ լեռնական ազգերի մէջ (1) ջրգիթի խաղն է: Թուրք. Արծրունին այսպէս է նկարագրում այս գէպը. «Շաւառայ Արծրունի խաղս ձերնթացիկ արշաւանաց գնդակացն գհետ մուրակեալ հանէ ի նմանէ ըզգնդակն բազում անգամ ասելով. *անդկամարդ, ի բաց լեր յասպատակէ ասպարիսիս սյը կանացի, և ծանիր դբեդ*» (Ա. պօլիս, եր. 77): (Մ. է.)»:

Ըստ Թովմ. Արծրունու և Էմինեան բացատրութեանց՝ սականական խաղը, — ուր

1. Եւ Հայերի էջ:

մականի հետ անհրաժեշտաբար կ' գնդակ պէտք էր, — ձիով էր խաղացուում: Թովմ. Արծրունին այդպէս է ճոռմարանում նկարագրում այդ պատմութեան մէջ «ի ծիարծակարանէն» բառն է տեսել¹: Ձիու վերայ և արշաւելով միմեանցից գաւազանով գնդակ կորդել-հանել՝ Թովմ. Արծրունու երեւակայութեան արդիւնք պէտք է համարել:

Գնդակով մականախաղը՝ քրդերէն հօլի կոչուած խաղն է, հայերէն՝ «գնդի խաղալ»²: Այդ խաղը խաղալու համար՝ խաղացողները կազմում են երկու հակառակորդ խումբ, իւրաքանչիւր ոք ունին մի-մի ամուր ձեռնափայտ (մական), «ծիարծակարանի», այն է՝ ընդարձակ հրապարակի կեդրոնում դնում են փայտեայ մի գնդակ, խմբերը ի հետիոտս, ոչ ձիով, աշխատում մրցում են ձեռնափայտով խփելով՝ զլորել կամ թռցնել հասցնել

1. «Եւ զայս ասացեալ (Ջաւառայ) յոյժ քամահաբար, ի ծիարծակարանէն արփայազնաց լինէր» (Խոր. գ. ԾԵ. եր. 376):

2. «Եւ գիտեմ որ գնդի խաղալը. առէք զզլուխ քեռորդուդ ձերոյ և եղիցի դա ձեր գունդ ազգաց յազգս»:— «Կըտրեալ զզլուխն, ետ ցծառայ մի, և ասէ. Պահեա զգա, որ իջանիմք ի Մատրափանս և գնդի խաղամք» (Յովհաննու Մամիկոնեան Եպիսկոպոսի՝ «Պատմութիւն Տարօնոյ». Վն. 1832, եր. 28, 52):

զնդակը իրենցը համարուած ըոյնը—ասպարիսի ծայրը, որով և խաղ տանում: Այժմ ևս այս խաղը խաղում են Տաճկաց Հայաստանի և մեր Զիրակայ գիւղերում, ինչպէս ըստուգեցի:

Ահա թէ ինչպիսի խաղ էր Խորենացու գրածը. «ի մականական խաղուն երկիցս պատահեաց Շաւասպայ Արծրունւոյ զգնդակն հանել ի Շապհոյ»:

ԺԸ

«Ե ՏՈՒՆՈՒՔԻՆ ԵՄ յԱՋՈՂՈՒՄՈՅ
ՈՒՆԷՐ Ի ՄԱՐՍԱ»:

Խորենացին առնլով Ժողովրդական վէպից, գտլում է Արտաշէս Բ.-ի դայեակ և բարերար Մմբատ Բագրատունի ու վայելչակազմութիւնը, դէմքի այս և այն հաճելի նկարագիրը, քաջութիւնը, յամենայնի զգուշաւորութիւնը, և յաւելաւորում է. «Եւ տուէր ինն յաջողութեան ունէր ի մարտս առաւել քան զամենայն ոք» (ը. ԾԲ. եր. 193):

Խորէն եպս. Ստեփանէի և Գարագաշեանի թարգմանութեանց մէջ բաց են թողուած այդ թանկագին «տուէր ինն» բառը, անշուշտ իբրեւ պիտակաբար և առանց նշանակութեան գործածուած մի բառ համարելով կամ խոյս տալով. այսպէս համարած կամ խոյս տուած պիտի լինին Խորենացու և՛ ամեն թարգմանողները:

Նախապաշարմունքներով, նահապետական հաւատալիքներով հարուստ գիւղական Ժողովրդի մէջ ծնուած մեծացած¹ վիննէս է որ, խոստովանում եմ, հնարաւորութիւն է տալիս ինձ ըմբռնել թէ ինչ է նշանակում «տուէր ինն յաջողութեան ունէր ի մարտս» Խորենացու կամ վիպասանների աւրած գովեստների այդ վերջինը և մեծը:—Մէկը անհնարին ուժեղ ըմբիշ—փահլեփան է, մէկը խիստ քաջ է, մէկը շնորհալի լարախաղ—քէնդրբազ է, մէկը ինքնուս նկարիչ է, մէկը յանապատրաստից խաղ ասել է կարողանում, մէկը պատերազմի մէջ անխոցելի է, մէկը ինչ բանի ձեռնարկում է՝ յաջողում է, վերջապէս մէկը

1. Վաղարշապատի ծխական դպրոցը աւարտեցի 1866 թ., շարունակելու համար մտայ ս. Էջմիածնի Ժառանգաւորաց դպրոցը, այդ ժամանակ 18—19 տարեկան էի և 2ամչեան քերականութիւնը աւարտած:

աչք ղիպածի վերայ աղօթել, և մի ուրիշը՝
թիզ քանալ գիտեն, ահա այդպիսի առան-
ձնաշնորհներին մասին ժողովրդի հաբա-
զատ զաւակը ասում է. «տուած է», կամ՝
«տուածուրիկ է».—այսինքն՝ Աստուծոյ կամ
այն ինչ սուրբի տուրք—առանձնաշնորհումն
ունի: Այս կողմից ամենից առատաշնորհը
«Խօթն անուան տէր», «Մորադատուր» և
Պարապետն է...

Ե՛ւ Խորենացին ժողովրդական վիպասան-
ների հետ համոզուած էր Սմբատ Բագրատու-
նու մասին՝ թէ նորա՝ այնքան պատերազմ-
ների մէջ յաջողութիւն ունենալը տուածուրիկ
էր. — «և տուածուրիկն յաջողուածոց ունեք ի մարսս»:

ԺԹ

«և ընդ վիսապաց ասէին յերդն
կռուել նմա և յաղթել, և կարի
խմն նմանագոյնս զՀերակլեայ նա-
հասակութեանցն նմա երգէին»:
«Վիսապաւադ»:

«Երկնէր երկին և երկիր» երգի, որ բա-
նաստեղծական այլաբանութեամբ նկարագը-
րում է Վահագնի յղութիւնը, ծնունդը, գլխի
և մօրուքի խարտեաշ մագերը, և արեգակնա-
նման աչքերը¹, միակ հաւանական բացա-
տրութիւն դնրձեալ համարում եմ այն՝ որ
զրած եմ գրքիս ա. հատոր, ԺԸ. եր. 50—51:
Այժմ պիտի խօսեմ նորա՝ վիշապաց հետ
կռուի և Վիշապաւադ կռուելու մասին:

Հինգերորդ դարից առաջ եղել է Հայաս-
տանում վիշապաց մասին զրոյց. վիշապաց

1. Վահագնի հայր Տիգրանը նոյնպէս էր «խարտեաշ...
և աղէքեկ ծայրիւ հերաց... երեսօք դունեան և մեղուակն,
անձնեայն և թիկնաւէտն, առոյգաբարձն և գեղեցկոտն» (Խոր.
ա. ԻՓ. եր. 75—76):

տաճարի զրոյցի յիշատակը պահած են Եզնիկ և Մ. Խորենացին: Այն հանգամանքը որ վիշապաց զրոյցները հիւսուում են Մասիսի առասպելների հետ, և այն որ Մար Աժդահակի զարմք բռնած ունէին Աւագ և Փոքր Մասիսների լանջերը և ստորոտները¹, առիթ են տուել Խորենացուն *վիշապք* կամ *վիշապազունք* բացատրել, թերթես անսխալ կերպով, *Աժդահակի զարմք մտքով, որովհետև վիշապ ասելով հասկանում ենք վիթխարի ահաղին օձ, և Աժդահակ Մար՝ նշանակում է ահագին օձ=վիշապ:*

Կարող էր վիշապաց զրոյցը Աժդահակի ժամանակից էլ շատ առաջ եղած լինել, հետեւեալ և Խորենացու բացատրութիւնը (ա. Լ., Բ. ԽԹ. ԿԱ.) թէպէտ սաղական՝ բայց սխալ: Ստիպեալ հէնց իսկական վիշապաց հետ արկածալից կռիւներ մեր հերթաթիւներում շատ է պատմում, այդպիսի հերթաթիւների ծագումը անշուշտ շատ հին պիտի լինի քան պատմական ժամանակները: Եւ Վահագնի «լնդ վի-

1. «Իսկ զԱնոյշ դառաջին կինն Աժդահակայ, և զբազումս ի սերմանէ Աժդահակայ աղջկունս՝ հանդերձ պատանեկօք... բնակեցուցանէ (Տիգրան) յարեկեայ ուտոց մեծի լեռին... — Ի սպառուածի փլածի մեծի լեռին» (ա. Լ. եր. 86—87):

շապաց կռուել և յաղթել» բնական վիշապաց հետ կռուի մասին է և ոչ Աժդահակի զարմից հետ. այսպէս է հասկացուում Խորենացու պատմածից:—*Վիշապի (հրէշ վազան) հետ կռուում են սովորական մահկանացու թագաւորի տղայք, հետո «ամպրոպի կամ կայծակի աստուած» լինելուց. թագաւորի մեծ և միջնէկ տղայքը յաղթում կուլ են գնում վիշապին, փոքրը և միշտ փոքրն է յաղթում— սպանում վիշապին. մեր վիշապաքաղ Վահագն էլ եղբայրների փոքրն էր...¹:*

Այն հետու և մօտ նմանութիւնները որ մեր «*վիշապ հանել*», «*վիշապ ամբառնալ*» առասպելն ունի հնդկական և պարսկական *Ննդրայի*, *Ազնիի*, *Վերեթրագնայի* և գերմանական *Թոռի* առասպելների հետ², չեն կարող վճռել թէ մեր՝ Վահագնի առասպելը նոյնն է կամ թէ Վահագնը Հայոց «ամպրոպի կամ կայծակի աստուածն է», և սխալ է Մ. Արեղեանի այն փաստը՝ որ իբր թէ «Հայոց աստուածների մասին եղած սակաւ յիշատակութիւնների մէջ ամպրոպի աստուած չէ յիշ-

1. «Սորա որդի Բաբ, Տիրան և Վահագն» (ա. ԼԱ. եր. 89):

2. Մ. Արեղեան, «Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմութեան մէջ», եր. 96—175. Վաղարշապատ, 1901 թ.:

ումն (նոյն, եր. 131—132):

Հայերս հայրենի աստուածներ չունէինք, գոնէ չեն յիշուում, բացի Վահագն՝ որ պատերազմի և «քաջութեան» աստուածն էր Հայոց և ոչ ամպրոպի¹, սակայն ներմուծուած աստուածների մէջ ունէինք, հակառակ Արեւելեանի ցանկութեան, և՛ «գոլութեան պատերազմի» (Արամազդ) յամուրն յԱնի» (Խորենացի, Բ. Ի. Եր. 129), իսկ ամպրոպ, կայծակ, շանթ՝ Ուրարտական դարբնոցներումն էին պատրաստուում...

Վահագնը Հայոց համար այն էր՝ ինչ որ Յունաց համար նոցա Հերակլէսը, այն առաւելութեամբ՝ որ Վահագնը կենդանի սերունդ էլ ունէր—Վահունիք (Խոր. ա. ԼԱ. Բ. Ը. ԺԲ. ԺԳ.): Հերակլը և Վահագնը վիպական քաջութեանց նման զծերով մօտենում այլև նոյնանում են², քաջութիւն՝ որ հռչակուել է զազաններ, վիշապներ, հրէշներ ջարդելում: —Կար ժամանակ որ երկրի երեսը բռնած վիտալիս պիտի լինէին հրէշ զազաններ, ո-

1. «Լիութիւն պարարտութեան յարոյն Արամազդայ, խնամակալութիւն յանահիտ տիկնոջէ, և քաջութիւն հասցէ ձեզ ի քաջս Վահագնէ ամենայն Հայոց աշխարհիս» (Ազատականագիր, Կր. 83. Տրդատի հրովարտակից):

2. Խոր. Բ. ԺԲ. և Բ. Մակար. Գ. 19:

րոնց երեսից նախնական մարդիկ տեղի պիտի տային փախչելին, ինչպէս որ յետոյ զազաններն են տեղի տուել մարդ զազանին: Մովսէս վեց օր է թուում արարչագործութեան համար, բայց գիտէր որ «հազար ամ յաշս Տեառն իբրեւ օր երեկի՝ զի էանց, որպէս պահ մի գիշերոյ» (Սաղ. 2Թ.): Երկրագունդը նէքիւլէօ (Միգապատ) վիճակից դուրս գալուց, այլ և նորա վերայ կեանքը երեւելուց յետոյ ևս հազարաւոր դարեր էին պէտք՝ որ մարդը—Աստուծոյ ստեղծագործութեան գլուխ գործոցը երեան գար: Սակայն մարդը, թոյլ, անզէն, սկզբում չէր կարող գլուխ պահել համարձակ, պէտք է տեղի տար, ընտրէր լեւնոտ ամուր անմատչելի տեղեր կամ բարձր ծառերի կատարները, մինչև կը մտածէր,—նորա միակ ոյժը և զէնքը,—միջոց կը հնարէր պաշտպանուելու, ապա հետզհետէ և՛ յարձակուելու և հալածելու զազան հրէշներին դիւրան տափարակներից: Այսպէս ասած՝ մինչև այդ զազան հրէշների թագաւորութեան վերջնական անկումն, ինչ կարծիք որ շատ Վահագններ և Հերակլներ հերոսացած պիտի լինէին և ժողովրդական վիպասանների երեւակայութեամբ ապրած մինչև Խորենացու և մեր օրերը, զի «և բնդ վիճապաց ասեին յերգն

կուռել նմա եւ յաղթել, եւ կաբի իմն նմանագոյնս զՀեռակլեայ նահաօակութեանցն նմա երգեին» (Խոր. ա. ԼԱ. եր. 90):

Վիշապ-գաղանների հետ այսօր ևս մարդիկ կուռում են, ինչ է փղերի, աւիւծների, վագրերի, արջերի որսալը, ինչ է Ամերիկայում և Աւստրալիայում վիշապ-օձերի՝ բնիկների նախնական ձևով որսալ—սպանելը, օձեր՝ որ կլանում են եղջերուին ողջ-ողջ, ուր կը մնայ մարդը.—մեր հեքիաթների վիշապներն էլ մարդ էին կլանում...

Եւ վիշապաքաղ, չի նշանակում «վիշապ հանող, վիշապ վեր քաշող», ինչպէս պ. Մանուկ Աբեղեանն է բացատրում՝ որպէս զի մեր վիշապաքաղ Վահագնը ամպրոպի աստուած դառնայ. նորա բերած օրինակները—քաղելը իբր թէ վերհանելու մոքով—սխալ են հասկացուած, տանձ ու խնձորն էլ քաղում ենք, սակայն ոչ թէ վեր հանում՝ այլ վայր ենք իջեցնում, այգեքաղ ասում ենք, սակայն շատ-շատ տեղերում բաղդիները ձողերի և ծառերի բարձրութիւնից են քաղում՝ իջեցնում խալողը.—Քաղել, նշանակում է կտրել ինչպէս ծաղիկ կամ պտուղ.—հնձել՝ ինչպէս խոտ կամ ցորենն.—հատ-հատ ժողովել՝ ինչպէս հասկաքաղ, կամ կուտ և փշրանք.—համառ-

տել, սղել՝ ինչպէս «ծաղկաքաղ առնել», «քաղելով գործել».—խտրանօք առնուլ՝ ինչպէս «քաղ հանել»¹.—մնշել՝ ինչպէս աչքի հատը, կամ ինչպէս «քաղել զոգիւս».—սպառել՝ ինչպէս «կարի յոյժ ձիասէքք էին (թաթարները). վասն այսորիկ և Բաղեցին զձի յամենայն երկրեն» («Պատմութիւն Հայոց՝ արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ», եր. 155):

Ահա այս վերջին նշանակութեամբ պէտք է հասկանալ Վահագն վիշապաքաղ=վիշապ սպառող,—ջնջող:

Վիշապաց և վիշապաքաղ Վահագնի զբոյցները կարող էին, ինչպէս ասացի, և շատ հին լինել քան մեզ ծանօթ Վահագնի ժառանգը, բայց այդ ոչինչ, զիտենք որ զբոյցները ժամանակ չունին, ասում են թէ՛ և՛ հայրենիք, հեշտութեամբ յետ ու առաջ են սահում, բաւական է մի նման գիծ այս հերոսի և այն հերոսի մէջ՝ որ զբոյցները օտարանան մէկից միւսին:—Քէօռօղլիի համար

1. «Եւ այնչափ յանգնեալ ստատանայութեան ոգւովն (Մարկիոն), մինչև ի պատգամաց Հոգւոյն սրբոյ քաղ հանել. զկէս աւեաւորանի ընտրել առնուլ՝ և զկէսն իբրև զխոտան ի բաց թողուլ, նոյնպէս և զառաքելական թղթոցն» (Նդն. Գող. եր. 235):—«Ո՛վ քանաքաղ Մարկիոն, որ զմին լսէ և զմիւսն ստունգանէ» (նոյն. եր. 292):

այնքան քաջութիւններ են երգում և պատմում որ նորանից առաջ և յետոյ ուրիշների համար պատմուած պիտի լինին. Հայաստանում որ անկիւնը գնաք՝ մի աւերակ բերդ, մի վիմափոր այր կամ տուն կանուանեն Քէօ-ռօղլիի անունով. այսպէս և Չամիրամի: Բայցի այս, գիտենք որ ինչպէս այժմ նոյնպէս և հնումը սիրում էին յայտնի հռչակ ունեցողների անունով անուանել նորածիններին¹. Եթէ ոչ Արամազդ Տիգրանի² որդի Վահագնը, գուցէ մի այլ հին նախապատմական Վահագն վիշապաց հետ կռուած և յաղթած զրոյց երգ կարող էր եղած լինել, և այդ հին զրոյցը Տիգրանի որդի Վահագնի քաջագործութեանց զրոյցների հետ հիւսուել նոյնանալ, և որով վերջինս ժառանգէր (զրոյցների մէջ) վիշապաքաղ անունը:

Յամենայն դէպս, վիշապաքաղ նշանակում է վիշապ սպառող, վիշապ ջնջող, բայց երբէք «վիշապ վերքաշող»...

Եւ իմ գիտեցած վիշապ հանելու հայ-

1. «Քանզի և վերջինս երուանդ և Տիգրան ի սոցանէ ըստ յուսոյ կոչեցեալ ասեմ արդեօք» (Խոր. ա. ԻԲ. եր. 71):

2. Խոր. ա. ԼԱ. եր. 89:—88 և «Խորենացուն Խորենացի պէտք է հասկանալ», ԺԷ. եր. 47—48:

կական առասպելը շատ տարբեր է Մ. Արեղեանի պատմածից:

Ըստ Մ. Արեղեանի՝ պտուտահոգմա=ստանի քամին, որ երբեմն առանց ամպի կամ անձրևի, պարզ եղանակում, պայծառ արեգակի տակ, մեր աչքի առաջ և մօտ՝ սկսում, երբեմն 5—10 սաժէն չը բարձրացած՝ խսկոյն ցնդում անհետանում է, կոչւում է վիշապ հանել, և թէ՛ վերհանելու վիշապը «հազար տարեկան օձեր են լինում» (!!!):

Փոքր էի, թերևս 8—10 տարեկան, գարնանային թէ ամառնային մի օր էր, Հայրս և Մայրս (հանգուցեալք) նստած էին տան դրան առաջ՝ հացի թոնրի տախտի թմրին՝ շարդախի տակ (գիւղական տների առաջ բալկօնանման բաց ծածկ): Տերեկ էր, ամպախառն մի քամի բռնեց. քամին խիստ չէր, սակայն աւելի խիստ ձայն էր հանում, օդի մէջ շվում էր կարծես, և բարակ անձրև ցօղում: Յանկարծ Մայրս ասաց. «Քան, վիշապ են քաշում»¹: Հայրս ոչինչ չը պատասխանեց, սակայն երկուքն ևս որոնող հայեացքով գիտում էին անցնող ամպերը: Ես վիշապի նազըններ լսել էի, բայց չը գիտէի թէ ինչպիսի

1. Մայրս հօրս «Քան» էր կոչում, իսկ նա մօրս՝ «Տօ»:

գազան է վիշապը կամ ինչ է վիշապ քաշել-
լը. մօտ գնացի, զարմացած հարցրի.

— Նանի, ո՞վ են վիշապին քաշում, ո՞ւր
են քաշում:

— Վախենում ես... մի վախիլ, բան
չը կայ:

— 2 է, չեմ վախենում, ասա՛ ո՞վ են քա-
շում վիշապին, ո՞ւր:

Չեռքս բռնեց և պատմեց. (նորա բար-
բառով) «Վիրունի էծի, մէկ էլ մարալի ծնե-
լուս, երբ որ ցաւը (երկունք) բռնում է՝ ըն-
կերները թողում հեռանում են նրանից. խեղ-
ճը վախելով մէնակ կանգնած հէնց որ ճու-
տը ծնում վեր է գցում, քանի ուժումը կայ՝
փախչում է կանգնում հեռու մի բանձր տեղ
և թամաշ անում: Թէ որ ճուտը մօր նման
մկրկում է՝ մէրը յետ է դառնում լիզում և
ծիծ տալիս, իսկ թէ չի մկրկում՝ թողում ու
փախչում է, նրա հմար՝ որ ծնած ճուտը վի-
շապ է, որ քանի ժաժ է գալիս՝ այնքան շուտ-
շուտ մեծանում, մի-էրկու սհաթում դառնում
էնպէս մէկ ջանաւար օձ՝ որ ինչ որ ընկնի
ձեռքը սաղ-սաղ կուլ կը տայ, դրա հմար էլ
մէրը թեզով թողում փախչում է՝ որ իրան էլ
կուլ չը տայ: Աստծու հրամանով էն վախթը
գալիս են հրեշտակները, էրկաթէ շանգեալ-

նեքը գցում են բերնիցը և էրկու դհից (կող-
մից) զնշիլներով քաշում բանձրացնում տա-
նում երկնքից գցում բանձր սարերի ցից-ցից,
սուր-սուր քարերի վրայ՝ փշուր-փշուր, հա-
զար-հազար կտուր անում, որ ջամդադուշի-
ներն ու ալուէմները վրայ են թափւում ու-
տում»...

Որ հայկական առասպելի վիշապը այս-
պէս է ծնւում՝ վկայում է և՛ Ներսէս Զնոր-
հալին իւր մի հանելուկով.—

«Է աննման ալուոր տիկին,

ինքն ծնանի զմայրն օձին.

Թէ փոկու մասն քեզ պիտին,

դու լաւ սիրէ ըզ որսորդին (եղն)»:

(Շնորհալոյ՝ «Բանք չափաւ», տաղկք. եր. 569):

ա) Հայերս ունէինք Ոլիմպիական—նոյն՝ «ամ-
պրոպի» չաստուած. «զՈլիմպիական պատկերն Դիո-
սի յամուրն յԱնի»:

բ) Վահագնը Հայոց «Բաջուրեան» աստուածն
էր:

գ) Վահագնի կուրը բնական վիշապաց հետ էր:

դ) Վահագն վիշապաբաղ, նշանակում է վի-
շապ սպառող, ջնջող, ո՛չ «վերհանող»:

ե) Հայոց առասպելի վիշապը ոչ «հազար տու-
րեկան օձեր» են և ոչ պտուտահողմը, այլ ծնւում է
եղնիկից, և ապրում ժամերով...

Ի

Արտաշատը՝ ըստ յոյն և հուն-
հայեցի հին հարեմագիրքերի:

Արտաշատ անունով մի քաղաք միայն
յայտնի է մեր ազգային հին մատենագիրնե-
րին և մեզ, որի շինութիւնը Խորենացին, առ-
նելով վիպասանների երգերից և պատմուածք-
ներից՝ վերագրում է Արտաշէս Բ.-ին, և տե-
ղը ցոյց է տալիս այն բլուրը՝ ուր Երասխ և
Մեծամօրը խառնւում են, ճիշդ այնտեղ՝ ուր
է Խոր - Վիրապը (Ղ. ԽԹ. եր. 186 — 188):
Այսպէս գիտեն և մեր բոլոր պատմիչներն և մեր
ժամանակները վիտունները՝ առանց բացա-
ռութեան:

Բայց յոյն և հռովմայեցի մատենագիրները,
— Ստրաբոն, Պլինիոս, Տակիտոս, Դիոն, Պու-
տարքոս, — Հայոց մայրաքաղաք Արտաշատ,
դարձեալ Երասխի վերայ, յիշում են շատ առաջ
քան մեր Արտաշէս Բ.-ը: Օրինակ. — Ստրա-
բոնը (նոյնը և՛ Պուտարքոսը), որ Արտա-
շէս Բ.-ի ժամանակից առաջ մեռած էր (20

թ.), յիշում է Հայոց Արտաշատը՝ Անտիբալի
խորհրդով շինուած Անտիոքոսի հայ կոնստ-
կալ որ և ապա Մեծ Հայքի անկախ թագա-
ւոր Արտաքսիասի համար, մօտ 180 թ. նախ
քան Քրիստոս, և այնպիսի տեղում՝ ուր Ե-
րասխը երեք կողմից քերում էր նորա պա-
րիսպները: — Դիոն, հատ. ա. եր. 107, պատ-
մում է Պոմպէոսի դիմելը Արտաշատի վերայ
(59 Ն. ք. Ք.) և մեր Մեծն Տիգրանի անձ-
նատուր լինելը և հաշտութիւնը: Պոմպէոսից
առաջ Ղուկուղոսը փորձեց խաղալ Արտաշա-
տի վերայ, բայց նորան չը յաջողուեց (Պլուտ.
զ. հատ. եր. 379—383): Իսկ Տիգրանիոս կայ-
սեր կողմից ուղարկուեց (18 թ.) Գերմանի-
կոսը, որ Պոնտոսի Պուլեմոն թագաւորի որդի
Ջենոնին պսակեց Հայոց վերայ թագաւոր՝
Արտաշատում, և Ջենոնը Հայոց մայրաքաղա-
քի անունով կոչուեց Արտաշէս կամ Արտա-
շիաս: — Տակիտոս, գիրք ԺԳ. գլ. ԼԹ. Խ. ԽԱ.
եր. 365—367, պատմում է Կորբուլոնի առ-
նուրը Արտաշատը և այրել աւերելը՝ 58 թ.,
դարձեալ մեր Արտաշէս Բ.-ից առաջ...

Բացի այս տեղեկութիւնները Արտաշա-
տի հնութեան մասին, Լըքիէն, հատ. ա. եր.
1361, առնելով Գալանոսից՝ նշանցնում է Ար-
տաշատը Վաղարշապատի հետ: Գալանոսի

կամ Լըքիէնի պատճառաբանութիւնը, եթէ կայ, մէջ չի բերում Ինճիճեանը, ուստի մնում է ինճ անյայտ ¹:

Ինճիճեանը ասում է. «Եթէ կամենաք յոյն և հռովմայեցի մատենագիրների տարաձայնութիւնը (Արտաշատի մասին) համաձայնեցնել մեր ազգային մատենագիրների հետ, հարկ է Արտաշատի հիմնադիր-չինոդ համարել մեր Ա. Արտաշէս թագաւորը, կամ Անտիոքոսի զօրավար Արտաքսիասը, իսկ Բ. Արտաշէս թագաւորը՝ նորոգող» («Ստոր. հին Հայ.», եր. 485—498): Այս է եղել, առ հարկի, առ հասարակ ամենքի կարծիքը Արտաշատի մասին, ուրիշ բան չունին ասելու, կամ՝ Խորենացու պատմածը հաւանական են համարում.— «գլխութիւնն յԱրտաշիս Բ.» («Այբարատ», եր. 398):

Իսկ Լըքիէնի նոյնացումը մերժելու համար Ինճիճեանը բաւականանում է ցոյց տալով՝ որ Արտաշատ և Վաղարշապատ միմեանցից հեռու և տարբեր քաղաքներ են, և յաւելացնում. «Այլ խնդիր է եթէ մէկը Խորենացու և օտարազգի մատենագիրների տարաձայնութիւնը բառնալու համար ասէր, թէ օտարների Արտաքսատան չէ մեր մատենագիրների Արտաշատը, այլ՝ մի այլ քաղաք, մանաւանդ թէ Վաղարշապատը, — Արտիմէտաշատը

1. Օտարազգի մատենագիրներից քաղուած այս և հետեւալ տեղեկութիւններս քաղում եմ Պլուտարքոսից, Տակիտոսից, Ինճիճեանից, Ալիշանից (Այբարատ) և Գարագաշեանից:

կամ Վարդգէսաշատը սխալ տառադարձութեամբ փոխուած (յոյն և հռովմայեցի մատենագիրների մօտ) Արտաֆաւսա կամ Արտաֆաւսաւսա» (նոյն):

Յոյն և հռովմայեցի մատենագիրների յիշած Արտաշատը (Արտաքսատա) արդարև շատ հին է բան մեր Խորենացու պատմած Արտաշէս Բ.-ի ժամանակը ¹: Եւ նոյնացնել Արտաշատը (ըստ Գալանոսի կամ Լըքիէնի) Վաղարշապատի հետ, և կամ ըստ Ինճիճեանի՝ օտար մատենագիրների Արտաքսատան ճարահատեալ թոյլ տալ կարծել Վաղարշապատը՝ չենք կարող, ոչ մին և ոչ միւսը, այն յայտնի պատճառով՝ որ օտարների—ինչպէս Ստրաբոնի և Տակիտոսի—Արտաքսատան Երասխի ափին է, Երասխի նորա պարիսպները քերելով է անցնում, մինչ Վաղարշապատը Մօր Մեծ և Քա-

1. Գարագաշեանը, Քնն. պտմ. 4. մասն ա. եր. 80, Փաւստոս Բուզանդին էլ վկայ է բերում թէ Արտաշատ աւելի հին է.— «Խաղացուցին (զօրք Չապհոյ) յԱրտաշատ քաղաքէ ինն հազար երդ հրեայս, զոր ածեալն էր գծրի Տիգրանայ արքայի Արշակունւոյ յերկրէն Պաղեստինացոց» (Բուզ. դ. ԾԵ.): — Սակայն մոռանում կամ անգիտանում է՝ որ այդ հրեայների Տիգրանը չէր բնակեցրել Արտաշատում. նա բնակեցրել էր Արմաւուր և Վարդգէսի աւանում, ապա Երուանդը Արմաւուրից փոխադրել է Երուանդակիրտ, իսկ այս վերջին տեղիցն է որ Արտաշէս Բ.-ը փոխադրել է Արտաշատ՝ որտեղից Չապուհը այլ տեղերի հրեայների հետ գաղթեցնում է (Տեա Խոր. ք. ԺԶ. Խ. ԽԹ. և գ. ԼԵ.):

սախ գետերով ի յաւիտենից իսպառ անջատ-
ուած և շատ վերատերով հեռի է Երասխից:

Եթէ այսպէս, ուրեմն տիրող և վերջին
կարծիքը դարձեալ մնում է այն՝ թէ Ագաթան-
գեղոսի, Խորենացու և մեր բոլոր մատենա-
գիրների Արտաշատը շինել է Անտիոքոսի կու-
սակալ Արտաքսիասը կամ Արտաշէս Ա. թա-
գաւորը, իսկ Արտաշէս Բ.-ը՝ նորոգած:—Բայց
այս կարծիքը նոյնպէս սխալ է հիմնովին:

Յոյն և հռովմայեցի մատենագիրները
չեն յիշում—չը գիտեն մեր Արտիմէտ քաղա-
քը, Վարդգէսի հօր աւանը, Նոր-քաղաքը,
Վաղարշապատը. հանգամանք՝ որ հէնց ա-
ռաջին հայնացքից ենթադրել տուեց ինձ թէ
նորա Արտաքսատա անունով պէտք է որ եր-
բման Վաղարշապատը հասկացած լինէին,
կամ աւելի ճիշտ ասած՝ նորա Արարսի մի-
ջին հոսանքի վերայ նրկու Արտաքսատայ էին
ճանաչում, մանաւանդ որ Դիոն Արտաշատին
(Արտաքսատա) և՛ «Նոր-քաղաք» է անուա-
նում¹. իսկ Նոր-քաղաք՝ Վաղարշապատն էր:

1. Դիոն, պատմելով հռովմայեցոց՝ Թուրկիտէս դորա-
վորի ձեռքով Սոհեմին հայոց վերայ Արտաշատում թագաւո-
րեցնելը (160—164 թ.), Նոր-քաղաք է կոչում նոյն Արտաշա-
տը («Այրարատ», եր. 401):

Այսպիսի կարծիք պնդելու համար ես ունիմ
հետեւեալ հիմունքներս.—

ա) Պլինիոսը (Ջ. 9), թուելով Մեծ Հայ-
քի քաղաքները՝ ասում է. «Ի դաւեսալայրս առ
Երասխաւ (է) Արտաքսատա», որը համարում են
յայտնի Արտաշատը.—բայց ինչեւ, չէ որ Վա-
ղարշապատը նոյնպէս և աւելի Երասխայ դաշ-
տավայրի հարազատն է . . . :

բ) Ստրաբոնը (ԺԱ. եր. 528) ասում է.
«Քաղաքք Արմենիոյ են Արսա'fսասա, գոր Արսափսիա-
սասա կոչեն, շինեալ յԱննիբալայ վասն Արտաքսիա
թագաւորին, նա և Արեւասա երկաւանչիւր, երկա-
ւանչիւրքն առ Երասխաւ»:—Այս երկու քաղաք-
ներից մինը համարենք Արտաշատը, միւրը,—
ի հարկէ Երասխայ հովտի մի այլ հին քաղաք,
հաւանական է թէ Վաղարշապատը՝ որ իբր
թէ անծանօթ է յոյն և հռովմայեցի մատե-
նագիրներին և անյիշատակ թողուած:

գ) Դարձեալ Ստրաբոնը (ԺԱ. եր. 529)
գրում է. «Իսկ Արտաքսատա՝ գեղեցիկ կառուցեալ
կայ առ Արտաքսեան (ուղղում են՝ Արաքսեան)
դաշտիւ. արքայանիստ գտով աշխարհին՝ եղեալ ի ցա-
ւափակղզի պարոյր բազկի. գորով պաս առնու գե-
տն (Երասխ)»:—Եւ Տակիտոսը (գիրք ԺԳ. գլ.
136. եր. 366) ուղտմում է. «Յայնժամ Կորբու-
լոն վաստահարաք դիմեաց ի մայրաքաղաք անդր նո-
ցա Արտաշատ. ոչ դէպուղիղ զնգէոնսն անդր խա-

դացուցեալ՝ զի մի նշաւակ հարուածոց թշնամեացն կացցեն յանցանել ընդ կամուրջն զԵրասխ գետով՝ որ զպարիսպս քաղաքին քանայ:—Ահա այստեղ օտարներն—Ստրաբոնի և Տակիտոսի—Արտաքսատան և մեր յայտնի Արտաշատը կարող էին նոյնը լինել, Երասխը նորա պարիսպը քերելով պիտի անցնէր. սակայն Դիոնի (հատ. ա. երես 107)—«Պոմպէոսի զգետովն Երասխայ անցեալ, հուսկ լինէր յԱրտաքսատէ, անդ ապա Տիգրանայ ինքնակամ ի բանակն Պոմպէի աճադարեալ (1), յանձնառնէր նմին զքաղաքն»—այս նշանակալից խօսքերը ընթերցողի առաջ չեն բանում մի պերսպէկտիւ՝ ուր Երասխը ոչ միայն չէր ընթանում Արտաքսատայի պարիսպները քերելով, այլ և այնքան հեռուից էր ընթանում՝ որքան նա հեռու էր և է Վաղարշապատից . . .

Սխալ է Ստրաբոնի («երկաքանչիւր»-ից գոնէ մինը), Տակիտոսի, Դիոնի, թերեւս և՛ Պլինիոսի այդ Արտաքսատան համարել մեր Արտաշատը, դա, ամենայն հաւանականութեամբ, Վաղարշապատն էր՝ որ Վաղարշից ա-

1. «Մինչ վեշտասան մղոնաւ հեռի էր (Պոմպէոս) անտի՝ փութացաւ (Տիգրան) ելանել ընդ առաջ և կնքել դաշն հաշտութեան, տալով զծախս պատերազմին—In castra Pompeii sexto decimo milliario ab Artaxata venit».—Eutrop. VI. 13 («Այրարատ» եր. 396):

ռաջ Արտաքսատայ=Արտաշատ էր կոչուում, ինչպէս և Նոր-քաղաք:—Պոմպէոսի և Կորբուլոնի գրուած Արտաքսատա անուն քաղաքները տարբեր քաղաքներ էին, ինչպէս տարբեր էին և՛ ժամանակները և՛ պատմական անձինքը: Պոմպէոսի գրուած Արտաքսատան ներկայ Վաղարշապատն էր:

Եւ ցոյց տուի, գոնէ համոզուած եմ, որ օտար մատենագիրների պատմած՝ Պոմպէոսի գրուած Արտաքսատան մեր Արտաշատը չէր, այլ՝ Վաղարշապատն էր. բայց և՛ պիտի ցոյց տամ որ Կորբուլոնի գրուած—Ստրաբոնի և Տակիտոսի պատմած—Արտաքսատան ևս, որին նրք կողմից պատում էր գետը, Ագաթանգեղոսի և Խորենացու կամ առհասարակ ընդունուած Արտաշատը չէր: Եւ այս՝ ոչ այն յայտնի հիմամբ միայն որ Ստրաբոնը, Տակիտոսը և սոցա նմանները, ինչպէս Պոմպէոսի՝ նոյնպէս և Կորբուլոնի գրուած Արտաքսատան դնում են աւելի հին քան Արտաշես Բ.-ի ժամանակը և որ պատճառով անճարացած քննադատները վերջինիս համարում են «նորոգող» Արտաշատի, — ո՛չ, այլ նախ՝ և՛ այն հիմամբ, որ Երասխը այդ Արտաշատին չէր կարող պատել «իբրեւ ի պարոյր քաղկի»՝ նոյն իսկ հետն առնելով և Մօր Մեծը: Մօր

Մեծը ոչ մի ժամանակ չէր էլ կարող մօտենալ Արտաշատի սահմաններին, որովհետև աւելի առաջ կը խառնուէր Երասխին. բացի այն որ Մօր Մեծից և Քասախից յետոյ կան՝ իբրև խորոց՝ և ուրիշ գետեր—Ջրագգէն և Աղատ—Արտաշատի սահմանին մօտենալու համար։—Երկրորդ, որ ամենազլխաւորն է, այն հիմամբ՝ որ յայտնի աշխարհագիր Ստրաբոնի Արտաքսատան կամ Արտաքսիատան «Հիմնեցաւ... ի մուսս դաւսին Երասխայ»¹, ճիշդ հէնց այն տեղում՝ ուր Խորենացու Երուանդակերտն է. մինչ ծանօթ Արտաշատը գտնուում է, ընդ հակառակն, ոչ թէ «ի միւստ», այլ՝ յեւր դաշտին Երասխայ։ — Երրորդ, միայն Երուանդակերտն է՝ որին, այն ժամանակ և այժմ, երբ կողմից արդարև պատում է Երասխը Ախուրեանի խառնուելու տեղում՝ «իւր-

1. «Արտաշատ, կոչի երբեմն և Արտաշխատ (Արտաքսիատատ), քանզի հիմնեցաւ ի ձևոն Անիքաղայ փան Արտաշեսի օրքայի առ Երասխայ. քաղաք մեծ և գեղեցիկ, որ և է սովորական նիւտ թաղաւորացն Հայոց, ի մուսս դաշտին Երասխայ։ Հիմնեցաւ ի թերակղզւոյ ուրեմն, զոր կազմէ արմուկն մի Երասխայ, որ եւ թանայ յերից կողմանց զգաւթիսպս քաղաքին, մինչ չորրորդ կողմն քաղաքին՝ որ է առ պարանոցաւ թերակղզւոյն՝ փակեալ է խրամով և պատուարաւ, թող զերկուսն ամրոցն (Քաբիրա և Վալանդոն), որ չեն կարի հետի ի քաղաքէն, տեղիք դանձուց Տիգրանայ և Արտաշատի» (Ստրաբոն, դպր. ԺԱ. 6)։ («Քնն. պոմ. Հայոց», ա. մարտի, եր. 80)։

ընէ ի պարոյր բազկի», կամ ինչպէս Խորենացին է գրում՝ «զորով պաս առեալ Երասխայ ընդդէմ Ախուրեանն հոսի գետ» (բ. 1⁰. եր. 173)։

Նայեցէք, ի սէր Աստուծոյ, հէնց հ. Ղ. Ալիշանի «Այրարատի» աշխարհացոյց բարդեւոր, Ստրաբոնի տեղադրած Արտաքսատան կը գտնէք ճշգրտեմամբ այն տեղում՝ ուր Երուանդակերտն է յեւր Երասխաձորի՝ «ի մուսս դաւսին Երասխայ... ի թերակղզւոյ ուրեմն, զոր կազմէ արմուկն մի Երասխայ, որ եւ քանայ յերից կողմանց զպարսպս քաղաքին»...

Իմ բերած այս ապացոյցներէս և բացատրութիւններէս վերայ յաւելայնում եմ և այն՝ որ Ստրաբոնը, ինչպէս տեսանք, իւր Արտաքսատայի մասին ասաց. «գեղեցիկ կառուցեալ կայ առ Արաքսեան գաղաք».— և Պլուտարքոսը՝ «քաղաք մեծ և գեղեցիկ յոյծ» (զ. հատ. եր. 580). իսկ մեր Խորենացին՝ Երուանդակերտի և նորա շրջակայքի գեղեցկութեամբ զմայլած է միանգամայն, ամեն զովհոտ տալուց չը յագենալով՝ նմանեցնում է նորան «գեղաւոր կուսից յօնից դարեւանդաց»...¹։ — Ստրաբոնը իւր

1. Արմէ Խորենացու՝ Երուանդակերտի նկարագիրը մէջ բերել.— «Քաղաք է ինձ ասել և յաղագս գեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի, զոր յօրինեաց նոյն ինքն Երուանդ գեղեցիկ եւ շքնաղ յօրհնուածովք։ Քանզի զմիջոց հովտին մեծի լնու մարդկութեամբ և պայծառ շինուածովք, լուսաւոր

Արտաքսատայի համար ասաց. «եղեալ ի ցամափակդի պարոյր բազկի, զորով պաս առնու գեսրն», իսկ **Խորենացին՝** Երուանդակերտի մասին գրում է. «զորով պաս առեալ Երասխայ ընդ դէմ Ախուրեանն հոսի գետ»¹:—Ստրաբոնը գրում է. «Թող գերկոսին ամբոցսն Բաբիրսա և Վոլանդոն, որ չին կարի հեռի ի քաղաքէն, տեղիք գանձուց Տիգրանայ և Արտաշատայ»,—իսկ այդ բերդերից մին—**Վոլանդոնը**² Վանանդի=Վարսի բերդն հմ կարծում, և միւսը—**Բաբիրսան՝** Արտա-

որպէս ական բերք, իսկ շուրջ զմարդկութեամբն՝ ծաղկոցաց եւ հոտարանաց կազմութիւն, որպէս շուրջ զսրբու գալարտն յորակութիւն ական: Իսկ զբազմութիւն այգեստանոյ, իրքն զարտեանաց խիտ եւ գեղեցիկ ծիր. որոյ հիւսիսային կողմանն դիւր կարակնաձև՝ արդարեւ գեղատը կռտից յօնից դարեանդաց համեմատ: Իսկ ի հարաւոյ հարթութիւն դաշտաց, ծնօտից պարզութեան գեղեցկութիւն. իսկ գետն բերանացեալ դարաւանդօք ափանցն՝ գերկութիւն Նշանակէ շքութիւնս: Եւ այսպիսի գեղեցկութեան դիր՝ անթիթիլի իմն դողցես ի բարձրաւանդակ թափաւորանիստն զհայեցումսն ունի. և արդարեւ բերրի և թագաւորական դաստակերտն» (ք. խթ. եր. 175—176):

1. Խորենացին երկու քաղաք — Երուանդաշատ և Երուանդակերտ (բացի Բաղարանը) է տալիս Երուանդին (ք. խթ. և խթ.): Բերածս նորա այդ նախադասութիւնը իւր որոշակի տեղագրութեամբը ցոյց է տալիս՝ որ Երուանդի որոնած «ամրագոյն տեղին» ոչ թէ Երուանդաշատի, այլ Երուանդակերտի տեղն էր, որովհետեւ «զորով պատ առեալ Երասխայ ընդդէմ Ախուրեանն հոսի գետ» խօսքը յատուկ է միայն Երուանդակերտին, իսկ Երուանդաշատը՝ Ախուրեանի և Երասխայ խառնուրդից շատ վեր է՝ Երասխաձորի միջնասահմաններում:

2. Տակիտոսը պարզ «Վոլանդ» է գրում (եր. 365):

գերից անմատչելի բերդը՝ Երուանդակերտի մերձակայքում¹:

Յոյն և հռովմայեցի հին մատենագիրները չը գիտէին Արտաշէս Բ.-ի շինած մեր նոր *երրորդ* Արտաշատը, բայց նոքա գիտէին, զարձեալ Երասխի հովտում, երկու Արտաքսատայ, մին՝ գեղեցիկ Երուանդակերտը, միւսը՝ մեր մոռացուած Վաղարշապատը, որ հայկազն Երուանդ Ստեփանեացի դաստակերտ մայրաքաղաքն էր: Երկուքն էլ Երուանդի (ոչ նոյն) **քաղաքներ, երկուքն էլ Արտաքսատայ=Արտաշատ** են կոչուած եղել, ինչպէս. —!!!:

Հազար ափսոս Ալիշանը, արդեօք ինչպէս կը բացատրէր (Ա. յաւելուած):

Հաւանական է որ մեր հին վիպասանները, որոց երգերից և պատմուածքներից է առնում Խորենացին, ինչպէս գիտենք, Արտաշէս Բ.-ի պատմութիւնը (ք. խթ.), ինչ որ հաճելի բան երգուած կամ պատմուած է եղել հին Արտաշատների և նոյա շինողների մասին, կամայ թէ ականայ առել խառնել են իրենց սիրելի Արտաշէս Բ.-ի մասին պատմուածքներին...

1. «Թագաւորն Արշակ (Բ.) հրաման ասյր՝ յԱրշարունեաց գաւառին շինել իւր բերդ մի ամուր, Արտազերս անուն» (Բուզ. Դ. դպր. ԺԹ. եր. 110):

Օտար մատենագիրների Արտաքսատան՝
մեր Վաղարշապատը և Նրուանդակերտն էին¹։

ԻԱ

Քասախ, Քաղաքապատը, Ար-
տիմէր, Ասահիր և Տեր-դէն
Յէհէանները, Մահրաւար:

Նախընթաց գլխով (Ի.) լուծուած պիտի
համարել Արտաշատի հետ և՛ Վաղարշապատի
խնդիրը, որը առաջ կոչուել է և՛ Արտաք-
սատայ=Արտաշատ:

Վաղարշապատը, ուր է ամենայն հայոց
Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, Քասախ գետի
դաշտավայրումն է՝ ձախ կողմից: Ըստ Խո-
րենացու և յետագայ մեր պատմիչների՝ Վա-
ղարշապատը կոչուել է Արտիմէտ, Աւան
Վարդգէսի, Նոր - քաղաք, ապա Վաղարշա-
պատ և Քաղաքուղաշտ²:

1. Ընդհանուր եղրակացութիւնը յաջորդ գլխի եզրա-
կացութեանց հետ:

2. Հատուած զնայեալ Վարդգէս մանուկն ի Տուհաց

Բայց նախ սրբագրեմ Քասախ և Քաղա-
քուղաշտ անունները.—

ա) Քասաղ կամ Քասախ, գրուած կայ
և Քարտաղ¹: Այդ անունը պէտք է կարդալ
Քարտահ: Յաճախ հ տառը տեղի է տալիս
խ տառին, սովորական է մանաւանդ Խոյեցոց
և Վանեցոց բարբառներում. օրինակ, խաց,
խայ, խոյակապ, ի Ճախ (Թովմ. Արծ.): Ի
հարկէ հ տառի այսպիսի տեղափոխութիւնը
միայն բաւական չէր ինձ պնդելու համար թէ
ուղիղը պիտի Քարտահ եղած լինէր, եթէ
այդ գետի հունը, սկսած Բամբի լեռներից—
աղբերակուներից—մինչև գետաբերանը՝ ուր
խառնուում է Մօր Մեծի հետ, թէ լեռնագա-
ւտոներում և թէ դաշտային տափարակներում
արդարև ծածկուած չը լինէր մեծ և փոքր
որձաքարերով, ամբողջ ընթացքում մի քայլ
տեղ չի կարելի գտնել՝ որ տիպի վերայով
անցնէր այդ գետը. մինչ նոյն Այրարատ դա-

դաւառն գիտաւ գետով. եկեալ նստեալ զՋրէշ բլրով, զԱր-
տիմէտ քաղաքաւ, զՔասաղ գետով, կռել կոփել զգուռն Նը-
ուանդայ Արքայի: Այս երուանդ՝ առաջինն է սակաւակեացն,
որ ի հայկազանց...: Այժմ այս Վաղարշ պատեաց պարսպաւ և
հզօր պատուարաւ, և անուանեաց Վաղարշապատ, որ և Նոր-
քաղաք» (Խոր. ր. Գե. եր. 215):

1. Տես Վահագնի մանանցի «Ստորագրութիւն կաթու-
ղիկէ Էջմիածնի և հինգ դաւառացն Այրարատայ», ր. հատ.
եր. 166.

ւառի միւս գետերի վաշտային հուները, առանց բացառութեան, տիրւ է:

Այս է պատճառը որ զետը կոչուել է *Քարտահ*, ինչպէս և Յրասիի հունը որոշ տեղում կոչուել է *Քարավազ*:

բ) *Քաղաքուղաշտ*. — Վաղարշապատը կոչուել է և՛ *Քաղաքուղաշտ*, ասում գրում են, օրինակներ են բերում. — «Մեծ վարդապետն Հայոց Մեսրոպ վանճանեցաւ ի Քաղաքուղաշտի» Ասող. Բ. 1): — «Է զաշխարհաթաղն (ս. Սահակայ է արարեալ) ի Քաղաքուղաշտի, ի վկայարանս սրբոց Հովսիսիմանց»: — «Հինգերորդ ժողով արար Բաբգէն ի Քաղաքուղաշտի» (ժողովոց պատմ.):

Ինճիճեան և Ալիշանը («Մտոր. հին Հայ. Մեծ Հայք», հր. 471 — 472. և «Այրարատ», հր. 204) պէս-պէս բացատրութիւն են տալիս Քաղաքուղաշտ անունին, սակայն ոչ այս և ոչ այն, այլ ինձ թւում է թէ այդ բառը սկզբում եղած է ի *Քաղաքում ղաշտի* = ի քաղաքում որ ի վաշտի, այսինքն զաշտային քաղաք, մ' տառը պակասել է ձեռագիրներում: Պէտք է ի նկատի առնուլ որ բոլոր օրինակներում ներգոյական հոլովով է գործածուած այդ անունը, իսկ Ռուսաստանի Հայոց բարբառներում ում վերջացնելով ներգոյական շինելը գործածական է, զրարառում ևս ճար-

ւում է, օրին. — «Ի սրբում տեղւոջ» (Եւ. ԻԹ. 31): — «Ի սրբում յաւետարանի» (Ագաթ. եր. 296):

Արտիմէտ = Անահիտ զիցուհին Հայոց: Վաղարշապատի նախնական անունն էր *Արտիմէտ*. ինչպէս կամ երբ է կոչուել *Արտիմէտ*՝ ոչինչ որոշ յայտնի չէ, սակայն ենթադրել կարելի է թէ վայելում լինէր Հայոց աշխարհի սիրելի զիցուհուն ներկայութիւնը՝ որպիսի պատճառաւ էլ կոչուած *Արտիմէտ* 1:

Ջահլաթունեանցի բերած այդ աւանդութիւնը հին է: — Սկզբում Ս. Գ. Լուսաւորիչը չէր վստահանայ կործանել հեթանոս ազգի առաջին և մեծ սրբութիւնը — Անահտի արձանը և մեհեանը Վաղարշապատ մայրաքաղաքամիջում՝ «մօտ յապարանո արբունի», օգնութեան է հասնում Աստուծոյ *Տեսչութիւնը*, Հօր Միածինը լուսեղէն տեսիլքներով և ահաւոր մարդոյ նմանութեամբ իջնում և ոսկի ուռամբ ուժգին բաղխում է «զթանձրութիւն լայնատարած դեռնոյն», ձայնք հնչում են սարսա-

1. «Ձինեալ ասի (Վաղարշապատ) յառաջագոյն յերուանդայ Ա. արքայէն Հայոց՝ և կոչէր յայնժամ «Արտիմէտ»՝ սակս ի նմա լինելոյն մեհննին ղիցն Արտեմնայ (Անահտի)» (Յովհաննէս եպիսկոպոս Ջահլաթունեանց — Մտորադրութիւն կաթ. էջմիածնի և հինգ զաւառացն Այրարատայ, ա. հատ. հր. 77):

փած սանդարամէտը, և «սոս աստուածութեանն հարբեաց, կործանեաց ընկեաց զմոլորութիւնս յերկրէ»։ — Լուսաւորիչը տեսիլքը բացատրում է, ըստ երկնառար հրաշից պատգամին՝ հաւատացեալ արքային, յորդորում է կառուցանել նոյն տեղում Լուսոյ սուրբ Խորանը, որ, ըստ նոյն երկնառար պատգամին՝ «տեղին չայն լիցի տաճար Աստուծոյ, և տուն աղօթից խնդրուածոց ամենայն հաւստացելոց, և Աթոռ քահանայութեանն»։ Սակայն առ ժամն շտապում է կործանուած Անահտական բեկորներէ տեղին սրբել՝ կանգնեցնելով «գնչան փրկական խաչին, զի առ հասարակ հասեալ սք յայն տեղին, Արարչին Աստուծոյ (ոչ Անահտին՝ ուր սովոր էին) երկրպագեալ ծուր կրկնեցեն» (Ագաթ. եր. 429 — 430, 433 — 434, 448)։ Ինչպէս և «խկոյն» խորհուրդ է տուել Նունէին՝ նոյնը անել Վրաց մայրաքաղաքում։ — «Երանելոյն Նունէի խնդրեալ արս հաւատարիմս, յղեաց առ սուրբն Գրիգոր, և թէ զինչ հրամայեցէ նմա գործել աշնուհետեւ. քանզի յօժարութեամբ ընկալան Վրք գրարողութիւն Աւետարանին։ Եւ հրաման ընդունի՝ կործանել զկուռսն, սրպէս ինքն արար, եւ կանգնել զպատուական նշան խաչին մինչեւ ցօր տալոյ տեառն հովիւ յառաջնորդութիւն նոցա։ Եւ իսկոյն կործանեաց զամպրուպային պատկերն Արամազդայ» (Խոր. բ. 22. եր. 253—256)։

Խորինացին սորանով — «կործանել զկուռսն, սրպէս ինքն արար» — վկայում է թէ Ս.

Լուսաւորիչը հէնց սկզբում կործանել է կուռք եւ խաչ կանգնեցրել, մինչ կուռքեր կործանելը շատ յետոյ է սկսում՝ ըստ Ագաթանգեղոսի պատմութեան...

Ագաթանգեղոսի թարգմանող խմբագրող Պորին կամ նորա աղբիւրը, ոչ միայն Արտաքսատայի և նոր Արտաշատի շփոթելով, այլ թերեւ և ինչ ինչ գիտումներով ցանկացել են թագցնել թէ ո. Էջմիածնի տեղում առաջ կռատուն — Անահտի տաճարն էր, սակայն զանազան հանգամանքներ, քաղաքի Արտիմէտ անունը, աւանդութիւնը, և նոյն իսկ պատմիչների գործածած բառերը — «հարբեաց, կործանեաց, ընկեաց զմոլորութիւնս յերկրէ»¹, — «որպէս ինքն արար» — «Ձայնք հնչեցին սանդարամեսք»² — բանում են վարագոյրը և կատարուած իրողութիւնը գնում մեր առաջ։

1. Համեմատեցէք. «Եւ երթայր հողմն լցեալ լերինն հաւասար, և չողաւ հարթեաց, տապալեաց, ընկեց զամենայն շինուածս բազնայն» (Ագաթ. եր. 471)։ — Կամ՝ «վասն խաղաղութեան հասարակաց, քակել կործանել, ըստնալ զգայթակղութիւնսն ի միջոյ ի բաց կորուսանել» (նոյն, եր. 451)։

2. «մեծ և անչափ զրնդիւնքն հնչեցին ի սանդարամեսքն անդնդոց» (Ագաթ.)։

— Առհասարակ կռատուններ քանդելու էին սանդարամետք — զներ խուճաղում, կուռում, վերջապէս յաղթում ու փախչում. օրին. — Իննական տեղերի, Երազամոյն և Անահտի մահանները կործանելու ժամանակ։

Անահտի տաճարը Արտաքոստայում = Վարչապատումն էր և ոչ թէ յայտնի Արտաշատում, իսկ Ապոլոնի = Տիր զից մահեանը՝ արտաքոյ նորա «հուպ ի ճանապարհն» որ տանում էր յԱրտաշատ ¹: Այս մահեանը յարգուած և աւելի յաճախուած պիտի լինէր:— «Ինչպէս Տոս՝ առ եգիպտացիս, Տաուս՝ առ Փիւնիկեցիս, առ Հռովմայեցիս՝ Մէրկուրիոս և առ Յոյնս Հերմէս, այսպէս և առ Հայս՝ Տիր համարուած էր զպիր և սուրհանդակ ճեպընթաց՝ Արամազդայ. թեաւոր սաղաւարտով և ոտիւք և վիշապազուխ գաւազանաւ կ'ընթանար ամենուրեք, և կ'իմանար զամենայն ծածուկան աստուածոց և մարդկան և կը յայտնէր յունկն քրմաց» (Հ. Բ. Ս. «Ագաթ. և իւր բազմադարեան գաղտնիք», եր. 151): 2^է որ այդտեղ քուրմերը ստոյգ և անստոյգ, թագուն և յայտնի գիտութիւններ էին սովորում և սովորեցնում, երագներ էին մեկնում, աստուածոց և մարդկան գաղտնիքներն իմանում, աղագայն գուշակում: Այսօր քսաներորդ դարում իսկ եթէ մի այդպիսի տեղ յայտնուի, համոզուած եղէք որ առաւել քան Հաջ և Մէշէտ, Լուռզ և Հռովմ, Երուսաղէմ, և ս. Էջմիածին՝ ուխ-

1. «Անյաւէր (նախնիք) հարուստ մի ի քաղաքէն (Վարչապատ) ի Կոշմ մի հիւսիսոյ՝ ի տեղի յարեւելս Կոյս, ի ստրուանդակ ի բազմաւանդակ յաւազին տեղի մի, մօտ ի քուն պրդուաշն ոչ երթայր յԱրտաշատ քաղաք» (Ագաթ. եր. 118):

տաւորներ կունենար: Եւ ահա ամբողջ և խուժանը մայրաքաղաքը չը հանդիպեցնելու համար՝ արտաքոյ քաղաքին են կանգնեցրել Ապոլոնի զիք և մահեանը ճիշդ այն տեղում՝ ուր այժմ «Առապարի ս. Գրիգորի եկեղեցու» աւերածն է, զի այդ պիտի լինէր տեղին՝ ուր Տրդատ և «նախարարն արտաքոյ քաղաքին սպասէին» (Ագաթ. եր. 131) Ս. Գր. Լուսաւորչին՝ Խոր-Վիրապի բերուելուս, և ուր այն օրը գիշերեցին՝ ըստ Սերէոսի, անշուշտ իբրև մի նշանաւոր մեծ հաստատութեան մէջ, և ուր տեղի ունեցաւ Ս. Լուսաւորչի՝ «Զուարթնոց երկնից» տեսիլը:

Ամբողջումն միանգամայն և եզրակացութիւն նախընթաց և այս գլուխների.—

ա) Յոյն և Հռովմայեցի մատենագիրների Արսափասան հին և եւ երբեք չի եղել մեր այն Արսափասը՝ ուր էր և է Խոր-Վիրապը:

բ) Պոմպէոսի գրաւած Արսափասան Վաղարշապատն է, իսկ Կորբուլոնի գրաւած Արսափասան՝ Երուսաղէմը:

գ) Ո՛չ «Քասախ», այլ՝ Քասաան է ուղիղը:

դ) Ո՛չ «ի Քաղաքաւղաշտի», այլ՝ «ի Քաղաքում դաւսի» պիտի լինի:

ե) Հէնց սկզբում—Ս. Լուսաւորչի տեսիլի ժա-

մատակ կործանուած է Անահի մեհեանը Վաղարշապատում և նոյն տեղում խաչ կանգնեցրած:

դ) Ագաթանգեղոսի պատմութիւնը թարգմանուած է յունարէնից. Յոները Վաղարշապատին անուանած են եղել Արսափասա՝ զոր մերոնք քարգմանել են Արսափաս:

է) Որ և է մի հայ թագաւոր Անահտի արձան և մեհեանը կանգնեցրել է Արսափասայի=Վաղարշապատի մէջ, որպիսի պատճառով էլ այդ քաղաքը կոչուած է եղել Արսիմէս, իսկ Ապոդոնինը՝ «արտաքոյ» այդ Արսափասայի, «հուպ ի ճանապարհն» որ տանում էր Սարաշատ. սակայն վիպասանների երգերում և պատմուածքներում այդ գործողութիւնը վերագրուել է ընդհանուրին սիրիկի Արտաշէս Բ. ին, ինչպէս և Արսափասան համարուել նորա շինած Արտաշատը:

ը) Ագաթանգեղոս և Խորենացին Անահտի և Ապոդոնի դիք և մեհեանները գնում են մին Արտաշատում և միւսն՝ արսափոյ նորա, յետոյ էլ կործանում, սակայն զո՞հ են մի կողմից Արտաքսատա քաղաքի չլիթեւուն չը ճանաչելուն, և միւս կողմից՝ վիպասանների կամայ թէ ակամայ սխալին, եթէ հենց դիտաւո՞ւեալ յերիւրումն էլ չը լինի ստեղծում:

թ) Կռապաշտ Հայերի Տիր կամ Տիր—գալու-թեան և գիտութեանց չ'առտուածը Յունաց Ապոդոնին էր համապատասխանում 1, հեռեարար՝ Երազայոյց, Երազրնդհան, Երազամոյց, «գիւան գրչի Որ-

1. Յունարէն Ագաթանգեղոսում Տիրի տեղում Ապոդոն է գրուած (Ինձ.). իսկ ըստ Ալիշանի՝ Տիր համապատասխանում է Ապոդոնին և Հերմէսին միանգամայն («Այրարատ»):

մըզդի ուսման ճարտարութեան» Տիր դից արձան և մեհեանը արտաքոյ Արսափասայի=Վաղարշապատի եր եւ ոչ թէ Արսափասի. առաջինն էր գործըդատ և Լուսաւորիչ այրեցին կործանեցին՝ երբ կ'ան չըջել կործանել կռատունները 1:

ժ) Այրարատեան գաւառի, յատկապէս Երեան քաղաքացի թուրքերը կամ Պալաիկները Էջմիածնին Մահրասա են կոչում՝ իբրեւ յատուկ անուն, թէպէտ Իւլ-ֆիլիսայ ևս կոչում են: Յարանունարար՝ վարդապետներին, եպիսկոպոսներին ևս կոչում են Մահրասա, Կաթողիկոսին՝ Բոյիւկ Մահրասա: Նոյն իսկ հայը թուրքի հետ խօսելու ժամանակ, երբ խօսքը Էջմիածնի վանականներու մասին է լինում՝ ասում է. «բըմ Մահրասալար»:—Խալիֆայ, բոյիւկ Խալիֆայ ևս կոչում են 2: Բայց ո՞չ Մահրասա, այլ՝ Մարասա է ուղիղը, որ նշանակում է՝ օձ-գաւազան=Օձագաւազան 3:—Օձագլուխ կամ վիշապագլուխ գաւա-

1. Անցած տարուայ պեղումների ժամանակ յայտնուել են, ի թիւս այլոց, որ տաճարի արեւմտակողմի շինութիւնների հիմքերը դրուած են աւելի հին այրուածքի մնացորդների վերայ, այլ ևս սենեակի մէջ և միմեանց մօտ դրուած զրտնուել են սիւնների երեք հատ ահագին ներքնախարիսխներ՝ կապտադոյն քարից, դորանց վերայ ևս հրդեհուածքի հետքեր նկատելի են, և որոնք ոչ մի առնչութիւն չունին ներսէս Շինողի շինուածքների հետ...

2. Քիլիսա, Իւլ-քիլիսա, Խալիֆա, Բոյիւկ Խալիֆա կոչումները համեմատաբար նոր են՝ քրիստոնէութեան կամ մահմէդականութեան ժամանակից սկսուած, որովհետ քիլիսա, իբրեւ հասարակ տուն, նշանակում է եկեղեցի, իսկ Խալիֆա՝ մարգարէի յաջորդ կամ սերունդ. «Խալիֆայն յատնամաց ասի» (Պիր. պոմ. եր. 227):

3. «Ղօշնրդդա վար, Մար-ասա=կայ ի կռանդ Օձա-

զան կրում էր ճիւղ (—Հերմէս և Ապոլոն)։ արդ, Հայոց եպիսկոպոսներս և Կաթողիկոսը հանդիսակատարութեանց ժամանակ կրում ենք վիշապապը իսկ գաւազան ¹, կոչում ենք Մար-ասա.—արդեօք հէնց այդ խոր հնութիւնից եկած Մար-ասա կոչումներն եւ վիշապապը իսկ գաւազանի կրելը չե՞ն յիշեցնում Տիւրքի պաշտամունքի մեծաւոր տեղը եւ նորա պաշտօնեայները։—Ըստ իս՝ անշուշտ՝ (Բ. յաւել)։

ԻԲ

«Քանզի ինձ այսօրեկ արք ի մերոյ քաղաւորեն սիրելիք, որպէս բնիկ և իմոյ արեան առում և հաւաստի հարազատս» (Խոր. ա. ԻԲ. եր. 70)։

Պարոն Մ. Արեղեանը Խորենացու այս խօսքը մէջ է բերում, ըստ մի-երկու ձեռագիրների՝ այսպէս.—«Քանզի ինձ այսօրեկ արք ի

գաւազանդ դու» (Մեսրոպը Թաղիկեանց, «Ճանապարհորդութիւն ի Հայո», ա. հատ. եր. 230)։

1. Գիտեմ—«Ի ձեռս իրենաց օձս բարձցն» (Դարկ. ԺԶ. 18).—բայց այդ, նոյնպէս Անտոնի դատարանի և Մախլուի պղնձէ օձի պատմութիւնները ոչ մի կապ չունին մեր կրած գաւազանի հետ...

մերոյ քաղաւորաց են սիրելիք, որպէս բնիկ»... և թարգմանում է. «Մեր քաղաւորների միջից այս մարդիկն ինձ սիրելի են որպէս բնիկներ» ¹։ Եւ խօսքը առաջ տանելով՝ սխալ է համարում ուրիշների հասկացածը, այն՝ թէ դորանով Խորենացին ակնարկում է Հայկայ սերընդից որդի իհօրէ յաջորդաբար իշխողների ընդհատուիլը—Անուշաւանից մինչև Պարոյր։ —«Այդպէս հասկանալ են ուզում, ասում է պ. Արեղեանը, զի Յովհաննէս Կաթողիկոսն էլ այդպէս է հասկացել» ² («Արարատ», 1900 թ. Դեկտեմբեր. եր. 624—625)։

Խորենացին հասնելով Պարոյրին, այդ

1. Այդ մտքով էլ արդէն թարգմանել է Խ. եպոս. Ստեփանէն՝ առնելով «Լամբրոնացու» անուանեալ օրինակի ընթերցումը. տես և նորա ծան. 129։ Սակայն այդ օրինակի անվտանգեղութեան մասին տես իմ գրածը՝ եր. 112, ծան. 1։

2. Ոչ միայն Յովհաննէս Կաթողիկոսը. այդպէս են հասկացել և՛ Սամուէլ Անեցին, զործածելով Խորենացու իսկական բառերը (Յեսուայ յաջորդների մասին գրած), «Ի սմանէ (Անուշաւան) յառաջ ոչ ըստ ազգի, այլ ըստ յառաջագիմութեան արանց ընդհանրաց տիրեցին, և անուանք նոցա այսօրեկ. Պարէտ, Արրոկ»... (եր. 44—45)։—Միւլիթար երէց Անեցին. «Յարեթայ մինչև յԱրայ (Արայեան) ըստ կարգի, աստի յառաջ ըստ յառաջագիմութեան» (Սեր. պատմութեան վերջում տպուած, եր. 8)։—Հ. Դ. Ալիշանը. «Ի սման (Անուշաւան) դառարէ ուղղակի յաջորդութիւն ազգատոհմն Հայկայ յորդոց յորդիս ցտասն ազգ» («Արարատ», եր. 12)։—Եւ ևս այդպէս եմ հասկացել, տես «Խորենացուն Խորենացով պէտք է հասկանալ», ա. հատ. ԻԲ. եր. 78—81. և այլք։

վկայութիւնից դեռ ևս առաջ ունի արած և մի այլ ակնարկ¹, բայց որ պ. Արեղեանը անուշադիր է թողած: Պէտք է նկատել որ Արեղեանը հէնց իւր բերած հատուածն էլ թերի է առնում. նա մինչև անդամ շատ հեռուից (ա. Ա.) բառեր և նախադասութիւններ է վերցնում *իբրեւ* իւր կարծիքի համար վկայութիւն, մինչ զլանում է իւր առաջ բերած հատուածի հետ «քանզի» շաղկապով սերտ կապուած մի ամբողջութիւն կազմող առաջին և կարեւոր մասը, այսպէս ասած՝ խօսքի հիմքը՝ առաջ բերել²:

1. «Եւ այժմ ահա գտարձացայց՝ ոչ փոքր ինչ կրելով խնդութիւն, հասանելով ի տեղիս մերում իսկ ընդի նախաշուշն, յորում սերունդք թագաւորութեան հասանեն յաստիճան» (ա. ԻԲ. եր. 68):

2. ձիւդ հէնց այս կերպ մի անգամ էլ դեր. Արիստակէս եպս. Սեղբակեանը, երբ չորս հազար ըուրլիանոյ մի չհաս պսակ յաջողեցնելու համար՝ հանդ. Վահ. Վ. Բաստամեանցի մասնագիտական մի գրուածքից (Փորձ ամսագրից) վկայութիւն էր բերել Սինօղի մատուցած իւր յայտարարութեան մէջ (ի 28 նոյեմբերի 1891 ամի), խօսքի կարեւոր մասը զտելի էր, որովհետեւ ամբողջ խօսքը ոչ թէ նպաստում՝ այլ ոչնչացնում էր իւր կարծիքը, հետեւաբար և՛ այնքան ջանքերը: Գորանից յետոյ էր որ նա ընկերակցութեամբ գործավարի և վարժուած ատենադարի փորձեց անձամբ պատշաճ շինելով յաջողեցնել մի այլ ամբարշտական չհաս պսակ. ինչ պէտք էր արած, ախար պ. Խ. Կ. «չորս հազար ըուրլի պարտք ունէ», նորան «չահեցնել պէտք էր»: Բայց այդ ևս, դարձեալ իմ ձեռքով, բռնուից և բացուից, զոր իւր—Սեղբակեանի ներկայութեամբ

Ահաւասիկ Խորենացու մի ամբողջութիւն կազմող խօսքը.—Աբգ այժմ անցից ի բիւ մերոց արանց, մանաւանդ քաղաւորաց, մինչեւ ցտերուքիւնն Պարբեւաց: Կանգի ինչ այսոքիկ ալք ի մերոյ քաղաւորեմ սիրելիք, որպէս բնիկք եւ իմոյ արեան առուք, եւ հաւաստի հարազատք» (ա. ԻԲ. եր. 70):

Այժմ տեսնում էք, ընթերցողք, որ Խորենացին հասնելով Պարսկերին՝ ասում է. «Աբգ

Սինօղի Ատեանը ի 29 Յունվարի 1892 ամի վերահասու լինելուց յետոյ՝ արձանագրեց և կնքեց, պահելով յարմար ժամանակի: Ատենագրի (Ս. Փ.) մասին ասացի վարժուած, որովհետեւ նոյն գործում այդ նորա կատարած երկրորդ պատշգն էր: Այդ գործերը տես «Արարատ», 1892 թ. Մարտ և Ապրիլ, եր. 265—272, 365—380, ուր առաջինը՝ թերի, հիսկ երկրորդը բուական ընդարձակ՝ բայց ոչ հարազատութեամբ պատմած է Սինօղի գործերից: «Մշակ» դեկտեմբ. պ. «Վրձինը» Արարատի այդ հրատարակութիւնիցն է օգտուած և գրում. «Ես յիշեցի մի ուրիշ դէպք: Ինն տարի սրանից առաջ հանդուցեալ Սարգիս եպիսկոպոս Տէր-Փասպարեանը վերցրել էր Սինօղի արձանագրութիւններից մէկը և իր ստորագրութիւնը ջնջել» («Մշակ» 1902 թ. № 36):

—Որովհետեւ,—մի ծածկէք պ. Վրձին թէ բանն ինչու՞ն էր եղել,—ձեր համահարը առիւծի դերում՝ հինգ հազար ըուրլուցը նորան բաժին չէր կամեցել հանել: Երբ ուրիշ անգամ Երեան-Էջմիածին ճանապարհորդէք, խոյս չտաք գործի աստառին ծանօթանալու և ընթերցողներիդ էլ ծանօթացնելու: Բայց առ այժմ կարդացէք Գ. յաւելուածս: Իսկ որ դեռ համարձակութիւն ունիք անցնելու մասին խօսելու, պարտաւան էք նորան միայն, Որը օգտուելով իմ ծայրայիկ կարգապահութիւնից և անձնուրութիւնից դէպի Իւր սրբազան կոչումը՝ իմ անհատական իրաւունքն իսկ անտես է առնում ցայսօր:

այժմ անցից ի քիւ մերոց սրանց, մանաւանդ քա-
գաւորաց...: Քանզի. .»: Էլ ուրիշ բան չի մը-
նում ինձ ասելու, կարծում եմ, որ Խորենա-
ցու խօսքը վերաբերում է ժառանգաբար յա-
ջորդութեան ընդհատուելուն:

Իսկ այն կարծիքը թէ Խորենացին օ-
տար է համարում *միայն* Արշակունիներին,
այդ էլ ուրիշների վաղուց յայտնած կարծիքն
է. տես «Քննական պատմ. Հայոց», ա. մասն,
հր. 184—185:

Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Ծ Ք

ՅԱԻԵԼՈՒԱԺՓ

Ա

(եր. 143) Ի դէպ. Հ. Ղ. Ալիշանի Հոգեհանգրստի առթիւ:

Անցած նոյեմբերի 9-ին վախճանեց Վենետիկի Մխիթարեան Հ. Ղ. Ալիշանը, գրական աշխարհի համար, մանաւանդ հայ աղքատիկ գրականութեան համար անփոխարինելի երախտաւոր բազմամեայ վաստակաւորը: Նորա յիշատակը յարգելու համար, առաջին անգամ Տփլիսում մի խումբ հայ Լուսաւորչական մարդիկ դիմեցին տեղոյն Կոնսիստորիայի նախանգամ արժ. Գարեգին վարդապետ Յովսէփեանին (Առաջնորդական աթոռը թափուր լինելով), բայց նա դժբախտաբար սխալուեց և արգելեց Ալիշանի համար Հոգեհանգիստ կատարել ¹:

Այս տխուր միջադէպը յարուցել է այժմ մի անսեղի հարց և վէճ Տփլիսի լրագիրներում, այն է,

1. Ապա նոյնը արգելեցին և մեր ընդոր թեմական Առաջնորդները:

քրիստոնեայ Եկեղեցիք, մասնաւորապէս մեր Լուսաւորչական Հայոց Եկեղեցին պարտաւոր է, մանաւանդ երբ խնդրում են, օտարադաւան քրիստոնէի համար աղօթք անել, Հոգեհանգիստ կատարել՝ քեռչ. էլ չեմ ասում որ հայը՝ Ալիշանի նման հայի համար, քանի որ սկզբունքի խնդիր է:

Տեսանք ինչպէս զաւառական քաղաքներում, Բաթումում, Բագուում, Ախալքալախում, Ախալցխայում, Լուսաւորչական եկեղեցիներում Հոգեհանգիստ կատարեցին, մինչ կեդրոնում—Տիֆլիսում Հոգեւոր իշխանութեան ներկայացուցիչը բացարձակ արգելեց: Այսպէս միմեանց չըհասկանալը միայն չէ, ցաւը, այդ արդէն նոր բան չէ, այժմ ցաւն այն է՝ որ իշխանութեան բացարձակ մերժումով վերագրուեց մեր Եկեղեցուն ոչ-քրիստոնէական անհարազատ մի վարդապետութիւն. — «Ալիշանը հայ կաթողիկէ էր» պատասխանեցին և խնդրողներին մերժեցին նորա համար Հոգեհանգիստ կատարել: Եւ այս նոքա՝ որ Հայոց Եկեղեցին չը ճանաչելու և ս. Աւետարանի իմաստը չըմբռնելու չափ միամտութեամբ՝ Պետրոսին «վեմ հաւատայ» խոստովանում և քարոզում են ¹: Ոչ միայն այս, այլ և խնդրողներին ցոյց տուին Կաթողիկոսի եկեղեցու նախապահը: Պատճառաբանութիւններն այնքան անմիտ են և հակաքրիստոնէական՝ որ ամօթ է մէջ բերելը:

Այս առթիւ, դեռ ևս խնդրի սկզբում ես խօսել եմ՝ սակայն «որպէս յանապատի»: Լրագրութեան

1. «Ո՛ւր է Պետրոս հաւատոյ վէմը, որ...» («Արարատ» 1896 թ. Դեկտ. եր. 538):

մէջ դուրս գալ կարծիք յայտնել՝ անկարգապահութիւն կըլինէր նախ, երկրորդ՝ ցանկալի չէ զգուշիկ Լուսակցութիւնների բանակութիւն մասնակցել, Լուսակցութիւններ՝ որոց համար ամեն խնդիր, ամեն սրբութիւն պայմանական է: Սակայն այստեղ — առանձին շարադրութեան մէջ — սուրբ պարտականութիւն եմ համարում, իբրև Հայոց Եկեղեցու պաշտօնեայ, արձանագրել և բողոքել մեր Եկեղեցու վրին փաթաթած այդ մոլորութեան դէմ:—Մեր Եկեղեցին, սովորած և հրահանգուած Յիսուս Քրիստոսի խօսքերից և կեանքի օրինակից և նորա աշակերտներից, աղօթել և աղօթում է բոլոր քրիստոնէից համար՝ իւր սահմանեալ Աղօթքների, Մաղթանքների և Քարոզների (պատարագի և ժամերգութեանց) մէջ: Յատկապէս մաղթանք է կատարւում Կայսերական տօներին, և այդ մաղթանքը շարադրուել է և գործադրուել դեռ ևս Ռուսները մեր երեսը չըտեսած, որի հեղինակն է երջանկայիշատակ Սիմէօն Կաթողիկոսը Նրեանցի (1763—1780): Դեռ աւելին ասեմ, ներկայ մեր Վեհափառ Հայրապետը, 1895 թ. Մայիսի 26-ին, Ս. Պետրբուրգում գնաց Ռուսաց Պետրո-Պաւլովսկի տաճարը, կանգնեց ի Տէր հանգուցեալ Կայսր Ալէքսանդր Գ.-ի գերեզմանի առաջ, անձամբ կատարեց Հոգեհանգիստ, միայն «վասն հանգուցեալ հոգւոյն» քարոզն ես ասացի:

Նոյն իսկ ոչ թէ քրիստոնեայ, այլ քրիստոնէից հալածիչ Սուլթանների համար «դուա» (մաղթանք) են արել և անում Կ. պոլսի Հայոց Պատրիարքները՝ պատրիարգական Մայր եկեղեցում, մեր ժամանակներումն իսկ,—Մատթէոս և Գէորգ Գ. Կաթողի-

կոսները, Ներսէս Վարժապետեանը, Աշըղիանը, Օրմանեանը, — ամենքն էլ թուեղ պահպանողականներ: Եկեղեցու կարգացմունքները շարագրող Հարք և յիշեալ Վերջինները, առանց գերմանական վկայականով աստուածաբան կոչուելու, — որովհետեւ աստուածաբանութիւնը չէ որ սովորեցնում է եկեղեցու վարդապետութիւնը և Աւետարանի ոգին և ճշմարտութիւններն ըմբռնել, — գիտէին ի հարկէ թէ ինչ է նշանակում «և տեսեալ Յիսուսի գաւառս» նոցա (բերողները), ասէ ցանդամալոյձն. քողեալ լիցին ինչ մեղքն» (Մատթ. Թ. 2): Տես և՛ Ղուկ. Է. 2—10:—Մարկ. Է. 25—30):—Կամ, «եւ արդ աղաչեմ նախ քան զամենայն առնել աղօթս, խնդրուածս, պաղտանս, գոհութիւնս վասն ամենայն մարդկան, մանաւանդ վասն թագաւորաց և ամենայն իշխանաց . . . : Զի այն է բարի եւ ընդունելի առաջի Փրկչին մերոյ Աստուծոյ: Որ զամենայն մարդիկ կամի զի կեցցեն» եւ ի գիտութիւն նշմարութեան եկեսցեն: Քանզի մի է Աստուծոյ, և մի միջնորդ Աստուծոյ և մարդկան՝ մարդն Յիսուս Քրիստոս: Որ ետ զանձն փրկանս ընդ ամենեցուն (ոչ իւր ազգի համար միայն) . . . : Յոր եղայ ես քարոզ և առաքեալ» (ա. Տիմ. Բ. 1—7):

Ահա Յիսուսի «անօթ ընտրութեան» առաքեալ Պօղոսը, ոչ միայն պատուիրում է իւր աշակերտ Տիմոթէոսին՝ «առնել աղօթս . . . վասն ամենայն մարդկան», այլ և բացատրում դորա պատճառը և խորհուրդը: Այսպիսի բուն քրիստոնէական պատգամ ունեցած ժամանակ, կարելի էր մերժել խնդրողներին, և փորձել արդարանալ թէ՛ «ինչո՞ւ հապա Վաթիլիկները մերոնց համար չեն կատարում»:—Մնում է որ

այլոց հակաքրիստոնէական վատ օրինակներին հետեւէինք: Այդպէս պատճառաբանողների համար Ամմիանոսը (թէպէտ ուրիշ առթիւ) կասէր. «Առքա եւս առտակասպար, աղէտը այնմ զոր Երմոսթենէսն ասէ . . . թէ՛ Ոչ օրինակն եւ ոչ անպատիւն մնալ ուրում մարբացան երբեք՝ զոր ինչ հակառակն է իրաւանց՝ իրաւացուցանել» («Քնն. պատմ. Հայոց», գ. մասն, եր. 157):

Եւ այսպէս, հանգ. Հ. Ղ. Ալիշանի համար Հոգեհանգիստ մերժելը երբակի յանցանք է ս. Աւետարանի վարդապետութեան, Հայոց եկեղեցու, և Մեծ Հայի դէմ:

Սակայն քանի ամիս առաջ Մխիթարի երկհարկւրամեկի յորեկանական տօնը, — Հայոց եկեղեցուց բաժանման յիշատակը, — այն չէր պէտք մեզ կատարել:

Ահա թէ որն էր անելու և որը չանելու բանը:

Բարդուղիմէոս եպիսկոպոս Դէորգեան

1-ն Դեկտ. 1901 թ.,

Ս. Էջմիածին:

Բ.

(եր. 154) Խաչիկ վարդապետի վարմունքը.

Շարադրութեանս այս Բ. հատորի նիւթերը, իւրաքանչիւր նիւթին վերաբերեալ տեղեկութիւններս, բացատրութիւնների համար հիմունքներս և կարեոր նախապատրաստութիւնը արուած՝ մնում էի որ վրահասած տօներից յետոյ սկսէի գրել: Անցած 1901 թ.

Յունական 6-ին եկեղեցու խորանում շուրջառ ծածկելու ժամանակ բարեկեցի Սաչիկ վարդապետին (Գաղեան, Շուշեցի), հարցնելով իւր պեղումների յաջողութեան մասին՝ ասացի. «Դուք չարունակէք պեղումներդ, Աստուած կարողութիւն տայ, իսկ ես՝ այդ տեղի մասին նոր եւ հետաքրքիր բան ունիմ գրելու»:

— Ի՞նչ, հոգնուդ մեռնեմ...

— Ոչինչ, ձեր պեղումների հետ կապ չունի:

Երբ Յուդանանից վերադարձանք, խորանում եսխես բռնեց. «Խնդրեմ ասէք, ինչ նոր բան է»:

— Անհանգիստ մի լինիք, իմ գրելիքը պիտի լինի թէ ո՛վ է բանդել եւ երբ:

— Հա, ես գիտեմ, Տաճիկներն են քանդել 1001 թուին:

— 1000 թուին արդէն քանդուած էր... այդ ոչինչ. բայց եթէ այդ և նման ուրիշների վաղուց գիտեցած գրածն է՝ էլ ինչպէս կարող եմ իմր համարել կամ նոր բան:

Այն ժամ չանցած՝ Ղուկաս վարդապետի հետ մտաւ սենեակս. այստեղ կային և երեք աշխարհական մարդիկ (Վար. և Յովհ. Ճուղուրեանցներ և Եր. Բաբաջանեանց), չորսն էլ անգրագէտ խեղճ մարդիկ: Ինքնին սկսեց խօսել Առաքարի ս. Գրիգորի եկեղեցու և իւր պեղումների մասին, ի հարկէ այն փորացաւով՝ որ իմ գաղտնիքն իմանայ. շատ վերլուրոյ խօսքերի հետ թոյլ տուեց իրեն և՛ ասել. «Իսկական էջմիածինը սկզբում ա՛յն էր եւ ոչ թէ այս, յետո՛յ են փոխադրել այստեղ շինել»¹:

1. Պէտք է ցաւելով արձանագրել՝ որ այդ վարդապետ-

— Բաւական է, նկատեցի, մի՛ գայթակղեցնիլ այս խեղճերին և ստիպէ ինձ խօսելու: Ապա միւսներին. — դուք սորա խօսքերին մի՛ հաւատար. Հանգա՞ծ եկեղեցու տեղում ոչ թէ Ս. Էջմիածինը՝ այլ պիղծ կռատուն էր...

Հետեւեալ օրն, ընթերլու ժամանակ, դարձեալ մտաւ սենեակս, — հօ չի կարելի դուրս անել, — թեկեցը հանեց Մ. Կաղանկատ. պատմութիւնը և ասաց «ահա գտիւ եմ թէ ինչ նոր բան ունիք ասելու, — Առաքարի ս. Գր. եկեղեցին շինել է Մեծն Ներսէսը և ոչ թէ Շինողը, Յովհաննէս Կաթողիկոսն էլ Մեծն Ներսէսին է տալիս այդ եկեղեցու շինութիւնը»:

Բացարի և՛ Յովհ. Կաթողիկոսի պատմութիւնը, հասկացրի որ «Մեծ հայրապետն Ներսէս» ասելով՝ մեծ բառը շուրջիլ է Շինողի համար, ապացոյց որ Ներսէս Մեծի (365—373) և Ներսէս Շինողի (640—661) Կաթողիկոսութեան ժամանակները միմեանցից շատ հեռու են, ժամանակակից պատմական անձինք կան, — եզր Կաթողիկոս, Յունաց Կոստանդ Կայսր, Թէոդորոս Ռշտունին...

— Ուրեմն ձեր գիտեցածն այն է՝ որ այս եկեղեցու տեղում առաջ երազնդհան կռատունն էր՝ որ կործանեց Լուսաւորիչը:

որ չի քաշուած ամեն այցելողի ասել նոյնը — «Էջմիածինը այս էր առաջ»։ Քայթակղեցրել է նոյն իսկ ուսեալ մարդոց, օրինակ՝ ինձ պատահած ինժինէր ուսանող Ղօրղանեանց՝ երևանցի, պ. Տիգրան Տէր Դաւթեան՝ Ջալալօղլեցի, և այլք: Այստեղ Տիգրան սում, ուր ահա երրորդ ամիսն է ակամայ եկած եմ գրքիս տպագրութեան համար, ոչ սակաւ մարդիկ հարցնում են. «Ընդմարտն է թէ առաջ Էջմիածինն այն է եղել»...

Չէ որ նա լսել էր ինձնից՝ որ իմ գրելիքն նոր բանը պիտի լինի այն տեղի մասին և թէ ո՛վ է քանդել եւ ե՛րբ. այն էլ էր լսել՝ թէ «առաջ կուսուցն էր». իսկ կուսուցները քանդողը միայն Ս. Լուսաւորիչն էր՝ յայտնի է...

— Ի՞նչ փաստ կարող էք բերել այդպիսի կարծիք կազմելու և յայտնելու համար:

— Այն որ, ինչպէս Ազաթանգեղոսը պատմում է, Ս. Լուսաւորիչը Տրդատի հետ երբ Վաղարշապատից գնում էր Արտաշատ Անահտի մեհեանը կործանելու՝ ճանապարհին առաջ այդ Երազրնդիան կուսուցնը քանդեց, իսկ մեր Առապարի ս. Գրիգորի եկեղեցին՝ ճանապարհի վերայ է: Մենք Կանայիանցի տանը խօսել ինք Մ. Արեղեանի, Սէթի հետ, որ Արտաշատ գնալու երկու ճանապարհ կար,—մին ցամաքային և միւսը ջրային:

—Ջրային եւ ցամաքային ճանապարհների մասին խօսք անելը բոլորովին անտեղի է, ինչ տեղով էլ որ Վաղարշապատից Արտաշատ ուղեք գնալ՝ պէտք է ջրեր, գետեր անցնէք... Բայց նախ ասացէք, ի՞նչպէս կարող էք ապացուցանել թէ այս ճանապարհն էր—որ այժմ տանում է Երևան—Տրդատի ժամանակ տանում Արտաշատ, քանի որ Արտաշատ գնալու համար ուղիղ գծով եւ կարճ ճանապարհ կարող էր լինել այն՝ որ մեր Պլանից (գոմանոց) ուղիղ գնում անցնում է Չոբանգեարա գիւղի վերայով...

—Փաստ չունիմ թէ ճանապարհն այս էր. և ճշմարիտ որ Չոբանգեարով կարճ և ուղիղ ճանապարհն է Արտաշատ գնալու համար:

—Բացի այս. ընդունենք թէ ճանապարհն այս

էր, սակայն հօ Վաղարշապատի մօտ չէր վերջանում, այլ տանում էր մինչև Արտաշատ. ուրեմն Արտաշատի մօտ էլ որ լինէր Երազրնդիան կուսուցնը՝ նոյնպէս կարող էր ի հաւելէ նախապահի վերայ լինել... Թողնենք և այս. մեր Երազացոյց Տիր չաստուածը Յունաց Ապոլոնն էր, ապացոյց՝ որ յունարէն Ազաթանգեղոսի մէջ Տիրի տեղ Ապոլոն է գրուած, իսկ Ապոլոնի արձանը Արտաշէս Բ.-ը կանգնեցրել է, ըստ Խորենացու, Արտաշատի մօտ և ոչ թէ Վաղարշապատի...

Եւ իսկոյն բաց արի Խոր. բ. Խթ. և Ինձ. «Ստոր. հին Հայաստ.» եր. 497—498. առաջարկեցի և նա կարդաց, ձայնով: Մրգեղէն տեսած չես երեխայի նման ալլալուեց, դարձաւ ինձ. «Հայր սաւրբ, ես չը գիտէի այս տեղեկութիւնները, այնքան խօսք ու զրոյց է լինում, սակայն ուրիշ ոչ որից չեմ լսել՝ ինչ որ անա ձեզնից եմ լսում»...

Այսպէս հերքուած, ինչպէս տապարով արմատից տապալուած, տալ սկսեց «օձի լեզու հանել»—պաղատել՝ որ ես իմ գիտեցած նորութիւնը հաղորդեմ իրեն՝ ի քաջաբերութիւն իւր պեղումների...

—Մաքուր խօսք տուէք որ ոչ որի չէք յայտնի՝ մինչև իմ գրել լոյս ընծայելը:

—Մաքուր և ազնիւ խօսք եմ տալիս՝ չը յայտնել:

—«Առապարի ս. Գրիգորի եկեղեցու տեղումն կուսապաշտութեան ժամանակ Երազացոյց Տիր գից մեհեանն էր»... Եւ միանգամայն փոտահացնելու համար՝ իսկոյն բացարի իմ տեղեկութեանց տետրակը, ժէ. թերթ, կարդացի և թող տուի իրեն կրկին կար-

դալ եզրակացութիւնս.—«Ես կաշխատեմ ցոյց տալ՝ որ այդ մեհեանը (Տիւր դից) էր Վաղարշապատի Առապարի ս. Գրիգորի տեղում... և ոչ թէ Արտաշատի մօտ... Ար. Ն. քաղաք=Վաղարշապատ... Վ. փոխ. Ա...», և խփեցի տետրակս: Խնդրեց փաստեր, չ'ասացի:

—Էս լաւ եղաւ, ես հիմա կը գրեմ կը հրատարակեմ որ Երազրնդիան մեհեանը այս տեղն էր, և երբ որ դուք գրէք փաստերով ապացուցանէք՝ իմ ասածը կը հաստատէք:

—Դուք ինչ ունիք ասած... Նթէ դուք այդպիսի կեղտոտութիւն անէք՝ իմ էլ պարտքը կը լինի ի լոյս հանել ձեր այս արարմունքը, և այնուհետեւ ոչ մի օրինակոր մարդ ձեզ թոյլ չի տայ իւր սեմը կոխել... (ծառան կանգնած լուծ էր):

Անցնում է 3—4 ամիս, Տիւրիսի «Новое Обозрѣніе» թերթի անցած 1901 թ. Ապրիլի 11 համարում լոյս է տեսնում մի յօդուած Դ. ստորագրութեամբ, որը մի շարք ցնդաբանութիւնների մէջ այս էլ է ասում. «Հայր Խաչիկը, հիմնուելով այն տեղեկութիւնների վերայ որ յայտնուած է IV դարում Հայոց Տրդատ թագաւորի քարտուղար Ագաթանգեղոսի գրուածքում, ենթադրութիւն է անում որ բացուած տաճարը մինչև քրիստոնէութեան չրջանը եղել է «Նրազահան» կուռքերի տեղ»:

Ինչպէս Հ. Խաչիկի գլխում, այսպէս էլ Ագաթանգեղոսի պատմութեան մէջ ոչինչ տեղեկութիւն չը կայ ի հարկէ, որով կարելի լինէր ենթադրել թէ Տիւրի=Ապոլոնի մեհեանը Վաղարշապատի մօտ էր:

Ինճիճեաններ, Արիշաններ Ագաթանգեղոս չունէին, թէ՛ հ. Խաչիկի նման անընդունակ էին կարգացածը ուղիղ հասկանալու. (ես այդ փորձով տեսայ): Նորա՝ Ագաթանգեղոսից ունեցած ողորմելի «տեղեկութիւնը» այն էր՝ թէ Նրազընդհան կռատունը «ճանապարհի վրայ էր»... Բայց հ. Խաչիկը լսեց ինձնից, կարգաց տետրակումս և համոզուեց՝ որ ես ուրեմն մի ուրիշ բան մտածել եմ գիտեմ, և ահա համարձակութիւն է առել, միայն համարձակութիւն, և կանխել ուրիշի սեպհական կարծիքը հանել հրապարակ, այն էլ իւր անուանով, և ռուս. թերթում՝ որպէս զի ինձնից ծածուկ մնար, սակայն բարաբեաթ «Մշակին» (1901 թ. № 77), որից հետաքրքրուելով՝ իմացայ:

Ես փորձեցի միջոց տալ հ. Խաչիկին՝ ուղղել իւր այդ կեղտոտ վարմունքը (թէպէտ նա մինչև այսօր էլ մնաց անուղղելի), հրատարակեցի «Նոր-Պարում» (1901 թ. № 72) հետեւեալը.—

«Մի առաջարկութիւն հ. Խաչիկ վարդապետին.
(նամակ խմբագրութեան)

«Новое Обозрѣніе» թերթի ներկայ Ապրիլի 11-ի համարում մի յօդուած կայ Վաղարշապատից՝ Առապարի ս. Գրիգորի եկեղեցու և նորա տաւերակների պեղումների առթիւ, որ կատարում է հայր Խաչիկը: Ինձ առանձնապէս հետաքրքրեց միայն այն՝ որ հ. Խաչիկը, ըստ ռուս յօդուածագրի, ենթադրում է թէ այդ եկեղեցին շինուած է եղել հին կռատան տեղում և որոշակի անուանում է կռատունը, ըստ նոյն յօդուածագրի, «СХОТЛОКОВАТЕЛЪ» (Երեւի թէ թարգմանութիւնն է Ագաթանգեղոսի «Նրազացոյց, Նրա-

զընդհան» բառի): Հենց այս վերջին կետն է ահա, որի մասին է խօսքս:

«Որ այդ տեղում (Զուարթնոց կամ Առապարի ս. Գրիգորի եկեղեցու տեղում) առաջ քան Ներսէս Շինողն և նոյն իսկ Տրդատ և Լուսաւորիչ եղել է որ և է հին հաստատութիւն՝ չատերս ենթադրել և միմեանց հետ զըուցել ենք, ինչպէս ես և պ. Կ. Յ. Բաւմաջեանը՝ պ. Աճաբեանի սենեակում. իսկ պ. Հերմէսը «Նոր-Նար»-ում (1900 թ. №№ 203 և 208) և՛ յայտարարեց այդպիսի ենթադրութիւն: Ասկայն այն նոր միտքը, թէ այդ տեղն էր յանուանէ և յատկապէս «Նրազացոյց, Նրազընդհան» կոչուածը, պատկանում է ինձ և միայն ինձ, որի մասին հ. Խաչիկը Յունպարի 6-ին և 7-ին եկեղեցում և իմ սենեակում լսել և կարդացել է ինձնից և իմ ձեռագրերից *), դեռ այն ժամանակ՝ երբ նա իմ մի խօսքից շահագրգռուած խաբխափում էր.—«Մեծն Ներսէսն է շինել և ոչ Շինողն»,—«Լուսաւորիչն է շինել»,—«Էջմիածինն էր այդ տեղում», և այլ անհեթեթ և անգիտակ մտքեր, որ ասում էր նոյն հ. Խաչիկ վարդապետն իմ սենեակում ուրիշ չորս մարդոց ներկայութեամբ, և որին նկատելով ասացի. «Բաւական է, մի՞ զայնքանիցնի այս խեղճերին և սախպէ ինձ խօսելու. այդ տեղը ոչ թէ Էջմիածինն, այլ կուսումն էր» . . .

«Այդ, առաջ քան հրապարակ հանելը հ. Խաչիկ վարդապետի գործադրած ազնիւ միջոցները՝ որ-

*) Բարեբաղդարար շ'յաջողուեց նորան լսել—լսմանալ և փաստերս, որ պատրաստած ունիմ մի նոր շարադրութեան նիւթերի հետ: Բ. վ. Գ.

ապու իմ բերնից այս նոր կարծիքիս մասին— թէ առաջ «Նրազացոյց, Նրազընդհան» մեհեանն էր այն տեղում, և հանգիստ խղճով նորա իւրացնելը, որովհետեւ կարող է պատահել, որ ռուս յօդուածագիրը թիւրիմացութեամբ վերագրած լինի հ. Խաչիկ վարդապետին, հրաւիրում եմ նորան (Խ. վ.) կամ հրաժարուել և յայտարարել լրագրութեամբ՝ որ այդ նոր կարծիքն իրեն չէ պատկանում և լսել է Բարդուղիմէոս վարդապետից, կամ այդ կարծիքը ողորկու համար որ և է փաստեր ցոյց տալ, գոնէ եթէ այժմ գիտէ:»

Բարդ. վարդ. Գէորգեան

Ս. Էջմիածին, 25 Ապրիլի:

Սորանից յետոյ, Մայիսի 14-ին, հանգիսեց ինձ մօտ պ. Մ. Աբեղեանը. նորա՝ «պիտոյից հիւսման պատմութեան» մասին յայտնեցի իմ կարծիքը և՛ թէ նոյն բառերով կայ և Խորենացու «Պատմութիւն սրբոյն Հռիփսիմեայ» գրուածքի մէջ ևս . . . Ապա յայտնեցի իմ կարծիքը «Որ-յանեից» (բուր) անուան ծագման մասին: Խօսքը փոխուեց հ. Խաչիկ վարդապետի անարդ վարմունքի մասին. պ. Աբեղեանը ասաց. «Ես ևս ենթադրել եմ թէ Զուարթնոց եկեղեցու տեղում առաջ կգած լինէր Նրազընդհան մեհեանը, պ. Սէթին (իւր ընկեր ուսուցիչ) էլ ասել եմ. նոյնը յիշաւ ևս ենթադրում էր և Խաչիկը (ի հարկէ ինձ մօտ լսելուց յետոյ, ընդմիջեցի). իբրեւ ճիւղ ունեինք այն՝ որ Ագաթանգեղոսը գրում է թէ՛ ճանապարհի վերայ եր. բայց որովհետեւ այդ քոյլ է իբրեւ փաստ՝ բողեցի չըզրեցի: Իսկ Խաչիկը, իբրեւ ենթադրութիւն՝

կարող էր հրատարակել, մեղադրելու ի՞նչ կայ»:

— Նորա և ձեր ենթագրութեան հիմունքը ոչ թէ միայն թող է, այլ իբրև փաստ դորանով հրապարակ դուրս գալը ամօթ կը լինի,— կը նշանակի չիմանալ դորա պատմութիւնը, չիմանալ թէ Տիւրք Ապոդոնէն էր, իսկ Ապոդոնի արձանը արժաւոյ Արժաւաթի կանգնեցրած. որ տեղ նոյնպէս նոյն ճանապարհի վերայ կարող էր լինել... Ահա այսպէս կը պատասխանէին Խաչիկին և ձեզ, այն՝ որ Խաչիկը լսել է ինձնից հէնց սկզբում: Եւ Խաչիկը այսպիսի հիմնաւոր հերքումն ինձնից լսելուց յետոյ՝ յիմար չէր որ դարձեալ «Իբրև ենթագրութիւն» հրատարակէր...

Գ

(Երես 156—157):

Յրկու օրագրի պատճեններ ¹:

I

(Ո՛րն է հասը եւ ո՛րը չ'հասը):

«Ի 11-ն Յունւարի 1892 ամի. ըստ հրամանի Նորին Կայսերական... Սինօդս ի 26 նոյեմբ. անցելոյ 1891 ամի...: Հրամայեցին. որովհետեւ ժողովն սուրբ յերեքտասաներորդում դարու, որ կոչի երկրորդ

1. Այս պատկերի օրագիրները հրատարակուած են, ինչպէս ասացի, «Արարատում» (1892. Մարտ և Ապրիլ). առաջինը՝ թերի,— մինչև Տեղապահ Երեմեայ Կալիսկոպոսի և Սեդրակեանի՝ «ունիմ զկարծիս» ասելը, այն՝ որ «Արարատ»-ի խմբագիր Գ. Տ. Միկրաշեանը երկու անգամ խորհրդաւոր կերպով չեշտեց և որին պատասխանեցի (տես «Նոր-Պար» 1902 № 67):

ժողով Սոյ, այսպէս սահմանէ. «ըզՋալսակն ընտրութեամբ արտացեն՝ վեց ծննդովը հեռացեալ յազգակցութենէ արեան». որով պարզապէս իմանի՝ թէ վեց ծնունդէն հետի պահեալ՝ եօթներորդին միայն թոյլատրի յամուսնութիւն ընդ ութերորդին: Որպէս և երանելի սուրբ հարն Բարսեղ Կեսարացի նշովէ և արգելու դամուսնանալն վեցերորդի ընդ եօթներորդին. իսկ ներսէս Շնորհալին, Կրիգոր Տաթևացին և այլք բազումք ի սրբոց հեղինակաւոր Հարց Եկեղեցւոյ առաւել ևս արգելս դնեն: Ի մի բան, և Միսաբանն Հայաստանեայց Եկեղեցւոյ—անուանեալն Մաշտոց, որով աւանդին ցայսօր կարգք և կանոնք արարութեանց Եկեղեցւոյ մերոյ՝ որ ի սփիւսս, «Եզր արեւակցութեան» կոչելով զեօթներորդն, ապա թէ իրաւունս տայ նմա ամուսնանալ ընդ ութերորդին: Եւ արդ՝ եթէ չէ տակաւին յետս կոչեալ հին օրինադրութիւն պսակի՝ որովէս տեսաք, ոչ որ կարէ խա-

Իսկ երկրորդը (Արարատի հրատարակած)՝ միանգամայն անհարգաւոր Սինօդի գործին, յեղաշրջուած, շարադրուած ըստ հաճոյս, և գործը Սինօդից—տակի ճիշդը՝ իմ ձեռքից փախցնելու նպատակով: Ուստի դնում եմ այստեղ առաջին օրագրի շարունակութիւնը՝ զոնէ հաս ու չհասի խնդիրը պարզելու համար. իսկ երկրորդ պսակի ան օրագրի իսկական պատճէնը, որը գործի համառօտ՝ բայց հարազատ պատկերն է: Այս երկու օրագիրն էլ գրած-շարադրած եմ ես՝ Սինօդի Ատենի յանձնարարութեամբ և խնդրանք, վերջինը [և՛ Պրօկուրօրի թախանձագին խնդրանք: Այս երկու գործն էլ ինքն ըստ ինքեան հետաքրքիր են, բայց և ունին աւելի հետաքրքիր պատմութիւններ՝ վտրագուրի յետևում կանգնած Տարսիսիին իսպառ ծանօթացնելու համար: Բայց այդ յետոյ, երբ տպագրութեան համար միջոց ունենամ:

փանել զայն առանց մեղանշելոյ և խղճելոյ, զի Եկեղեցւոյ միոյ միայնոյ է անկ կարգել կամ խափանել զօրէնս: Եւ ըստ Պօլսթենիայի ևս, յօդ. 25, 10, 40, 41, 42, Հայրապետի ազգիս սեպուհ պարտաւորութիւն է՝ հրահանգիլ միշտ նախնի կանոնադրութեամբ Եկեղեցւոյ մերոյ ի խնդիրս և ի վճիռս հոգևորս և տալ որոշումն (резолюцию): Յետ այս աշարէս լինելոյ, յերաւել, որպէս և նորին Գերագնաութիւնն պ. Պրօկուրորն Սինոդիս ասէ յիրումն գրութեան՝ որ ընթերցաւ յԱտենիս, լեալ են յառուս հանգուցեալ Հայրապետաց և յետ մահունան նոցա թոյլտուութիւնք պսակաց վեցերորդի ընդ եօթներորդին, սակայն պարտ է քաջիկ իմն խնամաւոր լինել և ի միտ առնուլ՝ թէ նոքին իսկ, որ ետուն հրաման այնպիսի պսակացն անելով՝ «ոչ յօրինակ այլոց»՝ այդու իսկ խոստովան լինին անմեղութեամբ՝ թէ մեղան օրինացն: Սակայն մեզ պարտ է զնալ ըստ օրինացն և ոչ ըստ նոցայն: Իսկ ի գրութեանն պ. Պրօկուրորի յառաջ բերեալն յօդ. 938 հատուած 7-րդ, յօդ. 939 հատուած 4-րդ հային ի կառավարչական և ի դատաստանական գործս և ոչ ի զուտ հոգևորս՝ որպիսին է խնդիր Ելիարեանցի, և 940-ն հայի յանկախ և ի լիազօր իրաւունս Մայրագոյն Պատրիարք Վաթուղիկոսի: Վասն որոյ զպսակն Տփլիսեցի ազնուական Խաչատուր Բարսեղեան Ելիարեանց ընդ Վարդուհայ Ստեփանեան Ամիրեանց՝ զորմէ է խնդիրն, որ գտանի յեօթներորդում աստիճանի տրեւակցութեան, արգելուլ՝ գտեալ զայն հակառակ օրինաց Եկեղեցւոյ մերոյ: Այլ և պատշաճ դատի, յուղղութիւն մտաց գայթակղելոցն ցայսօր՝ հրամանագրել Վոնսիստօրիայից որով և Հոգևոր կառավարութեանց՝ յայտ-

նել ի գիտութիւն ամենեցուն քահանայից և ժողովրդոց թէ՛ այսուհետեւ բնաւ երբեք թոյլատրի այդպիսի սլակ, զի հարկ անհրաժեշտ է սուրբ պահել զօրէնս: Զքաղուածն օրագրոյս տալ հրատարակել ի պաշտօնական «Արարատ» ամսագրի Աթոռոյս, և ըզպատճէնն առաքել առ նորին Գերագնաութիւնն պ. Պրօկուրորն Սինոդիս՝ ի տեղեկութիւն» (1): Ի 28-ն նայն Նոյեմբերի մատոյց Սինոդիս անդամ Սորին գերապատիւ Արիստակէս եպիսկոպոսն Սեդրակեան զայս օրինակ յայտարարութիւն. «Օրագրութեամբ Սինոդի ի 26 ամսոյս որոշեցաւ արգելուլ զպսակն Տփլիսեցի Խաչատուր Ելիարեանց ընդ Վարդուհայ Ամիրեանց յեօթներորդում աստիճանի արեւակցութեան, իբրեւ անթոյլատրելի ըստ կանոնաց Հայաստանեայց Եկեղեցւոյ: Անհամաձայն վճույզ այդմիկ գտեալ՝ պատիւ ունիմ կարգելոյ աստանօր զկարծիս իմ: Ո՛րպիսի կանոնօք Եկեղեցւոյ խափանի ամուսնութիւն յեօթներորդում աստիճանի արեւակցութեան: Օրագիր Սինոդիկ ասէ. «Որովհետեւ ժողովն սուրբ յերեքտասներորդում դարու, որ կոչի երկրորդ ժողով Սոյ, աշարէս սահմանէ. «Զպսակն ընտրութեամբ արասցեն, վեց ծննդովք հեռացեալ յազգակցութենէ արեւան», որով պարզապէս իմանի թէ վեց ծնունդան հեռի պահեալ՝ եօթներորդին միայն թոյլատրի յամուսնութիւն ընդ ութերորդին: Որպէս և երանելի ս. հայրն Բարսեղ Կեսարացի նշովէ

1) Այստեղ էր՝ որ Տեղապահ Երեմիա եպիսկոպոս և Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանը գրեցին, — էրենց «ստորագրութիւններին կից «ռնիմ ըզկարծիս» յաւելուածը» (Արարատ 1892, եր. 265—272):

և արգելու զամուսնանալն վեցերորդէն ընդ եօթնե-
րորդին. իսկ Ներսէս Շնորհալին, Գրիգոր Տաթևացին,
և այլք բազումք ի սրբոց հեղինակաւոր Հարց Սկեղեցւոյ
առաւել ևս արգելս զնեն: Ի մի բան, և Միսաքանն
Հայաստանեայց Սկեղեցւոյ—անուանեալն Մաշտոց,
որով աւանդին ցայսօր կարգք և կանոնք արարողու-
թեանց Սկեղեցւոյ մերոյ... «եզր արենակցութեան»
կոչելով զեօթներորդն, ապա թէ իրաւունս տայ նմա
ամուսնանալ ընդ ութերորդին: Սե արդ, եթէ չէ
տակաւին յետս կոչեալ հին օրինադրութիւն պսակին՝
որպէս տեսաք, ոչ ոք կարէ խափանել զայն առանց
մեղանշիւոյ և խղճելոյ, զի Սկեղեցւոյ միոյ միայնոյ է
անկ կարգել կամ խափանել զօրէնս»: Իմ իսկ հա-
մուռմն այդ է, թէ որպէս առ հասարակ յարեւե-
րեան Սկեղեցիս, նոյնպէս յատկապէս և ի Հայաստա-
նեայց Սկեղեցւոյ կարգոյ, հաստատող և լուծիչ օրի-
նաց ինքն Սկեղեցին է ի ձեռն ազգային եկեղեցա-
կան ժողովոյ: Զայդ խոստովանեալ եմ և «Սմուսնա-
կան խնդիրներ» անուանեալ աշխատութեան իմում,
զայդ և բերանացի յայտնեցի յատենի Սինոդիդ աւուրբք
յառաջ, յորժամ այն ինչ ի քննութիւն առեալ լինէր
խնդիր պսակի Երևանացի: Այս սկզբունք, յառաջ
բերեալն յօրագրի անդ՝ միանգամայն անհեղքելի է.
մնայ միայն բացատրել համառօտիւ, թէ համաձայն
նմին ընթանայ Սինոդն թէ ոչ ի ներկայ որոշման
իւրում: Ոչ կարծեմ: Սթէ «Սկեղեցւոյ միոյ միայնոյ
անկ է կարգել և խափանել զօրէնս»՝ ապա յառաջ
բերեալ վկայութիւնք Հարց չկարեն լինել կանոնք վա-
սըն Սկեղեցւոյ. նախ՝ զի ոչ մի ժողով վաւերացուցեալ
է զնոսա և ընկալեալ ի գործադրութիւն. երկրորդ՝

զի են ի նոսա, որք ոչ նոյն հեղինակի են դործ, ո-
րում ընծային, որպէս յիշատակեալն յանուն Ս. Բարս-
ղի. են, որք արդէն խափանեալ են կամ յետ նոցա
սահմանեալ ժողովական կանոնադրութեամբ, կամ պա-
հանջմամբ ժամանակի: Բացատրեցիք զասացեալս: 1,
թէ և ի ձեռագիր կանոնագիրս մեր 327 կանոնք ըն-
ծային անուան Բարսղի Ասարացւոյ, այլ յունական
Սկեղեցին, որոյ վարդապետ էր սուրբն, ճանաչէ մի-
այն 492 կանոնս Բարսղի, և ի նոսա չիք բնաւ յա-
ռաջ բերեալն ի վէր անդր յօրագրի Սինոդի կանոն
նորվման պսակի վեցերորդի ընդ եօթներորդի, այլ
են միայն 75, 76 և 87 յօդուածք, որովք արգելեալ
լինին ամուսնութիւնք ամենամերձաւոր ազգականաց,
ոչ անդր քան զՄովսիսական օրէնս. և այլազգ լինել
չկարէր, զի Սկեղեցին Յունաց մինչև ցվեցերորդ դար
վարէր Հոռոփեական օրէնադրութեամբ, որ թոյլատ-
րէր զամուսնութիւն կողմնադիժ ազգականաց ի չոր-
րորդում աստիճանի: Զայդ կանոն ուրեմն ի բաց
հանցուք ի միջոյ: 2, Յետ Սուրբ Բարսղի օրագրի Սի-
նոդի յիշատակէ զՆերսէս Շնորհալի, զԳրիգոր Տա-
թևացի, և ապա յաւելու ասել «և այլք բազումք ի
հեղինակաւոր Հարց Սկեղեցւոյ, որք առաւել ևս ար-
գելս զնեն» (արենակցական ամուսնութեան): Պարտ
համարեմ ասել, թէ ոչ բազումք, այլ միայն հինգ են
թուով կանոնագիր Հարց Հայաստանեայց Սկեղեցւոյ.
— Ներսէս Շնորհալի, Գօշ-Մխիթար, Յովհան Նրզն-
կացի, Գրիգոր Տաթևացի և Յակոբ Ղրիմցի. և աքրա
ոչ մի օրինակ տան կանոնս ազգակցական չհասու-
թեանց: Ներսէս Շնորհալի, Գրիգոր Տաթևացի և Յա-
կոբ Ղրիմցի պահանջեն պահել ի միջի զուրմ տա-

տիճան և թոյատրել զամուսնութիւն իններորդի ընդ տաաներորդի: Գօշ-Մխիթար՝—պահել ի միջի զչորս աստիճան և տալ ամուսնութեան իրաւունս երրորդաց երկուց կողմանց: Յովհան Ներզնկացի՝ պահել ի միջի զվեց, կամ նաև զհինգ աստիճան. ըստ Վերջնոյն՝ թոյլատրել միոյ կողման երրորդին ամուսնանալ ընդ միւսոյ կողման չորրորդին: Սոյ երկրորդ ժողովն գումարեալ յետ Ներսիսի Շնորհալոյ և Գօշ-Մխիթարայ, յժ.Գ. դարու, է-րդ կանոնաւ իւրով խափանեաց որպէս զխստութիւն պահանջից առաջնոյն, նոյնպէս և զմեղմութիւն երկրորդի. ուրեմն հանեալ ի միջոյ և զկանոնս Ն. Շնորհալոյ և Գօշ-Մխիթարայ, տեսանեմք մնացեալ զՅովհան Ներզնկացի, զԳրիգոր Տաթևացի և զՅակոբ Արիմեցի: Արդ՝ եթէ Սինոդն հրահանգի կանոնիւք Տաթևացւոյ և Արիմեցւոյ, պարտի հրահանգիլ և կանոնիւ Ներզնկացւոյ. և դարձեալ միւս խնդիր. եթէ յիշատակէ զանուանս Շնորհալոյն և Տաթևացւոյ և այլոց, ցուցանէ՝ թէ կանոնիւք նոցա հրահանգիլ կամի. եթէ այդպէս՝ հարկ է նմա ուրեմն ոչ միայն խափանել զամուսնութիւն արեւակցաց յ7-րդում աստիճանի, այլ և յ8-րդում, և թոյլատրել միայն զպսակս իններորդի ընդ տաաներորդի. այս է իսկական պահալանութիւն կանոնաց Շնորհալոյ, Տաթևացւոյ և Արիմեցւոյ: Թողով ուրեմն ի բաց և զհեղինակաւոր Հարց Նկեղեցւոյ այդոցիկ կանոնս, հարկ է ինձ այժմ խօսել զկանոնաց ժողովոյ Սոյ և Մաշտոցի. և նախ սակաւուք զվերջնոյն: Ի ձեռագիր Մաշտոցս մեր չիք բնաւ կանոն ազգասամարի արեւակցական չհասութեան: Զոր յիշատակէ Ս. Սինոդն յօրագրի անդ իւրում, աւելու ի տպագրեալ օրինակէ

Կ. պօլսոյ 1807 ամի: Բայց այդ ոչ եթէ ի հնոց անտի նախնեաց մերոց աւանդեալ է կանոն, այլ նոյն ազգասամար Գրիգորի Տաթևացւոյ, կարգեալ յառաջ բան զնշանօրհնէքն յերես 227, որպէս տպագրիչ մատենին զպիր Գալուստ ասէ: Մնայ ուրեմն կանոնն Սոյ ժողովոյ, որոյ իբրև եկեղեցագիր կանոնի անպայմանօրէն մեծ է կարևորութիւնն ի լուծում խնդրոյ արգելման կամ թոյլտուութեան պսակաց 7-րդ աստիճանի ազգականութեան: «Զպսակն ընտրութեամբ արասցեն՝ վեց ծննդովք հեռացեալ յազգակցութենէ արեան»: Արդ զիմարդ իմանալ զմիտս կանոնիս: Ըստ իս կանոնս թոյլատրէ նաև զամուսնութիւն վեցերորդի ընդ եօթներորդի. ըստ որում եթէ հարկ է ազգականաց վեց ծննդովք հեռանալ յազգակցութենէ արեան, ուրեմն միոյ կողման թոռն չէ արիւնակից միւսոյ կողման թոռնորդոյն: Զայս այսպէս զիտել համոզեալս եմ ոչ միայն ի բուն իմաստից կանոնիս, այլ նաև ի վիայութենէ կանոնագէտ արանց: 1, Յովհան Ներզնկացի, որ ժամանակակից էր նոյն ժողովոյ և աշակերտ Վարդան վարդապետի, որ չըջեցուցանէր ամենուրէք զկանոնս ժողովոյն, ասէ. «եթէ մէկ դիհն երեք լինի և մէկն չորս, լինի և այն»: Նրկրորդ՝ հ. Զամէկան յառաջ բերեալ զյիշատակեալ կանոնն ի պատմութեան Հայոց (հատ. Գ. եր. 227) դնէ ի բացայայտութիւն նորին ի փակագծի այսպիսի աղիւսակ (: :): Նրկրորդ՝ հ. Վահան վարդապետ Բաստամանց յիրաւարանական հետազօտութեան իւրում ասէ. «Սա ի երկրորդ ժողովը փոխեց Շնորհալոյ այդ խիստ կանոնը, թոյլ տալով ամուսնութիւնը վեցերորդին եօթներորդի հետ, կամ եօթներորդին ութե-

ըրդի հետ» («Փորձ» 1881, Մայիս—Յունիս, եր. 25):
Թոյլտուութիւն պսակի յ7-րդում աստիճանի ազգակե-
ցութեան ըստ իս ոչ միայն օրինական է այլ և ան-
հրաժեշտ ըստ պահանջման ժամանակին: Յայտնի
առումն ընթերցաք ի «Մշակ» լրագրի, թէ Մանու-
չարեանց հայ զինուորական պաշտօնեայ ոմն ընկա-
լեալ է զգաւանութիւն Ռուսաց Սկեդեցւոյ ի պատ-
ճառս արգելման պսակի նորա ի Սինոդէ ի 6-րդում
աստիճանի արկնակցութեան: Ստացեալ է Ս. Սինոդն
և զբաղմաստորագիր խնդիրն հայ ժողովրդոց Մոզդո-
կի, որք յայտենն զգաւանութիւն օրաց իւրեանց ընդ
դէպս կրօնափոխութեանց յերեսաց չհասական ար-
գելմանց յետագայ բանիւք: «Նրէկ Սերբերակեանցի և
Թուշմալեանցի որդիները հաւատափոխութեան դիմե-
ցին չհասութեան պատճառով, այսօր էլ Ուլուխանեան-
ցի և Գեանջումեանցի որդիներն են պատրաստուում
հաւատափոխութեան դիմելու, դարձեալ նոյն 6-րդ
աստիճանի չհասութեան պատճառով»: Եւ եթէ փոքր
ի շատ է իրաւունք իցեն մեզ արդարանալոյ առաջի
խղճի մտաց մերոց և առաջի լրութեան Սկեդեցւոյ
վասն կրօնափոխութեանց յերեսաց արգելման արե-
նակցական ամուսնութեանց ի 6-րդում աստիճանի,
ըստ որում զկանոնս Սկեդեցւոյ յարգել պարտիմք
և պահպանել, ոչինչ բնաւ արդարանալոյ տեղիք
մնան և վասն դիպաց կրօնափոխութեանց յերեսաց
արգելման 7-րդ աստիճանի ազգակցութեան, որ
թոյլատրելի է, որպէս տեսաք, ըստ կանոնի եկե-
ղեցական ժողովոյ Սոյ: Առաջի արարեալ գլխ-
ըրդեանալ ի նկատողութիւն Սինոդի Ս. Էջմիածնի
ալն ունիմ փոփոխման օրագրոյ նորին ըստ խնդրոյ

պսակի Խաչատրոյ Էլիարեանց և թոյլատրելոյ զպսակս
7-րդ աստիճանի ազգակցութեանց հաւատարապէս վասն
ամենեցուն: Եթէ անփոփոխ մնացէ Սինոդն յիւրում
որոշման, յայնժամ խնդրեմ տալ տպագրել «Արարատ»
ամսագրի գոյգ ընդ քաղուածոյ օրագրոյ իւրոյ և
զպատճէն յայտարարութեանս իմոյ: Եւ ի 29-ն նոյն
(Նոյեմբեր) ամսոյ Ամենապատիւ Տ. Տեղակալ Առե-
նապետի Սինոդիս ետ զիւրն կարծիս զայս օրինակ.
«Սինոդը օրագրով ի 26 ամսոյս արգելու զպսակ
Տփիսիսցի աղնուական Խաչատրոյ Էլիարեանց ընդ
Վարդուհայ Ամիրեանց յ7-րդում աստիճանի արե-
նակցութեան, որպէս աններելի դործ ինչ ըստ կա-
նոնաց Հայաստանեայցս Սկեդեցւոյ: Որոշումք այդ
կարի խիստ է, որ փոխանակ դրական ինչ արդիւնս
բերելոյ եկեղեցւոյ—ժողովրդեան, մեծապէս զրկանս
հասուցանէ նմա: Մեք ոչ կամիմք աստ մտանել ի
մանրամասնութիւն հերքման պատճառից, ի մէջ բե-
րելոց յօրագրիդ, մինչդեռ անգամ Դորին գերապա-
տիւ Արխատակէս եպիսկոպոսն Սեդրակեան ի յայտա-
րարութեան իւրում ի 28 ամսոյս պարզաբանեալ է
զամենայն ապացուցութեամբ բանից տուրք Հարց
Սկեդեցւոյ, զթոյլտուութիւն 7-րդում աստիճանի ազ-
գականութեան ոչ միայն օրինական գտանէ, այլև
անհրաժեշտ: Ընդ որս համաձայն եմք և մեք: Արդ,
որովհետեւ թոյլտուութիւն պսակաց յ7-րդում աստիճա-
նի ազգականութեան շատ անգամ արձակեալ է ի Սի-
նոդէդ թէ առ գահակալութեամբ Հայրապետաց ազգիս,
և թէ ի պարապութեան Աթուոյն, և բաց յայսմանէ որ-
պէս առեալ եմք զփորձն, արգելումն պսակաց յայսմ աս-
տիճանի տեղի տայ մեծի դժգոհութեան և յաճախ կրօ-

նափութութեան ի մեծ ցաւ սրտից զգայնոց մերազնեից
և գլխովին վնաս ցկեղեցւոյն. ուստի ըստ իս, թողա-
բերի է ընդհանրապէս ամուսնութիւն յ7-րդում աս-
տիճանի ազգականութեան, խելամուտ լինելով ի ժա-
մանակիս վիճակի կենաց ազգին Հայոց՝ որ յոյժ ընդ
փոքու սահմանեալ թուով կան սփռեալ յորտա աշխար-
հի. ուր յանձնաբերից սակի համարի արգելումն պատկաճ
յայտարարի դէպք: Սրէնք. ըստ 42-րդ յօդուածոյ Բաբ-
ձրագոյն հաստատեալ «Պօլօժենիայի» յաղագս կառա-
վարութեան գործոց ցկեղեցւոյ Լուսաւորչական Հա-
յոցս ի Ռուսաստան՝ գրութիւն Ամենապատիւ Տ. Տե-
ղակալի Ատենապետի Սենտքիս համարի կարծիք մի-
այն, և որովհետեւ Նորին բարձր Սրբազնութիւնն մի-
անգամայն համաձայն է ընդ կարծիս գերապատիւ
Արքիստակէս եպիսկոպոսին Սեղբակեան, ուստի Սինոդս
առնու ի քննին նախ զյայտարարութիւն Նորին Սր-
բազնութեան Արքիստակէս եպիսկոպոսի: ա) Գերա-
պատիւ Արքիստակէս եպիսկոպոսն գրէ. «Եթէ «Սկե-
ղեցւոյ միոյ միայնոյ է անկ կարգել և խափանել դօ-
րէնա»՝ ապա յառաջ բերեալ վկայութիւնք Հարց չկա-
րեն լինել կանոնք վստն ցկեղեցւոյ, զի ոչ մի ժողով
վաւերացուցեալ է զնոսա և ընկալեալ ի գործադրու-
թիւնն: Առ այս. — վճիռ Սինոդի վստն արգելման
պատկի Խաչատրոյ Ելիարեանց խակապէս համաձայն է
կանոնի երկրորդ ժողովոյն Սոյ՝ որ արգելու զօթնե-
րորդն, որպէս տեսցուք ի կարգին յիւրմն տեղոջ:
Այս, ի մէջ բերեալ են և՛ վկայութիւնք և՛ անուանք
Ս. Հարց ցկեղեցւոյ՝ որպիսի է և Ներսէսի Շնորհա-
ւոյ, սակայն պարզապէս ցուցանելոյ ազգաւ՝ թէ
նորա «առաւել ևս արգելս դնեն»: Կանոն Շնորհա-

ւոյ. — «Մի՛ ոք համազգեաց որոյ արեան մերձաւորու-
թիւն իցէ, պատկ օրհնութեան դիցէ, այլ մինչև յեր-
կուց կողմանց (յիւրաքանչիւր կողմանց) զչորրորդ
ազգին գլխաւորութիւն կատարեալ ունիցին...»: Յօ-
րինակէ եղելոյ ընդ կանոնիս յայտնի լինի՝ թէ 9-րդն
ամուսնանայ ընդ 10-րդին, որով առաւել հրահան-
գեալ է մանաւանդ ցկեղեցի մեր: Ըստ այսմ են և
կանոնք Ղրիմեցւոյն և Տաթկացւոյն: բ) Գրէ. «յօ-
րագրի անդ յառաջ բերեալ կանոնն, որ նգով է և
արգելու զամուսնանալն 6-րդի ընդ 7-րդին՝ չէ Ս.
Բարսղի Կեսարացւոյ»: Առ այս. — յիւրաւի որպէս գրի
և յ«Ամուսնական խնդիրներ» անուանեալ աշխատու-
թեան Նորին Սրբազնութեան (յերես 38. ծանօթու-
թիւն 27, Опытъ курса церк. законовѣдѣнія, եր.
75, 82 և 96.), կանոնն այն չէ Ս. Բարսղի, բայց
որովհետեւ և՛ չէ տակաւին յայտ թէ ոչ է կանոնս,
ուստի Սինոդս յիշէ զնոյն կանոն յանուն Ս. Բարսղի,
որպէս և՛ Առաքելոցն անուանեալ զկանոնս և զԹա-
գէսի առաքելոյն՝ ըստ բազմաթիւ հին ձեռագիր կա-
նոնագրոց և մատենագրաց, քանզի խնդրի է աստ իս-
կապէս զկանոնէն պատկի և ոչ զՀեղինակէն կանոնի:
գ) Գրէ. «Պարտ համարիմ ասել թէ՛ ոչ բազումք, այլ
միայն հինգ են թուով կանոնագիր Հարք Հայաստա-
նեայց ցկեղեցւոյ. — Ն. Շնորհալի, Գօշ-Մխիթար, Յով-
հան Նրզնկացի, Գրիգոր Տաթկացի և Յակովբ Ղրիմե-
ցի»: Առ այս. — յօրագրի անդ, յետ Բարսղի (յոյն) Կե-
սարացւոյ, Ներսէսի Շնորհալոյ և Գրիգորի Տաթկաց-
ւոյ՝ գրեալ է «և այլք բազումք ի սրբոց հեղինակա-
ւոր Հարց ցկեղեցւոյ (ոչ Հայաստանեայց ցկեղեցւոյ),
որով պարզապէս ասի և խմանի Ս. Հարք ընդհանուր

քրիստոնեայ Եկեղեցւոյ, որպէս են Ս. Օգոստինոս, Աթանաս, Կիւրեղ Աղեքսանդրացի, Գրիգոր Աստուածաբան Անձիացի, և այլն, և այլն, որ յիրաւի բազումք են: Նոյն իսկ և կանոնագիր Հարք Հայաստանեայց Եկեղեցւոյ ոչ «հինգ են» որպէս պնդէ Նորին Սըրբազնութիւնն, այլ նոյնպէս բազումք.— Մեծն Ներսէս և գումարեալ Հարք ժողովոյն Աշտիշատի. Յովսէփ Կաթողիկոս և Նղիշէ և ոմանք յընկերաց նորա և այլ գումարեալ Հարք ժողովոյն Շահապիւ վանի. Ներսէս Բ. Կաթողիկոս Աշտարակեցի և գումարեալ Հարք ժողովոյն Դունոյ. Սիօն Կաթողիկոս և գումարեալ Հարք ժողովոյն Պարտաւի յԱղուանս. Կոստանդին Ա. Կաթողիկոս և գումարեալ Հարք Սսոյ Բ. ժողովոյն. Սահակ Պարթև և գումարեալ Հարք Վաղարշապատայ Գ. ժողովոյն. Թադէոս առաքեալ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Յովհան Օձնեցի, Յովհան Մանգակունի, Յովհաննէս վարդապետ (Դատաստանագիրք Սինոդի, եր. 352), Աբրահամ եպիսկոպոս Մամիկոնէից (եր 183), և այլք դարձեալ բազումք՝ որ ի զանազան ժամանակս դանազան կանոնքս սահմանեցին Եկեղեցւոյ մերոյ: Եւ եթէ տակաւին պէտք են ասացուցանելոյ թէ ոչ ճիշդ՝ այլ բազումք են կանոնադիր Հարք Եկեղեցւոյ, ոչ աւերորդ է ուրեմն ի մէջ բերել և վկայութիւն ի Շնորհալուոյն, որ ժամանակագրական կարգաւ առաջինն է վերագրեալ հնգիցն, և որ յետ կանոնին պսակի ասէ. «Եւ թէ զինչ պատճառաւ զշորեակ թիւն կանոնադրեցին Հաբէս սուրբ սահման ամուսնութեան...»: Դ) Գրէ. «Սսոյ երկրորդ ժողովն գումարեալ յետ Ներսիսի Շնորհալուոյ և Գօշ-Մխիթարայ յԺԴ դարու, էւրդ կա-

նոնաւ իւրով խափանեաց որպէս զսատութիւն պահանջից Առաջնոյն՝ նոյնպէս և զմեղմութիւն Նրկորդիւն»: Առ այս.— յիրաւի կանոն ժողովոյն լուսեայն իմն խափանէ որպէս զկանոն Շնորհալուոյ նոյնպէս և Կօշ-Մխիթարայն, բայց և ի վերայ այսր ամենայնի և զայն պարտէ գիտել թէ կանոն Գօշ-Մխիթարայ չէ գտեալ ընդունելութիւն և զործադրութիւն որպէս յառաջ քան զժողովն՝ նոյնպէս և զինի ժողովոյն: Քանզի և ի պատմութեան Աղուանից Մովսիսի Վաղանկատուացւոյ (Փարիզ, 1860. թ. հատ. բ. եր. 38) նկարագրեալ հանդամանք նշովման Վարադոյ իշխանին Աղուանից, որ կին աբար զթուռնակիցն իւր ըզ-Վարդանուհի՝ որ է վեցեւորդն, ցուցանէ՝ թէ որչափ խստութեամբ խափանէր (դեռ 720—730 թ.) Եկեղեցին Հայոց և Աղուանից զպսակ վեցերորդի արեւնակցութեան, որ է կանոն Գօշ-Մխիթարայն, մինչդեռ կանոն Շնորհալուոյն և՛ յետ Բ. ժողովոյն Սսոյ ցժամանակս մեր ի յարգանս էր տուաւ քան զկանոն յիշեալ ժողովոյն Սսոյ («Փորձ» 1880. № VIII. եր. 68 և 1881. № IV. եր. 58 և 73): Ե) Գրէ. «Ի ձեռագիր Մաշտոցս մեր չիք բնաւ կանոն ազգահամարի արեւնակցական չհասութեան: Զոր յիշատակէ Սըրբազան Սինոդն յօրագրի անդ իւրում, առնու ի տըպագրեալ օրինակէ Կ. պօլսոյ 1807 ամի, բայց այդ ոչ եթէ ի հնոց տնաի նախնեաց մերոց աւանդեալ է կանոն, այլ նոյն ազգահամար Գրիգորի Տաթևացւոյ, կարդեալ յառաջ քան զնշանօրհնէքն յերես 227, որպէս՝ տալագրիչ մատենին դպիր Գալուստն ասէ»: Առ այս.— առուրք յառաջ քան զկազմել օրագրոյն, ուրեմն և յառաջ քան զայդ, անգամ Սինոդի գերա-

պատիւ Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեանց յԱտենի Սինոդիս ասաց թէ՝ «Հրահանգ Ծիսարանին եղեալ է հրատարակիչն Ծիսարանին». ուրեմն յայտ է թէ՝ գիտէր զայդ եւ՝ Սինոդն, սակայն յասելն յորադրի անդ իւրում թէ՝ «և Ծիսարանն Հայաստանեայց եկեղեցւոյ — անուանեալն Մաշտոց, որով աւանդին ցայսօր կարգք և կանոնք արարողութեանց եկեղեցւոյ մերոյ՝ որ ի սփիւռս, «եզր արեւմտեայն» կոչելով զեթներորդն, ապա թէ իրաւունս տայ նմա ամուսնանալ ընդ ութերորդին», կամի Սինոդս ցուցանել թէ՝ ցըժամանակս տպագրութեան Մաշտոցի (1807 թ.) և ցայսօր չիք այլ օրինակ հրահանգ յայլ Մաշտոցս՝ բացի վերոյգրելոյն, զոր և իրաւարան Վահան վարդապետն Բաստամեանց յիշէ ընդ կարեւորս (Գատաառանագիրք Մխիթար-Գօշի, եր. 230. ծանօթութիւն 443): զ) Ասելով «անպայմանօրէն մեծ է կարեւորութիւն կանոնի Սոյ ժողովոյն»՝ յարէ և գկանոնն. «Բզպակն ընտրութեամբ արասցեն, վեց ծննդովք հեռացեալ յազգակցութենէ արեան»: Արդ, զիմրդ իմանալ զմիտս կանոնիս: Ըստ իս կանոնս թոյլատրէ նաև զամուսնութիւն վեցերորդի ընդ եօթներորդին...: Զայս այսպէս գիտել համոզեալս եմ ոչ միայն ի բուն իմաստից կանոնիս, այլ նաև ի վկայութենէ կանոնագէտ արանց: 1. Յովհան Նրզնկացի՝ որ ժամանակակից էր նոյն ժողովոյ և աշակերտ Վարդան վարդապետի, որ շրջեցուցանէր ամենուրեք գկանոնս ժողովոյն, ասէ. «եթէ մէկ դիհն երեք լինի և մէկն չորս, լինի և այն»: Առ այս. — գերապատիւ Արիստակէս եւսիսկոպոսն իմանալ թէ կանոնն Սոյ թոյլատրէ զամուսնութիւն վեցերորդի ընդ եօթներորդին, իսկ

Սինոդս յորադրի անդ իւրում ի սկիզբն վճռոյ իւրոյ արգելման պատիւ Խաչատրոյ Երիւրեանց դնելով ըզնոյն կանոն՝ ասէ. «որով պարզապէս իմանի թէ վեց ծնունդէն հետի պահեալ՝ եօթներորդին միայն թոյլատրի յամուսնութիւն ընդ ութերորդին»: Կարգեցուք աստանօր և գկանոնն ի վկայ կոչեցեալ Յովհաննու Նրզնկացւոյն. — «Նւ պարտ է քահանային որ քննէ յառաջ՝ որ չի լինին կարեւորք (արեւակիցք), այլ յերկու դիհնէ մինչ ի ծնունդն չորրորդ հեռացեալ լինին, որ է այսպէս, երկու եղբօր կամ երկու քրոջ թոռներն խնամիք լինին, որ զիւրեանց ծնունդքն իւրերայց տան (7-րդն ամուսնանայ ընդ ութերորդին): Նւ որ խնամութեամբ հետ մի (անգամ մի) չիրար խառնեալ լինին այլ օտարք, նոյնպէս չորս ծնունդ հեռանան և ապա այլ խնամեցան, և եթէ մէկ դիհն երեք լինի և մէկն չորս՝ լինի և այն» (կանոնագիրք Սինոդի, եր. 303): Պարզապէս տեսանի ի կանոնական բանիցս Նրզնկացւոյն «և եթէ մէկ դիհն երեք լինի և մէկն չորս՝ լինի և այն» ասացեալ միով աստիճանաւ զիջմամբ վասն խնամութեան օտարաց միայն, և ոչ արեւակցաց: Այսպէս միով աստիճանաւ զիջումն վասն խնամութեան տեսանի և յայլ կանոնս, զոր օրինակ. «Կանոն պատկերոյ և պորտ թըռուելոյ... զի կարեւորն, որ է ազգականն, ի չորս պորտըն անցանի և ի հինգն ասլա խնամեան (յօրինակէն եղելոյ ցուցանի՝ թէ իւրաքանչիւր կողմանց հինգերորդքն առնուն զիրեարս — 9-րդն առնու ըզ 10-րդն) ... ապա թէ ոչ՝ նգովեցին յԱստուածաշունչ Գրոց և ի մէնջ...: Նւ եթէ որ առնուցու կին ի մերձաւորէն իւրմէ ի վայր քան զչորս և զհինգ՝

(միայն կողման 4-րդն առնուա զմիւսայ կողման 5-րդն, — 8-րդն առնուա զ9-րդն) նշումը եղիցին յԱստուածային գրոց և ի մէջ...» (Կանոնագիրք Սինոդի, եր. 389—390): Յերկոցունց կանոնացս զոյգ եղելոց տեսանի յայտնապէս զի առաջինն սահմոնեալ է վասն ամուսնութեան արեւակցաց—«զի կարեւորն որ է ազգական...»: Իսկ երկրորդն վասն խնամութեան՝ միով աստիճանաւ զիջմամբ—«և թէ որ առնուցու կին ի մերձաւորէն...»: Նն և այլ կանոնք միով աստիճանաւ զիջման վասն խնամութեան: Ուստի ի յայտարարութեան գերապատիւ Արիստակէս եպիսկոպոսի յառաջ բերեալն ի վկայութիւն կանոն Յովնանու Երզնկացւոյ «նթէ մէկ զինն երեք լինի և մէկն չորս՝ լինի և այն» յատկապէս ասացեալ լինի վասն խնամութեան և ոչ արեւակցութեան: Է) Գրէ. «Երկրորդ՝ հ. Չամչեան յառաջ բերեալ զյիշատակեալ կանոնն (Սոյ) ի պատմութեան Հայոց (հատ. Գ. եր. 227) գնէ ի բացայայտութիւն նորին ի վաղագծի այսպիսի տղիւսանի (:)»: Առ այս.—Չամչեանն գնէ զկանոն ժողովոյն Սոյ ոչ որպէս ժամանակակից պատմիչն Կիրակոս՝ որպէս տեսաք, այլ ըստ այսմ. «պը-

1. Յովնան Երզնկացու այս պարզ կանոնը չեն հասկացել Վահան վ. Բաստամեանց, Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեան, Գաբրիէլ Առաքելեան՝ ամուսնութեան—հաս ու չհասի մասին զըքեր շարադրողները: Եւ սորա չը հասկացուին է միակ պատճառ՝ որ Սոյ Բ. ժողովի 2-րդ կանոնը սխալ են բացատրում: Իսկ ոմանք արձագանգ տուող զուլեխներ զեռ ևս հրապարակաւ յանդգնում են «Տեղադրութեան ժամանակ» Սեդրակեանի այդ սխալը որբացնել. տես «Արարատ» 1902. փետր. եր. 131—132:

սակ մի լիցէ ի մերձաւոր ազգականս ցեօթն ծնունդ», որով դարձեալ իմանի թէ՛ Եօթներորդն մի՛ լիցի, քանզի և ոճ բանից ի կանոնս ցեօթներորդն, ցվեցեւորդն, ցչորբորդն, ցհինգեւորդն, որպէս Շնորհաւոյն, Երզնկացւոյն, Ժողովոյն Շահապիւկանի, Դիմոյ և Պարտաւի և այլոց, ցուցանէ արգելեալ և զայդոսիկ աստիճանս. մանաւանդ յայտ է թէ ի ժամանակին այնմիկ Արեւեան եկեղեցին արգէն արգելոյր և արգելու ցարդ զպսակն ցեօթներորդսմ աստիճանի, իսկ Արեւմտեանն՝ արգելոյր և զութեւորդն: Ը) Գրէ. «Երրորդ, հ. Վահան վարդապետ Բաստամեանց յիշաւարանական հետազոտութեան իւրում ասէ. «Սսի երկրորդ ժողովը փոխեց Շնորհաւոյ այդ խիստ կանոնը, թոյլ տալով ամուսնութիւնը վեցերորդին եօթներորդի հետ, կամ եօթներորդին ութերորդի հետ (Փորձ, 1881, Մայիս և Յունիս, եր. 25)»: Առ այս.—վերոյկարգեալ վկայութիւն Բաստամեանցի սկսանի ոչ որպէս գերապատիւ Արիստակէս եպիսկոպոսն յառաջ բերէ «Սսի երկրորդ ժողովը փոխեց», և այլն, այլ՝ այսպէս.—«Մենք վերը տեսանք որ՝ Սսի երկրորդ ժողովը փոխեց», և այլն: Ուստի տեսցուք թէ զինչ գրէ նոյն Վահան վարդապետն Բաստամեանց ի «վերն»—ի համարի Ապրիլի նոյն «Փորձ» ամսագրոյ, եր. 61—62: Հանգուցեալ Վահան վարդապետ Բաստամեանց առեալ ի պատմութենէ ժամանակակից Կիրակոսի Դանձակեցւոյ զկանոն Սոյ ժողովոյն «զպսակն ընտրութեամբ արասցեն» վեց ծննդով հեռացեալ յազգակցութենէ արեւան», յաւելու ասել. «... Այսպէս ուրեմն Սոյ ժողովը արգելում է արեւանակիցների մէջ ամուսնութիւնը վեց

ծննդով հեռու, այսինքն՝ երկու ամուսնացողների մեջ պէտք է լինի վեց աստիճան, որով բոլոր աստիճանների թիւը կը դառնայ ութ»։ Ահա և՛ վկայութիւն Վահան վարդապետի Բաստամեանց, ըստ որոյ կանոնն Սոյ ընդհակառակն արգելու և ոչ թէ թոյլատրէ զամուսնութիւն վեցերորդի ընդ եօթներորդին։ Ուստի ի յայտարարութեան գերապատիւ Արիստակէս եպիսկոպոսի յառաջ բերեալն վկայութիւն «թոյլ տալով ամուսնութիւնը վեցերորդին եօթներորդի հետ, կամ եօթներորդին ութերորդի հետ» կրկնակի սխալանք են Վահան վարդապետի Բաստամեանց, նախ՝ յիշողութեան՝ որպէս տեսաք, և երկրորդ՝ չփոթելոյ զինամուսնեան կանոնն Նրդնկացոյն ընդ կանոնին արեւակցութեան, զոր և ինքն գերապատիւ Արիստակէս եպիսկոպոսն ի յայտարարութեան իւրում չփոթէ։ Այլ և արժան է նկատել աստ թէ՛ որպէս ոչ կարէ ասիլ 2 անգամ $2=4$ կամ 5, այսպէս և ի կանոնական բանս, ուր ճշդելով որոշի աստիճան կամ սահման՝ ոչ կարէ ասիլ «թոյլ տալով ամուսնութիւնը վեցերորդին եօթներորդի հետ, կամ եօթներորդին ութերորդի հետ»։ Թ) Գրէ. «Նւ եթէ փոքր ի շատէ իրաւունք իցեն մեզ արգարանաւոյ առաջի խղճի մտաց մերոց և առաջի լրութեան Նկեղեցւոյ վասն կրօնափոխութեանց յերեսաց արգելման արեւակցական ամուսնութեանց ի 6-րդում աստիճանի, ըստ որում զկանոնս Նկեղեցւոյ յարգել պարտիմք և պահպանել, ոչինչ բնաւ արգարանաւոյ տեղիք մնան և վասն դիպաց կրօնափոխութեանց յերեսաց արգելման 7-րդում աստիճանի ազգակցութեան, որ թոյլատրելի է, որպէս տեսաք՝ ըստ կանոնի եկեղեցական ժողովոյ Սոյ»։ Առ այս. —

ընդհակառակն որպէս տեսաք ի հերմանս բացառայտ բանիւք և՛ օրինակօք և՛ կանոնիւք և՛ վկայութեամբք Հարց և գրոց կանոնագէտ արանց՝ եօթներորդն ոչ թէ թոյլատրելի է, այլ խափանելի իսկ՝ ըստ կանոնի նոյն եկեղեցական ժողովոյն Սոյ, «գոր յարգել պարտիմք և պահպանել»։ Իսկ դէպք զայթակղութեանց և կրօնափոխութեանց յառաջ գան ոչ թէ ի ճիշդ պահպանութենէ եկեղեցական կանոնաց, այլ՝ յերեւմտական խոտորմանէն ի նոյն կանոնաց, և մանաւանդ ի ստորաքարչ հակմանց։ Մանաւանդ թէ մեզ պարտ է դնալ անխոտոր ըստ օրինացն, որով և հետզհետէ դադարելոց են իսպառ զայթակղութիւնքն։ Զայս այսպէս գիտել զիտէ և համոզեալ է և՛ ինքն արեւգան Արիստակէս եպիսկոպոսն։ Յոյժ կարեոր էր նկատել և զ«փոքր ի շատէն», սակայն թողուք նմին ինքեան խոկալ զայդ։ Ժ) Գրէ. «առաջի արարեալ զվերոյգրեալս ի նկատողութիւն Սինդղի Ս. Եջմիածնի ակն ունիմ փոփոխման օրագրոյ նորին ըստ խնդրոյ պատկի Խաչատրոյ Ելիարեանց և թոյլատրելոյ զպատկ 7-րդ աստիճանի ազգակցութեանց հաւատարագէս վասն ամենեցուն»։ Առ այս. — որպէս ասացեալ է ի վեր անդր յօրագրի Սինդղիս, նախ՝ «Նկեղեցւոյ միոյ միայնոյ է անկ կարգել կամ խափանել զօրէնս», ըստ այնմ. «Ոչ է պարտ զվաղնջոց սովորութիւն ի գաւառի եկեղեցւոյ նորաձեւել զվիճակաց, և զաթոռոց, և զժողովրդոց ասէ, և եթէ փոփոխել յասացելոց կամի ոք ի Հայրապետաց՝ ժողովու պարտի առնել՝ որ է անվտանգ ըստ դատաստանի գրոց» (կանոնագիրք Սինդղի, եր. 466. կանոն ՌԶԻ), և երկրորդ՝ ըստ Պօլոթենիայի ևս

յօդուած 10, 25, 40, 41 և 42, յատուկ պարտաւորութիւն է Հայրապետի ամենայն Հայոց նիւթ պանպանութիւն կանոնաց և արարողութեանց դաւանութեան մերոյ ըստ հրահանգութեան նախնի կանոնադրութեան Առաւօրջական եկեղեցւոյ և տալ բացարձակ որոշումն (резолуция) ի խնդիրս և ի վճիռս հոգևորս: Ուստի չեն մնալ իրաւունք ի նորոյ կանոնադրելոյ՝ «Թոյլատրել զպսակս 7-րդ աստիճանի ազգակցութեանց հաւաքաւարպէս վասն ամենեցուն»։ Նոյնպէս՝ և ոչ բացառապէս: Գիցուք աստ և վկայութիւն «Ամուսնութիւն ըստ Հայոց եկեղեցական իրաւաբանութեան — իրաւաբանական հետազօտութիւն» ի ծանրակշիռ աշխատութենէ կանգնատար Մոսկուայի Համալսարանի իրաւաբան Վահան վարդապետի Բաստամեանց: «Ռուսիայի պետական օրէնքը որ վերաբերում է Հայաստանեայց եկեղեցւոյ կառավարութեան Վայսերութեան սահմանում», ճանաչում է մեր եկեղեցական վարչութեան լիազօր իրաւասութիւնը չհասութեան մասին վարուել եկեղեցական կանոնով: Բայց Կոնստանտնուպոլսէն, կամ որ նոյն է Առաջնորդները չհասութեան տարակուսելի դէպքերում պարտաւոր են դիմել Ս. Էջմիածնի Սինոդին (Сводъ законовъ, т. XI ч. I ст. 985 п. 6.), որը իրաւունք ունի քննել չհասութեան հարցը, որդէս պսակից տուաջ, նոյնպէս և պսակից յետոյ (ст. 938 п. 7 того же зак.): Սակայն որովհետեւ նոյն օրէնքը ճանաչում է ընդհանուր Հայոց Վաթուղիկոսի գերագոյն իրաւասութիւնը զուտ կրօնական հարցերի մէջ (929 того же зак.), իսկ չհաս ամուսնութիւնների թոյլ տալը, այսինքն եկեղեցական կանոնից բա-

ցառութիւն անելը կրում է կրօնական կերպարանք, ուստի Ս. Էջմիածնի Սինոդը չհասութեան հարցերի մէջ վարուում է կաթուղիկոսների հրահանգներով և պատուէրներով» («Форт» 1881 թ. № V. եր. 22): Գրէ. «Յետէ անփոփոխ մնացէ Սինոդն յիւրում որոշման, յայնժամ խնդրեմ տալ տպագրել յԱրարատ ամսագրի զոյգ ընդ քաղուածոյ օրագրոյ իւրոյ և ըզպատճէն յայտարարութեան իմոյ»: Առ այս.— ի 16-ն անցեալ Գեղեթմբերի յորժամ յԱտննի Սինոդիս անդամ Սորին բարեշնորհ Բարդուղիմէոս վարդապետն Գէորգեան առեալ ի քնին բան առ բան քննադատեաց վերուստ ի վայր և հերքեցան ամենայն հակառակ կարծիք յայտարարութեան գերապատիւ Արիստակէս եպիսկոպոսի, յայնժամ անդամ Սինոդի գերապատիւ Արիստակէս եպիսկոպոսն Գաւթեան խնդրեաց նմա յիտս ստանալ զայտարարութիւն կարծեաց իւրոց, սակայն նորին Սրբազնութիւնն ասաց. «Ես մնում եմ դարձեալ հաստատ իմ կարծիքում»: Իսկ յորժամ անդամ Սինոդի բարեշնորհ Բարդուղիմէոս վարդապետն եհարց ցնա թէ՝ «Ձեր յայտարարութեան տպագրութեան համար, որ խնդրել էք, ինչ որոշումն էք անում այժմ». պատասխանի տրար թէ՝ «Հրաժարվում եմ այդ պահանջից»: Ժր) Հուսկ ամենայնի մնայ ասել զի զոր կարգեցաք ցայս վայր հերքումն բանից՝ լիովն պատասխան համարի և՛ բանից կարծեաց նորին Բարձր Սրբազնութեան ամենապատիւ Տ. Տեղակալի Ատենապետի Սինոդիս, որ գրէ. «Մեք ոչ կամիմք աստ յոտանել ի մանրամասնութիւն հերքման պատճառից ի մէջ բերելոց յօրագրելոյ, մինչդեռ անդամ Գորին գերապատիւ Արիստակէս

եպիսկոպոսն ի յայտարարութեան իւրում ի 28 ամսոյս պարզաբանեալ զամենայն ապացուցութեամբ բանից ս. Հարց եկեղեցւոյ՝ զթոյլտուութիւն յ7-րդում աստիճանի ազգականութեան ոչ միայն օրինական գտանէ, այլ և անհրաժեշտ. ընդ որս համաձայն եմք և մեք: Իսկ առ այն որ ասէ. «Թոյլտուութիւն պսակաց յ7-րդում աստիճանի ազգականութեան շատ անգամ արձակեալ է ի Սինոդէզ...», հարկ է ասել թէ՛ եւ շատ անգամ եւ առաւել եւս մեծեալ է, համարելով հակառակ օրինաց և կանոնաց եկեղեցւոյ մերոյ, և թէ՛ որպէս արդէն ասացաւ յօրագրի անդ Սինոդիս, Նորին իսկ, որ ետուն հրաման այնպիսի պսակացն ասելով «ոչ օրինակ այլոց», այդու իսկ խոստովան լինին անմեղութեամբ թէ մեղան օրինացն: Իսկ մեզ պարտ է գնալ ըստ օրինացն և ոչ ըստ նոցայն»: Ապաքէն եթէ եօթնեորդն թոյլատրելի լեալ էր՝ և՛ թեմական Առաջնորդն և՛ Կոնսիստորիայն Տփլսեաց ոչ հարկէին դիմել ի Սինոդս վան թոյլտուութեան պսակի Խաչատուրոյ այդորիկ էլիարեանց. ոչ մի է եկեղեցի և մի կանոն: Ի վախճան ամենայնի դիցուք աստ և զերկուս կարևոր հատուածս յաշխատութեանց իրաւաբան Վահան վարդապետի Բաստամեանց և ապա կնքեսցուք զբանս:—ա) «Ընդունուած է իբրեւ ընդհանուր կանոն ճիւղագրութիւնը համարել այնպէս որ, բացի ամուսնացողներէց մէջտեղում մնայ եօթը, և այլն աստիճան: Իսկ Ներսէս Շնորհալին... պարզ կերպով պահանջում է երկու կողմից չորս չորս, հաշուելով ամուսնացողները» (Դատաստանագիրք Գօշ-Մխիթարայ, եր. 230, ծան. 444): բ) «Պատմութիւնը և մանաւանդ իրաւաբանական վկայութիւնները

ցուցանում են որ՝ իւրաքանչիւր ազգի մտաւոր բարոյական զարգացման հետ զարգացել է և այդ վնեմ գաղափարը ամուսնութեան սրբութեան վերայ, որով աւելի և աւելի հեռացել է օրինաւոր ամուսնութեան սահմանը նոյն ընտանիքի անդամների մէջ» («Փորձ» 1880, № XI, եր. 138): Եւ արդ այսպէս գտեալ զառաջին վճիռ Սինոդիս համաձայն կանոնաց և օրինաց և արդար՝ հրամայեցին, համաձայն 40-րդ յօդուածոյ Պօլսթինիայի՝ առաւելութեամբ ձայնից ամել զայն ի կատար, արգելով ըստ առաջնոյն դպասկն Տփլսեացի ազնուական Խաչատուրոյ Բարսեղեան ելիարեանց ընդ Վարդուհայ Ստեփանեան Ամբրեանց յ7-րդում աստիճանի արեւակցութեան: Եւ որպէս Կոնսիստորիային Տփլսեաց նոյնպէս և ամենայն Հոգեւոր Ատենից Հայոց ի Պետութեան Ռուսիոյ տալ փութով զայս հրամանագրութեամբ ի տեղեկութիւն և ի հրահանգութիւն, իսկ զպատճէն օրագրոյս տալ նորին Գեղարդնութեան պ. Պրօկուրօրի Սինոդիս: Տեղակալ Ատենապետի (բացակայ), Անդամք՝ Գրիգորիս եպիսկոպոս, Արիստակէս եպիսկոպոս (Սեդրակեան), Սարգիս եպիսկոպոս, Արիստակէս եպիսկոպոս, Բարդուղիմէոս վարդապետ»:

II

(Ծածկուած յանցանքներ)

«Եթ 30 Յունուարի 1892 ամի, ըստ հրամանի Նորին Կայսերական Մեծութեան Ինքնակալին ամի-

նայն Ռուսաց և Լուսաւորչական Հայոց Սինոդի Սրբոյ Էջմիածնի լուան զգեկուցում. վասն տալոյ առ այժմ պ. Պրօկուրօրի Սինոդիս, ըստ խնդրոյ նորին Գերազնուութեան գրութեամբք ի 12, 20, 22 և ի 23 ամսոյս №, № 2, 5, X և 6, տեղեկութիւնս զգործոյն բացասութեան կամ թոյլտուութեան պսակի Մկրտչի Նրամեանց Աղբիրմանցւոյ ընդ Նդիսարէթի Սիմէօնեան, զի մի յակամայից անկցի նս յոչ ցանկալին ենթադրութիւնս, արժան վարկանի Սինոդս տեղեկակ առնել զնորին Գերազնուութիւնն՝ թէ բացի յայտարարութեանց անդամոց Սինոդիս գերապատիւ Սարգիս եպիսկոպոսի և բարեհորհր Բարդուղիմէոս վարդապետի ի 13-ն և 21-ն ամսոյս, որովք Առաջինն յայտնէ թէ՛ յետ եղծման իւրոյ զստորագրութիւն իւր յօրագիրն յ31-ն յուլիսի անցեալ ամի՝ արձակեալ է զօրագիրն զայն պաշտօնակատարն Պրօկուրօրի Սիմէօն Փիլիպպոսեանց (Ատենադպիրն), և խնդրէ առնել զքննութիւն. իսկ Նրկրորդն՝ խնդրէ չթողուլ զյիշեալ յայտարարութիւն գեր. Սարգիս եպիսկոպոսի առանց պարտութաշահ տնօրէնութեան, և յիւրմէ կողմանէ, առ ի լուսարանել զգործն, յաւելու թէ՛ Նրամեանցն Աղբիրմանցի փորձեալ է արծաթով յաղկուցուցանել զթոյլտուութիւն պսակի իւրոյ: Այլ և Տեսանի ի գործոյն, ա) պսակն Նրամեանցի մերժեալ իսկ է եղեալ ի հոգեւոյս Հայրապետէն Մակարայ՝ դեռ յամսեանն փետրուարի անցեալ ամի: բ) Ի Սինոդիս թէպէտև յ31-ն յուլիսի անցեալ ամի կազմի օրագիր թոյլտուութեան այնր պսակի, սակայն չև ամեալ ի կատար՝ ի նոյն իսկ աւուր յետ լսելոյ զիրաւացի կարծիս և զգիտողութիւնս նորին

Սրբազնութեան Արիստակէս եպիսկոպոսի Դաւթեան՝ ստորագրող անգամք «յայնմ օրէ և ցայսօր բանիւ և գրով» խոստովանելով զսխալանս իւրեանց՝ համաձայնին թողուլ անկատար զայն օրագիր. իսկ գեր. Սարգիս եպիսկոպոսն անգէն իսկ եղծմանէ զստորագրութիւն իւր և պատուիրի գործավարին կազմել զնոր օրագիր բացասելոյ, որ և կազմի ի նմին իսկ ժամուսեակիրն՝ յորում և ստորագրեն գեր. Սարգիս և Արիստակէս եպիսկոպոսուքն. և այս սեազիր չգտանի այժմ ի գործն՝ զորմէ ծանոյց Սինոդիս անգամ Սորին բարեհորհր Բարդուղիմէոս վարդապետն յայտարարութեամբ իւրով ի 24 ամսոյս № 4: գ) Օրագիրն թոյլտուութեան յ31-ն յուլիսի՝ կազմեալ և ստորագրեալ է յամենապատիւ Տէր Տեղակալէն և յերից Անդամոցն (Սուրբիս, Ներսէս, Սարգիս եպիսկոպոսք)՝ գաղտնի և առանց գիտութեան անդամոյ Սորին Արիստակէս եպիսկոպոսի Դաւթեան: դ) Հրամանագիրն ըստ մտաց այնր օրագրոյ և ստորագրութեամբ Սարգիս եպիսկոպոսի տակաւին ցայսօր ոչ կրէ ոչ վերառուութիւն ինչ, ոչ զթուահամար, ոչ զամսաթիւ, ոչ զստորագրութիւն պաշտօնակատարին Ատենադպիր և ոչ ստորագրութիւն գործավարի: ե) Ի Սինոդիս կազմեալ է օրագիր և՛ յ3-ն Սեպտեմբերի անցելոյ ամի ստորագրութեամբ անդամոց ամենից, որով որոշի զթոյլտուութիւն այնր պսակի թողուցըգտահալութիւն ընտրելի Հայրապետին: Պաշտօնակատարն Պրօկուրօրի պ. Ս. Փիլիպպոսեանց ոչ համաձայնեալ ընդ այն օրագիր յաղագս ոչ ստորագրեալ լինելոյ ի Տ. Տեղակալէն Ատենադպետի Սինոդիս՝ որ յայնժամ ի պատճառս հիւանդութեան ոչ նախագա-

հէր յԱտենի, յետս դարձուցանէ ի Սինոդն, գտանելով զայն հակառակ 250, 738, 739 և 740 յօդուածոց Ո հատորոյ 1 մասին օրինաց 1876 ամի: Բայց և ի 22-ն նոյն սեպտեմբերի կազմէ Սինոդն զնոր օրագիր՝ առաւելութեամբ ձայնից ածէ ի կատար զվճիռ օրագրոյն յ9-ն Սեպտեմբերի: Ըստ մտաց այնր օրագրոյ առաքի հրաման առ Կոնսիստորիայն Հայոց Բեսարաբիոյ ի 22-ն նոյն ամսոյ № 3739. և հաւասարն օրագրոյն առաքի առ պաշտօնակատարն Պրօկուրօրի: զ) Գտանի ի գործն հրամանագիր մի առ Կոնսիստորիայն Հայոց Բեսարաբիոյ ստորագրութեամբ Սուքիաս եպիսկոպոսի ի 10-ն սեպտեմբերի անցեալ ամի № 3439. ի հինգերորդ երես այնր հրամանագրոյ առեալ են ի փակագծի տողք եօթն, յորոց իմանի թէ՛ անդամ գերապատիւ Սարգիս եպիսկոպոսն տուեալ իցէ յայտարարութիւն և խնդրեալ համարել վաւերական «զգիպուածով» գծեալ զստորագրութիւն իւր յօրագրին յ31-ն յուլիսի, զորպիսին վերստին յետս ստացեալ է ստորագրութեամբ ի լուսանցս մտից տոմարին: է) Արձակումն պաշտօնակատարի պ. Պրօկուրօրի զօրագիրն թոյլտուութեան պսակի յ31-ն յուլիսի՝ յօրագրի Սինոդիս ի 22-ն Սեպտեմբերի բացարձակապէս համարի անկանոնութեամբ խարդաւանեալ և զուրկ յօրինական զօրութենէ՝ ասելովն «զի օրագիրն Ատենիս՝ կազմեալ յ31 Յուլիսի տարւոյս, կայացեալ է և արձակեալ ի կատարողէ պաշտօնի Պրօկուրօրի առանց գիտութեան, ստորագրութեան կամ գրաւոր կարծեաց Սրբազան Արիստակիայ (անդամ) . . . զոր անկանոնաբար արձակելովն անապարեալ է յօրինական զօրութիւն ւածել զայն՝ ա-

ռանց պատկառ կալոյ կարծեաց երկուց անդամ եպիսկոպոսաց, զի մինն չէր ստորագրեալ եւ միւսն առդէն եղծեալ եր գստորագրութիւն իւր» (1): Եւ անդամ Սորին գեր. Սարգիս եպիսկոպոսն յայտարարութեամբ իւրով ի 13 ներկայ ամսոյս պնդէ զնոյն կեղծութենէն և խնդրէ առնել զքննութիւն: Ըստ այսմ և բազում թերութիւնք բացարձակապէս նկատին ի ի գործն յայն: Վասն որոյ չէ պարտ աճապարել և ի նորանոր սխալանս տանել զգործն, այլ հարկ անհրաժեշտ տեսանի պարզելոյ և լուսաբանելոյ զամենայն մթին հանգամանս գործոյն այնորիկ: Ի լսելն զայս՝ Տ. Տեղակալ Ատենապետի Սենոդիս և անդամ Սորին Արիստակէս եպիսկոպոս Սեղրակեան յայտնեցին զկարծիս իւրեանց ըստ այսմ. «Զթոյլտուութիւն պսակի Աղբիւրմանցի Մկրտչի Նրամեանց ընդ Նիսաբէթի Սիմէօնեան ի հինգերորդում աստիճանի ազգականութեան թողուլ ի բարեհաճ կամս ընտրելի Հայրապետի ամենայն Հայոց, իսկ զքննութիւնն վտան եղծմանց, զորս պահանջեն երկրորդն Անդամք Սորին գերապատիւ Սարգիս եպիսկոպոս, և բարեչնորհ Բարդուղիմէոս վարդապետ յայտարարութեամբք իւրեանց, յանձնել նորին Գերազնուութեան պ. Պրօկուրօրի Սինոդիս ի քննութիւն ըստ 949 յօդ. ԺԱ. հատորոյ ա. մասին օրինաց»: Տեղեկութիւնս նախ քան մատուցանելն անդամոց գեր. Սարգիս եպիսկոպոսի և բարեչնորհ Բարդուղիմէոս վարդապետի ըզ ի վեր անդր յիշատակեալ յայտարարութիւնս, ամենապատիւ Սրբազան Տէր Տեղակալն և գեր. Ա-

1. Ուշագրութիւն, «Մշակի» ղեկավար պ. Վրձին:

ընտանիքին եպիսկոպոսն Սեդրակեան առաջարկէին թողարկել զպատկին զայն ըստ առաջին օրագրոյն յ 31 յուլիսի անցելոյ ամի, սակայն միւս հորեքին անդամք բարեռք համարէին թողուլ նոյնութեամբ գինճուտեալ գործ պատկին այնորիկի բարեհայեցողութիւն ընտրելի Հայրապետի ազգիս՝ համաձայն 40, 41 և 42-րդ յօդուածոց Բարձրագոյն հաստատեալ Պօլոժենիայի։ Եւ արդ, որովհետեւ Հայաստանեայց Ս. Սկեղեցի խառն արգելու զհինգերորդ աստիճանի արեւակցաց ամուսնութիւնն, և որպէս տեսաք ի վեր անդր՝ ինքն հանգուցեալ Հայրապետն ազգիս ի կենդանութեան իւրում մերժեալ էր զնոյն պատկն Երամեանցի Աղբիւրմանցոյ (որդին միոյ եղբօր առնու զմիւսոյ թոռն), ուստի և չէր արժան ձեռնամուկս լինել վճարաւոր ի գործն պատկին այնորիկ, որ ի վեր էր քան զիրաւասութիւնն Սինոդիս։ Վասն որոյ Հրամայեցին, ըստ առաւելութեան ձայնից, առնել առանձին զեկուցումըն վասն տակաւին կարեւորն և անհրաժեշտ լուսաբանութեան հանգամանաց գործոյն և գիւրդմբունելի կացուցանելոյ զայն Ատենիս, զի հետզհետէ ինքնին բանին և նորանոր խարդաւանանք, յորպիսեաց է և բացատրութիւն պ. Բենիամինի տ. Գրիգորեան (պաշտօնականաբար գործաւարի դատաստանական մասին Սինոդի) ի 24 Հոկտեմբերի 1891 ամի, իսկ զհաւասարն օրագրոյս տալ պ. Պրօկուրօրին Սինոդիս ի գիտութիւն և ի տեղեկութիւն ըստ խնդրոյ նորին Գերադուտութեան։ Տեղակալ Ատենապետի (բացակայ), Անդամք՝ Սարգիս եպիսկոպոս, Արիստակէս եպիսկոպոս (Դաւթեան), Բարդուղիմէոս վարդապետ։ (Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեանց բացակայ է ի Տփլիս, իսկ

Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեան՝ ոչ հաճեցաւ ստորագրել)։

Սինոդի պ. Պրօկուրօր Կանչելին յատկապէս եկած ներկայ էր Ատենում այս օրագրի ընթերցմանը և մեր—Անդամոց ստորագրելուն ¹։




1. «Մշակի» ղեկավար պ. «Արձին», հըն է ծանրագոյն յանցանքը,—չաւարտած օրագրի վերայ Սարգիս եպիսկոպոսի այս և այն պատճառներով իւր ստորագրութիւն «ջնջելը», թէ՛ արդէն ջնջուած և միւս անդամից զաղտնի շինուած այդ օրագրին կենդանեցողով կատարման ձե տալու գործողութիւնն ենք, իսկ անյաջողութեան դէպքում՝ փետրվարի 28-ի (1899 թ.) անկանոն օրագրով փախցնելը այդ գործը Սինոդից—իմս իմ ձեռքից...

Մեղա՛յ զոչելու քաջութիւն ունեցէք։

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Եր.	տող.	սխալ.	ուղղիչ
2,	11.	մաղպան	Մարգպան
12, ծ.	1.	ձեռաիզը	ձեռագիրը
19, ծ.	2.	ահատ	ա. հատ.
21,	18.	«զտից»ը	«զտից»ը
24, ծ.	1.	հաւաքումն.	հաւաքումն,
26.	16.	հիմումքն	հիմունքն
>	ծ.	3. դարձեալ	դարձեալ
27,	6.	վեպ,	վէպ,
31,	26.	ընտաւագդի	ընտաւագդի
35, ծ.	14.	Եր. 275—176):	Եր. 175—176):
37,	7.	մեզ չէ ինչ փոյթ»	մեզ չէ ինչ փոյթ»
41,	9—10.	ողուկը (Եր. 41):—Եր- րայեցւոց	ողուկը» (Եր. 41):— «Երբայեցւոց
42, ծ.	9.	Թագաւորութեան	Թագաւորութեանն
>	ծ.	13. միայն 2. ի մէջ	միայն 2-ի մէջ
>	ծ.	23. 1673,	1663,
>	ծ.	24. 1689,	1686,
55,	6.	ի ծփական ջուրցն	ի ծփական ջուրցն
61,	1.	մի մի չերաշխաւորեալ	մի չերաշխաւորեալ
63,	16—17.	Ջատանդ	Ջատանդ
100,	21.	Տրդատի	Տրդատի
101,	7.	շատ	շատ
116,	14.	սականական	մականական
163,	16.	տօներին, և	տօներին (ի դէպս և Հոգեհանգիստներ), և
167,	8.	և ասաց	և ասաց.
168,	14.	Խօսել ինք	խօսել հնք

70643 P. 4. 1.



ՀՀ Ազգային գրադարան



NL0413556

6954



ԳԻՆՆ Է 1 ԲՈՒՔԼ